ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 398(=19)
ԳՄԴ 84.2(5Հ)
Հ 253

Գիրքը հրատարակվում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի (ՀՈՒՖՀՀ) հովանավորությամբ

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտխորհուրդների որոշմամբ

Խմբագիրներ՝ ***Ավիկ Իսահակյան, Վիկտոր Կատվալյան***
Կազմողներ և մուտքի խոսքի հեղինակներ՝
Վիկտոր Կատվալյան և Ռուզան Սարյան

Հ 253 Հայկական ժողովրդական հեքիաթներ / Նկարազարդումները՝ Մարտիրոս Սարյանի.- Եր.: Էդիթ Պրինտ, 2022.- 400 էջ:

Մարտիրոս Սարյանի նկարազարդումներով «Հայկական ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն՝ «Армянские сказки» վերնագրով, նախկինում ռուսերեն լեզվով տպագրվել է «ACADEMIA» (М.-Л., 1930, 1933) և «ДЕТИЗДАТ» (М., 1939) և այլն հրատարակչություններում: Ներկայիս ժողովածուն, բացառիկ է նրանով, որ ռուսերեն լեզվով հրատարակություններից հետո այն առաջին անգամ լույս է տեսնում հայերեն՝ հեքիաթների բնագրի լեզվով: Հեքիաթի բանահյուսական տարրը Սարյանի նկարազարդումների ներդաշնակությամբ ընդգծում է նրանց ազգային պատկանելիությունը: Գիրքը ներկայացնում է ուրույն արժեք թե՛ հայ բանարվեստի, թե՛ ազգային գրքարվեստի ճանաչման տեսակետից:

Կազմի վրա Մ. Սարյանի «Армянские сказки» ժողովածուի կազմի էսքիզ, 1933 թ.

ՀՏԴ 398(=19)
ԳՄԴ 84.2(5Հ)

ISBN 978-9939-75-897-8

© Սարյան ընտանիք (վերատպություններ), 2022
© Էդիթ Պրինտ, 2022

ՀԵՔԻԱԹՆ ՈՒ ՆՐԱ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄԸ

Ժողովրդական բանարվեստի անանց արժեքներ են հեքիաթները, որ անիրական պատումներ լինելով հանդերձ՝ արտացոլում են ժողովրդի պատկերացումներն ու ընկալումները աշխարհի, բնության, չարի ու բարու, մարդկային զգացմունքների ու փոխհարաբերությունների, իղձերի ու երազանքների վերաբերյալ: Հեքիաթները ժողովրդի հոգու հայելին են՝ պարզ ու անխարդախ, իմաստուն ու բարի, և պատահական չէ, որ ժողովրդական պատումի այս տեսակով է զարդարվում յուրաքանչյուր մարդու մանկություն, ձևավորվում ու սնունդ են առնում հոգևոր աշխարհն ու երազանքները:

Իր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է անթիվ-անհամար հեքիաթներ՝ դրանցում արտահայտելով նաև իր երազանքները, հավատը արդար, խաղաղ ու երջանիկ ապագայի, մարդ արարածի մարդեղենության հանդեպ: Դարեր ու տասնամյակներ շարունակ պատմվող, ժամանակին համընթաց ու տարածքից տարածք փոփոխվող, հարստացող հեքիաթները այսօր էլ ընթերցվում են հաճույքով ու սերունդներին փոխանցում ժողովրդի դարավոր իմաստնությունը:

Բնականաբար հեքիաթները ստեղծվել ու պատմվել են գյուղական միջավայրում, ժողովրդի կենդանի ու անբռնազբոս լեզվական միջոցներով՝ մեր ճոխ ու հարուստ բարբառներով: Բանավոր խոսքի բարբառային տարբերակը հեքիաթներում աչքի է ընկնում դարձվածքների շքեղությամբ, աշխույժ երկխոսություններով, բառապաշարի շերտերի ու ոճերի անուրանալի հարստությամբ, նաև փոխառյալ բառերի առատությամբ: Հայ բանագիտության մշակները տասնամյակներ շարունակ ջանադրաբար և մասնագիտական հմտությամբ հավաքել ու հրապարակել են հարյուրավոր հեքիաթներ՝ հարազատորեն ներկայացնելով պատումների սյուժետային ու լեզվական առանձնահատկությունները: Նշանավոր հայ գրողներ, հատկապես Հովհ.Թումանյանն ու Ղ.Աղայանը, իրենց մշակումներով բազմաթիվ հեքիաթներ հասանելի ու հասկանալի են դարձրել հայ մանուկներին: Հեքիաթների նկատմամբ իր սերն ու հետաքրքրությունները ժամանակին արտահայտել է նաև հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը իր արած բազմաթիվ պատկերազարդումներով:

Այս գրքում ընդգրկված են Սարյանի նկարազարդած 33 հեքիաթներ, ընթերցասեր հանրությանը հասկանալի դարձնելու նպատակով դրանց տեքստերը բարբառային լեզվից փոխադրվել են խոսակցական լեզվի՝ հնարավորինս պահպանելով բանավոր խոսքին բնորոշ արտահայտչաձևերն ու ոճական հնարքները: Ժողովածուում ընդգրկվել են նաև Հովհ.Թումանյանի և Ղ.Աղայանի որոշ մշակումներ: Այսպիսով, ընթերցողն իր ձեռքին ունի և՛ ժողովրդական բանարվեստի, և՛ մեծ գեղանկարչի վրձնի լավագույն դրսևորումների մի գեղեցիկ համադրություն:

Վիկտոր Կատվալյան
Բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի տնօրեն

АРМЯНСКИЕ СКАЗКИ

ACADEMIA

Սարյանական նկարազարդումներով «Հայկական ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի հայերեն առաջին հրատարակության առիթով

Կարող է զարմանալի և անտրամաբանական թվալ, թե ինչու այս ժողովածուի մեջ ընդգրկված հայկական ժողովրդական հեքիաթները, որոնք Մարտիրոս Սարյանի ձևավորումներով և Հակոբ Խաչատրյանցի ռուսերեն թարգմանությամբ դեռևս 1930, 1933 և 1939 թվականներին առանձին ժողովածուներով լույս են տեսել Մոսկվայում՝ հայտնի «ACADEMIA», «ДЕТИЗДАТ» հրատարակչություններում, մինչ օրս նույն կերպ չեն հրատարակվել հարազատ հայոց լեզվով: Թերևս դա կարելի է բացատրել ընդամենը մեկ հանգամանքով. հեքիաթները հիմնականում գրի են առնվել հայերենի տարբեր բարբառներով և հիմնականում կարոտ են մնացել գրական մշակման: Ինչ խոսք, շնորհիվ Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի մշակումների՝ երեխաներին մատչելի են դարձել ժողովրդական այնպիսի հրաշալի հեքիաթներ, ինչպիսին են «Անահիտը», «Արեգնազանը», «Օձամանուկը և Արևահատը», «Քաջ Նազարը», «Տերն ու ծառան», «Կիկոսի մահը», «Պոչատ աղվեսը», «Սուտլիկ որսկանը»: Սակայն հեքիաթների մեծ մասն այդպես էլ մնացել է չմշակված և հայերեն ընթերցող մանուկներին անհասանելի: Խոսքը ոչ միայն առանձին բառերի, այլև բազմաթիվ դարձվածքների և ամբողջական նախադասությունների մասին է, ընդ որում՝ տարբեր բարբառներում լրիվ տարբեր, ինչը խնդրահարույց էր դարձնում դրանց ի մի բերելը և մեկ ժողովածուով տպագրելը: Ռուսերեն թարգմանության դեպքում նման խնդիր չէր առաջանում, և հայկական հեքիաթների՝ Մարտիրոս Սարյանի նկարազարդումներով ռուսերեն 5 հրատարակություններն էլ մեծ հաջողություն ունեցան ընթերցողների մոտ և արագ սպառվեցին:

Այսօր, վերջապես, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը իրա-կանացրել է «Հայկական ժողովրդական հեքիաթներ» պատկերազարդ գրքի հրատարակությունը: Գիրքն ընդգրկում է ինչպես դասականների մշակած հեքիաթներ, այնպես էլ տարբեր բարբառներով գրի առնված հեքիաթների՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետների կողմից խոսակցական լեզվի փոխադրված տեքստեր: Այդ հեքիաթներից միայն 18-ն են հատուկ նկարազարդված եղել մեծ նկարչի կողմից: Սակայն առաջին ռուսերեն ժողովածուի սարյանական նկարազարդումների տրամաբանությունը թույլ է տվել մեզ նրա ստեղծագործություններից ընտրել և հայկական հեքիաթների գունազարդման համար օգտագործել տարբեր ժամանակներում ստեղծած իր այն գեղանկար կամ գրաֆիկական աշխատանքները, որոնք իրենց պատկերայնությամբ քիչ թե շատ համապատասխանում են տվյալ հեքիաթի ոգուն և բովանդակությանը: Ո՞րն է տրամաբանությունը. հեքիաթների բուն տեքստերում համարյա թե բացակայում են բնության, կոնկրետ տեղանքի, հերոսների հագուկապի, նիստուկացի նկարագրությունները: Մարտիրոս Սարյանը այդ բացը լրացրել է իր նկարազարդումներով՝ պատկերելով հայկական բնաշխարհի և ժողովրդական կյանքի յուրահատուկ ու անկրկնելի մթնոլորտը, որտեղ դարերով ստեղծվել և սերնդեսերունդ փոխանցվել են հայկական ժողովրդական հեքիաթները: Այդպիսին են «ACADEMIA»-ի կողմից 1931 թվականին տպագրված հեքիաթների առաջին ժողովածուի համար արված Սարյանի նկարազարդումները, որոնց մեջ ընդհանրապես բացակայում են կոնկրետ հեքիաթների բովանդակությանն առնչվող պատկերներ:

«ACADEMIA»-ի՝ 1933 թվականի ժողովածուում Սարյանը արդեն տալիս է առաջին սյուժետային

նկարազարդումները, բայց ոչ բոլոր հեքիաթների համար: Հեքիաթների նկարազարդման ուղղությամբ նկարչի երրորդ մեծ աշխատանքը արվեց 1939 թ. «ДЕТИЗДАТ» հրատարակչության տպագրած ժողովածուի համար, սակայն այլ տրամաբանությամբ: Այն է՝ տալ ամեն մի հեքիաթի համար գլխազարդ, այնուհետև էջով մեկ՝ մեկ կամ երկու բովանդակային նկարազարդում և եզրափակիչ վերջազարդ:

Ահա թե ինչ է գրում Սարյանը «ДЕТИЗДАТ»-ի խմբագիր Պ. Սուվորովին ուղղված նամակում. «Ամենից դժվարը էջով մեկ տուշանկարներն են: Պետք է ասել, որ աշխատանքը շատ է, ես չէի սպասում, որ դա այդքան ժամանակ կխլի: Ես դրանք կատարում եմ բարեխղճորեն, կարծում եմ, որ երեխաները, ինչպես և մեծահասակները, գոհ կլինեն, քանի որ նկարներն անձամբ ինձ բավարարում են, այնպես որ գիրքը պետք է լավ ստացվի»: Այսպիսի նկարազարդումներ արվեցին 18 հեքիաթների համար:

Ներկայացվող այս ժողովածուում դրանք օգտագործվել են ամբողջապես: Բացի այդ՝ ավելացվել են Սարյանի «Հեքիաթներ և երազներ» շարքի այնպիսի գունեղ ջրանկարներ, ինչպիսիք են՝ «Արարատի ստորոտում», «Աղբյուրի մոտ», «Նոճիների պուրակ», «Պալատական այգի», «Փերիների լիճը», իսկ «Քաջ Նազար» հեքիաթի մեջ օգտագործվել են Հարո Ստեփանյանի նույնանուն օպերայի համար արված Սարյանի՝ գլխավոր հերոսի զգեստի էսքիզը և բեմանկարներից մեկը: Մնացած 15 հեքիաթների նկարազարդման համար մեր կողմից օգտագործվել են ինչպես 1930 թվականին տպագրված ժողովածուի նկարազարդումները, այնպես էլ Սարյանի՝ տարբեր ժանրերի այլ ստեղծագործություններ՝ Հայաստանը պատկերող բնանկարներ, թատերական բեմադրությունների ձևավորումների էսքիզներ և այլն:

Կարևոր է ընդգծել, որ հեքիաթայնությունը Սարյանի ստեղծագործությունը բնորոշող ամենա-վառ հատկանիշներից է: Այն բխում է նրա աշխարհընկալման փիլիսոփայությունից, որը նույնքան ժողովրդական է, որքան դարերի խորքից մեզ հասած հեքիաթները:

Ահա ինչպես է Մարտիրոս Սարյանը բնութագրել հայկական ժողովրդական հեքիաթների էությունը. «Պետք է ասել, որ դուրեկան է հայկական հեքիաթների համար աշխատելը, մեր ժողովուրդը բարի և աշխատասեր է, և նրա հեքիաթներն էլ կրում են այդ դրոշմը, աշխատող ժողովրդի հեքիաթներ են, այլ ոչ իշխող»:

Ռուզան Սարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն

АРМЯНСКИЕ СКАЗКИ



ACADEMIA



ՕԽԱՅԸ

Ժամանակով մարդ ու կնիկ են լինում, ունենում են մինուճար մի տղա: Մի օր հերը որոշում է տղին տանել, արհեստի տալ: Ճանապարհին աղբյուր է հանդիպում, գյուղացին ջուր է խմում ու ասում.

- Օխա՛յ...

Էդ խոսքի վրա աղբյուրից դուրս է թռչում Օխայը՝ ջրի ոգին, ու հարցնում.

- Ինձնից ի՞նչ ես ուզում... Ո՞ւր ես գնում:

- Տղիս տանում եմ՝ փեշակի տամ,- պատասխանում է գյուղացին:

- Տո՛ւր ինձ աշակերտ, ես լավ վարպետ եմ:

Հերը որդուն տալիս է նրան: Օխայը տղին իր հետ ջրի տակ է տանում, իսկ գյուղացին տուն է դառնում:

Անցնում է ժամանակ: Տղի ծնողների վիճակը վատանում է, սոված-ծարավ օրեր են անցկացնում: Հերը գալիս է աղբյուրի մոտ, ջուր խմում ու ասում.

- Օխա՛յ...

Ջրից դուրս է գալիս Օխայն ու ասում.

- Ինչի՞ ես ինձ կանչում:

- Ապրուստի հնար չունենք,- պատասխանում է հերը,- եկել եմ որդուս հետևից. ավելի լավ է՝ տանը մեզ օգնի:

- Նա դեռ արհեստ չի սովորել,- ասում է Օխայը:

- Որ էդպես է, մի բան տուր՝ մի կերպ գլուխներս պահենք, մինչև տեսնենք…

Օխայը սուզվում է ջուրը, դուրս բերում մի սփռոց, տալիս գյուղացուն ու ասում.

- Երբ սովածանաս, սփռոցը կփռես:

Գյուղացին վերցնում է սփռոցն ու տուն դառնում: Էստեղ նա փռում է սփռոցը, որն անմիջապես ծածկվում է տեսակ-տեսակ ուտելիքներով:

Մարդ ու կնիկ սկսում են անհոգ ապրել: Մի օր էլ կնիկն ասում է.

- Տանուտերի կնկան մեր տուն չկանչե՞մ:

- Պետք չէ, կնի՛կ,- պատասխանում է մարդը,- նա սփռոցը տեսնի թե չէ, կուզի իրենով անել:

- Ինչ ուզում է լինի, ես նրան պիտի կանչեմ:

- Ասում եմ՝ պետք չէ, կփոշմանես:

Բայց կնիկը չի լսում ու տանուտերի կնկան ու մյուս հարևան կանանց հրավիրում է իրենց տուն:

Հյուրերը տեսնում են, որ տանտիրուհին դեռ ճաշի պատրաստություն չի տեսել: Նույնիսկ օջախը չէր վառել:

- Մեզ ինչի՞ են հրավիրել,- սկսում են իրար հարցնել նրանք:

Երբ ճաշի ժամը գալիս է, տանտիրուհին փռում է սփռոցը, որն անմիջապես ծածկվում է ամեն տեսակ համեղ ուտելիքներով: Տանուտերի կնիկը մտքում ասում է. «Արի ես էս սփռոցը ինձնով անեմ», ու շշնջում է տանուտերի ականջին.

- Տանը մենք հենց էսպիսի մի սփռոց ունենք, գնա բեր:

Տանուտերը վազում բերում է սփռոցը, ու կնիկը դա թաքուն փոխում է տանտիրուհու սփռոցի հետ:

Հյուրերը գնում են իրենց տները:

Իրիկունը գյուղացին ու կնիկը սովածանում են, փռում են սփռոցը, բայց ուտելիքներ չեն հայտնվում: Նրանք գլխի են ընկնում, որ իրենց սփռոցը տանուտերի կնիկը գողացել է:

Հաջորդ օրը մարդ ու կնիկ գնում են աղբյուրի մոտ, ջուր խմում ու ասում.

- Օխա՛յ:



Ջրից անմիջապես դուրս է թռչում Օխայն ու ասում.

- Ի՞նչ եք ուզում:

- Սոված ենք:

- Բայց ես ձեզ սփռոց եմ տվել:

- Մեր տուն եկավ տանուտերի կնիկն ու սփռոցը գողացավ:

Օխայը սուզվում է ջրի մեջ ու նրանց համար մի դդում բերում:

- Էս դդումը ձեզ: Երբ շուռումուռ տաք, սրա միջից ձիավորներ դուրս կգան ու տանուտերի վրա կռիվ կգնան:

Մարդ ու կնիկ վերցնում են դդումն ու տուն գալիս: Սկսում են շուռումուռ տալ դդումը: Դրանից դուրս են թռչում զինված ձիավորներ, հարձակվում տանուտերի տան վրա, սկսում քանդել պատերը, դռներն ու պատուհանները:

Ժողովուրդ է հավաքվում: Մարդիկ հարցնում են.

- Ինչի՞ եք հարձակվել տանուտերի վրա:

- Եկել ենք՝ տանուտերի կնկա գողացած սփռոցը հետ տանենք:

Տանուտերը վախենում է ու շտապ սփռոցը տալիս զինվորներին, սրանք էլ վերադարձնում են գյուղացուն: Սա ձիավորներին տեղավորում է դդումի մեջ ու կախում պատից:

Անցնում է մի քանի տարի: Մի օր էլ գյուղացին կնկան ասում է.

- Մեր տղեն երևի արդեն վարպետ է դարձել, գնանք հետ բերենք:

Գնում են աղբյուրը, ջուր խմում ու ասում.

- Օխա՛յ:

Հայտնվում է Օխայն ու հարցնում.

- Ինչի՞ եք կանչում:

- Հե՛տ տուր մեր տղին, հերիք է՝ ինչ սովորել է:

- Գնամ տեսնեմ,- ասում է Օխայը,- եթե պարզվի, որ արդեն վարպետ է, կբերեմ,- ու սուզվում է ջրի մեջ:

Օխայը մի աղջիկ ուներ: Նա ջահելին ասում է.

- Տեսնո՞ւմ ես՝ որքան կտրված գլուխներ կան էստեղ: Բոլորն էլ հորս աշակերտների գլուխներն են: Որ հայրս քեզ հարցնի՝ արհեստ սովորել ես, թե չէ, կասես՝ չէ: Թե չէ՝ դու էլ գլխիցդ կզրկվես:

Օխայը ցած է իջնում, ջահելին հարցնում.

- Ասա՛, տղա՛, արհեստ սովորե՞լ ես, թե՞ չէ: Հերդ ու մերդ եկել են՝ քեզ տանեն:

- Չէ՛, վարպե՛տ,- պատասխանում է տղեն:

Օխայն սկսում է տղին քոթակել:

- Ասա՛, որ սովորել ես, ասա՛, որ սովորել ես:

Բայց տղեն համառում է.

- Չէ՛, չէ՛, չէ՛...

Վերջապես Օխայը հոգնում է ու տղին տալիս ծնողներին: Ճամփին տղեն ծնողներին ասում է.

- Դուք գնացեք, ես ձեր հետևից կգամ:

Նա դառնում է մի թուխ ձի, սլանում ճամփով, առաջ է անցնում ծնողներից, հետո նորից տղա դառնում ու մոտենում նրանց:

Հերն ասում է.

- Ափսոս, որ մեզնից հետ մնացիր: Հենց նոր կողքներովս մի ձի անցավ: Մեզ հետ լինեիր՝ կբռնեինք:

Մինչ տուն կհասնեին, տղեն տասը տարբեր կենդանիների կերպարանք է առնում ու ամեն անգամ վազելով անցնում ծնողների մոտով: Տանը հորն ասում է.

- Ա՛յ հեր, քո կողքով վազող ձին, եղնիկը, եղջերուն ու մյուս բոլոր կենդանիները ես էի: Իմ փեշակը կերպարանք փոխելն է: Ասում եմ՝ դառնամ ձի, դու ինձ տար շուկա, ծախի: Բայց կծախես առանց սանձի: Թե որ սանձը ծախես, էլ հետ չեմ գա:

Ու էդպես մի քանի անգամ տղեն դառնում է թուխ ձի, հերը շուկայում ծախում է, իսկ իրիկունը տղեն տուն է գալիս:

Մի անգամ էլ, երբ հերը որդի-ձիուն ծախելիս է լինում, շուկա է գալիս Օխայը: Սա գլխի է ընկնում, որ ձին իր աշակերտն է, ճանաչում է հորն էլ ու մոտենում է նրան: Բայց հերը Օխային չի ճանաչում:

- Քանիսո՞վ ես ծախում էս ձին,- հարցնում է Օխայը:

- Հարյուր հիսուն ոսկով,- պատասխանում է հերը:

- Բայց ես սանձն էլ հետն եմ առնում:

- Չէ՛, ես առանց սանձ եմ ծախում:

- Ես քեզ կտամ երկու հարյուր ոսկի, դու ձիու հետ սանձն էլ տուր,- համոզում է Օխայը:

Գյուղացին գայթակղվում է ոսկիներով ու համաձայնվում: Օխայը ձին բերում

է, կապում է սյանը ու աղջկան ասում.

- Աչքդ սրա վրա պահի, գնամ նետ-աղեղը բերեմ:

Բայց աղջիկը ազատում է ձիուն, սա դառնում է աղավնի ու թռչում գնում: Օխայն էլ դառնում է բազե ու ընկնում նրա հետևից:

Աղավնին ճամփին հարսանիք է տեսնում, դառնում է վարդ ու ընկնում հարսանքավորների մեջ: Բազեն էլ աշուղ է դառնում ու սազը ձեռին՝ մոտենում հարսնևորներին: Բոլոր հյուրերը հերթով սկսում են վարդից հոտ քաշել: Երբ հերթը հասնում է աշուղին, սա վերցնում է վարդը, տրորում ու էն է՝ ուզում է կտոր-կտոր անել, վարդը դառնում է մի բուռ կորեկ ու ցրիվ գալիս գետնին: Մի հատիկ ընկնում է հյուրերից մեկի մաշիկի մեջ: Աշուղը դառնում է թխսկան հավ ու սկսում կտցել կորեկի հատիկները: Բայց հյուրի մաշիկի մեջ հայտնված հատիկը դառնում է աղվես ու խեղդում թխսկանին: Հետո աղվեսը դառնում է տղա ու հարսան-քավորների հետ քեֆ անում:

Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ բոլորին:

ԽՈՍՈՂ ՁՈՒԿԸ

1

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է, դառնում մի ձկնորսի շալակատար: Օրական մի քանի ձուկ է աշխատում, տուն բերում, դրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկ է բռնում, տալիս իր շալակատարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակատարը, գետափին նստած, նայում է, նայում էն սիրուն ձկանն ու միտք անում.

- Տեր աստված,- ասում է,- սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում՝ թե չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում.

- Լսի՛,- ասում է,- մարդ-ախպեր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ցանցը: Հիմի, ով գիտի, իմ ծնողքն ինձ որոնում են ու լաց լինում, հիմի ընկերներս տխրել

են: Ես էլ, տեսնում ես, ոնց եմ տանջվում, շունչս կտրվում է ջրից դուրս: Ուզում եմ էլի ետ գնամ, ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպես եմ ուզում, էնպես եմ ուզո՛ւմ... Արի խղճա՛, ազատի՛ր ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ...

Էսպես էր ասում ցած՝ շատ ցա՛ծ ձենով, ցամաքած բերանը բացուխուփ անելով: Էս շալակատարի մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը:

- Գնա՛, սիրո՛ւն ձկնիկ, թող լաց չլինեն քո ծնողքը: Թող չտխրեն քո ընկերները: Գնա ապրի՛ ու խա՛ղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակատարի վրա:

- Տո՛ ախմախ,- ասում է,- էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկ եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլի ետ ջուրը գցո՛ւմ... Դե գնա կորի՛, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակատարը չես էս օրից, գնա սովից մեռի՛:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

- Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ,- տխուր-տրտում մտածելով՝ դառն ու դատարկ դառնում է աղքատը տուն:

2

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալիս մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

- Բարի օր, ախպերացո՛ւ, էդ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,- հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կնիկը:

- Լսի՛, բարեկա՛մ,- ասում է Հրեշը,- էս կաթնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթ կտա, որ քո կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Երեք տարին լրացավ թե չէ, հենց էն գիշերը կգամ, ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք, իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ՝ կանեմ: Համաձա՞յն ես:

«Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,- մտածում է աղքատը,- կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ աստված ողորմած է: Մի տեղից մի դուռ կբացվի, կամ կարող է՝ հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...»:

- Համաձայն եմ,- ասում է ու կովն առաջն անում, տանում տուն:

3

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին, և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ իրիկվա կողմ տխուր նստում են դռանը ու միտք անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ ով գիտի՝ ինչ կհարցնի նա, ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

- Ա՛յ թե ինչ դուրս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավություն ընդունի,- հառաչելով զղջում էին մարդ ու կնիկ, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում:

Էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ:

- Բարի իրիկուն,- ասում է,- ճամփորդ մարդ եմ, մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

- Ինչի չէ, ճամփո՛րդ ախպեր, հյուրն աստծունն է: Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուց հետո գա, մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ՝ իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, մենք էլ չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի՝ մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի:

- Բան չկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ ես,- պատասխանում է օտարականը:

Համաձայնում են, հյուրը մնում է: Մին էլ կեսգիշերին դուռը դղրդում է:

- Ո՞վ է:

- Հրեշը: Եկել եմ, որ եկել եմ, դե պատասխանս տվեք:

- Ի՞նչ պատասխան,- սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

- Մի՛ վախեցեք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կտամ,- ասում է երիտասարդ հյուրը ու գնում է դեպի դուռը:

- Եկել եմ,- դռան ետևից ձայն է տալիս Հրեշը:

- Ես էլ եմ եկել,- պատասխանում է ներսից հյուրը:

- Ո՞րտեղից ես եկել:

- Ծովի էն ափից:

- Ինչո՞վ ես եկել:

- Կաղ մոծակը թամքել եմ, վրեն նստել եմ, եկել:

- Ուրեմն ծովը պստիկ է եղել:

- Ի՞նչ պստիկ, արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի:

- Ուրեմն արծիվը ճուտ է եղել:

- Ի՞նչ ճուտ, թևերի շվաքը քաղաք է ծածկում:

- Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:

- Ի՞նչ փոքրիկ, նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:

- Ուրեմն նապաստակը ձագ է:

- Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գլխարկն ու տրեխն էլ ավել:

- Ուրեմն մարդը թզուկ է:

- Ի՞նչ թզուկ, ծնկան ծերին աքլորը ծուղրուղու կանչի՝ ձենը ականջը չի հասնի:

- Ուրեմն խուլ է:

- Ի՞նչ խուլ, սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլսի:

Հրեշը մնում է կապված, մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում՝ ինչ ասի, սուսուփուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:

Սրանք մեռած տեղներից նոր հետ են գալիս, ուրախանում, աշխարհքով մին են լինում: Հետն էլ բացվում է բարի լույսը, ու երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնա իր ճանապարհը:

- Չենք թողնի, որ չենք թողնի,- առաջը կտրում են մարդ ու կնիկ,- դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչո՞վ վճարենք քո լավությունը...

- Չէ՛, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը:

- Դե գոնե անո՛ւնդ ասա, եթե լավությունդ կորչի, ու չկարողանանք վճարել, գոնե իմանանք, թե ում ենք օրհնելու...

- Լավություն արա ու թեկուզ ջուրը գցի, չի կորչի: Ես հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր,- ասում է անծանոթն ու չքանում ապշած մարդ ու կնկա աչքերից:



ԵՐԵՔ ԱՆՄՈՐՈՒՍՆ ՈՒ ՏՈՒՆ ԱՎԻՐՈՂ ՀԱՐՈՆ

Մի քաղաքում երեք անմորուս մարդ են լինում: Սրանք ամեն օր կանգնում են ճամփին ու պատահած գյուղացիներին խաբում: Դիտավորյալ էլ իրարից հեռու են կանգնում, որ գյուղացիք մտածեն, թե իրար հետ կապ չունեն:

Մի օր մի գյուղացի կովը տալիս է իր տղին ու ասում.

- Լաո՛, տա՛ր էս կովը քաղաք, ծախի, բայց չլինի՝ երեք ոսկուց պակաս տաս. մեր կովը հա՛մ սիրուն է, հա՛մ կաթով:

Էդ տղեն առավոտ շուտ կովն առնում ու գնում է. դրանց հույսը էդ կովն էր մնացել: Մի որոշ ճամփա գնում է, հանդիպում է առաջին անմորուսին, որ քաղաքից դուրս էր կանգնել:

- Բարի աջողում, ո՞ւր ես գնում,- հարցնում է անմորուսը:

- Բարով տեսանք, գնում եմ քաղաք,- ասում է,- հերս ինձ ուղարկել է, որ էս կովը տանեմ ծախեմ:

Անմորուսն ասում է.

- Տո՛ ինչ կով, էս հորթիկ է, հայ, մի՛ ասա կով, մարդիկ կծիծաղեն վրեդ. թե մտքիդ կա ծախելու, երեսուն ղուրուշ կտամ:

- Ախպե՛ր, դե՛ն գնա. չեմ իմանում՝ դո՞ւ ես ծուռ, թե՞ ես եմ ծուռ՝ վրես ծիծաղում ես,- ասում է ու շարժվում:

- Հա՛, հա՛,- ասում է անմորուսը,- մինչև դու չտանես քաղաք, չես հավատա, որ դա հորթիկ է:

Էդ տղեն մի քիչ էլ է առաջ գնում, էն մեկէլ անմորուսն է դեմը ելնում ու նախորդի նման հարցեր տալիս:

Տղեն ականջ չի անում. անմորուսն էլի դառնում ասում է.

- Տղա՛, ուրիշ մարդու մի՛ տուր էդ հորթիկը. ինչքան որ ուրիշները կտան, ես տասը ղուրուշ էլ ավելի կտամ. ասում եմ՝ ինձ ակա՛նջ արա, խեղճ ես. ես քո աղքատության համար եմ ասում:

Էլի էդ տղի խելքը բան չի կտրում. ինքն իրեն միտք է անում ու քիչ է մնում՝ գժվի. «Է՛, Աստվա՛ծ, կարո՞ղ է՝ սա հորթիկ է, հերս ինձ խաբեց, ասաց՝ կով է: Ինչ էլ լինի, ես կտանեմ, հո էդ քաղքցիք բոլորը անաստված չեն, որ խաբեն ինձ. թե մեկն էլ պատահեց ու ասաց՝ հորթիկ է, իրենք՝ իրենց Աստված. կտամ, թող գնա»:

Քիչ էլ որ գնում է ու մոտենում քաղաքին, էս անգամ էն մեկէլ անմորուսն է դեմը ելնում: Ինչ որ առաջին երկուսն ասել էին, սա դեռ մի բան էլ ավելի վրան դնում է ու ասում.

- Ախպե՛ր ջան, ախր մենք քրիստոնյա ենք, մի ավազանի ծնունդք, դու ինչի՞ ես էդպես անում, բե՛ր, տո՛ւր էդ հորթիկը, ես էնպիսի մարդ չեմ. ուրիշների համեմատ կարող եմ տասնհինգ ղուրուշ էլ ավելի տալ:

Աղքատ տղեն տեսնում է, որ էդքան տեղ եկել է, բոլորն էլ ասում են՝ հորթիկ է. մինչև հիմա երկու հոգու է հանդիպել՝ քառասուն ղուրուշից ավել չեն տալիս, իսկ էս մարդը հինգ ղուրուշ էլ ավել է տալիս:

- Ախպե՛ր, դու տո՛ւր փողը,- ասում է,- ես իմ հորթիկը տալիս եմ քեզ:

Տղեն փողն առնում է, ուրախ-ուրախ գնում գեղ: Ջղայնանում է հոր վրա ու ասում.

- Ապո՛, Աստված քո տունն ավիրի: Տո՛ բա դու հորթկան ասում էիր՝ կով է: Ով տեսավ, ասաց՝ հորթիկ է: Ես էլ տվեցի 45 ղուրուշի. ուտի իրենց գլուխը:

- Քոռնա՛ս դու, է՛շ ախմախ,- ասում է հերը,- էդ ո՞ւմ ես տվել, խաբել են քեզ:

- Չէ՛, ապո՛, ճամփի վրեն երեք հոգի կանգնած էին, շատ լավ մարդիկ էին երևում, նրանց տվի:- Օհո՛, իմացա, լաո՛, իմացա. էդ անմորուսներն են. դու սուս մնա, բան չկա: Թե քո հերը դրանց հախից եկավ՝ եկավ, թե չեկավ՝ թող գնան, գլուխները գովեն:

Հերը ամեն հնարք էլ գիտեր, համա խեղճի մոտ փող չկար, ուրիշներն էլ չէին տա, ստիպված ելնում է, գնում իր դրկիցի մոտ, ասում.

- Աստծու սիրուն, իրեք ոսկի տո՛ւր ինձ, իմ խեղճ ու կրակ տունն էլ թող քեզ փեշքեշ լինի:

Դրկիցը երեք ոսկին տալիս է, էդ մարդն էլ փողն առնում է, գնում տուն: Վերցնում է իր էշը, տանում քաղաք, որ ծախի:

Քիչ է մնացած լինում, որ մոտենա անմորուսներին, արագ ոսկիները կոխում է էշի քամակը: Երբ հասնում է առաջին անմորուսին, սուր փետով էշին բզում է. մի ոսկին թռչում, ընկնում է ցած: Շուտ վերցնում է, դնում ծոցը:

Անմորուսը որ էդ բանը տեսնում է, շատ է ուրախանում ու ասում.

- Ախպեր, քո էշը կծախե՞ս, ես պիտի առնեմ:

Ապոն էլ ասում է.

- Էդ էշը քո յոթ պապը չի կարա առնի, իմ էշը գին չունի:

Գնում է մեկէլ անմորուսի մոտ, էլի էշին բզում, էլի մի ոսկի ընկնում է, վերցնում դնում է գրպանը:

Ոնց որ առաջին անմորուսին ասաց, էդպես էլ ասում է մեկէլ երկու անմորուսներին:

Անմորուսները տեսնում են, որ դրա էշը իսկապես ոսկի է թրքում, հավաքվում են իրար վրա, գյուղացուն ասում.

- Քո էշը պիտի առնենք:

- Դուք ի՞նչ խելքի տեր եք. դուք կարո՞ղ եք դրա գինը տալ: Թե տամ էլ, ձեզ քսան ու չորս ժամով կտամ:

Գյուղացին իր էշը ծախում է ութ հազար ղուրուշի. սովորեցնում է դրանց, թե ոնց պիտի պահեն, որ ոսկի թրքի:

Էն մի անմորուսն առաջին օրը էշը տանում է, գյուղացու ասածի պես պահում. քսանչորս ժամը որ լրանում է, հարամ լինի՝ թրիքից բացի ոսկի չի տեսնում: Անմորուսը խելացի էր. էդ բանը իր ընկերներին չի ասում, որ դրանք էլ իրեն հավասարվեն:

Էն մեկէլ անմորուսներն էլ առաջինի նման են անում. տեսնում են, որ թրիքից բացի բան չկա.

- Հայ հո՛յ,- ասում են,- էդ հայը մեզ խաբեց, մեր փարեքն էլ տարավ:

Գյուղացին տուն է գնում: Գիտեր, որ իր խեղճ ու կրակ հալով անմորուսների ձեռքից չի պրծնի. շատ է մտածում, մի հնարք է գտնում:

Իր գյուղացիներին հինգ ոսկի է տալիս, երկու նապաստակ են բերում. է՛, փո՞ղ չկար, մի ձեռը տանում էր մի գրպանը, ոսկի էր հանում, մեկէլ գրպանն էր տանում,

արծաթ էր հանում. քամ էր գցել, թմն էր ցավել:

Նապաստակները որ առնում է, էդ ժամանակ իր կնկան պատվիրում է.

- Կնիկ, ես արտ եմ գնում. էս նապաստակներից մեկը հետս կտանեմ, մեկէլը դու պահի քեզ մոտ. ես գիտեմ՝ անմորուսները պիտի գան, ինձ հարցնեն: Երբ որ կգան, դրանց կճամփես արտ՝ ինձ մոտ: Դու էլ չմոռանաս՝ քսան տեսակ ճաշ կշինես՝ կհազրես, մինչև մենք գանք: Ես մի օյին պիտի խաղամ անմորուսների գլխին, կարող է՝ էդպես խաբեմ, նապաստակ տամ էշի փողի տեղ:

Աղոթրանը նոր է բացված լինում, անմորուսները ելնում են, շնչակտուր գնում տուն ավիրող Հարոյի տուն, հարցնում.

- Տուն ավիրող Հարոն ո՞ւր է գնացել:

- Ջահնամն է,- ասում է կնիկը,- էն է՝ արտը վար է անում:

Անմորուսները որ իմանում են տուն ավիրող Հարոյի տեղը, թե էրկու ոտ ունեին՝ տասներկուսն էլ ճարում են ու էն սհաթին հասնում իր մոտ:

Քիչ էր մնում, որ պիտի սպանեին Հարոյին, Հարոն դառնում ու ասում է.

- Ախպե՛ր, ինձ ինչի՞ եք սպանում, փողը չե՞ք ուզում, մի քիչ նստեք, արտը պրծնեմ, փողը տունն է, գնանք տուն, մի բրդուճ հաց ուտենք, ձեր փողն առեք, գնացեք. ես ձեր փողը ուտող չեմ:

Հարոն էդ պահին նապաստակը պարկից հանում է, իբր թե տուն պիտի ճամփի, որ կնկան պատվիրի՝ հաց ու ճաշ պատրաստի:

Նապաստակը Հարոյի ձեռքից պրծնելուն պես՝ «ո՞ւր եք, սարե՛ր, ձեզ եմ գալիս». փախչում պրծնում է: Անմորուսներն էլ հավատում են, թե նապաստակը ճիշտ որ տուն գնաց:

- Դե՛, ախպրտա՛նք,- դրանց դառնում է Հարոն,- մատաղ լինեմ ձեզ, մի քիչ շունչ քաշենք, հելնենք գնանք տուն, ես ձեր փողը տամ: Դարդ մի՛ արեք, հավատացե՛ք, ես ձեր ասած մարդկանցից չեմ:

Իրիկունը Հարոն առնում է իր ախպրտանցն ու գնում տուն: Հենց շեմը անցնում է, գոռում է կնկա վրա ու ասում.

- Դե՛, կնի՛կ, շո՛ւտ արա, մի քիչ հաց բեր ուտենք ու էս մարդկանց փողը տանք, թող գնան:

Կնիկը քսան աման ճաշ է բերում, սրանք որ տեսնում են, զարմանում են, իրենց մատները կծում են. միտք են անում, թե էդ նապաստակը Հարոյի խոսքերը

ոնց հասկացավ ու եկավ կնկան պատվիրեց: Բայց նրանք չգիտեին, որ մի նապաստակ էլ կնկա մոտ կար:

Տուն ավիրող Հարոն անմորուսների երեսներից գլխի է ընկնում, որ դրանք նապաստակի համար են միտք անում, դառնում ու ասում է դրանց.

- Ախպրտա՛նք, հա՛ց կերեք. հերիք է միտք անեք. հա՛, հիմա ձեր փողը կտամ:

Անմորուսները իրենց հացը ուտում են, չեն ուտում՝ միտք էին անում. տուն ավիրող Հարոն գոռում է.

- Կնի՛կ, շուտ բալնիքը բեր, սրանց փողը տամ, թող գնան:

Կնիկը մի քիչ ուշ է բերում բալնիքը, Հարոն դիտմամբ հերսոտում է, փետը վերցնում՝ պիտի ջարդեր կնկան, թե որ անմորուսները չլինեին:

- Տո հա՛յ, դու Աստծու երեսի՞ց ես ընկել,- ասում են անմորուսները,- փողը քեզ հալալ լինի. մենք նապաստակը պիտի առնենք:

Հարոն իբր թե չի ուզում նապաստակը տա, դիտմամբ ասում է.

- Ես չեմ տա, ինչ որ տվի՝ ի՞նչ խեր տեսա:

Անմորուսները շատ փողապաշտ մարդիկ էին, իրենց հոգին փողի համար կտային, էդ պատճառով իրար ասում են.

- Էդ նապաստակն առնենք, կարող է՝ դրա մեջ օգտվենք, մեր վնասը հանենք:

Ինչքան փող տվել էին էշի համար, էդքան էլ տալիս, նապաստակն առնում ու գնում են: Երբ որ մոտենում են քաղաքին, ուզում են գյուղացու նապաստակը փորձեն. հանում են պահած տեղից ու թողնում, որ գնա իրենց կանանց պատվեր տա՝ ճաշ եփեն, հաց պատրաստեն:

Երբ որ գնում են իրենց տները, հարամ լինի՝ ո՛չ հաց էին պատրաստել, ո՛չ ճաշ. կանանց գետնով են տալիս ու ծեծում:

Կնանիք երդում են ուտում, թե.

- Աստված վկա, մարդ չի եկել. մեզ բան չի պատվիրել:

Անմորուսները խենթանում են, խելքները թռցնում: Նորից ելնում են, գնում տուն ավիրող Հարոյի տուն:

Տուն ավիրող Հարոն էլի նախապես իր գործը տեսած է լինում. բերել էր մի կաշվե տոպրակ, մեջը արյուն էր լցրել ու պատրաստել, հետո դարձել ու կնկան ասել էր.

- Կնի՛կ, ես գիտեմ, էլի պիտի գան էդ անմորուսները: Էս տոպրակը կապի

վզիդ, ես կասեմ, կհերսոտեմ, թե դրանց փողը բեր, դու ականջ չանես, էդպես քանի անգամ կասեմ, դու չլսելու տուր: Էդ ժամանակ կտեսնեմ, որ անօգուտ է, կելնեմ, իբր թե էդ սուր դանակով քեզ կմորթեմ, բայց չվախենաս. տոպրակը կկտրեմ, դու էլ էն ժամանակ քեզ մեռած կձևացնես:

Անմորուսները դուռը բացում-չեն բացում, ներս մտնում-չեն մտնում, Հարոն դիտմամբ ձենը գցում է գլուխը.

- Կնի՛կ, դե շուտ, էս մարդկանց փողը բեր, ամոթով մնացինք... Բայց որ ուշացրել ես, չէ՛, վիզդ կկտրեմ:

Կնիկը ականջ չի անում, Հարոն էլի գոռում է.

- Շա՛ն աղջիկ, չեմ ասո՞ւմ՝ փողը բեր, է՛:

- Ջհաննամի գյոռը, բալնիքն ինձ մոտ չէ:

- Հալլա՛, հալլա՛, ես ո՞նց անեմ էս կնկա հետ... էլի՞ ասեմ, անզգա՛մ. դու դեռ ոտդ կա՞խ ես գցում:

- Ջայնըմին թե չես ասում... Ասում եմ՝ բալնիքն ինձ մոտ չէ. աղջիկը տարել կորցրել է:

- Կնի՛կ, դու ինչի՞ ես էդպես անում. քո արունքն առել ես քո աչք: Ուզում ես, որ քեզ սպանե՞մ, շան ու գիլի բաժի՞ն անեմ:

- Սպանե՞ս, մեկ էլ ասա՛. սպանելն էդքան հե՞շտ է, ի՛նձ սպանե՞ս...

Էս խոսքերը որ լսում է, Հարոն սուտ կատաղում է. աչքերը թռչում են ճակատը, կողքից խանչալը քաշում է, հասնում, կնկա ծամերը բռնում, զարկում գետնին, խանչալը դնում վզին, քաշում: Մեկ էլ տեսնում են՝ արյունը տան մեջ լճացավ, չորս կողմը բռնեց:

Անմորուսները որ էդ բանը տեսնում են, իրենց պռունկները վախից յոթ տեղով ճղվում է, թե «Մենք եղանք արընքտեր»:

Շվարում են, չեն կարողանում դուռը գտնել, որ փախչեն: Հալալ լինի Հարոյին. շուտ դառնում է անմորուսների կողմը, որ դուռը կորցրել ու չէին կարողանում գտնել.

- Հա՛,- ասում է,- ձեր սիրտը հանգստացա՞վ, մարդ էլ տվեցիք սպանել... Ո՞ւր պիտի փախչեք, որ իմ ձեռքից պրծնեք:

Անմորուսները մինչև դուռը գտնում են, իրենց հոգին կորեկի հատ է լինում, հաստատ մարդկությունից ընկնում են:

- Պայման ենք դնում,- ասում են,- որ քանի արընքտեր Հարոյի ձենը էս երկրում լսվում է, էլ էս երկիր պիտի ոտք չգցենք ու չգանք:

Թողնում ու գնում են:

Արընքտեր Հարոյի կնիկը ողջ-առողջ ելնում նստում է, նոր իրար հետ քեֆ են անում, ուտում-խմում: Իրենց ճղճղված շորերը փոխում են, ուրախ ու անհոգ երկար ապրում. ծռի հաց՝ անոթու փոր:

Սրանք էդ քեֆի մեջ թող մնան, անմորուսներն էլ՝ Աստծու կրակի մեջ:



ԱՆՄՈՐՈՒՍԻ, ԿԱՂԻ ՈՒ ԿՈՒՅՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի վաճառական կար, իր մեռնելու ժամանակ կանչեց տղին, ասաց.

- Տղե՛ս, քեզ պարտավորեցնում եմ, ուր որ առուտուրի կգնաս՝ գնա՛, բայց Հալեպ քաղաք չգնաս:

Հերը մեռավ, տարան թաղեցին: Տղեն բեռները բարձեց, ամեն քաղաք գնաց առուտուրի: Եկավ տուն, մորն ասաց.

- Ես պիտի գնամ Հալեպ քաղաք:

Ասաց.

- Ա՛յ որդի, քո հերը քեզ պարտավորեցրեց, որ Հալեպ քաղաք չգնաս:

Ասաց.

- Ճար չկա, պիտի գնամ:

Տղեն հարցուփորձ արեց, թե ինչը էնտեղ լավ գնով կծախվի, ասին՝ շիմշատի փետը շատ թանկ է ծախվում Հալեպում:

Տղեն առավ քառասուն ջորու բեռ շիմշատի փետ, բարձեց, Աստծու անունը

տվեց, ընկավ ճամփա: Գնաց, շատ ու քիչը Աստված գիտի, մոտեցավ Հալեպ քաղաքին: Մի իշևանատուն կար քաղաքից դուրս: Էդտեղի նոքարները եկան, բեռների առաջը կտրեցին, թե քաղաքի շուկան փակ կլինի, հիմի բերեք բեռները էստեղ վեր ածեք, գիշերն էստեղ կացեք, առավոտը շատ շուտ կգնաք քաղաք: Բեռները վեր ածեցին, կաղ մի մարդ եկավ տեսավ, որ բեռները բոլորը շիմշատ փետ է, մի բեռը գողացավ, կեսը տարավ լցրեց օջախը, կեսն էլ դրեց թախտի տակ:

Եկան էդ մարդիկ, հաց կերան, էդ կաղ մարդը եկավ ասաց.

- Էդ ինչ է ձեր բեռը:

Երբ ասացին՝ շիմշատ փետ է, խնդաց.

- Մեր վառելիքը միայն էդ է: Խեղճ մարդ, ահագին ծախս ես քաշել, ահագին վարձ ես տվել… Էդ նույնն է, որ աղը բարձես, տանես, որ Կողբում ծախես: Դե՛,- ասում է,- հոգ մի՛ անի, ես յոթ չափ ոսկի կտամ քեզ, քո ծախսն էլ դուրս կգա:

Էդ տղեն մտածեց, ասաց. «Ես յոթ չափ ոսկին առնեմ էստեղից հետ դառնամ, գնամ մեր քաղաքը, բա որ ասեն՝ գնացիր Հալեպ քաղաք, ինչ տեսար, ինչ պատմեմ: Գնամ, քաղաքը տեսնեմ, հետ դառնամ, գնամ»: Գնաց մտավ քաղաքը, էս կողմ ման եկավ, էն կողմ ման եկավ, իր խելքին մի էնպիսի մարդ չգտավ, որ դրանից խորհուրդ հարցնի: Հանկարծ տեսավ՝ մի ալևոր մարդ դուքանում առուտուր է անում: Ասաց.

- Բարի աչողում:

- Բարև, հազար բարով եկար, ղարի՛բ ախպեր: Ո՞րտեղացի ես:

- Ես,- ասաց,- երևանցի եմ, Փարպի գյուղից եմ:

- Բա ինչ գործով ես եկել:

Ասաց.

- Եկել եմ քաղաքը ման գալու: Բիձա՛, կարո՞ղ է՝ շիմշատ փետ ունենաս:

Ասաց՝ ինչքա՞ն: Ասաց՝ մի տասը փութ:

Ասաց.

- Ախպե՛ր, էստեղ շիմշատը փթով չեն ծախում: Քաղաքում շատ-շատ լինի, չորս-հինգ փութ լինի, շատ էլ թանկ է, մի քանի գրամը հինգ մանեթ արժի:

Ասում է.

- Ափի՛, վերևն՝ Աստված, ներքևը՝ դու, ես բերել եմ քառասուն ջորու բեռ, քաղաքից դուրս՝ իշևանատանը, բեռները իջեցրել եմ: Իրիկունը հոգնած գնացել

ենք, հաց ենք կերել: Մի կաղ մարդ կար, չեմ իմանում՝ իջևանատան տերն էր, թե՞ ով էր, ինձ ասաց, թե մեր քաղաքում էդ փետը ձրի է, վառում են, ու տարավ ցույց տվեց, որ օջախը լիքն էր, թախտի տակը լիքն էր: Շատ որ երկար խոսեցինք, տեսավ, որ ես մտքի տակ ընկա, ասաց. «Մի՛ մտածի, Աստված ողորմած է, հազարից մեկ, որ Երևանից եկել ես Հալեպ, մեր քաղաքի համար պակասություն կլինի, որ էստեղից վնասով հետ դառնաս»: Բերեց մի ման, ասաց. «Սրանով յոթ չափ ոսկի կտամ քեզ»: Հիմի բեռներս էնտեղ բռնված են: Ափի՛, մի ճա՛ր արա, բեռներս էնտեղից ազատի:

Ափին ասում է.

- Որդի՛, էդ շատ դժար է, էն պատճառով, որ դրանք երեք ընկեր են... Քանի էդպիսի մարդիկ են եկել, թալանել են: Հիմի քեզ որ ճար անի, դրանց խոհարարը ճար կանի: Գնա՛ խոհարարի մոտ:

Տղեն գնաց էդ խոհարարի մոտ, ասաց.

- Վերևն՝ Աստված, ներքև՝ դու, հույսս դրել եմ քեզ վրա: Էս նեղ տեղից ինձ ազատի, ինչ որ ուզես, կտամ:

Խոհարարն ասաց.

- Ես քո ողջությունն եմ ուզում, ես հաստատ խոսք եմ տալիս, որ քեզ կազատեմ: Գիշերը որ կգնաս էն սենյակը, որտեղ պիտի քնես, օջախի անցքը բաց կանես, ականջ կդնես: Կաղը, անմորուսը, կույրը կգան, գուշակին կխոսեցնեն: Էդ ժամանակ կլսես՝ գուշակը ինչ կասի, էդ ասածը կանես:

Տղեն եկավ, խոհարարի ասածն արեց, օջախի անցքը բացեց, ականջը դեմ արեց:

Կաղը, անմորուսը, կույրը բերեցին գուշակին, ասացին.

- Գուշա՛կ, երևանցին քառասուն բեռ շիմշատ է բերել, քառասուն բեռին մենք յոթ չափ ոսկի պիտի տանք: Քառասուն բեռը ինչքա՞ն ոսկի կանի, մենք ինչքա՞ն կհարստանանք:

Գուշակն ասաց.

- Նա երևանցի է, ամեն քաղաք, ամեն տեղ ման է եկել, դուք որ էդքանը գիտեք, նա ձեր ութ չափ կիմանա: Բա որ նա ասի. «Յոթ չափ ոսկի չեմ ուզում, յոթ ման լու եմ ուզում», ո՞րտեղից կտաք էդքան լուն:

- Ա՛յ քո տունը շինվի,- ասացին,- նա էդքանը ո՞րտեղից կմտածի, կասի:

Բայց էդ մարդը էն ծակով լսում էր: Առավոտ լույսը բացվեց, էդ տղեն վեր կացավ, գնաց էդտեղի տանուտերի մոտ, ասաց.

- Ես էսօր տասը օր է՝ եկել եմ, իմ քառասուն բեռը սրանք պահել են: Կանչի տեսնենք՝ ինչ են տալիս, ես տան-տեղի տեր եմ, վեր կենամ, գնամ:

Տանուտերը կանչեց անմորուսին ու կաղին, ասաց.

- Էս մարդուն ինչ տալու եք՝ ինչի՞ չեք տալի, որ գնա:

Ասաց.

- Յոթ չափ դրան ոսկի պիտի տանք:

Ասաց.

- Ես փողի կարոտ չեմ, ես ապրանքներ շատ ունեմ, իմ հովիվները քնում են, անասունները ծնելու ժամանակ վնասվում են: Էդ մարդիկ, որ խոստացել են՝ յոթ չափ ոսկի տան, թող տեղը յոթ աման լու տան, չորս ամանը՝ էգ, երեք ամանը՝ որձ:

Էդ մարդիկ գնացին լու հավաքելու: Մեկը բռնում էին, բերում դնում ամանի մեջ, մտիկ էին տալիս՝ ո՞րձ է, թե՞ էգ, թռչում, փախչում էր: Էդ մարդկանց ճարը կտրվեց, թողեցին եկան տուն:

Էդ տղեն գնաց իր ապրանքի մոտ, բայց էդ կաղը, անմորուսը, կույրը գնացին, մի մարդ գտան, կանչեցին դրան, փող տվին՝ հարյուր մանեթ, մի ձեռք էլ լավ շոր:

Ասին.

- Էդ երևանցին որտեղ կգնա հաց ուտելու, դու էլ կմտնես էնտեղ, ինչ որ նա կուզի, դու էլ կուզես, վերջը դրա մասին ամեն ինչ կիմանաս, կգաս մեզ մոտ:

Էդ երևանցին ման եկավ, ման եկավ, մտավ մի գինետուն, էդտեղ հաց ուզեց, մի շիշ էլ գինի, նստեց իր հացը ուտելու: Էդ մարդը դրա հետևից շտապ մտավ էդ գինետուն, տեսավ՝ երևանցին ինչ է ուտում, ինքն էլ ուզեց: Ուտելու ժամանակ նրա կենացը խմեց:

Ասաց.

- Ախպե՛ր, քո կենացը:

Էն էլ սրա կենացը խմեց: Էդտեղ իրար հետ ընկերացան, ու երևանցին պատմեց ամեն ինչ իր մասին: Էդ մարդը որ երևանցու մասին ամեն ինչ իմացավ, եկավ, պատմեց կույրին: Էդ կույրը հաջորդ օրը փողոցում երևանցու առաջը կտրեց:

Ասաց.

- Բարով, Մարտիրո՛ս ջան, հերդ, մերդ ո՞նց են, էսինչ բարեկամդ, էսինչ ծանոթդ ո՞նց են:

Էդ տղեն զարմացած մնաց:

Ասաց.

- Գոհություն Աստծո, փափագով ուզում էի քեզ տեսնել, հիմի տեսա: Ես էն ժամանակ որ ձեր տանն էի, դու ծնվեցիր, աչքիդ մեկը փուչ էր, իմը հանեցի, դրի քո աչքի տեղը:

Տղեն մնաց զարմացած:

Էդ մարդը գնաց ուղիղ տանուտերի մոտ: Ասաց.

- Տանուտե՛ր, երևանցի Մարտիրոսը, երբ նրանց տանը ծառա էի, դա մորից ծնվեց, աչքի մեկը փուչ էր, իմ աչքը հանեցի, տվի դրան: Մինչև հիմի չէի ասում, յոլա էի գնում, հիմի էլ չեմ կարող: Խնդրում եմ՝ իմ աչքը առնեք, տաք ինձ:

Էդ ժամանակ տանուտերը կանչեց երևանցուն:

Ասաց.

- Էս մարդուն ճանաչո՞ւմ ես:

Ասաց.

- Էս մարդը մեր տուն եկել է, հիմի ես չգիտեմ:

Ասաց.

- Էս մարդն ասում է՝ քո աչքի մեկը սրանն է, հիմի ուզում է: Ի՞նչ ես ասում:

Էդտեղ տղեն մի օր ժամանակ խնդրեց: Ուղիղ գնաց ալևոր դուքանչու մոտ:

Ասաց.

- Վերևն՝ Աստված, ներքևը՝ դու, ինձ մի ճա՛ր արա:

Ասաց.

- Թե քեզ ճար անի, էն խոհարարը կանի:

Գնաց խոհարարի մոտ: Ասաց.

- Վերևն՝ Աստված, ներքևը՝ դու, ինձ մի անգամ ազատել ես, էս անգամ էլ պիտի ազատես:

Ասաց.

- Էլի կգնաս էն սենյակի օջախի ծակը բաց կանես, էնտեղից ականջ կանես: Կաղը, անմորուսը, կույրը պիտի էլի գուշակին խոսեցնեն: Էնտեղ կիմանաս՝ ինչ է

ասում, էն էլ կանես:

Տղեն իր ժամանակին գնաց էդ սենյակը, էդ ծակը բաց արեց, ականջ դրեց, տեսավ՝ դրանք գուշակին բերին խոսեցրին:

Ասաց.

- Երևանցին կաղի ձեռքից պրծավ, կույրի ձեռքից չի պրծնի, տեսնենք՝ իմ ձեռքից ո՞նց է պրծնում:

Ասաց.

- Նա երևանցի է. դուք նրա հետ չեք կարող:

Ասաց.

- Էլ նա ի՞նչ կարող է անել: Որ իմացավ, թե աչքը պիտի հանեն, կթողնի, կփախչի:

Ասաց.

- Ինչի՞ է փախչում: Կասի՝ շատ լավ. իմ մի աչքն էլ հանեք, կույրի էն մի աչքն էլ հանեք, դրեք կշեռքը կշռեք, թե որ նույն քաշին կլինեն, տվեք նրան:

Հաջորդ օրը տղեն հենց էդպես էլ ասաց:

- Բերեք, իմ մի աչքն էլ հանեք, նրանն էլ, դնենք կշեռքը, կշռենք, թե որ նույն քաշի ելավ, նրանն է, տվեք իրեն:

Կույրը էդ որ լսեց, պատճառ բռնեց ու դուրս էկավ, վերցրեց կաղին ու անմորուսին ու էն գնալն էր որ գնաց... Մինչև հիմի էլ որ երևանցու անունը լսում են, թողնում փախչում են:

Նոր էդտեղ էդ տղեն իր բեռները ծախեց, մի բեռը տվեց խոհարարին նվեր, էդ իջևանատունն էլ թողեց դրան, իր բեռները ոսկի շինած հետ դարձավ, եկավ իրենց երկիր:

Էդտեղ երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ականջ դնողին:

ՄԱՏԱՆՈՒ ԱԿԸ

Լինում է, չի լինում մի պառավ: Էդ պառավը մի տղա է ունենում: Պառավը միշտ խրատ է տալիս տղին, թե մարդու չվնասես, գազան ու հավք չսպանես:

Աղքատ են լինում, ու տղեն ամեն օր գնում է անտառ, շալակով փետ է բերում, ծախում են, հացի են տալիս, ապրում:

Մի օր գյուղի տղերքը մի կատու են բռնում, չարչարում՝ կապելով, ծեծելով, ու խեղճ կատվի վայնասունով զվարճանում են: Պառավի տղի մեղքը գալիս է, ասում է.

- Տղե՛րք, մեղք է, բա՛ց թողեք էդ կատվին:

- Թե խղճում ես, հա՛ն մեզ փո՛ղ տուր, որ կատվին թողնենք,- ասում են:

Իսկ կատուն մլավում էր, վայվայում էր լալով: Տղեն էդ օրվա ծախած փետի գինը՝ քսան մանեթը, տալիս է ու կատվին ազատում, տանում տուն: Էդ իրիկուն սոված են քնում: Մեկէլ օրը գնում է փետի, կատուն էլ հետն է գնում: Իրիկունը դառնում են, ու էդ օրվա փետը ծախվում է քառասուն մանեթի: Քսանը տալիս է

հացի, քսանը ձեռքին գալիս է: Ճամփին տեսնում է, որ գյուղի տղերքը մի պստիկ շուն են բռնել, չարչարում են ու զվարճանում: Քսան մանեթը տալիս է ու շանն ազատում, տանում: Հաջորդ օրը շունն ու կատուն հետը գնում են անտառ, ու իրիկվա բերած փետը վաճառվում է վաթսուն մանեթի: Քսանը տալիս է իր ու մոր համար հացի, քսանով շանն ու կատվին է կերակրում, քսանը մնում է ձեռքին, տուն է դառնում: Ճամփին տեսնում է, որ գյուղի տղերքը մի օձի են չարչարում: Քսան մանեթը տալիս է, օձին էլ է ազատում, դնում է մի կարմիր պուտուկի մեջ, պահում է: Հաջորդ օրը պուտուկը տանում է անտառը, օձին հանում է, որ թողնի՝ գնա, օձը չի գնում: Կեսօրվա հացին տղեն նստում է պաղ աղբյուրի մոտ, շունն ու կատուն էլ իր հետ են ուտում: Մի կտոր հաց էլ իր ձեռքով տալիս է օձին: Օձը դառնում է մի գեղեցիկ տղա ու պատմում է, թե՝ «Ես թագավորի տղեն եմ, կախարդները ինձ գողացան, օձ դարձրին ու պայման դրին, որ երբ մարդ արարածն իր ձեռքով հաց տա ինձ, կախարդանքը վերանա. ես դրա համար գյուղ եկա, դու ինձ ազատեցիր չար տղերքից, դու ինձ ազատեցիր կախարդանքից, ես քեզ ինչ լավություն որ անեմ՝ քիչ է»:

Գնում է տղեն ու թագավորին պատմում գլխով անցածը:

Թագավորը երկու արաբ է ուղարկում պառավի տղի հետևից: Թագավորի տղեն արաբներին սովորեցնում է, որ տղին ասեն, թե՝ «Երբ թագավորը քեզ ասի՝ ուզի՛, ինչ որ կուզես, դու ասա՝ քո մատի մատանին եմ ուզում: Էդ մատանու ակը որ շրջես, մենք կհասնենք քեզ ու ինչ որ քո սիրտն ուզի՝ կպատրաստենք»: Տանում են թագավորի մոտ, թագավորն ասում է. «Իմ տղին ազատել ես, ինչ որ քո սիրտն ուզում է՝ ուզի՛, կտամ քեզ»: Տղեն ասում է. «Քո մատի մատանին տո՛ւր ինձ»: «Վա՛յ, քեզ սովորեցնողի վիզը կոտրվի,- ասում է թագավորը,- բայց քանի որ խոստացել եմ, կտամ»: Եվ տալիս է մատանին, մի խուրջին լիքը ոսկի ու ճամփում:

Մերն ու տղեն տալիս են, առնում ու որոշում են, որ գնան, թագավորի աղջիկն ուզեն: Պառավը ելնում գնում է, խնամաթոռին նստում: Թագավորը գալիս հարցնում է, թե ինչ է քո ուզածը: Պառավն ասում է. «Եկել եմ Աստծո հրամանով քո աղջիկն ուզեմ իմ տղին»: «Կտամ,- ասում է թագավորը,- բայց դու կարո՞ղ ես հարսի՝ իմ ուզած նվերը տալ»: Պառավն ասում է. «Հա՛յ, հա՛յ, կտամ»: Թագավորն

ասում է. «Ուզում եմ մի սնդուկ ոսկի, իմ պալատի պես տուն ու տեղ, իմ տնից մինչև քո տուն երկու շարք ծառեր տնկված, մեջտեղը ծայրից ծայր գորգ փռված, երկու կողմում դռնից դուռ ձիավորներ, բոլոր ձիերը՝ սպիտակ»: Պառավը գալիս է, տղին պատմում, տղեն մատանու ակը շրջում է, երկու արաբները գալիս են: Տղան ուզում է, որ արաբները պատրաստեն թագավորի ասածները: Մի գիշերվա մեջ ամեն բան պատրաստվում է, հարկն ու հարսանիքն անում են, ու թագավորի աղջիկը դառնում է պառավի տղին կին, իրենց պալատում ապրում են ու վայելում:

Մի վաճառական, որ գիտեր էդ մատանու զորությունը, ինքն էլ մատանի ծախելու անունով մտնում է դրանց տուն: Պառավը մեռել էր, տղեն տանը չէր, ու էն մատանին դրված էր պատի խոռոչում: Թագավորի աղջիկը վաճառականից մատանիներ է ընտրում՝ գնելու համար: Վաճառականը տեսնում ու ճանաչում է խոռոչում դրված մատանին, բայց աղջիկը մատանու մասին չգիտեր: Վաճառականը

ասում է. «Երեք մատանի ընտրեցիր, թող քեզ մնան, այ էն մատանին տուր ինձ»: Անմիջապես դնում է մատը, ակը շրջում է ու ասում. «Էս պալատով հասնեմ յոթ ծովի կղզին»: Իսկույն կատարվում է: Իրիկունը տղեն գալիս է, տեսնում՝ ոչ պալատ կա, ոչ թագավորի աղջիկ, ոչ բան. իր հին ու աղքատիկ քողտիկն է միայն: Դարդ է անում, ընկնում սար ու ձոր:

Շունն ու կատուն շատ են խղճում իրենց բարերարին ու խոսքները մեկ են անում, որ ծով ու ցամաք անցնեն, մատանին գտնեն, բերեն: Տղեն լրիվ մենակ է մնում: Գնում են, գնում շունն ու կատուն, ծովեր անցնում, ցամաքներ անցնում ու հասնում են մկների թագավորության աշխարհը: Սահմանի գլուխը պահող զորքերն ու զորապետները սարսափով փախչում մտնում են ծակերը, ու աշխարքի չորս կողմում իմանում են կատվի գալը: Մկների թագավորը մեծ ժողովք է անում, բերդերը զորք են լցնում, թոփ ու թվանք շարում, ելնում, գիր են գրում կրիաների թագավորին, որ մի քանի հազար զրահապատ զորք ուղարկի իրենց օգնության, որ ծովի կողմից կատվին պաշարեն: Գրում են ոզնիների թագավորին, որ մի քանի հազար նիզակավոր զորք էլ նա ուղարկի: Խոստանում են, որ եթե նրանց քաջությամբ ազատվեն կատվի ձեռքից, մկների ցեղը տասը տարի հարկ կտա կրիայի ու ոզնու թագավորություններին: Դեռ թուղթը չստորագրված՝ շունը հասնում է մկների թագավորի պալատի դուռը և տեղեկացնում, որ ինքը կատվի կողմից պատգամավոր է եկել ու ասում է. «Եթե ուզում եք, որ ամենազորավոր կատուն ձեր ցեղը չջնջի, մի քանի իշխանազուն մկներ, բայց լավ լողվոր լինեն, թող գան ու մեզ տանեն, հանեն կղզիները և մեր ուզած տեղերը պտտեցնեն»: Մկները յոթ փառավոր իշխան ու կտրիճ լողվոր են ընտրում: «Հերիք է»,- ասում է շունը: Մկները առջևից են լողում, կատուն էլ ելնում է շան շալակը, ծովից ծով կտրում են, անցնում, մինչև հասնում են յոթ ծովի մեջտեղ, տեսնում են՝ պալատը երևաց, ելնում են ցամաք: Կատուն մկներին հրամայում է, որ ներս մտնեն ու վաճառականից մատանին բերեն: Գիշերը պատը ծակում են, գնում են հասնում վաճառականի սենյակը, մատի վրա մատանի չեն տեսնում: Ուր նայում են, չեն գտնում: Մտածում են՝ բերանում պահած չլինի՞: Վաճառականը քնած է լինում, քթախոտի տուփն էլ՝ բարձի մոտ: Մուկն իր պոչը թաթախում է քթախոտի մեջ, մոտեցնում վաճառականի

քթին: Վաճառականը փռշտում է, ու մատանին բերանից դուրս է թռչում: Վերցնում են ու գալիս: Մկները շանն ու կատվին ցամաք են հանում, ու կատուն նրանց խանության աստիճան է տալիս:

Գալիս են, հասնում իրենց տիրոջը, մատանին դնում են առաջը: Դնում է մատը, ակը շրջում. պալատը, թագավորի աղջիկն էլ հետը, գալիս է իր տեղը, վաճառականն էլ՝ մեջը, որ վախից տեղնուտեղը չորանում է: Իսկ շանն ու կատվին տղեն պահում է ու պատվում:

ԿԱՐՄԻՐ ԿՈՎԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում, երկու երեխա են ունենում՝ մի տղա, մի աղջիկ: Ժամանակ է անցնում, ու էդ մարդու կնիկը մեռնում է: Էդ մարդը հովիվ էր: Սա գնում է, իրեն մի նոր կնիկ է բերում: Բայց էդ կնիկը երեխեքին տիրություն չի անում: Էդ հովիվը իր նոր կնկան ասում է.

- Կնի՛կ, ախր էս էլ քո երեխեքն են, տիրությո՛ւն արա:

- Չէ՛, բան չունես, գնա՛ քո նախրի հետ, դրանք ինձնից չեն ծնվել, ինչի՞ պիտի տիրություն անեմ:

Էդ հովվի ճարը կտրվում է, ամեն անգամ իր երեխեքին հետը տանում է, էլ տանը չի թողնում, որ կնիկը չծեծի ու չարչարի: Դրանք մի կարմիր կով ունեին, էդ կարմիր կովը երեխեքին ասում էր.

- Դուք մի՛ վախեցեք, նստե՛ք, ես նախիրը կպահեմ:

Կարմիր կովը մինչև իրիկուն նախիրը պահում էր, վերջում էլ ժողովում էր, երեխեքը քշում, բերում էին տուն: Դրանց երկուսին էդ խորթ մերը օրական մի կտոր հաց էր տալիս, երբ որ գալիս էր հացի ժամը, կարմիր կովը գալիս կանգնում էր, կաթ էր տալիս, էդ երեխեքն ուտում էին:

Ժամանակ է անցնում, էդ կնիկը մի աղջիկ է բերում: Էդ որբ երեխեքին չէր սիրում, իր աղջկան էր սիրում: Իսկ կարմիր կովը էն երեխեքին էր սիրում: Էդ կնկա աղջիկը դառնում է տասը տարեկան, նրան էլ է ուղարկում նախիր: Որբերին ասում է.

- Ինչ որ դուք եք ուտում, որ էդպես կլորվել եք, էն էլ իմ աղջկան տվեք, իմ աղջիկն էլ ձեզ պես թող լավանա:

Աղջկա հետ էլ չորս-հինգ հաց էր դնում: Կովը էն երեխեքին սովորեցնում, ասում է.

- Դուք մի՛ վախեցեք, էն աղջիկն էլ թող գա, իմ կաթն ուտի, իմ կաթը նրա համար դառն է, ձեզ համար՝ քաղցր:

Էդ աղջիկը քանի գնում բարակում է, էն որբերը գիրանում են: Հովիվն էլ խեղճացել էր, չէր կարողանում նախիր գնալ: Մերը աղջկան հարցնում էր, ասում էր.

- Աղջի՛, քեզ հետ հինգ հաց եմ դնում, դրանց երկուսին տալիս եմ մի պատառ, ինչի՞ են դրանք գիրանում, իսկ դու բարակում ես:

Աղջիկը մորն ասում է.

- Նանե՛, ես էն կարմիր կովի կաթը որ ուտում եմ, էնպես դառն է, սիրտս խառնում է, էնպես դառն է... Նրանք որ ուտում են, հարցնում եմ նրանց, ասում են՝ շատ քաղցր է:

- Շատ լավ, իրիկունը թող հլա էն կարմիր կովը գա...

Էլ աղջկան չի թողնում, որ գնա նախիր: Մի օր էդ կնիկը առավոտ ծեգին ելնում է, մարդուն ասում.

- Էսօր գիշերը մի երազ եմ տեսել:

- Ի՞նչ երազ ես տեսել, կնի՛կ:

- Իմ աղջիկը էսքան խեղճացել է, դու իսկի տիրություն չես անում, ախր իմ աղջկան ցավ է դիպել, ուխտ էլ տարա՝ չլավացավ: Գիշերը երազիս մեջ տեսա, մի սուրբ ինձ հասկացրեց, թե էն ձեր կարմիր կովը որ մորթեք, անեք էդ աղջկան մատաղ, շատ շուտով կլավանա:

- Կնի՛կ, բայց մենք կարմիր կովը որ մորթենք, ախր թան չի լինի, մածուն չի լինի, բա մենք մեր երեխեքին ինչո՞վ պահենք:

- Չէ՛, պիտի մորթես:

Հովվի ճարը կտրվում է, ասում է.

- Լավ, կնի՛կ, առավոտը մորթեմ:

Կարմիր կովը էդ օրը մռութը կախել էր, իմացել էր, որ իրեն պիտի մորթեն: Էդ աղջիկն ու տղեն որ գալիս են կաթ ուտելու, տեսնում են, որ կարմիր կովը շատ տխուր է, հարցնում են.

- Մեր մերի՛կ, կարմի՛ր կով, դու ինչի՞ ես էդքան տխուր:

- Անուշի՛կ որդիք, ինձ պիտի մորթեն. ձեր էն խորթ մերն է արել:

- Ինչի՞:

- Իր աղջկան մատաղ է անում, ինձ մորթում է:

- Մեր մերի՛կ, կարմի՛ր կով, մենք իրիկուն կգնանք մեր հորը, մեր մորը կաղաչենք, ոտներն ու ձեռները կպագենք, որ քեզ չմորթեն:

Կարմիր կովն ասում է.

- Չէ՛, չէ՛, էդպես մի՛ ասեք. էդպես ասեք՝ ձեզ կծեծի, իմ սիրտը կը մրմռա: Ձեզ մի բան կասեմ. որ ինձ կմորթեն, իմ արյունից գողտուկ վերցրե՛ք, քսե՛ք ձեր քիթ-բերնին, հետո էդ ձեզ կերևա իբր ոսկի թել. իմ ոսկորները, իմ գլուխը, իմ ոտները կտանեք, կհորեք իմ մսուրքի մեջ, հետո ձեզ պետք կգա:

Էդ երեխեքը նստում են, շատ դառը լաց են լինում. կարմիր կովը նեղվում է դրանց լացից, գալիս է երեխեքի մոտ:

- Ինչի՞ եք լալիս, իմ որդի՛ք ջան:

- Ապա ի՞նչ անենք, մերի՛կ: Որ քեզ մորթեցին, մեր բերանը կցամքի, էլ մեզ պահող չի լինի:

- Եկեք գնանք, էստեղ մի պառավ կա, ես ձեզ կվստահեմ էն պառավին:

Կարմիր կովը երեխեքին տանում է. գնում են մի քարանձավի դռանը կանգնում: Կարմիր կովը ձեն է տալիս, պառավը դուրս է գալիս: Ասում է.

- Պառա՛վ, դու գիտե՞ս, որ ինձ պիտի մորթեն:

- Հա՛, բա, գիտեմ:

- Էս իմ երեխեքին տալիս եմ քեզ պահ, կսիրես:

Պառավը պատասխանում է.

- Շատ լավ, շատ լավ, կարմի՛ր կով:

Թողնում գալիս են:

- Աղջի՛, տղա՛, իմ մի կոտոշը դուրս կթողնեք, ինչ վախտ որ կսովածանաք,

կգաք կծծեք, կկշտանաք: Նախիրն էլ որ կբերեք, էս պառավը ձեզ տեր կկանգնի,- ասում է կարմիր կովը:

Իրիկունը գնում են տուն, էն աղջիկը վազում, գալիս է կարմիր կովի դեմ.

- Նանե՛, իմ մատաղը եկավ:

Առավոտ կարմիր կովին մորթում են: Էն երեխեքը կարմիր կովի արյունից մի ամանով վերցնում են, տանում, քսում են իրենց քիթ-բերնին: Տեսքները փոխվում է, ծամերը, երեսները դառնում են ոսկեզօծ:

Էդ կարմիր կովի միսը ով որ ուտում էր, իսկի համ չկար, կասես թե՝ դարման, էն երեխեքը որ ուտում են, էնքան քաղցր էր, կասես թե՝ մեղր:

Կարմիր կովի ոսկորները, ոտները, գլուխը ծածուկ հավաքում են, տանում, պահում են կարմիր կովի մսուրքում:

Ինչքան որ սովածանում էին, գնում էին էն մսուրքի մոտ, կարմիր կովի կոտոշը ծծում էին, կշտանում: Էդ խորթ մերը էլ էն պատառ հացն էլ չի տալիս, թողնում է դրանց սոված. օրական իր աղջկան կերցնում-խմցնում է:

Ձմեռ ժամանակ մի հարսանիք է լինում: Էդ կնիկը իր աղջկան զարդարում է, շորեր հագցնում, գոտի կապում, տանում հարսանիք: Էն որբ երեխեքը մնում են տանը լալով: Կարմիր կովը մսուրքից ձեն է տալիս, էն պառավը քարանձավի միջից գալիս է, կարմիր կովի մսուրքը քանդում, շորեր հանում, հագցնում աղջկան, մեկէլ շորերն էլ հանում, հագցնում է տղին, շատ զարդարանքով տանում է հարսանքատուն, պարում են ու ուրախանում: Էդ իրենց խորթ մերը որ տեսնում է, ասում է.

- Վա՛հ, երնեկ էդ աղջկա տիրոջը, էդ տղի տիրոջը: Երանի կա՛մ էդ տղի տերը գար իմ աղջիկն ուզեր, ես իմ աղջիկը տայի իր տղին. տեսնես օտարակա՞ն է, ո՞րտեղից է, կա՛մ Աստված ինձ մի տղա կամենար, ես էն աղջիկն ուզեի իմ տղին: Տեսնես էն ո՞ւմ աղջիկն է:

Հարսանքավորի ցրվելու ժամանակ պառավն առնում է աղջկան ու տղին, շուտ գալիս է տուն, բերում շորները հանում է, տանում կարմիր կովի մսուրքում պահում: Էդ տղեն ու աղջիկը գալիս են տուն, պառկում քնում, պառավն էլ թողնում գնում է:

Խորթ կնիկն առնում է աղջկան, գալիս տուն, դրանց վեր է հանում, ասում՝ ա՛յ սև կապես, աղջի՛, չեկար, տեսնեիր:

Էդ որբ աղջիկն ասում է՝ ի՞նչ, նանե՛:

Сарьян
1937

- Մի օտարական աղջիկ ու տղա եկել էին, բռնել խաղում էին: Էդ աղջկա ոտների սոլերը արծաթ էր, էդ տղի ոտների սապոգները ոսկի էր, չեմ կարող ամբողջը պատմել, էդ երկուսի շորերը միլիոնով գլուխ չէր գա:

- Նանե՛ ջան, բա մեզ էլ ինչի՞ չտարար՝ տեսնեինք:

- Ա՛յ սև կապես դու, դու գայիր, կընկնեիր մարդկանց ոտների տակ, քեզ ոտի տակ կտային:

Էն մեկէլ օրը բերում է, կես լիդր կորեկ լցնում մի պղնձի մեջ, էն տղին ու աղջկան ասում՝ Էնքան պիտի լաք, որ ձեր արցունքը էս կորեկը ծածկի, իր աղջկան զարդարում է, առնում գնում հարսանիք:

Քարանձավի միջի պառավը գալիս է, կարմիր կովի մսուրքից շորերը հանում, բերում լավ զարդարում է: Աղաջուր է սարքում, արցունքահամ է անում, լցնում է էդ կորեկի վրա, կորեկը ծածկում: Ելնում է աղջկան, տղին վերցնում, գնում հարսանիք: Աղջիկն ու տղեն պարում են, ուրախանում: Հարսանքավորի ցրվելու ժամանակ պառավը վերցնում է աղջկան ու տղին, առաջն անում, գալիս: Թագավորի տղի ավազանի մոտով անցնելու ժամանակ աղջիկը ոտը գցում է, սոլը ոտից պրծնում, ընկնում է ավազանի ջրի մեջ:

- Վա՛յ, նանե՛, իմ սոլն ընկավ ավազանը:

- Բան չկա, որդի՛ ջան, քելեք գնանք, քանի ձեր մերը չի եկել, ձեր շորերը տեսնի վրաներդ, ձեռներիցդ կառնի:

Բերում է երեխեքին տուն, շորերը պահում կարմիր կովի մսուրքում, երեխեքը գալիս պառկում են, քնում, պառավն էլ թողնում է, գնում: Մերը հետևներից գալիս է, աղջկան վեր հանում:

- Ա՛յ սև կապած, երեկվա տղեն, աղջիկը եկել էին, էսօր էլ ուրիշ շոր էին հագել, չգիտեմ՝ հրեղեն են, չգիտեմ՝ ծովեղեն են… Էնպես փախան, չգիտեմ, թե ուր գնացին:

Լույսը բացվում է, էդ քաղաքի թագավորի տղեն իր ձին ուղարկում է ավազան՝ ջրելու: Ինչ հնարք անում են, ձին ավազանի վրա չի գնում: Գալիս են, թագավորի տղին ասում.

- Թագավորի՛ տղա, էդ ամեն օրվա մեր ավազանն է, ձին ամեն օր գնում էր, ջուր էր խմում, էսօր չի գնում՝ խմի:

Թագավորի տղեն ելնում գալիս է ավազանի մոտ, նայում, տեսնում, որ մի

բան ավազանի մեջ պսպղում է: Կեռը գցում է, հանում, տեսնում, որ սոլ է, տանում է, թագավորին ցույց տալիս, ասում.

- Թագավո՛ր, կա՛մ էս սոլի տիրոջը հիմի կգտնես, կա՛մ ես հիմի ինձ կսպանեմ:

Թագավորը սոլը դնում է գետնին, քաղաքում լուր տարածել է տալիս, ասում.

- Որքան էգեղեն կա՝ ժողվեք, բերեք:

Ինչքան էգեղեն կար՝ աղջիկ, կնիկ, հարս, ժողվում են, բերում, բացի էդ երկու երեխից: Էն կնիկն էդ աղջկան պահում է, թե, սև՛ կապած, դու էդպես տկլոր, բոբիկ պիտի գնաս թագավորի մո՞տ. ես իմ աղջիկը կուղարկեմ՝ գնա:

Ելնում իր աղջկան առնում է, գնում: Թագավորն էգեղենը հավաքում է, ինչքան որ կար, իմանում է, որ մեկը պակաս է. սոլն էլ ոչ մեկի ոտի վրա չի գալիս:

Գալիս են, էն որբ աղջկան գտնում, առնում գնում: Բերում են, սոլը հագցնում, տեսնում են, որ ասես իր ոտից բուսած մի բան լինի:

Թագավորի տղեն ասում է.

- Իմը կա՝ էս է, չկա՝ էս է:

Թե՛ թագավորը, թե՛ թագավորի կնիկը, թե՛ վեզիր-վեքիլը թագավորի տղին ինչքան խրատ են տալիս, չի լսում:

- Էս աղջկան կառնեմ, որ կառնեմ:

Աղջկան բերում են, հարցմունք անում:

Աղջիկն ասում է.

- Ինձ ունեմ մի ալևոր հայր, մի խորթ մայր, մի խորթ քույր, մի հալալ ախպեր:

- Բա քո սոլի թայը ո՞ւր է, էս սոլի թայը:

Ասում է.

- Իմ մերիկ պառավը կիմանա, ես չգիտեմ:

Աղջիկը դառնում, գալիս է տուն, աղջկա խորթ մերը մնում է էնտեղ, թագավորի տղին համոզում է: Թագավորի տղեն իսկի բան չէր հասկանում:

Կարմիր կովի գլուխը աղջկան ձեն է տալիս: Աղջիկը մոտ է գնում:

Ասում է.

- Աղջի՛, քո ախպորն ուղարկի թագավորի տղի մոտ, թող ասի՝ իրիկունը իմ մամեն կգա, թագավորի՛ տղա, արի՛, ես իմ քրոջը կտամ քեզ:

Աղջկա ախպերը գնում է թագավորի տղի մոտ, թագավորի տղին ասում՝ թագավորի՛ տղա, իրիկունը արի՛ մեր տուն, իմ մամեն կգա, իմ քուրը կտամ քեզ:

Թագավորի տղեն իրիկունը գալիս է, մամեն էլ քարանձավից է գալիս, բերում է, աղջկան զարդարում, տալիս, թագավորի տղեն տանում է. տանում են պսակում: Մի շաբաթ անցնում է: Խորթ մերը ելնում է, գնում է աղջկան տեսության, թագավորին խնդրում է՝ աղջկան տո՛ւր տանեմ, երկու օր մնա մեր տանը, էլի բերեմ:

Թագավորը աղջկան տալիս է մորը, բերում է տուն: Մի երկու օր մնում է, բերում է, իր աղջկան զարդարում, էդ աղջկա շորերը՝ ինչ կար, հագցնում է իր աղջկան, տանում տալիս թագավորի տղին, դառնում գալիս: Իրիկունը թագավորի տղեն գալիս է իր կնկա մոտ, նայում է դեմքին, տեսնում, որ էս իր կնկա դեմքը չէ: Նայում է ձեռներին, տեսնում է՝ կնկա ձեռները չեն, ոտների սոլերին է նայում՝ տեսնում է, որ էդ սոլերը ո՞ւր, նրա ոտները ո՞ւր, շատ հեռու են իրարից: Ելնում, աղջկան բերում է, տեսնում է, որ իր կնիկը փոխած է: Կնկան էլ, էն աղջկան էլ, զոքանչին էլ առնում է, գնում թագավորի մոտ, հորը հայտնում: Թագավորը երկու հատ քոսոտ ձի է ուզում, էն խորթ մորն էլ, խորթ քրոջն էլ կապել է տալիս էդ ձիերի պոչերից, տալիս է երկու տղի ձեռ, ասում է.

- Տարե՛ք, էնքան պտտեցրեք, որ դրանց մենակ դատարկ գլուխները մնան, որ բերեք, տաք ինձ:

Տանում փչացնում են, գլուխները բերում են, տալիս թագավորին: Թագավորը թուղթ է գրում, փակցնում էն գլուխների վրա, դնում է էնտեղ օրինակ:

Իրենք հասնում են իրենց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին:

ԲԺԻՇԿ ԼՈՒՄԱՆԸ

Ադանայի երկրում տասնհինգ տարեկան մի տղա էր ապրում: Ամեն օր գնում էր որսի: Մի օր էլ ուժեղ անձրևի տակ է ընկնում, նայում է աջ ու ձախ, մի ժայռ է տեսնում: Գնում հասնում է ժայռին, տեսնում է՝ ժայռի մեջ քարանձավ կա: Մտնում է ու տեսնում՝ մի ծերունի է նստած՝ մեջքից ներքև օձ, մեջքից վերև՝ մարդ, գլուխը՝ թագավորի նման, մորուքն էլ՝ ճերմակ: Չորս օձ էլ պառկած էին ծերունու մոտ:

Տղեն թրջվել էր, ջուրը վրայից կաթում էր: Կրակը վառում է, վրայի լաթերը հանում, քամում, բերում չորացնում է: Էդ մորուքով մարդը աջ ձեռքը զարկում է տղի կռնակին, նշան է թողնում: Տղեն մտքում ասում է՝ կրակը բարկ է: Որսի միսը խորովում է, մի քիչ կտրում է, իրեն վերցնում, մնացածը դնում է էն մորուքով մարդու առաջ, որ ուտի: Երկու կտոր էլ գցում է օձերի առաջ:

Ծերունին ասում է.

- Տղե՛ս, կերակուր տվողը ջուր էլ պիտի տա:

Տկճորը վերցնում է, ճամփա ընկնում, գնում հասնում է ջրհորին, ջուր լցնում, շալակում, գալիս: Գետինը փորում է, փոսի մեջ ջուր լցնում: Ներսից օձերը խրձերով

գալիս են, խմում ու գնում:

Ծերունին ասում է.

- Տղե՛ս, ես ծարավ մեռա, ինձ ինչո՞վ պիտի ջուր տաս:

Բերում է, կավից մի ման է շինում, ջուր է տալիս, ծերունին խմում է: Երեք օր, երեք գիշեր անձրևը չի կտրվում, տղեն չի կարողանում քարանձավից դուրս գալ: Ծերունին ասում է.

- Մոտիկ տեղ չե՞ս կարող ինձ համար ջուր հանել:

Վեց օր քարանձավի հարկը տալու համար աշխատում է, ծակում, ջուր հանում քարանձավի մեջ, ավազան սարքում: Եղնիկը մորթում է, կրակ վառում, միսը զարկում է շիշը, ասում.

- Էս քո կերակուրն է, որ եփի, կե՛ր, ես պիտի գնամ, հետ գամ:

- Չեմ հավատում, որ կգաս, մի գրա՛վ թող:

Տղեն տալիս է աբան ու գնում, մինչև կեսօր որս է անում, բերում է ծերունու մոտ, ուտում են, խմում:

- Մնաս բարով,- ասում է տղեն,- պիտի գնամ:

Ծերունին գնում է, ներսից մի քար է բերում, տալիս է տղին, ասում.

- Տղա՛, չտանես ուրիշի տաս, սա հավքի ձու է, անգին քար է, որ գիշերը ճրագի տեղ լույս է տալիս: Ցերեկը կապույտ կտավի մեջ կդնես:

Ծերունին տղի թևից բռնում է, նստեցնում ու ասում.

- Որդի՛ս, դու եղար իմ զավակը, դու ինձ կերակրեցիր, ինձ համար ջուր հանեցիր, հիշի՛ր, որ մարդու առաջ չպիտի լողանաս, կռնակդ մարդ չպիտի տեսնի:

Տղեն ճամփա է ընկնում, գալիս է իր տուն: Ֆրանգստանում քարը ծախում է, իր պարտքը տալիս է, տունը շինում: Քառասուն հատ ոչխար է առնում, նորից գնում է ծերունու մոտ: Գնում է, ձեռքը համբուրում, ոչխարները մորթում է, ինչքան որ օձ կար, բոլորին կերակրում է, մի գառ էլ մորթում է, խորովում, տանում, դնում է ծերունու առաջ:

Ծերունին ելնում է, մի քար է բերում, դնում տղի առաջ:

- Ի՞նչ մարդ որ տեսնի քեզ, իմ անունը չտաս, ես օձերի թագավորն եմ, անունս Շահ Մարար է:

Տղեն ձեռքը, ոտքը համբուրում է, ճամփա ընկնում:

Շահ Մարարը մատը տնկում է, գալիս են չորս օձ, երկուսը առջևից են գնում,

երկուսը՝ հետևից, տղին ճամփու են դնում:

Տղեն ասում է.

- Շնորհակալ եմ:

Շրջվում են, տղի ոտքերը լիզում:

Էդ ժամանակ Ադանայի թագավորը շատ ծանր հիվանդանում է: Աշխարքում հեքիմ չի մնում, բերում են: Ուժեղ ցավից աջ ու ձախ ուսերին մեծ խոցեր են առաջանում: Էդ վերքերը տարածվում են մարմնով մեկ, օրեցօր խորանում են: Ֆրանգստանից էդտեղ մի հեքիմ կար, ասում է.

- Երկու հավ մորթե՛ք:

Երկու հավ մորթում են, փետրում, բերում են, դնում են վերքի վրա: Մի կարճ ժամանակ ցավը մեղմանում է, բայց հետո նորից ուժեղանում է: Կապը քանդում ու տեսնում են, որ վերքը հավին խժռել է: Օրը քառասուն հավ են կապում, բոլորին խժռում է, դեռ թագավորի մսից էլ է ուտում:

Հեքիմների մեջ մի հրեա կար, դրա նմանը աշխարքում չկար, բժշկությունից շատ լավ էր հասկանում: Էս հրեան գնում է թագավորի մոտ, վերքը տեսնում:

Թագավորը ասում է.

- Հեքի՛մ, իմ վերքը կբուժե՞ս, թե՞ չէ:

- Իմ ասած դեղը որ լինի, մի ժամում ոտքի կհանեմ, թագավորն ապրած կենա, ինձ երեք օր ժամանա՛կ տուր:

- Երեք օր չէ՝ մեկ ամիս քեզ ժամանակ, միայն ինձ բուժի՛:

Հեքիմը հայտարարում է.

- Երկրի բոլոր տղամարդիկ պիտի ներկայանան ինձ, մարդ պիտի չմնա, որ չգա:

Հեքիմը առանձնանում է, գուշակություն անում ու գտնում ելքը: Եկողին մերկացնում է, կռնակին նայում, ազատ արձակում: Բոլորին նայում է ու բաց թողնում: Մարդ է ուղարկում, էն տղին գտնում են, բերում: Տկլորացնում է ու տեսնում, որ Շահ Մարարի նշանը կռնակին է:

Լուր են տանում թագավորին.

- Մի որսկան Փուրթո կա, նա պիտի գնա, Շահ Մարարին բերի, թե չէ կմեռնես:

- Կանչե՛ք, գա որսկան Փուրթոն:

Որսկան Փուրթոն գալիս է, թագավորին գլուխ տալիս:

- Որդի՛,- ասում է թագավորը,- էլ չեմ դիմանում:

- Ճար չկա, ո՞վ կարող է գնալ, օձերը ինձ կկծեն:

Ջղայնանում է հեքիմը, բերում, որսկան Փուրթոյին կապում է սյանը, սկսում տանջել: Որսկան Փուրթոյի մի ձենը երկինք է ելնում, մի ձենը՝ գետնի յոթ ծալք իջնում: Սարսափելի գոռում էր, սիրտը թուլանում էր: Ականջները կտրում են, աղ ու պղպեղ լցնում վրան: Օրը մի կտոր միս են կտրում Փուրթոյից, շատ են չարչարում: Էլ Փուրթոն չի դիմանում ցավին, ելնում գնում է Շահ Մարարի մոտ: Աստծո կամքով երբ մոտենում է քարանձավին, տասը հատ եղնիկ է զարկում, քաշում, բերում է ներս, գլուխ տալիս թագավորին:

Թագավորը էդ ժամանակ մտածում է, ասում.

- Քեզ որ չչարչարեին՝ ես Աստծո առաջ քեզ զավակ եմ ասել, դրա համար պիտի գամ:

Քնում են, առավոտ ելնում, ճամփա ընկնում: Տղեն առաջ է ընկնում, թագավորը՝ հետևից, գնում են:

Էդ երկրում ինչքան օձ կար, բոլորը ելնում են, շերտ-շերտ իրար վրա դիզվում են, հետևներից շարժվում, թագավորը ձեռքով է անում, բոլորը հետ են դառնում: Օձերին ասում է.

- Թե որ իմ ուղարկած նվերները ձեզ հասան, տեղներիցդ չշարժվեք: Իսկ թե մի տարվա մեջ նվերներս չեկան, էդ էլ իմ իմանալիքն է:

Հասնում են Նավրուզ լեռանը, որ ծածկված էր անուշահոտ ծաղիկներով:

Թագավորը կռանում, մի ծաղիկ է պոկում, տալիս է Փուրթոյին:

- Կո՛ւլ տուր, մի՛ ծամիր, Փուրթո՛:

Չորս ուրիշ ծաղիկ էլ է տալիս Փուրթոյին:

- Ատամներդ չպիտի զարկես ծաղկին, պիտի կուլ տաս:

Հինգ հատ էլ բալասան ծաղիկ է քաղում, դրա հոտից աշխարքում չկար: Ասում է Փուրթոյին.

- Էս բալասան ծաղիկները կլցնես թասի մեջ, կեփես: Երեք եփ կգա, կխմես սոված փորին: Երբ որ էդ խմեցիր սոված փորին, ո՛ր ծաղկի, խոտի մոտ գնաս, քեզ հետ կզրուցեն, թե ես էս ցավի, վերքի դեղն եմ:

Ծաղիկներից անցնում, գնում են, նստում են մի քարի տակ: Շահ Մարարն ասում է.

- Փուրթո՛, էս քարի վրայի քարաքոսն էլ պիտի առնես, բալասան ծաղկի հետ պիտի խառնես, խմես:

Գնում են, գիշերը Փուրթոյի տուն են հասնում: Եփում են բալասան ծաղկի հետ քարաքոսը, ու Փուրթոն խմում է սոված փորին:

- Դե,- ասում է,- մի քիչ պառկի, հանգստացի:

Պառկում է, քնում, ապա ելնում, նստում: Թագավորն ասում է.

- Փուրթո՛:

Փուրթոն նայում է թագավորի երեսին:

- Ի՞նչ տեսար, բան իմացա՞ր, ես ինչի՞ դեղ եմ:

- Թագավորն ապրած կենա, չորս ծուծ ունես գլխիդ մեջ: Էս կողմինը չտաս, թույն է, մյուս կողմինն էլ նույնն է, բայց երկուսի մեջտեղինը թե տաս, կլավանա:

Փուրթոն որ ծաղկի ջուրը խմել էր, վրան իմաստություն էր եկել:

- Փուրթո՛,- ասում է Շահ Մարարը,- ինձ յոթ տարվա կարմիր գինի կխմեցնես սոված փորին, լավ կուշտ պիտի խմեմ: Որ պառկեմ, ձեռքերս կկապես, դանակդ սուր կանես, ինձ կմորթես: Գլուխս կառնես, կդնես մի կողմ, մարմինս էլ հող ու գերեզման կանես: Օձերին էլ թագավորական նվերներ կուղարկես, որ գիտենան, թե ես ողջ եմ, նվեր չգնաց՝ կիմանան, աշխարքը կավերեն:

Խմում է յոթ տարվա գինին, գլխի խելքը գնում է: Փուրթոն բերում է, ձեռքերը կապում, դանակը սուր անում, գլուխը ճեղքում:

Հրեան գալիս է, թե.

- Փուրթո՛, պատրա՞ստ է, եփե՞լ ես:

- Չեմ եփել:

- Դե եփի, առ արի:

Փուրթոն գլուխը ճեղքում է, տեսնում, որ գինին գնացել, խառնվել է մեջտեղի ծուծին: Բերում եփում է, յոթը դարձնում է մեկ, լցնում է մի սիպտակ շշի մեջ: Թույնն էլ է եփում, լցնում է երեք շշի մեջ:

Փուրթոն գնում է թագավորի մոտ, տեսնում՝ հրեան վերևում նստած է: Բերում է, դնում հրեայի առաջ:

Հրեան էլ էն ծաղիկներից կերել էր, երեք շշից էլ հոտ է առնում, բայց քանի որ գինին գնացել, խառնվել էր ծուծին, չի ճանաչում, մի գավաթ մեկնում է թագավորին.

- Խմի՛,- ասում է:



Թագավորը ասում է.

- Կեսը դո՛ւ խմի:

Հրեան ուզում է կեսը խմել, բայց փորը չհասած՝ պայթում է, երկու կես լինում:

Թագավորը զարմացած է մնում, ասում է.

- Է՞ս էր քո հեքիմությունը, հեքի՛մ:

Որսկան Փուրթոն մյուս շիշն է բերում, ինքը խմում է, թագավորին էլ է տալիս: Թագավորն առողջանում է, վեր ելնում:

Որսորդ Փուրթոն դառնում է հեքիմ, ուր որ գնար, ասում էին՝ Լոխման հեքիմ:

- Հեքի՛մ, ասա՛, ի՞նչ ես ուզում,- ասում է թագավորը:

Շահ Մարարին գոտուց վեր կտրել, վերցրել էր Փուրթոն: Գնում է, բերում, թագավորին ցույց տալիս:

Թագավորը տեսնում է, զարմանք կտրում:

- Դու ինչի՞ ես բերել:

- Եթե վեց օր օձերին նվեր չգնա, ու նրանք իմանան՝ Շահ Մարարին մորթել եմ, երկիրդ կավերեն:

Օձերի նվերները պատրաստում են, բայց Լոխման հեքիմը ում ասում է, որ տանեն, չեն տանում, թե տեղը չգիտենք, վախենում ենք:

Տասը օր անցնում է, չեն կարողանում մարդ գտնեն, որ տանի:

Էս քաղաքի միջի օձերից մեկը գնում, քարանձավի օձերին ասում է՝ ձեր թագավորին մորթեցին: Օձերը հարձակվում են, էդ քաղաքի մարդկանց խայթում, սպանում, քաղաքը ավերում: Լուր են հասցնում թագավորին.

- Օձերը սիրածդ քաղաքը կործանեցին:

Կանչում է հեքիմին, ելք հարցնում: Հեքիմը բարձում է քառասուն բեռ լյարդ, Շահ Մարարը անգին քարից համրիչ ուներ, առնում է ձեռքը: Օձերը տեսնում են համրիչը, ասում են՝ Շահ Մարարն է, թափվում են, ընկնում տղի հետևից, գնում քարանձավ:

Լոխման հեքիմը տեսնում է, որ օձերը քաղաքի մարդկանց խայթել են, նրանց լյարդը կերել:

Դատաստան է անում: Էն սուտ ասող օձին բռնում են, սպանում: Հեքիմը երեք օր մնում է էդտեղ: Երբ գնալու է լինում, օձերին ասում է.

- Քանի դեռ ձեզ նվեր կգա, տեղներիցդ չշարժվեք:

Հեքիմը քանի կենդանի էր, լարդերը ուղարկում էր, հիմի էլ ժողովուրդն է կիրակիից կիրակի ուղարկում:

Հեքիմի անունը հռչակվում է: Երբ պետք էր լինում, գնում փրկում էր, էն շիշը մոտն էր: Յոթ տարի մարդ չի մեռնում:

Մի կնիկ ամեն օր գնում էր, Լոխման հեքիմի լաթերը լվանում էր: Մի օր էլ էդ կնիկը գնացել էր լվացք անելու, իր ջահել ու սիրուն տղեն գալիս է մոր մոտ, ձեռքը տանում մոր գրպանը, բանալին հանում ու գնում: Լոխման հեքիմի կնիկը էս որ տեսնում է, հարցնում է.

- Էդ ո՞վ էր, որ բան չասաց, բանալին առավ, գնաց:

- Ի՞նչ կլինի, հեքիմին խնդիրք անեմ՝ իմ տղին իր մոտ աշկերտ վերցնի, ինքը համր է:

Հեքիմը որ տուն է գալիս, իր կնիկը ասում է.

- Մեր դրացին, որ մեր լվացքն անում է, մի տղա ունի, մոտդ աշկերտ կառնե՞ս, համ համր է, համ խուլ:

Կնիկը գնում է, տղին առնում գալիս: Տղեն վարպետի ձեռքը համբուրում է, մերը թողնում գնում է:

Տղեն մոտ մի ամիս մնում է, մի ամիս հետո Լոխման հեքիմը ասում է իր կնկան.

- Կնի՛կ, էս տղեն ո՛չ խուլ է, ո՛չ էլ համր, էդպես է երևում:

Լոխմանը իմաստուն էր, իմանում է, որ համր չէ, ասում է...

- էս տղին պիտի տանջեմ, որ մոտս չմնա:

Բերում է, թասը կարմրեցնում է կրակի մեջ, դնում տղի գլխի վրա: Տղեն սկսում է լացել, ձայներ է հանում, բայց լեզուն չի բացում:

Կնիկը ասում է.

- Մի՛ չարչարի, համր է:

- Չէ որ չէ, լեզու ունի, շանտղություն է անում:

Բերում է, խորոված՝ շիշը գցում է կրակը, կարմրեցնում, զարկում էս ականջից էն ականջը, բայց լեզուն չի բացվում: Կնիկը ասում է.

- Խեղճ տղին ինչի՞ ես չարչարում:

- Կնի՛կ, լեզու ունի, հաստատ ունի:

Ականջն ու թասի վերքը երեք օրվա մեջ լավացնում է, բերում է կապում սյանը,

աքցանով օրը հինգ պատառ միս է ոլորում, պոկում, բայց տղեն միայն անկապ ձայներ է հանում: Կնիկը ասում է.

- Խեղճ տղին մի՛ չարչարի:

- Կնի՛կ, հաստատ լեզու ունի:

Շատ չարչարանք է տալիս տղին, լեզուն չի կարողանում բացել: Հաճախ էր տեղ ուղարկում դրան, բայց սա գործը շուտ կատարում էր, հետ դառնում: Իսկ Լոխմանը չէր ուզում, որ տղեն իր մոտ բան սովորի:

Յոթ տարի տղեն մնում է Լոխմանի մոտ:

Հեռու երկրից մի մարդ, ում գլուխը գիշեր-ցերեկ ցավում էր, Լոխման հեքիմի անունը լսում է, հարցուփորձ է անում, գալիս գտնում է հեքիմին, ասում.

- Գիշեր-ցերեկ գլխիս ցավը չի կտրվում:

Դռները կողպում է, առնում, իջնում է բակը, մարդուն օշարակ է տալիս, մարդը անզգայանում է: Բերում է, մարդու գլխի գագաթը դանակով կլոր կտրում է, հանում, տեսնում է գլխի մեջ ութ ճանկերով մի կենդանի: Ինչ անում, չի անում, քսանչորս ժամ աշխատում է, բայց չի կարողանում աքցանով բռնի, որ գլխի միջից հանի, արյուն-քրտինքի մեջ կորչում է:

Լոխմանը էդքան հեքիմություն էր արել, բայց նման բանի չէր հանդիպել: Վերևը դուռ կար, տղեն գողտուկ նայում է, չի համբերում.

- Վարպե՛տ, աքցանը կրակը գցի,- գոռում է,- թող կարմրի, բռնելն ու դուրս քաշելը կհեշտանա:

Գցում է կրակը, կարմրում է. հանում ու կենդանուն բռնում է, դուրս քաշում:

- Կնի՛կ, բա ասում էիր՝ համր է. ինչպե՞ս եղավ,որ գոռաց:

Տղեն վերևի դռնով փախչում է, գնում իրենց տուն:

Տղեն նայում է՝ տանը երեք հատ մեծ պղինձ ունեն՝ իրար վրա շարած: Տակի պղնձի մեջ կաթ է լցնում, վրայի պղնձի մեջ՝ գինի, մեջտեղի պղինձը չոր է թողնում, մտնում է մեջը, նստում:

Էն թող էնտեղ նստի:

Լոխմանը մարդուն լավացնում է, ճամփու դնում, ելնում վերև:

- Կնի՛կ, աշկերտը ո՞ւր գնաց:

- Քեզ մոտ էր, ես ջո՞ւրը գցի:

Լոխման հեքիմը ելնում, սրան-նրան փող է տալիս, որ աշկերտին գտնեն,

աշխարհք ման են գալիս, չեն կարողանում՝ գտնեն: Մի լավ ձի է առնում, հեծնում, աշխարհքով մեկ ման գալիս, չի կարողանում տղին գտնել: Իրեն գրված թուղթ ուներ, Շահ Մարարի գրածն էր: Դրանով գուշակություն է անում, տեսնում է, որ Կարմիր ծովի ու Ճերմակ ծովի միջև մի նստելու չափ տեղ կա չոր, տղեն էնտեղ նստած է:

Նավաստիներ է բռնում, նավ է վարձում, փող տալիս:

- Գնացե՛ք, էդ տղեն Կարմիր, Ճերմակ ծովերի մեջտեղը չոր տեղում նստած է. առեք, եկեք:

Շատ փող են առնում, ծովերի վրա ման գալիս, չոր տեղ չեն տեսնում:

Լոխմանը ելնում է, գնում աշկերտի մոր մոտ:

- Հարյուր քառասուն տարվա գուշակ եմ: Գուշակություն եմ անում՝ Կարմիր ու Ճերմակ ծովերի մեջտեղը մի չոր տեղ կա, տղեդ էնտեղից բերել տուր,- ասում է: Երդում էլ ուտում.

- Տղիդ բան չեմ անի:

Մերը պղինձները իջեցնում է, տղին միջից հանում:

- Որդի՛, դու ինձ ծերացրիր, աշխարքը ման եկա, հարյուր քառասուն տարիս գնաց, որ մեռնեմ, հեքիմությունս աշխարքի երեսից կվերանա, անունս կկորչի:

Տղեն ելնում է, վարպետի ձեռքը համբուրում. մի գավաթ գինի են խմում:

Լոխմանը հարյուր քառասուն տարի էր՝ ով որ մեռներ, լավացնում էր, տղեն դեռ չէր տեսել՝ ինչպես էր կենդանացնում: Ուր որ ծեր մարդ կար, ջահելացնում էր, տասնհինգ տարեկան տղա էր դարձնում: Տղին ասում է.

- Պղինձը դի՛ր վրան, ինձ օշարակ տուր: Ջուրը կտաքացնես, կեռա, քառասուն ժամ պղնձի ջրի մեջ կմնամ, բերանը կբանաս, ինձ միջից կհանես, բամբակով կփաթաթես, կբերես, էս 22ի ջուրը կխառնես, հինգ կաթիլ կլցնես, կեփես, յոթից մեկ կմնա ջուրը:

Տղեն էդպես էլ անում է, Լոխմանին ջրից հանում է, բերում է բամբակի վրա պառկեցնում, չոր բամբակը փռում է վրան, յոթ ժամ մնում է, հետո բերում է, որ 22ի ջուրը լցնի բերանը: Գավաթը վերցնում է թե չէ, Գաբրիել հրեշտակը զարկում է, թափում, մի կաթիլ է գնում կոկորդը: Մի փոքր շունչ է առնում, ասում՝ լի՛ց, շո՛ւտ արա, ու մեռնում է: Տղեն տանում է իր վարպետին Շահ Մարարի մոտ, հող ու գերեզման անում:

Մի տարի գիշեր-ցերեկ պառկում էր, չէր քնում, վարպետի ձենը ականջից չէր կտրվում, լսում էր՝ լի՛ց:

Աշխարհի երեսն ամեն տեղ շրջում է. ուր գնում էր, չէր քնում, վարպետի ձենը ականջից չէր կտրվում:

Մի օր էլ մի մեծ տուն է մտնում: Երկու վարդապետ, մի տերտեր, մի եպիսկոպոս ու հարյուրից ավելի մարդ կար էդտեղ:

Տղեն վեց օր մնում է, տնեցիների երեսին ծիծաղ չի տեսնում:

- Հայ՛ր սուրբ, ինչի՞ ձեր երեսներին ծիծաղ չի գալիս,- հարցնում է տղեն,- թե ես եմ պատճառը, ես կելնեմ, կգնամ:

- Որդի՛, չէ՛, մի հարս ունենք, էսքան մարդը՝ մի կողմ, էն հարսը՝ մի կողմ: Երեք օր է՝ ցավ է քաշում, շատ հեքիմներ բերինք, ո՛չ մեռնում է, ո՛չ լավանում, երեք օր է՝ գիշեր-ցերեկ ճչում է:

- Որ էդպես է, ինձ շուտ ասեիք:

Գնում է, նույն պահին լավացնում է, հարսը տղա է բերում:

Տասը օր էս տղին չեն թողնում, պահում են, հարգում-պատվում: Հեքիմը տղին քավոր է դառնում, տանում են ժամ, մկրտում: Իրիկունը գալիս է, պառկում:

Քսանհինգ տարի քուն չէր եղել, քսանչորս ժամ քնում է: Լոխմանի ձենը կտրվում է:

Հեքիմին առոք-փառոք ճամփու են դնում, գալիս է մոր մոտ: Մերը սրան պսակում է, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում:



ԲԱԴԻԿԱՆ ԵՎ ԽԱՆ ԲՈՂՈՒՆ

Կար ու չկար, Աստծուց լավը չկար:

Մի թագավոր կար, քառասուն որդի ուներ: Ամեն անգամ չափահաս դարձած տղին կանչում էր, ուղարկում, որ գնա հեռու աշխարհներ, կտրիճություն անի ու ինքն իր հավանած աղջիկը գտնի, պսակվի: Երեսուն և ինը պսակվում են, բայց Աստված գիտե, թե կտրիճություն արվել են, թե չէ: Հերթը հասնում է պստիկ տղին. Բադիկան էր անունը: Բադիկանը ելնում, հեծնում է իր ձին, հայրը մի թուր, նետ ու աղեղ է ընծայում նրան, գանձ և ծառաներ դնում հետը:

- Դե՛, աստված քո բանը հաջողի,- ասում է ու ճամփում:

Աշխարհում շատ է ման գալիս Բադիկանը, մութ աշխարհք, լույս աշխարհք տեսնում, դև ու ազնավուր կասես, մարդ ու ջանավար կասես՝ պատահում են, ամենի հետ էլ կռիվներ է տալիս ու հաղթելով անցնում, բայց իր ծառաներից մեկն էլ չի մնում, իր գանձերը սպառվում են, ու ինքը մենակ հասնում է շքեղ ու աննման մի շենքի: Թվում է՝ էդ շենքը անհիշելի ժամանակներում էր շինված, մեծ-մեծ քարերով ու երկաթով: Բադիկանը նայում է ամեն տեղ, ման է գալիս դուռ ու պատուհանի առաջ, ո՛չ աղջիկ է տեսնում, ո՛չ կին, ո՛չ մարդ...

- Տեր Աստված, էս ի՞նչ տեղ էր՝ ես եկա:

Սպասում է, մութն ընկնում է: Տեսնում է, որ մեկը գալիս է. դրա գլուխն ու մարմինը պողպատից են, կոշիկն ու գդակը՝ պղնձե, նետ ու աղեղ ունի՝ կուռ երկաթե, երբ ոտքը փոխում է, երկիրը թնդում է:

Կանգնում է, քիթը տնկում է, հոտոտում է ու ասում.

- Մարդ մարդահոտ է գալիս, ես լեռներն եմ որսի գնում, որսը իմ տուն է եկել: Ո՞ւր ես, ո՞վ ես, աչքիս առաջ արի, թե չէ քեզ կանեմ մի բուռ մոխիր:

Բադիկանն ի՞նչ անի. այս անճոռնի գազանի վրա ո՛չ նետ կազդի, ո՛չ թուր: Գալիս, կանգնում է դեմը:

- Ո՞վ ես դու,- կրկնում է,- որ համարձակվել ես գալ էս տեղերը, դու Խան Բողուի անունը չե՞ս լսել:

- Լսել եմ ու դրա համար եկել եմ, որ տեսնեմ: Ես Բադիկանն եմ, աշխարհի տակնուվրա պտտել եմ, դևերի ու աժդահաների հետ կռվել ու հաղթել եմ: Եկել եմ, որ քեզ հետ էլ տամ ու առնեմ:

Խան Բողուն նայում է Բադիկանի երեսին ու մի անգամ փռշտում: Որ փռշտում է, Բադիկանը թռչում է, մի արտ հեռու ընկնում: Խան Բողուն դառնում, կանչում է.

- Արի՛, Բադիկա՛ն, արի՛, մի՛ վախեցի, դու էլ կտրիճ ես եղել. թե կուզես, կպահեմ քեզ, դարձի՛ր ինձ ծառա: Թուրդ, նետ ու աղեղդ էլ բեր, դրանցով ինձ վնաս տալ չես կարող, բեր պահի, պետք կգա որսի-մորսի:

Բադիկանը համաձայնում է, որոշ ժամանակ միատեղ ապրում են:

Մի օր Խան Բողուն Բադիկանին ասում է.

- Տեսնում ես, որ ինձ մահ ու ցավ չկա, բայց մի դարդ կա սրտիս մեջ: Արևելքի թագավորին մի աղջիկ կա, արեգակի տակ նմանը չկա. յոթ անգամ է, որ գնում եմ ու ճար չեմ գտնում այդ աղջիկը բերելու. թե դո՛ւ բերես: Ի՞նչ կասես: Քեզ ձի կտամ, գանձ, զենք: Որքան կուզես՝ ա՛ռ ու գնա՛:

Խոսք է տալիս Բադիկանն ու ճամփա ընկնում: Հասնում է քաղաք. էդ երկրի մարդկանց հագուստն է հագնում, դրանց լեզվով խոսում: Գնում է, մի պարտիզպանի հետ ընկեր դառնում, աշխատում թագավորի պալատին մոտ: Թագավորի աղջիկը իր պատուհանից նայում է էդ պարտեզին ու տեսնում, որ երբեմն-երբեմն Բադիկանը մենակ մնացած ժամանակ ընտիր հագուստներ է հագնում, ման գալիս. էդ հագուստներով շատ գեղեցիկ տեսք է ունենում:

Ու աղջկա սիրտը կպչում է Բադիկանին, երազի մեջ էլ է տեսնում. Բադիկանը՝ նույնպես:

Աղջիկը ծառաներից մեկի միջոցով իր սերը հայտնում է Բադիկանին: Բադիկանը աղջկան հասկացնում է, թե ինքը թագավորի տղա է, շատ կտրիճություններ է արել ու թե միմիայն նրա համբավը լսելով եկել է, հիմի էլ աչքով տեսնելով՝ սիրահարվել է ու սպասում է նրա հրամանին:

Դու մի ասա՝ էս քաղաքը շատ ամուր է լինում, մարդիկ ու կանայք զորեղ են լինում ու պատրաստ կռվելու: Քանի որ Խան Բողուի գալու օրերն են լինում, աղջիկը առաջարկում է, որ ինքը ելնի քաղաքից դուրս, գնա ծովեզերքը զբոսնելու, ու էնտեղ Բադիկանը, եթե մարդ է, թող գա, փախցնի իրեն:

Քառասուն աղջիկ-ծառաներով գնում է, ու Բադիկանը հրեղեն ոգու նման ձիով գալիս է, վերցնում թագավորի աղջկան, դնում ձիու մեջքին ու արծվի նման թռչում: Հետը եղողների բերանը բաց է մնում: Մինչև դառնում են, որ թագավորին ու քաղաքին օգնության բերեն, մինչև թագավորն ու քաղաքի ջոջ ու պստիկ հեծնում են, վազում, Բադիկանը աղջկան թողնում է մի մեծ քարի հետև ու դառնում է հետ. եկողին կոտորում է ու այդ դաշտի մեջ լեշ լեշի վրա փռում: Դառնում է, աղջկան վերցնում, ձի են նստում, գնում են, գնում, հասնում են ծովին: Ձին նրանց հանում է ծովի մյուս երեսը, ու հեռվից երևում է Խան Բողուի պալատը:

- Բադիկա՛ն, ջանի՛դ մեռնեմ,- ասում է աղջիկը,- այսքան ճանապարհ եկանք, դու բան չասիր ինձ, դու ինձ սեր ցույց չտվիր, հանուն Աստծո՝ ճիշտն ասա, դու ինձ քեզ համա՞ր ես տանում, թե՞...

- Աստծու անուն տվիր, ճիշտը պիտի ասեմ. ես քեզ Խան Բողուի համար եմ տանում, նրան խոսք եմ տվել:

- Խան Բողուն շատ չարչարվեց, ինձ ձեռք բերել չկարողացավ: Դու չկարծես, թե քո հունարով ու քո թրով ինձ բերիր: Սև գա աղջիկների վրա, աղջիկներն իրենց սրտի գերին են: Ես քեզ համար եկա, թե չէ՝ էս ծովը, էս քարը. ձկան ընկեր կլինեմ կամ հավքերին կեր:

Շատ երեստվանք է անում Բադիկանին. անիծում է տղամարդկանց քարե սիրտն ու խաբող միտքը ու պատրաստվում է ծովը գցել իրեն: Բադիկանի սիրտը տակնուվրա է լինում, աստծուն վկա են բռնում, որ մի ճար գտնեն, Խան Բողուի ձեռքից ազատվեն ու իրար առնեն:

Այս խոսքի վրա Խան Բողուն գալիս է, իր շնորհակալությունը հայտնում Բադիկանին ու ուրախությունը՝ իր սիրականին, հրավիրում, տանում է պալատ ու շատ փափկությամբ ծառայում է աղջկան, որ չլինի թե զզվի ու ինքն իրեն վնաս տա:

- Քո քեֆը տեղն է, սիրտդ ինչ կուզի,- հարցնում է աղջկան:

- Դու ողջ կենաս, իմ քեֆը տեղն է, ու դու ամեն բան ես ինձ համար,- ասում է,- բայց իմ հայրն ու մայրը պայման են դրել ինձ, թե՝ «Յոթ տարի անարատ պիտի պահես քեզ, թե չէ մեր աշխատանքն ու կաթը հարամ լինի քեզ»: Կընդունե՞ս էդպես:

- Կընդունեմ,- ասում է Խան Բողուն,- դու իմ ձեռքն ընկար, յոթ չէ քառասունյոթ տարի էլ կհամբերեմ:

Էս պայմանը կապում են ու Բադիկանի համար էլ որոշում են, որ իրենց մոտ մնա, ու երբ պսակվեն, դառնա իրենց քավոր:

Ժուկ ու ժամանակ է անցնում, իսկ աղջիկն ու Բադիկանը անհանգիստ էին: Թե փորձեին սպանել Խան Բողուին, նետ ու թուր չէր բանի. թե գաղտուկ փախչեին, կհասներ իրենց, ու չէին կարողանա ճանկից ազատվել: Օրերից մի օր Խան Բողուն գլուխը դրել էր աղջկա ծնկանը, խոսք ու զրույց էին բացել, խոսում էին.

- Դու մենակ ո՞նց էիր ապրում,- ասում է աղջիկը,- էդ ո՞նց ես ողջ մնում, որ էդքան նետ ու թուր են քեզ զարկում: Քո հոգին ո՞ւր է: Թե որ ինձ չասես, ուրեմն ինձ չես սիրում. ու թե որ չես սիրում, ասա՛, որ ես էլ չապրեմ:

Շատ բաներ է ասում ու էնպես է անում, մինչև Խան Բողուն իր գաղտնիքը պատմում է:

- Էս մեր տնից յոթ օր հեռու մի սիպտակ սար կա, էդ սարի վրեն սիպտակ ու անհաղթելի մի եզ է ման գալիս. ո՛չ մարդ, ո՛չ գազան սիրտ չեն անում նրա մոտ գնալ: Յոթ օրը մեկ ծարավում է, գալիս է սարի գլուխը: Էնտեղ սիպտակ ջրի մի աղբյուր կա, աղբյուրի առաջ յոթ հատ սիպտակ մարմար քարե գուռ կա, մեկ անգամից յոթ գուռ ջուրը խմում է, գնում: Էդ եզն իր փորի մեջ մի սիպտակ աղվես ունի, սիպտակ աղվեսի փորի մեջ կա սիպտակ սադափե մի տուփ, ու էդ տուփի մեջ կան յոթ սիպտակ ճնճղուկներ: Դրանք են իմ հոգին ու իմ յոթ գաղտնիքն ու զորությունները: Ո՛չ եզը կհաղթվի, ո՛չ աղվեսը կբռնվի, ո՛չ տուփը կբացվի, ո՛չ ճնճղուկները ձեռք կընկնեն: Էսպես ես կմնամ անխոցելի, անհաղթելի ու անմահ: Թե որ եզը մորթվի, աղվեսը կփախչի, եթե աղվեսը բռնվի, տուփը չի բացվի, եթե տուփը բացվի,

ճնճղուկները կթռչեն:

Աղջիկն էս գաղտնիքը ծածկաբար հայտնում է Բադիկանին ու ասում.

- Թե դու մարդ ես, արածդ արա՛, ես իմն արի:

Անցնում են օրեր, ու Բադիկանը Խան Բողուից հրեղեն ձին ու հրաման է ուզում, թե գնամ մի ամիս հեռու տեղեր, ման գամ ու դառնամ: Տալիս է, գնում է: Գնում է, դիմում դերվիշներին, հարցնում է գիտուն մարդկանց, թե.

- Զոր ու զորընդեղ մարդ, որ երկաթ ու կրակ վրեն չեն բանի, ինչո՞վ կհաղթվի. ոչ մի կերպ չհնազանդվող ջանավարը ի՞նչ բանով կհնազանդեցվի:

Պատասխան են տալիս.

- Մարդը կնիկով կհաղթվի, ջանավարը՝ գինով:

Բադիկանը բարձում է յոթ բեռ գինի՝ յոթ տարվա, տանում է, թափում սիպտակ սարի սիպտակ աղբյուրի յոթ գուռերի մեջ ու ջուրը կապում է հողի վրա, ակը խցանում է, իսկ ինքը մի փոս է փորում, պահվում: Սիպտակ եզը գալիս է ջուր խմելու, գինու հոտ է առնում, յոթ բարդի ծառի բարձրությամբ վեր է ցատկում ու գոռալով հեռանում: Երկրորդ օրն է գալիս, ծարավից խանձվում է, ի՞նչ անի... Վերջապես գինին խմում է, խելոռում, ցատկռտում է ու ընկնում, պառկում: Բադիկանը հասնում է, թուրը դնում եզան վզին ու գլուխը կտրում:

Խան Բողուն գնացած է լինում որսի. եզան գլուխը կտրվելու ժամանակ իր գլուխն սկսում է երերալ, ու ողջ մարմինը՝ դողդողալ:

- Վա՛յ,- ասում է,- սիպտակ եզը մորթեցին... Ես եմ հանցավոր... Թագավորի աղջկան պատմեցի... Կամ Բադիկանին, կամ ուրիշ մի սիրողի հայտնեց, եզը մեռցրին... Ես էլ պիտի մեռնեմ... Հասնեմ, սպանեմ... Թագավորի աղջիկը ինձ չմնաց՝ ո՛չ իրեն մնա, ո՛չ ուրիշի...

Շտապում է վազելով, կատաղորեն:

Բադիկանը եզան փորը ճեղքում է: Աղվեսն էլ էր խելոռել, հանում է, կտրում: Խան Բողուի խելքը գնում է, ու արյունը վազում է քթից:

Տուփը տաք-տաք արյան մեջ է դնում, սադափի բերանը բացվում է: Խան Բողուի ականջից ու բերնից լերդ-լերդ արյուն է հոսում, բայց գնում է պալատի կողմը: Էնպես է գոռալով գնում, որ պալատը՝ աղջիկն էլ մեջը, դրնդում է: Սարսափը պատում է աղջկան. ելնում է տանիքը, որ եթե ողջ հասնի Խան Բողուն, իրեն տանիքից վար գցի, որ չընկնի գազանի ձեռքը:

Ճնճղուկներից երկուսին ճվտում է Բադիկանը: Խան Բողուի երկու ծունկը կոտրվում է:

Երկուսին էլ է ճվտում: Խան Բողուի երկու թևերը մինչև ծնկները չորանում են:

Երկուսին էլ է ճվտում: Խան Բողուի սիրտն ու թոքը թափվում են:

Մի ճնճղուկին էլ թևից բռնում է ու քարի տակ դնում, ջնջխում: Խան Բողուն էլ գլուխը զարկում է ապառաժին, ուղեղը թափվում է, սև ծուխ է ելնում քիթ ու բերնից, փայտանում է, տեղնուտեղը փռվում գետնին:

Բադիկանը, հրեղեն ձին տակը, գալիս է, աղջիկը տանիքից իջնում է: Գովասանք են անում մեկը մեկին, աստծուց հրաման են առնում ու ամուսնանում:

ԱՆԱՀԻՏ

Մեկ անգամ Վաչե թագավորի միամոր որդին՝ Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պատշգամբի վրա կռթնած, նայում էր իրենց ծառաստանին: Եղանակը գարնանային էր և առավոտյան արևաբացին: Աշխարհի բոլոր երգեցիկ թռչունները, կարծես խոսքը մեկ արած, հավաքվել էին այդ ծառերի վրա, որ մի ընդհանուր նվագահանդես սարքեն և իրար հետ մրցեն: Մինն իր սրինգն էր փչում, մյուսը՝ իր փողը, բայց հաղթանակը խոսողն էր տանում: Սոխակն էր այդ խոսողը՝ սիրահար սրտերի միակ մխիթարիչը: Նա որ սկսում էր նվագել իր բյուրաղի քնարը, իսկույն լռում էին մյուսները և ականջները սրած՝ նրան էին լսում և նրա դայլայլիկի բյուրավոր ելևէջներից դաս առնում: Մինը սովորում էր նրա ծլվլոցը, մյուսը՝ նրա կլկլոցը, մինը՝ շվշվալը, մյուսը՝ սուլելը, և մեկ էլ հանկարծ ամենքը միասին միախառն ձայնով սերտում էին իրենց սովորած եղանակները:

Արդյոք սրա՞նց էր ականջ դնում Վաչագանը այնպես լուռ, այնպես ակնապիշ: Ո՛չ... Ուրիշ հոգս, ուրի՛շ ցավ կար նրա սրտում. սրանք միայն սաստկացնում էին նրա ցավը և խոր տխրության մեջ ձգում նրան:

Այս տխուր մտմտուքից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխեն թագուհին, որ այդ պահին մոտեցավ նրան և, մոտը նստելով, հարցրեց.

- Վաչի՛կ, ես տեսնում եմ, որ դու սրտումդ մի ցավ ունես, բայց թաքցնում ես մեզանից: Որդի՛, ասա՛ ինձ, ինչո՞ւ ես այդպես տխուր:

- Մա՛յր, ճշմարիտ ես ասում,- պատասխանեց որդին,- աշխարհիս փառքն ու վայելչությունը աչքիս չեն երևում: Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ: Ասում են՝ Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանքում միաբանություն է հաստատել, աշակերտներ ժողովել, ուզում եմ ես էլ գնալ այնտեղ: Մա՛յր, դու չգիտես, թե ինչքա՛ն լավ գյուղ է այդ Հացիկը: Այնտեղի թե՛ տղերքը և թե՛ աղջկերքը այնպես սրամիտ, այնպես գեղեցիկ են, որ եթե տեսնես, կմնաս հիացած:

- Ուրեմն, նրա՞մ համար ես գնում Հացիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին:

- Մա՛յր, դու որտեղի՞ց գիտես նրա անունը:

- Մեր պարտեզի սոխակները բերին ինձ այդ համբավը: Սիրելի՛ Վաչիկ, ինչո՞ւ ես մոռանում, որ դու Աղվանից թագավորի որդին ես: Թագավորի որդին կա՛մ թագավորի, կա՛մ մեծ իշխանի աղջիկ կուզի և ոչ թե մի գեղջկուհի: Վրաց թագավորը երեք աղջիկ ունի, կարող ես ընտրել նրանցից որին կամենաս: Գուգարաց բդեշխն ունի մի շատ գեղեցիկ աղջիկ, որ իր միակ ժառանգն է, իր հարուստ կալվածների միակ տիրուհին: Սյունյաց իշխանն ունի դարձյալ մի շատ սիրուն աղջիկ, վերջապես մեր հազարապետի Վարսենիկն ի՞նչ պակաս աղջիկ է. մեր աչքի առջև մեծացած, մեր ձեռքով կրթված…

- Մա՛յր, ես արդեն ասացի, որ պիտի երթամ վանք, բայց եթե դուք ուզում եք, որ ես անպատճառ ամուսնանամ, ապա իմացե՛ք, որ իմ ուզածը միայն և միայն Անահի՛տն է…

Այս ասաց Վաչագանը և, ամոթից կարմրելով, վազեց դեպի պարտեզ, ինչպես մի ծանր բեռից ազատված փախստական գերի…

II

Վաչագանի քսան տարին նոր էր լրացել: Նա երկայնացել էր իրենց պարտեզի բարդիների նման, բայց շատ քնքուշ, դժգույն և վատառողջ էր:

- Որդյա՛կ իմ Վաչագան,- ասում էր հայրը շատ անգամ,- դու գիտես, որ իմ հույսը միայն դու ես, դո՛ւ պետք է մեր տան ճրագը վառ պահես, մեր օջախի հիշատակը՝ կենդանի: Պետք է, ուրեմն, ամուսնանաս, ինչպես որ աշխարհիս օրենքն է:

Որդին միայն կարմրում էր հոր այդ առաջարկությունը լսելիս և չէր իմանում՝ ինչ պատասխան տա: Բայց հայրը նրան հանգիստ չէր տալիս և նույն առաջարկությունը, ավելի գրավիչ խոսքերով, նա անում էր շաբաթը մի քանի անգամ: Հոր այդ ստիպմունքներից ազատ մնալու համար ինքն իրեն որսորդության տվեց Վաչագանը: Այնուհետև առավոտները վեր էր կենում շատ վաղ և ընկնում սար ու ձոր և երեկոները շատ ուշ ետ դառնում: Շատ իշխանների որդիք ուզում էին նրան ընկերանալ և նրա հետ միասին ման գալ, բայց ինքը չէր հոժարում: Նա հետը վերցնում էր միայն իր մտերիմ և քաջ ծառային՝ Վաղինակին, և իր հավատարիմ գամփռին՝ Զանգիին: Սրանց հանդիպող մարդիկ չէին իմանում, որ մեկը թագավորի որդին է, և մյուսը՝ նրա ծառան, ըստ որում՝ երկուսն էլ միևնույն հասարակ որսորդի հագուստն ունեին հագած, երկուսն էլ՝ միևնույն նետ-աղեղը ուսներին և լայնաշեղբ դաշույնը կախած գոտիկներից, միայն պաշարի պարկը Վաղինակն էր կրում:

Վաչագանի այս տեսակ թափառական ճանապարհորդությունը իր համար էլ ունեցավ լավ հետևանք: Նա ավելի զվարթացավ և առույգացավ: Նա սկսեց ավելի ուժեղանալ և ճարպկանալ, քան թե առաջ էր:

Մեկ օր իրենց սովորական որսորդության ժամանակ Վաչագանն ու Վաղինակը հասան Հացիկ գյուղ և նստեցին նրա աղբյուրի մոտ, որ հանգստանան: Շատ դադրած ու քրտնած էին: Գյուղի աղջկերքը եկել էին աղբյուրից ջուր տանելու և հերթով լցնում էին կուժերն ու փարչերը: Վաչագանը սաստիկ ծարավել էր: Նա ջուր ուզեց, և աղջիկներից մեկը լցրեց փարչը և ուզեց Վաչագանին տալ, բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը և դատարկեց: Ինքը նորից լցրեց, բայց էլի դատարկեց: Վաչագանի թուքը ցամաքել էր, և անհամբեր սպասում էր, թե երբ պետք է արդյոք իրեն ջուր հասցնեն, բայց մեր անծանոթ աղջկա հոգը չէր այդ. նա կարծես խաղ էր անում, լցնում, դատարկում էր և այդ կրկնեց չորս-հինգ անգամ, միայն վեցերորդ անգամին տարավ, իրեն անծանոթ որսորդին տվեց:

Վաչագանը երբ որ խմեց և փարչը տվեց Վաղինակին, ինքն սկսեց խոսեցնել

աղջկան և հարցրեց, թե ինչու նա իսկույն չբերեց ջուրը. չլինի՞ թե կատակ անել ուզեց կամ բարկացնել: Աղջիկը նրան պատասխանեց.

- Մենք սովորություն չունենք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանավանդ երբ նա ջուր է ուզում: Բայց ահա՛ ինչ էր իմ միտքը: Ես տեսա, որ դուք դադրած ու քրտնած եք, իսկ այդ վիճակի մեջ սառը ջուրը վնաս է մարդուն, դրա համար ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանաք և հովանաք:

Աղջկա խելոք պատասխանը զարմացրեց Վաչագանին, բայց գեղեցկությունն ավելի ևս հիացրեց նրան: Նրա աչքերը խոշոր, թուխ-թուխ և վառվռուն էին, ունքերը՝ կարծես վրձինով քաշած, գլուխը բաց էր, և ծամերը՝ փռված թիկունքի վրա, ճակատը՝ լայն, քիթ ու պռոշը՝ նկարածի պես: Այսպես էր Անահիտի արտաքին կերպարանքը, բայց նրա դեմքի գծագրության, նրա աչքերի մեջ մի այնպիսի գրավիչ զորություն կար, որ իսկույն կախարդեց Վաչագանին և ապշեցրեց նրան:

- Անունդ ի՞նչ է,- հարցրեց Վաչագանը:

- Անահիտ,- պատասխանեց աղջիկը:

- Ո՞վ է քո հայրը:

- Իմ հայրը մեր գյուղի նախրչի Առանն է: Բայց ինչո՞ւ ես ուզում իմանալ, թե իմ անունն ինչ է, կամ ով է իմ հայրը:

- Ոչի՛նչ, հենց այնպես հարցնում եմ. հարցնելը հո մեղք չէ:

- Եթե հարցնելը մեղք չէ, խնդրեմ, դու էլ ինձ ասես, թե ինքդ ո՞վ ես, ո՞րտեղացի ես:

- Սո՞ւտ ասեմ, թե՞ ճշմարիտ:

- Ո՛րը քեզ արժան կհամարես:

- Իհարկե, ես արժան կհամարեմ ճշմարիտը, իսկ ճշմարիտն այն է, որ ես հիմա չեմ կարող ուղիղն ասել, թե ես ով եմ, բայց խոսք եմ տալիս մի քանի օրից հետո հայտնել:

- Շա՛տ լավ: Շնորհեցե՛ք ինձ փարչը և եթե էլի ջուր եք կամենում, բերեմ:

- Ո՛չ, շնորհակալ ենք. դու լավ խրատ տվիր մեզ, այդ կհիշենք միշտ և քեզ չենք մոռանալ:

Անահիտն առավ փարչը և հեռացավ: Որսորդները վերադարձան տուն: Հավատարիմ Վաղինակը ողջ պատահածը պատմեց թագուհուն: Այդպես Վաչագանի մայրը իմացավ որդու գաղտնիքը:

III

Թագուհին երբ որ իմացավ Վաչագանի վճռական խոսքը, թե նա միայն Անահիտին կուզի և ուրիշ ոչ ոքի, հայտնեց թագավորին, որ իրանց որդին Հացիկ գյուղի նախրչու աղջկանն է հավանել, և պատմեց բոլորը, ինչ որ ինքը լսել էր: Թագավորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, մի երեկո խորհուրդ արին և վճռեցին, որ ընդունեն նրա ընտրությունը:

Մյուս օրը կանչեցին Վաղինակին, հայտնեցին իրենց հոժարությունը և, նրա հետ երկու պատվավոր և իշխան մարդ ևս դնելով, մեծամեծ ընծաներով ուղարկեցին Հացիկ՝ հարսնախոսության:

Երբ որ դրանք հասան նախրչի Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց: Անահիտը տանը չէր: Հյուրերը նստեցին սրահում՝ մի նոր գորգի վրա, որ Առանը փռեց իսկույն, և ինքն էլ նստեց նրանց մոտ:

Խոսակցության նյութը ամենից առաջ դարձավ նոր գորգը, որ իր գեղեցիկ

նախշերով, գույների պայծառությունով և գործվածքի նրբությունով գրավեց հյուրերի ուշադրությունը:

- Այս ի՜նչ հրաշալի գորգ է,- ասաց Վաղինակը,- տանտիկինդ կլինի գործած, անշուշտ:

- Ո՛չ, ես կին չունիմ, հինգ տարի է, որ կինս վախճանվել է: Այդ գորգը մեր Անահիտի գործածն է:

- Մեր թագավորի պալատում էլ չկա մի այսպիսի զարդ,- ասաց իշխաններից մեկը, հետո դառնալով Առանին՝ ավելացրեց,- շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է: Քո Անահիտի համբավը մինչև թագավորի ականջն է հասել: Եվ ահա՛ մեզ ուղարկել է քեզ մոտ խնամախոսության: Թագավորը կամենում է, որ քո Անահիտին տաս իր մինուճար որդուն՝ Վաչագանին, որ իր թագաժառանգն է:

Իշխանը, այս առաջարկությունն անելով, սպասում էր, թե Առանը կամ չի հավատա, կամ թե սաստիկ ուրախանալուց վեր կթռչի տեղից: Բայց Առանը ո՛չ այս արավ և ո՛չ այն, այլ գլուխը քաշ գցեց և սկսեց ցուցամատը գորգի նախշերով սահեցնել: Նրան այդ մտածությունից հանեց Վաղինակը՝ ասելով.

- Ինչո՞ւ տխրեցիր, Առա՛ն եղբայր, մենք քեզ ուրախություն ենք բերել և ոչ տխրություն: Մենք քո աղջիկը բռնի տանելու չենք: Այդ կախված է քո միակ կամքից. եթե կուզես, կտաս, չես ուզի՝ չես տա. մեզ հարկավոր է միայն, որ դու ուղիղն ասես, թե դու ինչպե՛ս կկամենաս՝ տա՞լ, թե՞ չտալ:

- Իմ պատվակա՛ն հյուրեր,- պատասխանեց Առանը,- ես շատ շնորհակալ եմ, որ մեր տեր թագավորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիթից մի զարդ է ուզում տանել, բայց ճշմարիտն ասում եմ ձեզ՝ իմ ձեռին չէ տալն ու չտալը: Ահա կգա ինքը, իրեն կհարցնեք. եթե կհոժարի, ես ոչինչ չունեմ ասելու:

Հենց այս խոսակցության ժամանակ եկավ Անահիտը, որ իրենց այգում էր եղել, ձեռքին մի զամբյուղ՝ խաղողով, դեղձով և տանձ ու խնձորով լիքը: Գլուխ տվեց հյուրերին, որոնց մասին իրեն իմաց էին տվել, որ քաղաքից եկած իշխաններ են, և զամբյուղը ներս տանելով՝ միջի եղածը դարսեց մի մեծ սինու մեջ և բերեց, դրեց հյուրերի առջև: Ինքը գնաց իր ոստայնի մոտ, վեր առավ նրա երեսից սավանը և սկսեց շարունակել իր կիսատ թողած գործը: Իշխաններն սկսեցին նայել, որ տեսնեն՝ ինչպես է գործում Անահիտը, և մնացին ապշած նրա արագաշարժ մատների ճարպկության վրա:

- Անահիտ, ինչո՞ւ ես մենակ գործում,- հարցրեց Վաղինակը,- ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունես:

- Այո՛, ունեմ մի քսան հոգի,- պատասխանեց Անահիտը,- բայց որովհետև հիմա այգեկութ է, արձակել եմ:

- Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում:

- Այո՛, սովորեցնում եմ: Հիմա մեր հովիվներն էլ գիտեն կարդալ և միմյանց սովորեցնում են իրենց հոտն արածեցնելիս: Այժմ եթե մեր անտառները պտտես, բոլոր հաստ ծառերի կեղևները գրոտած կտեսնես: Անցյալ օրը ես մի ծառի վրա տասը տուն սաղմոս կարդացի: Մեր բերդերի պարիսպները, ժայռերի ճակատները ածխագրերով լցրել են: Մեկը Ավետարանից մի տուն գրում է կամ այնքան է գրում, ինչքան անգիր գիտե, հետո մյուսներն են շարունակում: Ահա՛ այսպես սար ու ձոր լցվել է գրերով:

- Մեր մեջ ուսումն այդչափ տարածված չէ, ըստ որում՝ մերոնք ծույլ են, բայց ես հույս ունեմ, որ երբ քեզ տանենք մեր քաղաքը, դու մեր ծույլերին արիաջան կշինես: Մի րոպե թող քո գործը, Անահիտ, և եկ այստեղ, քեզ բան ունենք ասելու: Տե՛ս, ահա քեզ համար ինչե՞ր է ուղարկել մեր թագավորը:

Վաղինակը, այս ասելով, բաց արեց մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ և մետաքսե հագուստներ:

Անահիտը, այդ բաները տեսնելով, ամենևին չհափշտակվեց և չտեսի նման չզարմացավ, այլ համեստ կերպով հարցրեց.

- Կարելի՞ է արդյոք իմանալ, թե այդ պատիվն ինչի՞ համար է արել ինձ թագավորը:

- Մեր թագավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղբյուրին. դու նրան ջուր ես տվել, և նա քեզ շատ հավանել է: Հիմա թագավորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու վրա: Ահա այ՛ս մատանի է, այ՛ս ապարանջան է, այ՛ս մանյակ է, սրանք կոճակներ են, մի խոսքով՝ քեզ համար են այս ամենն էլ:

- Ուրեմն, իմ տեսած որսորդը թագավորի որդի՞ն է եղել:

- Այո՛:

- Նա շատ լավ երիտասարդ էր: Բայց արդյոք գիտե՞ մի որևիցե արհեստ:

- Նա թագավորի որդի է, Անահիտ, նրան ի՞նչ արհեստ է հարկավոր. ողջ աշխարհի տերը նա՛ է, ամենքն էլ նրա ծառաներն են:



- Գիտեմ, որ այդպես է, բայց ո՞վ գիտե, աշխարհք է, այսօրվա ծառաների տերը վաղը կարող է ի՛նքը լինել ծառա, թեև նա թագավոր էլ լինի եղած: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա, թե՛ ծառա լինի, թե՛ տեր, թե՛ թագավոր և թե՛ իշխան:

Այսպես որ ասաց Անահիտը, իշխանները մնացին իրար երեսի մտիկ տալիս: Նայեցին Առանին, տեսան, որ նա շատ հավան է աղջկա ասածին: Հետո դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

- Ուրեմն, դու թագավորի որդուն չպիտի ուզես միայն նրա համար, որ նա արհեստ չգիտե՞:

- Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել եք, ետ կտանեք և կասեք, որ ես իրան շատ հավանում եմ, միայն թող ներե ինձ, որ ես ուխտ եմ դրել արհեստ չգիտցող մարդու չգնալ: Եթե կամենում է, որ ես իր ամուսինը լինեմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի:

Իշխանները տեսան, որ Անահիտը հաստատ է իր ասածին, էլ չստիպեցին: Նույն գիշերը մնացին Առանի տանը: Մյուս օրը վեր կացան, գնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին թագավորին: Թագավորն ու թագուհին երբ լսեցին Անահիտի վճիռը, շատ ուրախացան՝ կարծելով, թե Վաչագանը չի ընդունի նրա առաջարկությունը և ձեռք կվերցնի նրանից. բայց երբ կանչեցին նրան և հայտնեցին, նա ասաց.

- Շատ ուղիղ է ասել Անահիտը. ամենայն մարդ պետք է մի արհեստ գիտենա, թագավորն էլ մարդ է, նա էլ պետք է գիտենա մի արհեստ:

Թագավորը տեսավ, որ որդին հոժար է մի արհեստ սովորելու, խորհրդի կանչեց իշխաններից մի քանիսին, և նրանք միաձայն վճռեցին, թե նրան վայելուչ արհեստը լավ դիպակ գործելն է, որ չկա իրանց երկրի մեջ և հեռավոր երկրներից են բերել տալիս շատ թանկ գնով: Մարդիկ ուղարկեցին և Պարսկաստանից մեկ հմուտ վարպետ բերել տվին Վաչագանի համար: Մի տարվա մեջ Վաչագանն այնպես սովորեց դիպակ գործել, որ իր ձեռքով նուրբ ոսկեթելից մի բաճկոնացու գործեց Անահիտի համար և Վաղինակի ձեռքով ուղարկեց նրան ընծա:

Անահիտը, ստանալով այդ ընծան, ասաց.

- Հիմա ոչինչ չունեմ ասելու. երբ կանճարանա, ջուլիակ կդառնա: Հայտնեցեք թագավորի որդուն իմ հոժարությունը և իմ կողմից էլ իմ նոր գործած գորգը տարեք նրան ընծա:

Վաղինակը վեր առավ գորգը և, ձին հեծնելով, շտապեց որպե առաջ ավետելու Վաչագանին Անահիտի հոժարությունը:

Սկսեցին հարսանիքի պատրաստություն տեսնել և յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արին:

IV

Անահիտի փառավոր հարսանիքին ներկա չէր Վաղինակը: Մեկ օր թագավորը նրան մի հանձնարարությունով ուղարկեց Պերոժ քաղաքը, և այն գնալն էր, որ գնաց. էլ ետ չեկավ: Շատ հարց ու խնդիր եղան, ման եկան, որոնեցին, բայց Վաղինակը կորավ ու կորավ:

Ժամանակ անց թագավորն ու թագուհին վախճանվեցին՝ խորին ծերության հասած: Բոլոր երկիրը սուգ պահեց նրանց համար մինչև քառասուն օր: Քառասուն օրից հետո հավաքվեցին բոլոր քաղաքացիք և Վաչագանին իր հոր տեղը նստեցրին:

Վաչագանը, իր նախնյաց գահը բարձրանալով, ուզեց իր երկիրը այնպես բարեկարգել, որ էլ ոչ մի հոգի ոչ մի բանից դժգոհ չլինի, ամենքն էլ ուրախ լինեն, ամենքն էլ՝ բախտավոր: Բայց Անահիտը այսքանը բավական չհամարեց և մեկ օր նրա հետ սկսեց այսպես խոսել.

- Տե՛ր իմ թագավոր, ես տեսնում եմ, որ դու քո երկրի մասին մանրամասն ու ստույգ տեղեկություններ չունես: Քո հրավիրած մարդիկ ամեն բան ուղիղ չեն ասում: Նրանք քեզ միամտացնելու և ուրախացնելու համար ասում են՝ ամեն բան լավ է և կարգին, ամենքն էլ գոհ են իրենց վիճակից: Ո՞վ գիտե, ինչե՛ր են լինում այս որպեին քո երկրի մեջ, որոնց մասին այդ մարդիկ ոչ մի տեղեկություն չեն տալիս քեզ: Դու ժամանակ առ ժամանակ պետք է զանազան հագուստով ու կերպարանքով ման գաս երկրիդ մեջ, երբեմն աղքատի ձևով մուրացկանություն պետք է անես, երբեմն մշակի հագուստով պիտի երթաս նրանց հետ մշակություն անես, երբեմն՝ վաճառականություն, մի խոսքով՝ ամեն վիճակի մեջ էլ պետք է մտնես, որ ամեն վիճակի էլ մոտիկ ծանոթանաս:

- Դու շատ ճշմարիտ ես ասում, Անահի՛տ,- ասաց թագավորը:- Հանգուցյալ հայրս այդ սովորությունն ուներ, ինչ որ դու ասում ես. միայն ծերության ժամանակ է՛լ չէր կարողանում կատարել իր ուզածը: Ես իմ որսորդության ժամանակ համարյա

միևնույնն էի անում, բայց հիմա ինչպե՞ս անեմ. ես որ երթամ, ո՞վ կկառավարի իմ տեղը:

- Ես ի՛նքս կկառավարեմ և այնպես կանեմ, որ ոչ ոք չի իմանալ, որ դու բացակա ես:

- Շա՛տ լավ. ես հենց վաղը կարող եմ ճանապարհ ընկնել: Քսան օր ժամանակ եմ դնում, երբ որ քսան օրն անցնի, և ես չգամ, իմացի՛ր, որ ես կենդանի չեմ կամ մի փորձանքի մեջ եմ ընկել:

V

Վաչագան թագավորը, հասարակ շինականի հագուստով ծպտված, ճանապարհ ընկավ դեպի իր երկրի հեռավոր կողմերը: Շատ բան տեսավ, շատ բան լսեց, բայց ամենից անցավ այն, ինչ որ նա տեսավ իր վերադարձին Պերոժ քաղաքում:

Քաղաքի կենտրոնում կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. նրա չորս կողմն էին գտնվում բոլոր արհեստավորների և վաճառականների խանութները:

Մի օր այդ հրապարակում նստած էր Վաչագանը, մեկ էլ տեսավ՝ ահա՛ մի խումբ մարդիկ են գալիս և բերում են իրենց հետ մի փառավոր և սպիտակ մորուքով ծերունի՝ աջ ու ձախ բազուկները բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր գալիս. նրա առջև սրբում էին ճանապարհը և աղյուսներ դնում ոտների տակին: Վաչագանը մոտեցավ մի մարդու և հարցրեց, թե ով է այդ ծերունին: Մարդը պատասխանեց.

- Սա մեր մեծ քրմապետն է, մի՞թե չես ճանաչում: Տե՛ս՝ որքա՛ն սուրբ է, որ ոտքը գետնին չի դնում, որ չլինի թե մի որևիցե միջատ ընկնի ոտքի տակը և սպանվի:

Հրապարակի ծայրում մի կարպետ փռեցին, և քրմապետը չոքեց նրա վրա, որ հանգստանա: Վաչագանը գնաց, նրա դիմաց կանգնեց, որ տեսնի՝ ինչ է խոսում այդ մարդը կամ ինչ է անում: Քրմապետը շատ սրատես էր. նա էլ Վաչագանի վրա նայեց և, նկատելով նրա օտարական լինելը և առաջին անգամ իրեն տեսնելը, ձեռքով արավ, որ գնա մոտը: Վաչագանը մոտեցավ:

- Դու ո՞վ ես, ի՞նչ գործի ես,- հարցրեց քրմապետը:

- Ես մի օտար բանվոր եմ,- պատասխանեց Վաչագանը,- եկել եմ այս քաղաքը մշակության:

- Շա՛տ լավ, կգաս ինձ հետ, ես քեզ գործ կտամ և լավ կվարձատրեմ:

Վաչագանը, գլուխ տալով հոժարություն ցույց տվեց և գնաց, կանգնեց նրա հետ եղած մարդկանց մոտ:

Քրմապետն իր մոտ եղած քրմերին մի քանի խոսք փսփսաց, և նրանք ցրվեցին այս ու այն կողմ և մի քանի րոպեից վերադարձան այլևայլ պաշարներով՝ մշակների շալակը տված:

Երբ որ բոլոր քրմերը եկան, քրմապետը վեր կացավ և միևնույն հանդիսով ճանապարհ ընկավ դեպի իր բնակարանը: Վաչագանն էլ լուռ ու մունջ հետևեց նրան: Այսպես գնացին մինչև քաղաքի ծայրը:

Այդտեղ քրմապետը, օրինելով ճանապարհ ձգող ջերմեռանդ կռապաշտներին, հետ դարձրեց, մնացին միայն իր քրմերը և բեռնակիր մշակներն ու Վաչագանը: Դրանք շարունակեցին իրենց ճանապարհը և, հեռանալով քաղաքից մոտ երկու վերստ, հասան մի պարսպապատ շենքի և կանգ առան նրա երկաթե դռան մոտ: Քրմապետն իր գրպանից հանեց մի ահագին բանալի, բաց արեց դուռը և, ամենին ներս անելով, կրկին կողպեց: Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ զգաց՝ տեսնելով, որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու: Վաչագանի հետ եղած մշակներն էլ առաջին անգամ էին մտնում այս շենքի մեջ: Վերջապես, պարսպի կամարակապ ճանապարհն անցնելուց հետո, նրանց առջև բացվեց մի շատ ընդարձակ հրապարակ, որի մեջտեղը կար մի գմբեթահարկ մեհյան՝ մանր խցերով շրջապատված: Մշակների բեռները ցած դնել տվին այդ խցերի մոտ, և նրանց՝ Վաչագանի հետ միասին, քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը, այնտեղ բաց արեց մի նոր երկաթե դուռ և ասաց.

- Գնացե՛ք ներս, այդտեղ ձեզ գործ կտան:

Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց հետևից: Այստեղ մեր օտարականները նոր ուշքի եկան, նոր աչք բաց արին և տեսան, որ մի ստորերկրյա ճանապարհի վրա են կանգնած:

VI

Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին, և հանկարծ նրանց աչքին մի ճրագի աղոտ լույս երևաց: Գնացին դեպի ճրագը, և նրանց առջև բացվեց մի լայն քարահատակ, որի չորս կողմից լսվում էին խառնաշփոթ աղաղակներ:

Վեր նայեցին և տեսան, որ մի արհեստական քարայրի մեջ են գտնվում: Կալանավորները մի կողմից՝ ապշած զննում էին անելանելի բանտը, մյուս կողմից՝ խլշած ականջ էին դնում, որ տեսնեն՝ որտեղից էին գալիս խառնաշփոթ ձայները: Հենց այդ միջոցին նրանց դիմաց երևաց մի ստվեր, որ հետզհետե մոտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանություն առավ: Վաչագանն առաջ գնաց դեպի այդ ստվերը և բարձրաձայն կանչեց.

- Ո՞վ ես դու, սատանա՞ ես, թե՞ մարդ. մոտեցի՛ր մեզ և ասա՛, որտե՞ղ ենք գտնվում մենք:

Ուրվականը մոտեցավ և դողդողալով կանգնեց նորեկների առջև: Դա մի մարդ էր՝ մեռելի կերպարանքով, աչքերը խոր ընկած, այտերը ցցված, մազերը թափված, մի մերկ կմախք, որի բոլոր ոսկորները համրվում էին: Այդ կենդանի մեռյալը, սրացած ծնոտիքը հազիվ շարժելով, հեկեկալով ու կակազելով ասաց.

- Եկե՛ք իմ հետևից, ես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ տեղ եք ընկել դուք:

Գնացին մի նեղ անցքով և մտան մի ուրիշ բույն. այնտեղ տեսան սառը գետնի վրա վայր թափված մերկ մարդիկ, որոնք աղեկտուր տնքոցով փչում էին իրենց վերջին շունչը: Այդտեղից անցան մի ուրիշ որջ և այնտեղ տեսան կարգով շարված ահագին կաթսաներ, որոնց մեջ կերակուր էին եփում մի քանի մեռելագույն մարդիկ: Վաչագանը մոտեցավ այդ կաթսաներին, որ տեսնի՝ ինչ է նրանցում եփվածը, և երբ տեսավ, քստմնելով ետ քաշվեց և ընկերներին չասաց, թե ի՞նչ էր տեսածը: Այդտեղից մտան մի ավելի երկար սրահ և այդտեղ տեսան զանազան արհեստավորներ խառնիխուռն աշխատելիս. մի քանիսը մի-մի բան էին ասեղնագործում, մյուսները նրանց կողքին մի-մի բան էին հյուսում, մի քանիսը կար էին անում, մյուսները՝ ոսկերչություն: Այսպես հարյուրաչափ մարդիկ այստեղ աշխատում էին աղոտ լույսի տակ, ամենքն էլ մեռելի գույն առած:

Այս ամենը ցույց տալուց հետո առաջնորդող մարդը կրկին տարավ նրանց առաջվա սրահը և այնտեղ ասաց.

- Այն դիվական ծերունին, որ ձեզ խաբել բերել է, մեզ ամենիս էլ նա՛ է բերել այստեղ: Թե քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ, ինձ հայտնի չէ, որովհետև այստեղ օր ու գիշեր չկա, այլ կա միայն մի անվերջ խավար: Այսքանը միայն գիտեմ, որ ինձանից առաջ և ինձ հետ եկող մարդիկ կոտորվել են ամենքն էլ: Այստեղ բերում են երկու տեսակի մարդիկ՝ արհեստավոր և անարհեստ: Արհեստավորներին

աշխատեցնում են մինչև իրենց մահը, իսկ արհեստ չգիտցողներին տանում են սպանդանոց, որ ես ձեզ ցույց չտվի, և այնտեղից բերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք: Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այս տեղը: Ծերունի դևը մենակ չէ, նա ունի հարյուրավոր գործակիցներ, որոնք ամենքն էլ քրմեր են: Այս դժոխքի վրա է նրանց բնակարանը:

Ուշադիր նայելով՝ Վաչագանը գլխի ընկավ, որ խոսողը իր հավատարիմ Վաղինակն է: Բայց ոչինչ չասաց՝ մտածելով, որ լավ չի լինի, եթե ինքը հանկարծ հայտնի իր ով լինելը, ըստ որում՝ մի այդպիսի հայտնություն, թե՛ ուրախություն և թե՛ կսկիծ լինելով, կարող էր սրի պես կտրել նրա կյանքի բարակած թելը:

VII

Երբ Վաղինակը գնաց, Վաչագանը հարցրեց իր հետ եկածներին, թե արդյոք մի որևիցե արհեստ գիտե՞ն: Մեկը ասաց, որ գիտի կտավ գործել, երկրորդը դերձակություն գիտեր, երրորդը մետաքսագործ էր, մյուս երեքը ոչ մի արհեստ չգիտեին:

- Վնաս չունի, որ դուք արհեստ չգիտեք,- ասաց Վաչագանը,- ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ արհեստակից եք, իսկ ես շատ լավ արհեստ գիտեմ:

Ոտնաձայնը, արձագանք տալով, հետզհետե մոտեցավ, և նրանց առջև կանգնեց մի դաժանատեսիլ քուրմ՝ հետն առած մի խումբ զինված մարդիկ:

- Դո՞ւք եք նոր եկածները,- հարցրեց քուրմը:

- Այո՛, ծառաներդ ենք,- պատասխանեց Վաչագանը:

- Ձեզանից ո՞վ է արհեստ իմանում:

- Մենք ամենքս էլ գիտենք,- ասաց Վաչագանը,- գիտենք շատ թանկագին դիպակ գործել: Մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի արժե:

- Շա՛տ լավ. բայց մի՞թե ճշմարիտ այդչափ թանկ արժե ձեր գործվածքը:

- Մեր ասածի մեջ սուտ չկա, չէ՞ որ պիտի ստուգեք:

- Իհարկե, ես շուտով կիմանամ, թե որքան ճշմարիտ է ձեր ասածը. հիմա ասացե՛ք՝ ինչ նյութեղեն և գործիքներ են հարկավոր, որ ես բերեմ:

Վաչագանը հայտնեց մի առ մի, թե ինչ ու ինչ է հարկավոր: Մի քանի ժամից հետո ամեն ինչ պատրաստ էր: Քուրմը պատվիրեց, որ երթան արհեստատուն, այնտեղ աշխատեն և նրանց հետ կերակրվեն:

- Այնտեղ մեր գործը լավ չի հաջողի,- ասաց Վաչագանը:- Մեզ հարկավոր է առանձին և ընդարձակ տեղ, և այս տեղը ամենից հարմար է: Մեր գործի նրբությունը պահանջում է առատ լույս, աղոտ լույսի տակ ոչինչ չենք կարող կատարել. իսկ ինչ վերաբերում է մեր կերակուրին, պետք է գիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակուրին. հենց որ միս ուտենք, իսկույն կմեռնենք, և դուք կզրկվեք այն մեծ օգուտից, որ մեզանից կարող եք ստանալ:

- Շա́տ լավ,- ասաց քուրմը,- ես ձեզ համար կուղարկեմ հաց և բուսեղեն կերակուր, դուք կունենաք և առատ լույս, բայց եթե ձեր գործը այնպես չլինի, ինչպես խոստանում եք, ես ձեզ ամենքիդ սպանդանոց կուղարկեմ և սպանելուց առաջ ենթարկել կտամ չարաչար տանջանքների:

Քուրմը կատարեց իր խոստումը: Նրանց համար ուղարկում էր սպիտակ հաց, կանաչեղեն, կաթ, մածուն, պանիր և զանազան չոր ու թարմ մրգեր: Վաղինակն էլ մասնակցեց այդ սննդին, մյուսներին էլ նշխարքի պես բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից: Վաչագանն սկսեց իր գործը և իր ընկերներին էլ իրեն օգնական շինեց: Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատվական դիպակ այնպիսի նախշերով, որոնց եթե ուշադրությամբ զննեին և իմանային նրանց խորհուրդը, նույն դժոխքի պատմությունը պիտի կարդային նրանց մեջ:

Քուրմը եկավ, տեսավ պատրաստած դիպակը և մնաց հիացած: Վաչագանը, ծալելով իր գործքը ինչպես պետք էր և, հանձնելով քրմին, ասաց.

- Ես առաջ ասացի, որ մեր գործվածքի մի կշիռը հարյուր կշիռ ոսկի արժե, բայց հիմա հարկավոր եմ համարում ասել, որ սա իմ ասածի կրկնապատիկը արժե, ըստ որում՝ սրա վրա կան այնպիսի թալիսմաններ, որ հագնողին միշտ զվարթ և ուրախ կպահեն: Այս կա միայն, որ հասարակ մարդիկ սրա գինը չեն իմանա: Սրա գինը կիմանա միայն Անահիտ թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակվի հագնել մի այսպիսի թանկագին գործվածք:

Արծաթամոլ քուրմը աչքերը չորս բաց արեց, երբ որ իմացավ դիպակի իսկական արժեքը: Այս մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չհայտնեց և մինչև անգամ ցույց չտվեց նրան: Ուզեց, որ թագուհու տեսությանը միայն ի՛նքն արժանանա, և նրանից առած ավելի ոսկիքը ի՛նքը վայելի…

VIII

Անահիտը Վաչագանի բացակայության ժամանակ լավ էր կառավարում երկիրը, և ամենքն էլ գոհ էին՝ առանց իմանալու, թե նա՛ է կառավարողը, բայց ինքը սաստիկ մտատանջության մեջ էր ընկել, ըստ որում՝ քսան օրից արդեն տասն օր էլ անցել էր, բայց թագավորը չէր վերադարձել: Նա գիշերը հանգիստ չուներ. սարսափելի երազներ էր տեսնում և հանկարծ վեր թռչում: Ամեն բան փոխվել էր նրա աչքում, և ամեն ինչ մի անսովոր հատկություն էր ստացել: Զանգին անդադար ոռնում ու վնգստում էր և, թագուհու ոտներն ընկնելով, աղիողորմ կլանչում ու նրան ավելի ևս մտատանջության մեջ ձգում: Վաչագանի ձին անընդհատ խրխնջում էր մայրը կորցրած քուռակի պես և, իր ախորժակը կորցնելով, օրեցօր նիհարում էր: Հավերը կանչում էին աքաղաղի պես, իսկ աքաղաղները, փոխանակ լուսաբացին կանչելու, երեկոյին էին ծկլթում փասիանի ձայնով: Պարտեզի սոխակներն ընդհատել էին իրենց ծլվլոցը, և նրանց փոխարեն լսվում էր գիշերները բուերի վայունը: Այլևս չէին քչքչում գետի կոհակները, այլ, վա՛շ-վի՛շ- վա՛շ-վի՛շ անելով, անցնում էին պարսպի տակով տխուր ու տրտում: Արիասիրտ Անահիտը մի անսովոր երկյուղի մեջ էր ընկել, և ի՛ր իսկ ստվերը նրա առջև վիշապի պես էր ձգվում:

Մեկ առավոտ էլ, սաստիկ սրտնեղած, ման էր գալիս պարտեզում, երբ իր ծառաներից մեկը ներս եկավ և հայտնեց նրան, թե մի օտար վաճառական է եկել և ասում է, որ մի երևելի բան ունի վաճառելու թագուհուն: Անահիտի սիրտն սկսեց անսովոր տրոփել: Հրամայեց, որ շուտով ներս բերեն այն մարդուն:

Ներս եկավ մի դաժան կերպարանքով մարդ, խոր գլուխ տվեց թագուհուն և արծաթե սինու վրա դրած մի ոսկե դիպակ դրեց թագուհու առջև: Անահիտը վեր առավ, քննեց դիպակը և, ուշադրություն չդարձնելով նախշերի վրա, հարցրեց գինը:

- Իր կշռով երեք հարյուր կշիռ ոսկի արժե, ողորմա՛ծ թագուհի: Ուզում եմ ասել, որ ինձ վրա այդքան են նստել միայն գործքն ու նյութը, իսկ աշխատանքն էլ թողնում եմ քո ողորմության կամքին:

- Մի՞թե այդքան թանկ արժե:

- Ո՛ղջ լինի թագուհին, դրա մեջ կա մի այնպիսի զորություն, որ անգնահատելի է: Դրա վրա եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թալիսմաններ են, իսկ

Cadigy
1935

այդ թալիսմանները այն զորությունն ունեն, որ դրա հագնողին միշտ զվարթ, միշտ ուրախ կպահեն: Դրա հագնողը կյանքի մեջ տխրություն չի տեսնի:

- Միթե այդպես,- ասաց Անահիտը և սկսեց բաց անել դիպակը և ուշիուշով զննել նրա նկարները, որոնք ոչ թե թալիսմաններ, այլ ծաղկագրեր էին: Անահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մեջ հետևյալ խոսքերը.

«Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոսկալի դժոխքի մեջ: Այս դիպակ բերողը նույն դժոխքի վերակացուներից մեկն է: Ինձ մոտ է և Վաղինակը: Դժոխքը գտնվում է Պերոժ քաղաքից դեպի արևելք, մի պարսպապատ մեհյանի հատակում: Եթե շուտ օգնության չհասնես, մենք կորած ենք հավիտյան:

Վաչագան»:

Անահիտը մեկ անգամ կարդալով չբավականացավ, երկրորդ և երրորդ անգամ էլ կարդաց, ըստ որում՝ իր աչքերին չէր հավատում. կարդաց և չորրորդ անգամ, միայն այս անգամ ոչ թե կարդում էր իսկապես, այլ մտածում էր, թե ինչ է անելու: Աչքը ձգած գրերին՝ երկար մտածելուց հետո դարձավ դեպի վաճառականի հագուստի մեջ ծպտված քուրմը և ուրախ դեմքով ասաց.

- Դու ճշմարիտ ես ասում, քո դիպակի նկարները ուրախացնելու զորություն ունեն: Ես այսօր շատ տխուր էի, բայց այս րոպեին մի անպատմելի ուրախություն եմ զգում: Իմ կարծիքով այս դիպակը անգնահատելի է: Եթե սրա համար իմ թագավորության կեսը պահանջեիր, ես խնայելու չէի: Բայց գիտե՞ս՝ ինչ կա, իմ կարծիքով ոչ մի գործ չի կարող իր գործողից ավելի զորավոր լինել: Այսպե՞ս է, թե՞ ոչ:

- Թագուհին ո՛ղջ լինի, քո կարծիքը շատ ճշմարիտ է. արարածը չի կարող հավասարվել արարողին:

- Եթե դու էլ գիտես, որ այդպես է, պետք է ինձ մոտ բերես սրա գործողին, որ ես վարձատրեմ նրան նույնպես, ինչպես և քեզ:

- Ողորմա՛ծ թագուհի, ես տեսած չեմ դրա գործողին և չեմ ճանաչում: Ես մի վաճառական մարդ եմ, այս կտորը գնել եմ Հնդկաստանում մի հրեայից, իսկ հրեան գնել էր մի արաբից, արաբն էլ՝ ո՞վ գիտե ումից կամ ո՛ր աշխարհից:

- Բայց դու, կարծեմ, ասացիր, թե գործն ու նյութը այսքան արժեն, և չասացիր, թե ես այսքանով եմ գնել. դրանից երևաց, որ դու ի՛նքդ ես գործել տվել:

- Ողորմա՛ծ թագուհի, ինձ այդպես էին ասել Հնդկաստանում, ես էլ…

- Լռի՛ր, ես քեզ ողորմելու չեմ. քո բերած թալիսմաններն ինձ հայտնեցին քո

ով լինելը: Ծառանե՛ր, բռնեցե՛ք այս մարդուն և ձգեցե՛ք մթին բանտի մեջ:

IX

Անահիտը, երբ որ բանտարկեց ծպտված քրմին, իսկույն փչել տվեց պատերազմական փողերը: Ահագին փողերի այդ հանկարծական որոտալը հայտնի նշան էր, որ մի մեծ վտանգ է պատահել աշխարհին: Մի ժամ չանցած՝ բոլոր քաղաքացիք թափվեցին պալատի առջև և այդտեղ սկսեցին խռնվել ու տատանվել լճացած հեղեղի պես: Ոչ ոք չէր իմանում, թե ինչ է պատահել: Հանկարծ պատշգամբի վրա երևաց Անահիտը՝ ոտքից մինչև գլուխ սպառազինված և, դեպի ժողովուրդը դառնալով, այսպես խոսեց.

- Ձեր թագավորի կյանքը վտանգի մեջ է: Ով որ սիրում է իր թագավորին, ում համար թանկ է նրա կյանքը, շուտով ձիավորվի և գա իմ հետևից: Մենք պետք է կեսօր չեղած հասնենք Պերոժ քաղաքը:

Մի ակնթարթի մեջ ցրվեց ժողովուրդը՝ գոչելով՝ կեցցե՛ թագավորը, կեցցե՛ թագուհին, և մի ժամ չանցած՝ արդեն ամենքը զինված պատրաստ էին: Մի կատարյալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մեջ: Կրակոտ ձիու վրա նստած, ոսկեզօծ զրահով պատած, մազերը սաղավարտի մեջ ամփոփած, լայնաշեղբ թուրը կապած, վահանը թիկունքին կախած: Այս բոլորը նրա արեգնատիպ դեմքի և հրավառ աչքերի հետ մի ահեղ կերպարանք էին տվել նրան:

Երբ քաղաքից դուրս եկան տափարակ դաշտ, Անահիտը, կարգավորելով ամբողջ այրուձին, գոչեց բարձրաձայն՝ հառա՛ջ, և ինքն առաջ անցնելով ասպանդակեց ձին և մի վայրկյանի մեջ աներևութացավ: Երկու ժամից հետո նա իր հրեղեն ձիով կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մեջ մեն-մենակ: Կռապաշտ քաղաքացիք, նրան երկնքից իջած մի նոր աստված համարելով, խուռն բազմությամբ չոքեցին նրա առջև և գլուխները մինչև գետին կորացրին:

- Ո՞ւր է ձեր քաղաքապետը,- գոչեց Անահիտը սպառնալից ձայնով:

Ծունկ չոքածներից մեկը վեր կացավ և դողդողալով ասաց.

- Ծառա՛դ եմ, այստեղի քաղաքապետը:

- Դու ես ուրեմն, որ այնքան անհոգ ես, որ չգիտես, թե ի՞նչ է գործվում քո աստվածների բնակարանում:

- Ծառադ եմ, ես ոչինչ չգիտեմ:

- Դու կարելի է թե չգիտես էլ, թե որտեղ է գտնվում ձեր տաճարը:

- Ինչպե՞ս չգիտեմ, ծառադ եմ, շա՛տ լավ գիտեմ:

- Առա՛ջ անցիր, ուրեմն…

Կես ժամ չանցած՝ ամբողջ քաղաքը գնում էր Անահիտի հետևից: Երբ որ մոտեցավ մեհյանի պարիսպներին, քրմերը կարծեցին, թե ուխտավորների մեծ բազմություն է եկողը, շտապով բաց արին դուռը: Բայց երբ ներս խռնվեց ժողովուրդը, երբ տեսան զրահավորված հրաշագեղ ասպետի սպառնալից դեմքը և իրենց ուշ չդարձնելը, մի անսովոր սարսափի մեջ ընկան: Անահիտը մի րոպեի մեջ գտավ տարտարոսի դուռը և, դառնալով քաղաքապետին, հրամայեց.

- Բա՛ց արեք ահա՛ այս դուռը:

Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի անձինք պատրաստվում էին կոտրատել դուռը, ծերունի քրմապետը, վերահաս վտանգը տեսնելով, դուրս եկավ իր մեհենական զգեստով, որ ժողովրդի վրա սարսափ ձգի և հետ մղի: Երբ որ իր սպիտակ շուրջառը ձգած, քրմապետական երկճյուղ ու երկայն թագը գլխին դրած և գավազանը ձեռքին դուրս եկավ ուռած ու փքված, ժողովուրդը ճանապարհ բաց արեց և հետ քաշվեց ահ ու դողով: Նա մոտեցավ Անահիտին և պատգամախոսի ձայնով աղաղակեց.

- Ի՞նչ ես ուզո՛ւմ, ի՞նչ ես անո՛ւմ, հե՛տ քաշվիր այդտեղի՛ց:

Անահիտը, բարկությունը հազիվ զսպելով, ասաց.

- Ես հրամայում եմ, որ այս դուռը բացվի:

Քրմապետը երեսը դարձրեց դեպի մեհյանը և, ձեռքերը մեկնելով, աղաղակեց.

- Ո՜վ հզոր աստվածնե՛ր, ձեր սուրբ տաճարը պղծվո՛ւմ է, օգնությո՛ւն հասցրեք…

Այս ձայնի վրա մեհյանի դուռը բացվեց, և նրա միջից դուրս թափվեցին մի խումբ սպառազինված դաժանատեսիլ մարդիկ: Սրանք քրմերն էին, որոնք, վերահաս վտանգը տեսնելով, անձնապաշտպանության էին պատրաստվել: Քրմապետը հրամայեց նրանց, որ դուռը պահպանեն և ոչ ոքի թույլ չտան մոտենալ:

Անահիտի համբերությունը հատեց սաստիկ բարկությունից: Դարձրեց ձիու գլուխը և, հետ նայելով, տեսավ, որ քաղաքի վրա ամպի պես փոշի է բարձրացած, իմացավ, որ զորքը մոտեցել է: Այդ հանգամանքից ավելի ևս սրտապնդվելով՝ դարձավ դեպի քրմերը և գոչեց.

- Վերջի՛ն անգամ հրամայում եմ ձեզ զինաթա՛փ լինել և բանա՛լ այդ դժոխքի դուռը:

Քրմերը պատրաստվեցին դիմադրելու: Անահիտի իմաստուն ձին իմացավ տիրուհու մտադրությունը, մի թեթև ասպանդակի հարված ստանալուն պես կոխկռտեց տարեց քրմապետին և հարձակվեց քրմերի վրա: Վրա հասան զորքի առաջապահ նիզակավորները և հարձակվեցին քրմերի վրա: Մի րոպե չանցած՝ կենդանի մնացած քրմերը փախան. ամբոխը հետ քաշվեց: Անահիտն իջավ ձիուց, հրաման արձակեց, որ եկող զորքը շրջապատի մեհյանը, որի մեջ պատսպարվել էին բոլոր քրմերը և ներսից դուռը փակել: Հետո, դառնալով դեպի ամբոխը, ասաց.

- Եկեք, այստեղ կարգով կանգնեցե՛ք հանդարտ, որ տեսնեք՝ ինչ կա ձեր սուրբ քրմապետի սրբարանում,- և հրամայեց դուռը կոտրել:

Մի զարհուրելի տեսարան բացվեց ժողովրդի առջև: Դժոխային որջից դուրս սողացին բազմաթիվ հոգիք, որոնք նոր գերեզմանից հանած դիակների էին նմանում: Շատերը վերջին շնչում էին և ոտքի վրա կանգնել չէին կարողանում: Նրանց ուրախության լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը մարդու սիրտ էին կտրատում: Ամենից հետո դուրս եկան Վաչագանն ու Վաղինակը՝ գլուխները քաշ գցած: Թագուհին ճանաչեց Վաչագանին և հասկացրեց իր մարդկանց, որ նրան տանեն իր համար պատրաստված վրանը: Վաչագանը գնաց Վաղինակի ձեռքից բռնած, որ աչքերը խփած կույր աղքատի պես հետևեց նրան: Մյուս բոլոր դուրս եկողներին հրապարակի վրա նստեցնելուց հետո Անահիտը հրամայեց զինվորներին, որ ներս գնան և ամեն բան, ինչ կա-չկա, դուրս տան: Զինվորները մտան դժոխքի մեջ և այնտեղից դուրս բերին նոր մեռած մարդկանց դիակներ, զանազան արհեստի գործիքներ և պարագաներ...

Հետո Անահիտը գնաց իր վրանը, որտեղ նրան անհամբեր սպասում էր Վաչագանը: Երկու սիրելիները նստեցին իրար կողքի և միմյանց նայելուց չէին կշտանում: Վաղինակը մոտեցավ թագուհուն, համբուրեց նրա ձեռքը և, մյուս կողքին նստելով, սկսեց հեկեկալ մորը գտած երեխայի պես:

- Դու փրկեցիր մեզ, իմ աննման թագուհի:

- Դու սխալվում ես, Վաղինա՛կ,- ասաց Վաչագանը,- թագուհին այն ժամանակ փրկեց մեզ, երբ որ քեզ ասաց. «Ձեր թագավորի որդին արհեստ գիտե՞»: Մի՞տդ է, որ դու էլ մի կուշտ ծիծաղել էիր:

X

Վաչագան թագավորի այս արկածքի լուրը տարածվեց բոլոր քաղաքներում և գյուղերում: Այդ մասին խոսում էին մինչև անգամ օտար երկրներում էլ և ամենայն տեղ Անահիտի և Վաչագանի գովասանքն էին անում: Ազգային երգիչները, գյուղեգյուղ և քաղաքեքաղաք պտտվելով, այդ անցքի պատմությունն էին անում երգերով: Ափսո՛ս, որ այդ երգերը մեզ չեն հասել, բայց ինչ որ արել են Վաչագանն ու Անահիտը իրենց աշխարհի համար, այդ բանը հեքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ:



ՀՈՒՐԻ-ՓԵՐԻ ՀԱՎՔԸ

Ժամանակով մի թագավոր է լինում, էդ թագավորը երեք տղա է ունենում: Գալիս է ծերության ժամանակը, կուրանում է: Ինչքան հեքիմ գալիս է, չի կարողանում աչքերը բուժել: Մեծ տղին կանչում է, ասում.

- Պիտի գնաս, աչքերիս համար դեղ բերես:

Ասում է.

- Ես ո՞ւր եմ գնացել, որ հիմա էլ գնամ, քո աչքերի համար դեղ բերեմ:

Ասում է.

- Որդի՛, էնքան գնա, որ էնտեղ իմ ձիու ոտքը դիպած չլինի: Էնտեղից որ հող էլ բերես, իմ աչքերին դեղ է:

Տղեն դուրս է գալիս, իրենց գոմից մի ձի է դուրս քաշում, հեծնում է, վեց ամիս ճամփա է գնում: Գնում է, տեսնում մի ամայի տեղ մի աղբյուր, աղբյուրի վրա՝ մի չոր ծառ: Ասում է.

- Փա՛ռք քեզ, Աստված, էսքան ջրի գլխին՝ էս ծառն էսպես չոր, մի շվաք էլ չկա, որ հովին քնեմ:

Յափնջին գցում է ծառին, հովին թեք ընկնում, քնում:

Վեր է կենում, տեսնում է, որ ծառը կանաչել է, խնձորներ է տվել, ամեն մեկը մի գրվանքա: Մի խուրջին խնձոր է քաղում, մի հինգ-վեց շիշ ջուր է վերցնում, ասում է.

- Տանեմ հորս, էսքան տեղ եկած չի լինի:

Վեց ամիս էլ հետ է դառնում իրենց տուն: Հորն աչքալույսի են գալիս, թե մեծ տղեդ եկավ: Հերն ախ է քաշում, թե.

- Ինչ անեմ, թե եկավ: Դատարկ գնացել է, դատարկ եկել:

Գալիս է տղեն հոր մոտ, բարև է տալիս, հերը բարևն առնում է, ասում.

- Որդի՛ ջան, մինչև ո՞ւր գնացիր:

Ասում է.

- Ափո՛ւ ջան, էնքան եմ գնացել, որ քո պապերն էլ էնտեղ չեն եղել ու չեն տեսել:

- Դե ասա, տեսնեմ, ո՞ւր գնացիր:

Ասում է.

- Ափո՛ւ, գնացի մինչև մի աղբյուր:

Հերն ասում է.

- Դու կաց, ես ասեմ,- ասում է,- չոր ծառն էր: Քնեցիր տակին՝ կանաչե՞ց, վրեն խնձո՞ր եղավ:

- Հա՛, ափո՛ւ ջան:

- Ես,- ասում է,- որդի՛, որ գնում էի, առավոտը էստեղ թեյ էի խմում, գնում էի էնտեղ, ճաշվա հացը ուտում: Էդ բերածդ բան չի լավացնի:

Միջնեկ տղին են կանչում: Միջնեկ տղին ասում է.

- Ա՛յ որդի, արի դու գնա:

Ասում է.

- Ափո՛ւ ջան, որ դա չկարողացավ բերել, ես ո՞րտեղից բերեմ:

Հերն ասում է.

- Ինչ անեմ, պիտի գնաս, հնար չկա:

Էս տղեն էլ գնում է, գոմից մի ձի դուրս քաշում, իր համար ճամփի պաշար վերցնում, վեր կենում ու գնում: Վեց ամսից հասնում է էդ ծառի մոտ, ասում.

- Ախպորս տեղը էս է:

Երեք ամիս էլ դենը գնում է, տեսնում մի բլուր՝ վրան սաթ, անգին քար, ադամանդ: Ասում է.

- Որ իմ հերը էս տեղերը եկած լիներ, հիմի մեր գանձարանը լիքը սրանցից կլիներ:

Խուրջինի երկու աչքը լիքը լցնում է ու հետ դառնում: Գալիս է, էլի հասնում իր հորը: Հորն էլի գնում են աչքալույսի.

- Աչքդ լույս, միջնեկ տղեդ եկավ:

Էլի հերը ախ է քաշում.

- Է,- ասում է,- եկավ, համա դատարկ եկավ:

Տղեն ներս է գալիս, հորը բարև տալիս, հոր ձեռքը համբուրում: Հերն էլ բարևն առնում է, տղի թշերը համբուրում:

- Է, որդի ջան, ասա՝ տեսնեմ, մինչև ո՞ւր գնացիր:

Ասում է.

- Ափո՛ւ ջան, էնքան եմ գնացել, որ քո օխտը պապն էլ չի գնացել:

- Դե ասա տեսնեմ, որդի՛, մինչև ո՞ւր:

- Ափո՛ւ, գնացի մի բլուր...

- Դե,- ասում է,- որդի, մի՛ ասա՝ որ բլուրն ես գնացել, ես իմացա,- ասում է,- անգին քար ես բերել, մարգարիտ, գոհար, չէ՞:

- Հա,- ասում է,- ափո՛ւ:

- Գնա՛,- ասում է,- բե՛ր խուրջինդ՝ տեսնեմ:

Բերում բաց են անում, տեսնում, որ անպետք քարի կտորներ են:

Ասում է.

- Գնա՛, գնա՛, որդի՛ս, Աստված քեզ էլ օրհնի:

- Դեհ,- ասում է,- պուճուր տղի՛ս կանչեք:

Պուճուր տղեն գալիս է էդտեղ, կանգնում, ասում.

- Ի՞նչ ես ասում, ափո՛ւ ջան:

Ասում է.

- Ափուն էն է ասում, որ պիտի գնաս, աչքերիս համար դեղ բերես:

Տղեն ասում է.

- Ափո՛ւ ջան, ես դեռ պուճուր եմ, տնից դուրս չեմ եկել, ես ո՞ւր գնամ՝ քեզ համար դեղ բերեմ:

Ասում է.

- Որդի՛, գնում ես, գնա՛, ճար չկա:

Տղեն նեղանում է, գնում իրենց այգին, ավազանի մոտ թեք ընկնում, քնում: Երազում գալիս ասում են.

- Ա՛յ տղա, ինչի՞ ես եկել, էդտեղ թեք ընկել, քնել:

Ասում է.

- Ի՞նչ անեմ, հերս ինձ ասում է՝ գնա աչքերիս համար դեղ բեր, ես ճամփա չգիտեմ, չգիտեմ, թե ուր գնամ:

- Որդի՛,- ասում է,- գնա հորդ ասա՝ մատիդ մատանին տո՛ւր, վրիդ թուրը, տակիդ ձին տո՛ւր՝ գնամ բերեմ:

Տղեն արագ տեղից ելնում է, գալիս հոր մոտ, ասում.

- Ափո՛ւ ջան, տակիդ ձին եմ ուզում, վրիդ թուրը, մատիդ մատանին: Կտաս, կգնամ կբերեմ:

Հերն ուրախանում է, տղին գրկում, երկու թուշն էլ համբուրում:

- Իմ ղոչաղ տղեն դու ես,- ասում է,- գիտեմ, որ կբերես:

Առավոտը վեր է կենում, մատի մատանին տալիս, վրի թուրը տալիս, ձիապանին էլ ասում՝ ձիս հազրե՛ք, թամբե՛ք:

Տղեն արագ ձին հեծնում է, գնում: Գնում է, ոնց որ հերն ասել էր, առավոտը տանը թեյն էր խմել, ճաշին էլ գնում է էդ չոր ծառի տակին հացը ուտում, իրիկնապահին գնում էդ բլրին հասնում: Իրիկվանը ուզում էր էդ բլուրն անցներ, տեսնում է, որ հրես մի արև երկնքում է, մի արև էլ գետնին է: Ասում է.

- Փառք քեզ, Աստվա՛ծ, էս ի՞նչ տեսակ աշխարհք է. մի արև երկնքում է, մի արև էլ գետնին է:

Ձին քշում է, քշում, գնում է, մի փետուր տեսնում: Ձիուց իջնում է, էդ փետուրը գետնից վերցնում, խրում փափախի ծալը: Ձին ասում է.

- Ա՛յ տղա, էդ փետուրը գցի:

Ասում է՝ ինչի՞ գցեմ: Ասում է՝ փետուրից քեզ շատ շառ կգա: Ասում է՝ փետուրն ի՞նչ է, որ շառն ինչ լինի: Երեք անգամ ձին ասում է, տղեն ականջ չի անում:

- Դե,- ասում է ձին,- գնա՛, քո մեղքը քո վիզը:

Փետուրը վերցնում է ու ձին քշում: Գնում է մի թագավորի քաղաք: Լուր են տանում թագավորին, թե մի տղա է գալիս, մի արև երկնքում է, մեկն էլ դրա փափախի ծալում է: Թագավորն ասում է.

- Գնացե՛ք, էդ տղին կանչե՛ք, բերե՛ք:

Գնում են, տղին բերում թագավորի մոտ: Թագավորն ասում է.

- Ա՛յ տղա, ի՞նչ տղա ես:

Ասում է.

- Օտարական եմ, եկել եմ էս երկիրը ման գալու:

Ասում է.

- Էս ի՞նչ արև է փափախիդ ծալքում:

Ասում է.

- Թագավո՛ր, մի փետուր էր, ճամփին ընկած էր, վերցրել եմ:

- Դե,- ասում է,- տո՛ւր տեսնեմ:

Տղեն հանում է փետուրը, տալիս թագավորին: Թագավորը հենց որ փետուրը տեսնում է, խելքը գլխից գնում է: Ասում է՝ դե գնա՛, շնորհակալ եմ: Տղեն գնում է: Թագավորը փետուրը խրում է պատը ու աչքը վրայից չէր կտրում: Ինչքան գանգատավոր էր գալիս, ասում էր.

- Ժամանակը չէ՛, գնացե՛ք:

Մի օր էլ մի պառավի ճտերը գողացել էին, գալիս է թագավորի մոտ գանգատ անելու, թագավորն ասում է.

- Գնա՛, պառա՛վ, վախտը չէ:

Պառավը տեսնում է, որ թագավորը իր ուշք ու միտքը գցել է փետուրին, ասում է.

- Թագավո՛ր, էդ դեռ մի փետուր է, որ էդպես ուշագնաց ես եղել, բա որ դրա հավքը տեսնես:

Թագավորը հետ է դառնում, ասում.

- Նանի՛ ջան, սրա հավքը ո՞վ կբերի:

Պառավն ասում է.

- Փետուր բերողը հավքը չի՞ բերի. ով որ փետուրը բերել է, հավքն էլ նա կբերի:

Թագավորը մարդ է ուղարկում, թե գնացեք էն տղին գտեք, բերեք: Գնում ման են գալիս տղին, իջևանատնից առնում, գալիս: Տղեն ասում է.

- Հա՛, թագավորն էն օրը որ փետուրը ձեռիցս առավ, խելքը գնաց, վարձահատույց չեղավ, էսօր կանչում է, որ հատուցի, ինչի՞ս է պետք:

Տղեն գնում է թագավորի մոտ, յոթ անգամ գլուխ տալիս, ձեռքը կրծքին դնում, կանգնում: Թագավորն ասում է.

- Տղա՛, գիտե՞ս՝ ինչի եմ կանչել:

Ասում է՝ ի՞նչ իմանամ, թագավո՛ր:

Ասում է.

- Պիտի գնաս, էս փետուրի տեր հավքին բերես:

Տղեն ասում է.

- Ես ղարիբ եմ, էս երկիր նոր եմ եկել, ես ո՞րտեղից բերեմ էդ հավքը:

Թագավորն ասում է.

- Չգիտեմ, որտեղից բերում ես՝ բե՛ր: Որ չբերես, գլուխդ կկտրեմ:

Տղեն հետ է դառնում, լացելով գնում իջևանատուն: Որ շատ է լաց լինում, ձին ասում է.

- Աչքդ դուրս գա, բա որ ասում էի՝ փետուրը մի՛ վերցրու, վնաս կբերի, դու հենց գիտեիր՝ քեզ վա՞տ էի ասում: Հո մենակ էդ չի, դեռ էնքա՞ն փորձանք կգա գլխիդ:

Տղեն ասում է.

- Դե ինչ անեմ, ձի՛ ջան, ոտիդ ու սմբակներիդ մեռնեմ, նեղն եմ ընկել, էս տեղից ինձ ազատի:

- Բան չկա,- ասում է,- տղա՛, թեք ընկի քնի, ես առավոտ էդ նեղ տեղից քեզ կազատեմ:

Տղեն թեք է ընկնում, բայց մինչև լույսը բացվելը քունը չի տանում: Առավոտ տղեն վեր է կենում, ձիուն քերիչով մի լավ մաքրում, ինքը մի քիչ հաց ուտում, ձին դուրս քաշում, ասում.

- Ձի՛ ջան, ո՞ր կողմ գնամ:

Ձին ասում է.

- Դու սանձս թույլ թող, ես ուր պետք է, կգնամ:

Թույլ է թողնում: Ձին շատ էր գնացել, քիչ էր գնացել, շատ ու քիչն աստված գիտի, հասնում է մի անտառի, ասում է.

- Ա՛յ տղա, գիտե՞ս՝ էս որ անտառն է:

Ասում է.

- Ես ի՞նչ իմանամ, չգիտեմ:

Ձին ասում է.

- Սրան Վերանի անտառ են ասում:

Ձիուց իջնում է: Ձին ասում է.

- Փորքաշներս թուլացրո՛ւ, սանձս գլխիցս հա՛ն, մտի՛կ արա. տեսնո՞ւմ ես՝ անտառի մեջտեղը մի բարձր ծառ կա, չինարի, տեսնո՞ւմ ես:

Ասում է՝ տեսա:

- Դե,- ասում է,- էդ ծառի տակին մարմար քարից շինած ավազան կա: Կգնաս, էդ ավազանի կողքին մի հոր կփորես, կմտնես հորի մեջ, տափ կկենաս: Էսօր ուրբաթ է,- ասում է,- ուրբաթեուրբաթ հուրի-փերի աղջիկը գալիս է, էդ ավազանում լողանում է: Կգա, կաշին կհանի, կդնի մի կողմ, տկլոր կմտնի ավազանը, կլողանա, դուրս կգա, շորերը կհագնի: Շորերը հագավ, չխոսես, կաշին որ կհագնի, կպրծնի, իր փետուրները կուղղի: Որ փետուրները ուղղեց, կամաց-կամաց ձեռքդ կհանես, երկու ոտքից պինդ կբռնես: Երկու ոտքից որ պինդ բռնես, կառնես, կբերես ինձ մոտ:

Ոնց որ ձին ասել էր, տղեն էդպես հորը փորում է, տափ կենում, հավքը գալիս է, կաշին հանում, շորերը հանում, մտնում ավազանը, շատ լավ լողանում, դուրս գալիս, շորերը հագնում, կաշին հագնում, ուզում էր փետուրները ուղղել, տղեն ձեռքը մեկնում է ու հավքին բռնում: Հավքն ասում է.

- Ա՛յ տղա, դու ինձ արի բաց թող, ինձնից խեր չես տեսնի:

Տղեն ասում է.

- Հա՛վք ջան, անունիդ մեռնեմ, ոտներիդ մեռնեմ, ախր ես էլ ջահել տղա եմ, աչքս մուրազի է, որ քեզ չտանեմ, թագավորը գլուխս կկտրի:

Հավքն ասում է.

- Դե դու գիտես, քո մեղքը՝ քո վիզը: Էնպիսի տեղ ուղարկեմ, որ գնալդ լինի, գալդ չլինի:

Տղեն հավքն առնում է, բերում ձիու մոտ, հեծնում ձին ու գալիս թագավորի մոտ: Բերում է հավքը, տալիս թագավորին: Թագավորը հավքն առնում է փետուրի պես, ասում՝ շնորհակալ եմ, գնա՛: Վարձահատույց չի լինում:

Տղեն ելնում է, հետ գալիս իջևանատուն: Թագավորը հավքը դնում է վանդակի մեջ, կախ տալիս պատից: Թագավորը մտքի մեջ է ընկնում. հավքը չի խոսում, ձեն չի հանում, թագավորի սիրտը ուզում է բերնով դուրս գա, թագավորի ճարը կտրվում է.

- Ա՛յ հավք ջան, ինչ ուզես, կտամ, միայն հետս խոսես, ես իմանամ՝ քո ձենն ինչ տեսակի ձեն է:

Հավքն ասում է.

- Տունդ քանդվի, թագավո՛ր, ես էնպիսի մի աղջիկ եմ, որ արևելքից ման գաս արևելք, իմ նմանը չես գտնի: Իմ ուզածը որ բերես, կաշիս հանեմ, ես կլինեմ թագուհի, դու էլ թագավոր ես ու կաս, ինչքան թագավոր կա, քեզ կնախանձի:

Ասում է.

- Ուզի՛, հա՛վք ջան, ինչ որ ուզես, ես բերել կտամ:

Ասում է.

- Իմ ուզածը իմ աղախինն է, Սև ծովի, Սպիտակ ծովի արանքում է, Կարմիր դևի ձեռքին, գնաս բերես՝ ես կլինեմ քեզ թագուհի:

Ասում է՝ հա՛վք ջան, ո՞վ կբերի: Ասում է.

- Թագավո՛ր, ինձ որ էն դժվար տեղից բերեց էն տղեն, էս մեկը դրանից շատ հեշտ է, նա կբերի:

- Դե,- ասում է,- գնացե՛ք, տղին կանչեք՝ գա:

Գնում են, տղին կանչում, բերում:

Տղեն ասում է.

- Ախպե՛ր, կրակի մեջ եմ ընկե՞լ. էս անգամ էլ գնամ, տեսնեմ՝ ինչ է ասում:

Տղեն ելնում գնում է, ոնց որ կարգն էր, թագավորին բարև տալիս, ձեռքերը ծալում, կանգնում: Թագավորը դրա բարևն առնում է, ասում.

- Ա՛յ տղա, գիտե՞ս՝ ինչի եմ կանչել:

- Ես ի՞նչ իմանամ,- ասում է,- ինչի ես կանչել:

- Քեզ կանչել եմ,- ասում է,- որ գնաս Սև ծովի, Սպիտակ ծովի արանքից Կարմիր դևի ձեռից մի աղջիկ կա՝ խլես, բերես:

- Թագավո՛ր,- ասում է,- ես ո՞նց եմ մտնում ծովը, որ գնամ Սև ծովը, Սպիտակ ծովը անց կենամ, դևի հետ կռիվ տամ, աղջկան բերեմ:

- Գլուխս շատ մի՛ տար,- ասում է,- կբերես՝ լավ, չես բերի՝ գլուխդ կկտրեմ:

Տղեն հետ է դառնում, լացելով գնում իջևանատուն:

Ձին ասում է.

- Հը՛, հիմի՞ ինչ է եղել, ի՞նչ է պատահել:

Ասում է.

- Ի՞նչ ասեմ, ձի՛ ջան, ոտիդ տակին մեռնեմ, էդ տնաքանդ թագավորն ասում է՝ պիտի գնաս Սև ծովի, Սպիտակ ծովի արանքը, էնտեղ մի աղջիկ կա Կարմիր

դևի ձեռքին, պիտի կռիվ անես, քաշես, բերես:

Ձին ասում է.

- Ա՛յ տղա, լաց մի՛ լինի, աստված ողորմած է, վերջը բարին լինի: Թեք ընկի, քնի:

Էդ գիշեր տղեն թեք է ընկնում, մի քիչ իբր քնում: Առավոտը վեր է կենում, ոնց որ էն անգամ ձիուն թիմարել էր, էս անգամ էլ է էդպես թիմարում, մի երկու բրդուճ հաց ուտում, ձին դուրս է քաշում, ասում.

- Ձի՛ ջան, հեծնեմ, ո՞ր կողմ գնամ:

Ձին ասում է.

- Քո ի՞նչ պետքն է. ես որ կողմը կգնամ, կգնամ, դու սանձս թույլ թող:

Ձիու սանձը թույլ է թողնում, ձին գնում է: Շատ է գնում, քիչ է գնում՝ մենակ աստված գիտի, հասնում է ծովի ափ: Ձին ասում է.

- Ա՛յ տղա, էս Սև ծովն է, հիմի ո՞նց պիտի անց կենաս:

- Ա՛յ ձի ջան,- ասում է,- ես ի՞նչ գիտեմ:

Ասում է.

- Էդ թուրը որ կապել ես վրեդ, դրա հունարը գիտե՞ս:

Ասում է.

- Չէ՛, ձի՛ ջան, ոնց որ կապել եմ վրես, իսկի տեղից չեմ հանել:

Ասում է.

- Էդ թուրը քո հոր թուրն է, կայծակից է շինված, կհանես տեղից, կոթը դեմ կանես ճակատիս, բերանը՝ ջրին, քեզ ճամփա կտա: Որ անցկացար էն կողմը, անձավի միջից դուրս եկող մի բարակ ծուխ կտեսնես, անձավի դռանը կկանգնես, ձեն կտաս, կասես՝ դև՛, դո՛ւրս արի, կռիվ անենք: Նա կասի՝ արի հաց ուտենք: Չգնաս: Երեք անգամ որ ասես, նա անձավից դուրս կգա: Թուրը կհանես, վրա կբերես, դևի գլուխը կկտրվի, կմտնի գետինը: Կգնաս աղջկա ձեռքից կբռնես, կքաշես մեջքիս, թրի բերանն էլի դեմ կանես ջրին, ջուրը ճամփա կտա, աղջկան կբերես, կտաս թագավորին:

Տղեն գնում է, ձիու ասածի պես ծովն անցնում, դևին տալիս սպանում, աղջկան վերցնում, բերում տալիս թագավորին: Թագավորն ասում է՝ շնորհակալ եմ, դե գնա: Ու նորից վարձահատույց չի լինում:

Թագավորն ասում է.

Cooper
1931

- Հա՛վք ջան, է՞ս է քո ուզած աղջիկը:

Ասում է՝ էս է:

- Դե,- ասում է,- ուզածդ բերի, հա՛ն քո կաշին:

Ասում է.

- Տունդ քանդվի, թագավո՛ր, ես որ կաշիս հանեմ, պատկերս տեսնես, կմեռնես:

- Բա էս ո՞նց պիտի լինի,- ասում է թագավորը:

Ասում է.

- Ոնց որ պիտի լինի: Ուղարկի, Կարմիր ծովում քառասուն հրեղեն ձի կա, բե՛ր, նրանց կաթով լողացի, դու էլ դարձի հուրի-փերի, իրար հետ ապրենք, որ մեզնից ելած երեխեքը հուրի-փերի լինեն:

Ասում է՝ ո՞վ կբերի էդ ձիերը:

- Ո՞վ պիտի բերի. ով ինձ բերել է, իմ աղախնին բերել է, ձիերն էլ նա կբերի:

Թագավորն ասում է.

- Վազե՛ք, էն տղեն չփախչի, շուտ վերցրե՛ք, բերե՛ք:

Գնում են տեսնում, որ էս տղեն հաց է ուտում, ասում են.

- Արի՛, թագավորը քեզ կանչում է:

Տղեն ասում է.

- Լա՛վ, լա՛վ, էսօր թագավորը պիտի ինձ հաց կերցնի, քանի ամիս է՝ տաք կերակուր չեմ կերել: Մի ա՛ման կերակուր կբերեն, կուտեմ:

Վազելով գնում է թագավորի մոտ: Գնում գլուխ է տալիս, ձեռքերը ծալում ու կանգնում: Ասում է.

- Ա՛յ տղա, գիտե՞ս՝ ինչի եմ կանչել: Կանչել եմ, որ գնաս, Կարմիր ծովում քառասուն ձի կա, բերես, որ կթեմ, դրանց կաթով լողանամ:

Տղեն ասում է.

- Թագավո՛ր, ես ո՞նց գնամ, ո՞նց էդքան ձին բերեմ, ես մի հոգի, մենակ էդքանը ո՞նց բերեմ:

Թագավորն ասում է.

- Գլուխս մի՛ տար, բերեցիր՝ լավ, չբերեցիր՝ գլուխդ կկտրեմ:

Տղեն հետ է դառնում, էլի լացելով գնում ձիու մոտ: Ձին ասում է.

- Ա՛յ տղա, հիմի ինչի՞ ես լալիս:

Ասում է.

- Ես լաց չլինեմ, բա ո՞վ լաց լինի: Հիմի էլ էդ տնաքանդ թագավորը ուղարկում է, թե Կարմիր ծովում քառասուն ձի կա, բե՛ր:

Ասում է.

- Ա՛յ տղա, էլ լաց մի՛ լինի: Սրանից հետո ինչ վնաս գա՝ ինձ պիտի գա, քեզ էլ բան չկա: Դե գնա,- ասում է,- թագավորի մոտ, ասա՝ քառասուն ուղտաբեռ բուրդ ուղարկի ծովի եզր, քառասուն բեռ էլ՝ քեչա, քառասուն բեռ էլ կաշի: Ասա՝ տարե՛ք, էնտեղ դրեք, ես կգնամ, ձիերը կբերեմ:

Տղեն գնում է թագավորի մոտ, ոնց որ ձին սովորեցրել էր, էդպես էլ թագավորին ասում է: Հետ է դառնում, գալիս իր իջևանատուն: Թագավորը պատրաստությունը տեսնում է, առավոտ ուղարկում: Տղեն էլ ձին հեծնում է ու գնում դեպի Կարմիր ծով:

Որ ծովին մոտենում է, ձին ասում է.

- Տղա՛, էն որ ասում են՝ քառասուն հատ է, քառասուն հատ չէ, երեսունինը հատ է: Մեկը մերս է, երեսունութը՝ քույրերս, ես կենտ տղա էի, նեղացա, էս երեսուն տարի է՝ ընկել եմ հորդ ձեռքը, հիմի մերս երևի ասում է՝ ա՛խ, տղես երբ պիտի ընկնի ձեռքս, որ կտոր-կտոր անեմ: Ես ծովի ափին թեք կընկնեմ, սկզբից կբերես, բուրդը վրաս կլցնես, հետո քեչով կծածկես, քեչից հետո էլ կաշվով կծածկես, կգնաս հեռու, տափ կկենաս: Ես,- ասում է,- մի բարակ կխրխնջամ, ծովը կալեկոծվի, չվախենաս: Հետո մերս ծովից դուրս կգա, քույրերս մի կողմ կկանգնեն, լաց կլինեն: Մերս վրա կպրծնի ինձ, որ քրքրի: Սկզբից կաշին վրայիցս կվերցնի, դեն կգցի, հանկարծ չխոսես: Հետո քեչեն էլ կվերցնի, դեն կգցի, էլի չխոսես: Կհասնի բրդին: Բրդի կեսն էլ որ դեն ածի, կհոգնի, կճմլկտա: Էդ ժամանակ վրա հասի, ոտքդ դիր ասպանդակը, ե՛լ վրեն, պինդ նստի: Էդ ժամանակ նա իրեն թափ կտա, երկինք կբարձրանա, որ օդը քեզ խաշի, վռազ կիջնես փորատակը: Նա երկնքից ցած կիջնի, կբերի, որ քեզ գետնով տա, մտնես գետնի տակը: Կթռչես, տղամարդու պես թամբին կնստես: Որ նստեցիր, մտրակով փորատակն էնպես կդաղես, որ կերած կաթը պնչներից գա: Դրանից հետո,- ասում է,- կասես՝ տերդ ես եմ: Ո՞ր կողմ քշես, էն կողմ կգնա: Քույրերս էլ, ես էլ կընկնենք հետևներիցդ, կգանք:

Ոնց որ ձին ասել էր, տղեն էդպես էլ անում է. հեծնում է ձին, իր քուռակները հետը բերում, թագավորի գոմում կապում: Գնում է թագավորի մոտ, ասում.

- Թագավո՛ր, էս էլ քո ձիերը:

Իր ձին վերցնում է, գնում իր իջևանատուն:

Հավքն ասում է.

- Դե, թագավո՛ր, կթել տուր, վախտով լողացի:

Թագավորն ասում է՝ ո՞վ կկթի: Հավքն ասում է.

- Տնաքա՛նդ, ինչի՞ տղին բաց թողիք, էն տղեն պիտի կթեր:

Մարդ են ուղարկում տղին, թե՝ արի՛, ձիերը կթի:

Ձին ասում է.

- Տղա՛, որ գնում ես ձիերը կթելու, ինձ էլ տար, էնտեղ կապի: Էն վախտը որ կկթես, մատանիդ թելով կկապես, կախ կտաս պղնձի մեջ, հետո թուրդ կհանես, թեքությամբ կդնես վրեն: Հետո կգնաս, ձիերը մեկ-մեկ բաց կթողնես, կգան, կկանգնեն պղնձի վրա, դու էդպես մեկ-մեկ կկթես: Որ կթեցիր պրծար, շորերդ կհանես, կլողանաս: Որ լողացար պրծար, թուրդ կհանես, կսրբես, կդնես տեղը, մատանիդ էլ կհանես, կսրբես, կդնես մատդ: Հետո կասես՝ թագավորին ասեք՝ թող գա լողանա: Թագավորը որ շորերը կհանի, կլողանա, էն վախտը, որ կմտնի պղնձի մեջ, կաթը կվառի, թագավորը կէրվի, կդառնա էսպիսի մի գունդ, կվերցնես, կգցես ջրհորը: Թագավորի շորերը կվերցնես, կհագնես, իսկ քո շորերն էլ կգցես ջրհորը: Հետո կգաս, թագավորի թախտին կնստես:

Ոնց որ ձին խրատ է տալիս, տղեն էդպես էլ անում է: Թագավորը էրվում է, ինքը նրա շորերը հագնում է, գալիս թախտին նստում: Հավքը անմիջապես իմանում է, որ թագավորը վառվել է, իր կաշին հանում է, դառնում մի սիրուն աղջիկ, գալիս, ձեռները գցում տղի վզով:

- Ես հենց քեզ համար էի աշխատում,- ասում է,- հիմի դու՝ թագավոր, ես՝ թագուհի:

Ժողովուրդը չի իմանում, թե ինչ է եղել, ինչ չի եղել: Մի քանի ամիս թագավոր է նստում, հանկարծ հերը միտն է ընկնում: Հենց որ միտն է ընկնում, նստում, լաց է լինում:

Աղջիկը որ գալիս տեսնում է՝ տղեն լաց է լինում, ասում է.

- Ա՛յ քո տունը շինվի, ինձ պես կնիկ ունես, դու էլ մի հասարակ մարդ էիր՝ թագավոր դարձար, էլ աշխարհքի տակ ի՞նչ դարդ ունես, որ նստել, լաց ես լինում:

Տղեն ասում է.

- Թագուհի՛ ջան, գլխիդ, արևիդ մեռնեմ, ախր իմ հերն էլ թագավոր է, հորս աչքերը կուրացել են, ես եկել եմ, որ հորս աչքերի համար դեղ տանեմ, հիմի եկել եմ էստեղ, պինդ նստել: Հիմի չգիտեմ,- ասում է,- հերս մեռե՞լ է, թե՞ ողջ է, դրա համար էլ լաց եմ լինում:

Աղջիկը ծիծաղում է ու ձեռները գցում տղի վզով, ասում.

- Ա՛յ քո տունը շինվի, էդ որ քո հերը կուրացել է, տասը տարի հետևիցս ման եկավ, չկարողացավ բռնել, դրա համար էլ կուրացել է: Հիմի որ ես հասնեմ հորդ, մատս արնացնեմ, քսեմ հորդ աչքերին, անմիջապես կլավանա: Ե՛լ,- ասում է,- որ էդպես է, գնանք քո հոր տուն:

Տղեն կանչում է ժողովրդին, մի լավ հաց տալիս:

- Մի լավ թագավոր ընտրեք ձեզ համար,- ասում է,- ես ուրիշ երկիր պիտի գնամ: Կամ հետ կգամ, կամ չեմ գա:

Ժողովուրդն իրենց համար մի մարդ են գտնում, դնում թագավոր: Աղջիկն ու տղեն շնորհակալություն են ասում, հասարակ շորեր հագնում, իրենց համար ճամփի պաշար վերցնում, երեսունինը մատակ ձիերը, մեկ էլ էդ որձ ձին դուրս են քաշում: Որձ ձիուն կնիկն է հեծնում, մեծ մատակին էլ տղեն է հեծնում, շնորհակալ են լինում ժողովրդին, դուրս են գալիս քաղաքից: Մի օրվա ճամփա էլ բերում են, ճամփու դնում, ժողովուրդը դառնում է իր տեղը, տղեն գնում է հոր քաղաքը:

Քաղաքի մոտ մի հովիվ են գտնում, ասում է.

- Թագավորին աչքալուսեք տար, ասա՝ աչքդ լույս լինի, քո տղեն եկավ:

Հովիվը գնում ասում է.

- Թագավո՛ր, աչքդ լույս լինի, քո տղեն եկավ:

Թագավորն ասում է.

- Հովի՛վ, ի՞նչ է բերում հետը տղես:

Ասում է.

- Քառասուն կապույտ ձի է, համ էլ մի շատ սիրուն կնիկ է հետը:

Թագավորն ասում է.

- Էհ, փա՛ռք քեզ, աստված, թե հեռու ման եկա, մոտիկ գտա: Գնացե՛ք,- ասում է,- հովվին մի կոտ ոսկի տվեք:

Տղեն հասնում է տուն, գնում, հոր ձեռքը համբուրում, հերը նրա թուշն է համբուրում: Թագուհին բերում է մատը կտրում, արյունը քսում թագավորի

աչքերին: Որ քսում է, թագավորի աչքերը բացվում են, թագավորը վեր է կենում, էդ աղջկա ճակատը համբուրում, թագը վերցնում է, դնում տղի գլխին, ասում.

- Սրանից հետո թագավորությունը քեզ է սազում, թագուհությունը՝ սրան:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, երկուսն էլ՝ ականջ դնողին:

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

Ժամանակով մի թագավոր է լինում, երեք տղա է ունենում, երկուսը՝ խելոք, մեկը՝ մի քիչ խելքից պակաս: Էս խելքից պակասի անունը Ալո-Դինո է լինում:

Էդ թագավորին մի լավ այգի է լինում: Էդ այգու մեջ մի խնձորի ծառ է լինում՝ վրեն երեք խնձոր:

Օրերից մի օր այգի է գալիս մի աղքատ ծերունի ու ողորմություն ուզում:

Այգեպանն ասում է.

- Ի՞նչ պտուղ ուզում ես՝ քաղեմ տամ:

Ասում է.

- Էդ երեք խնձորներից մեկը քաղի տո՛ւր:

Այգեպանն ասում է.

- Չեմ կարող, էդ թագավորի համար է, ուրիշ ինչ կուզես՝ տամ:

Ծերունին ասում է.

- Էդ խնձորներից պիտի տաս:

Շատ է պնդում, բայց էդ խնձորներից չեն տալիս: Վերջը ծերունին անիծում է, ու այգին չորանում է:

Այգեպանը ծերունուն հարցնում է.

- Ո՞նց պիտի լինի, որ էս այգին կանաչի:

Ասում է.

- Մինչև Հազարան բլբուլը չբերեք, չի կանաչի:

Թագավորը գալիս է այգի, տեսնում՝ չորացել է: Կանչում է այգեպանին, նախատում.

- Էս այգին ո՞նց ես պահել, որ չորացել է:

Այգեպանը պատասխանում է թագավորին.

- Մի ծերունի եկավ, ողորմություն ուզեց, ինչ պտուղ տվի՝ չուզեց: Էս երեք խնձորներից մեկը ուզեց՝ չտվի: Անիծեց, այգին չորացավ: Հետո հարցրի, թե ոնց պիտի անենք, որ այգին կանաչի, ասաց. «Մինչև Հազարան բլբուլը չբերեք, չի կանաչի»:

Թագավորն ասում է.

- Ի՞նչ անենք, ո՞վ կբերի էդ Հազարան բլբուլը:

Մեծ տղեն գալիս է, կանգնում թագավորի առաջ, ասում.

- Թագավորն ապրած կենա, ես կբերեմ:

Միջնեկն էլ գալիս է, ասում.

- Ես կբերեմ:

Թագավորն ասում է.

- Որ էդպես է, երկուսդ էլ գնացեք:

Երկու ախպեր ձի են նստում, գնում:

Ալո-Դինոն գալիս է տուն, մորից հաց ուզում ուտելու: Տեսնում է, որ իր ախպերները տանը չեն, ասում է.

- Մայրի՛կ, իմ ախպերները ո՞ւր են:

Մերն ասում է.

- Ա՛յ հողը գլխիդ, չե՞ս իմանում՝ ախպերներդ արդեն վեց օր է՝ գնացել են Հազարան բլբուլը բերելու:

Ալո-Դինոն վեր է կենում, գնում ախոռապետի մոտ, ասում.

- Մի լավ ձի ջոկի, ես պիտի տեղ գնամ:

Ախոռապետն ասում է.

- Սրանք են ձիերը, որն ուզում ես՝ նստի գնա:

Գնում է, ձիերի մեջքին ձեռք տալիս, բոլորը ճկռում են, չեն դիմանում նրա ձեռքի տակ: Գալիս տեսնում է, որ դռան մոտ մի քոսոտ ձի կա կապված, աչքից դուրս: Ձեռք է տալիս ձիու բաշին, թափեթափ տալիս, տեսնում, որ ձին հեչ չի շարժվում: Ախոռապետին պատվիրում է, որ օրը երեք անգամ լողացնեն ու ժամը մեկ մի փութ չամիչ տան:

Երեք օր հետո Ալո-Դինոն գնում է, էդ ձին նստում, քշում գնում, հասնում իր ախպերներին:

Մեծ ախպերը բարկանում է դրա վրա.

- Ինչի՞ եկար, ա՛յ գիժ: Ուզում ես՝ մեզ էլ խայտառակես քեզ հետ:

Ասում է ու մի ապտակ տալիս:

Միջնեկ ախպերն ասում է.

- Ինչի՞ ես ապտակ տալիս, եկել է՝ եկել, թող մեր ձիերը պահի, մեզ համար թեյ սարքի, ծառայի:

Վեր են կենում, երեքով ճամփա ընկնում, գնում: Գնում են, տեսնում երեք ճամփա՝ մեջտեղը մի ծերունի նստած: Երեքով բարև են տալիս, ասում.

- Բարաջողում, ափի՛:

Ծերունին ասում է.

- Աստծո՛ւ բարին, թագավորի՛ տղերք:

Թագավորի մեծ տղեն հարցնում է.

- Էս երեք ճամփեն ի՞նչ ճամփա են:

Ասում է.

- Մեկը Թիֆլիս է գնում, մեկը Երևան է գնում, իսկ էս մի ճամփով գնացողը հետ չի գալիս, «գնալ-հետ չգալու» ճամփեն է:

Ալո-Դինոն մեծ ախպորն ասում է.

- Եկեք դուք երկուսդ էս անվնաս ճամփով գնացեք, ես էս «գնալ-հետ չգալու» ճամփով կգնամ:

Մեծ ախպերը շատ է ուրախանում, ասում է.

- Թող գնա կորչի էս գիժը մեզնից:

Գնալու ժամանակ ծերունուն պատվիրում են, ասում.

- Պապի՛, աստծու սիրուն, ո՛ր մեկս որ շուտ կգանք, պահի՛ էստեղ, մինչև որ երեքս էլ հավաքվենք, իրար հետ տուն գնանք:

Էս երկուսը վեր են կենում, կա՛մ Թիֆլիս, կա՛մ Երևան գնում, շատ փորձանքների մեջ են ընկնում, իրենց ձիերն էլ ծախում են, ուտում, իրենց շորերն էլ են ծախում, ուտում, վերջը գնում են բաղնիսպանի ծառայում. մեկը բաղնիք տաքացնող է դառնում, մեկէլը՝ հնոցապան:

Ալո-Դինոն էլ ձի է նստում, գնում: Շատ է գնում, թե քիչ է գնում, աստված գիտի, գնում, ընկնում է մի կարմիր հող. անտառի ծառերը՝ կարմիր, հողը՝ կարմիր, քարը՝ կարմիր: Էդ ժամանակ աստծու հրամանով Ալո-Դինոյի ձին լեզու է առնում, ասում.

- Ալո՛-Դինո, ո՞ւր ես ինձ քշում:

Ասում է.

- Բա ի՞նչ անեմ, պիտի գնանք:

Ասում է.

- Էս Կարմիր դևի հողն է, իրիկունը սրան հյուր ենք: Ինքը երեքգլխանի է:

Իրիկունը գնում են Կարմիր դևի տուն, տեսնում՝ մի կին կա: Էդ կինը շատ ափսոս է գալիս էդ տղին, ասում է.

- Ա՛յ տղա, արի քեզ թաքցնեմ:

Ալո-Դինոն ասում է.

- Ի՞նչ թաքցնելու ժամանակ է, ես սոված եմ, հաց բեր ուտենք:

Ասում է՝ նստի՛:

Ալո-Դինոն նստում է, դևի կինը գնում է հաց բերելու, մի երկու-երեք սինի հաց է բերում, Ալո-Դինոն ասում է.

- Ի՞նչ ես անում, ինձ համար հա՛ց բեր:

Դևի կինը տեսնում է, որ էդ մարդը չի կշտանում, ասում է.

- Արի գնանք, դևի կերակուրը էնտեղ է, ինչքան սիրտդ կուզի՝ կեր:

Գնում է, տեսնում հինգ լիդր բրինձ եփած, երկու հատ էլ եզ մորթած, պղնձի մեջ դրված է: Երեք բերան է անում էդ փլավը ու կուլ տալիս: Մի եզն առնում է մի ծնոտի տակ, մեկն էլ գցում մեկէլ ծնոտի տակ ու ջարդում, ոսկոր-մոսկոր իրար հետ ուտում:

Դևի կինը էդ տղին էլի ափսոս է գալիս, ասում է.

- Արի՛ քեզ թաքցնեմ, ափսոս ես:

Ալո-Դինոն ասում է.

- Ես դևի համար եմ եկել:

Գնում է, սենյակում նստում, տեսնում է՝ սենյակը հանկարծ տեղից ճոճվեց:

Ասում է.

- Էս ինչի՞ ճոճվեց:

Դևի կինն ասում է.

- Դևը գալիս է:

Դևը գալիս է տուն, գայլ, աղվես, արջ քշում, բերում է, անում իրենց բակը: Ներս է մտնում իր սենյակ, տեսնում է՝ մի մարդ նստած է, գլխի է ընկնում, որ Ալո-Դինոն է, ասում է.

- Բարո՛վ ես եկել, Ալո՛-Դինո:

Ալո-Դինոն ասում է.

- Դու ի՞նչ գիտես, որ ես Ալո-Դինոն եմ:

Ասում է.

- Ես որ սարերով ման էի գալիս, էն ժամանակ ծառերը, քարերը, խոտերը ձեն տվին, թե Ալո-Դինոն մորից ծնվեց: Թե որ դու Ալո-Դինոն չլինես, մեր տուն իմ ահից մարդ չի կարող գալ:

- Կնի՛կ,- ասում է,- ե՛լ, ե՛լ, հաց բեր ուտենք:

Ասում է.

- Քո կերակուրը էդ տղեն լրիվ կերավ, բան չթողեց:

Վեր են կենում, էդ արջը, գայլը, աղվեսը, ինչ որ դևը բերել էր, մորթում են, ուտում: Դևը տեսնում է, որ էս մարդը իսկի ոսկոր չի հանում, բռնածը կուլ է տալիս:

Ուտում են, պրծնում, ասում է.

- Ի՞նչ անենք, հիմի՞ կռիվ անենք, թե՞ առավոտ:

Ալո-Դինոն ասում է.

- Երբ քո սիրտն ուզի, ես պատրաստ եմ:

Առավոտ լույսը բացվում է, դևն ու Ալո-Դինոն արթնանում են, դևը իր գուրզը վերցնում է, Ալո-Դինոն էլ իրենն է վերցնում:

Ալո-Դինոն ասում է.

- Հերթը քոնն է, ես հյուր եմ:

Դևն ասում է.

- Պատրաստ կանգնի՛ր, եկա՛վ գուրզը:

Ալո-Դինոյի ձին ասում է.

- Ինձ մի անգամ մտրակով կխփես, ես կթռչեմ, գուրզը կգա, իմ տակով կանցնի:

Դևը երեք անգամ գուրզը գցում է, Ալո-Դինոյին հեչ բան չի լինում:

Ալո-Դինոն ասում է.

- Կանգնի՛ր, հերթն իմն է:

Դևը կանգնում է: Ալո-Դինոն ձիուն խթանում է, քշում գնում է դևի վրա, թրով տալուն պես երեք գլուխն էլ թռցնում է, քիթ ու պռոշները կտրատում, լցնում է իր խուրջինը, գնում է դևի սենյակ, դևի կնոջն ասում.

- Բարո՛վ, հարսի:

Դևի կինն ասում է.

- Ի՞նչ հարս, դու՝ իմը, ես՝ քոնը:

Ասում է.

- Չէ՛, ես ուխտ եմ արել, դու իմ մեծ ախպոր նշանածն ես:

Նշան է տալիս, նշան առնում, երեք օր հյուր մնում, ասում.

- Մնաս բարով, ես գնում եմ:

Դևի կինն ասում է.

- Ո՞ւր ես գնում:

Ասում է.

- Գնում եմ Հազարան բլբուլը բերելու:

Ասում է.

- Ա՛յ տղա, մի՛ գնա, շատ դժվար է, գլխիդ փորձանք կբերես:

Ասում է.

- Բերեմ, չբերեմ՝ պիտի գնամ:

Քշում, գնում է, մի հող ընկնում, տեսնում է՝ հողը՝ սպիտակ, քարը՝ սպիտակ, ծառը՝ սպիտակ, դևի հյուրատունն էլ՝ սպիտակ:

Ձին լեզու է առնում, ասում.

- Իջի՛ր, ինձ մի քիչ մա՛ն տուր:

Ալո-Դինոն իջնում է ձիուց, նրան ման տալիս: Ձին ասում է.

- Էս Սպիտակ դևի հողն է, իրիկունն էնտեղ հյուր պիտի լինենք: Սա Կարմիր դևի պես չէ, սրան յոթ գլուխ ունի:

Ալո-Դինոն ասում է.

- Վնաս չունի, յոթն էլ կթռցնենք:

Իրիկունը հյուր են գնում, տեսնում են, որ դռները փակ են: Ալո-Դինոն բարձր ձայնով կանչում է, ասում.

- Ո՞վ կա տանը, եկե՛ք, ձին ներս տարեք:

Մի կին գալիս է, դռները բաց անում, ասում.

- Հրեդ, ձիդ տա՛ր գոմը, կապի:

Ալո-Դինոն տանում է ձին կապում, ինքը բարձրանում վերև:

Ասում է.

- Մի քիչ հա՛ց բեր ուտեմ:

Կինը մի հինգ-վեց սինի հաց է բերում:

Ասում է.

- Էս երեխա ե՞ս խաբում, հա՛ց բեր, հա՛ց:

Դևի կինը հոգնում է քառասուն աստիճան բարձրանալով-իջնելով, ասում է.

- Համեցե՛ք, գնանք, դևի կերակուրի վրա կանգնիր կեր՝ ինչքան սիրտդ ուզում է:

Գնում, տեսնում է մի քսանունկանի պղինձ՝ մեջը քսան լիդր բրինձ փլավ գցած, երեք հատ էլ եզ մորթած, վրան դրած: Կանգնում է, երկու բուռ անում, էդ փլավը մի շնչով կուլ տալիս, ամեն եզը երկու կտոր անում ու կուլ տալիս: Գնում, նստում է իր տեղը:

Մի քիչ մնում է, տեսնում է՝ սենյակը ճոճվեց, դևի կնոջը հարցնում է.

- Սենյակը ինչի՞ ճոճվեց:

Ասում է.

- Ա՛յ տղա, դևը գալիս է, արի ես քեզ թաքցնեմ:

Ասում է.

- Ի՞նչ թաքցնես, ես դևի համար եմ եկել:

Մի քիչ մնում է, տեսնում է՝ դևը եկավ: Դևը գալիս է, ամեն տեսակ անասուն՝ առյուծ, արջ, գայլ, հավաքում, բերում է իրենց բակ: Վեր է ելնում իր սենյակ, տեսնում է՝ մի մարդ նստած է, ձեռք է մեկնում, ասում.

- Բարո՛վ, Ալո՛-Դինո:

Ալո-Դինոն ասում է.

- Դու ի՞նչ իմացար՝ ես Ալո-Դինոն եմ:

Ասում է.

- Քո ծնված օրը սարերը, քարափները, ծառերը, խոտերը ձեն տվին, բոլորը միասին գոռացին, թե Ալո-Դինոն մորից ծնվեց: Դու Ալո-Դինոն պիտի լինես, որ եկել ես էստեղ, թե չէ ուրիշ մարդ իմ ահից էստեղ գալ չի կարող:

Կանչում է կնոջը, թե հաց բեր ուտենք:

Կինն ասում է.

- Էդ տղեն քո բաժինը լրիվ կերել է:

Ասում է.

- Վնաս չունի, նոր որսած անասունները մորթենք:

Բերած անասունները մորթում են, եփում, նստում են, երկուսով ուտում: Էդ դևը տեսնում է, որ էս մարդը ո՛չ ոսկոր է հանում, ո՛չ բան, ձեռքն ընկածը կուլ է տալիս: Ուտում են պրծնում, դևն ասում է.

- Հիմի՞ կռիվ անենք, թե՞ առավոտ:

Ալո-Դինոն ասում է.

- Դու գիտես:

Դևն ասում է.

- Մեր մեջ ադաթ կա, որ իրիկուն հյուրին պահենք, պատվենք, առավոտ կռվենք:

Առավոտ լույսը բացվում է, Ալո-Դինոն ձեն է տալիս դևին, ասում.

- Վե՛ր կաց, կռվի ժամը հասել է:

Դևը տեղից վեր է կենում, իր գուրզը վերցնում, մեյդան դուրս գալիս: Ալո-Դինոն հեծնում է իր ձին, գնում, մեյդանը կտրում:

Ձին ասում է.

- Ալո՛-Դինո, դևի՝ գուրզ գցելու ժամանակ ինձ երեք անգամ կմտրակես, ես կբարձրանամ, գուրզը կգա, մեր տակով կանցնի:

Ապա վեր են կենում, գնում մեյդան:

Դևն ասում է.

- Հերթը քո՞ն է, թե՞ իմը:

Ալո-Դինոն ասում է.

- Ես հյուր եմ, հերթը քոնն է:

Դևն ասում է.

- Պատրաստ եղիր, գուրզը եկավ:

Դևը երեք անգամ գուրզը ձեռքի մեջ պտտում է, որ գցի, Ալո-Դինոն ձիուն երեք անգամ մտրակում է, ձին բարձրանում է, գուրզը գալիս է, տակով անցնում:

Դևն ասում է.

- Հա՜, թոզ ու դումանը եկավ, փակեց, հը՜, Ալո՛-Դինո, ո՞ւր ես, կա՛ց, մի թութունի պես քաշեմ պինչս:

- Հը՛,- ասում է,- դև՛, ի՞նչ մտքի ես, ես պատրաստ եմ: Հը՛, կանգնի՛ր, դև՛, հերթն իմն է:

Դևը կանգնում է, Ալո-Դինոն ձիուն խթանում է, քշում, գնում դևի վրա:

Ասում է.

- Կանգնի՛ր, թուրը եկավ:

Թուրը վրա բերելուն պես յոթ գլուխն էլ կտրում է: Իջնում է ձիուց, դևի քիթն ու պռոշները կտրատում, լցնում խուրջինը, վեր կենում, գնում դևի սենյակը: Դևի կինը վազում է առաջը, ասում.

- Ես քեզ մատաղ, էդ ինչ լավ բան արիր՝ դևին սպանեցիր: Արի մի պռոշտի անենք:

Ալո-Դինոն ասում է.

- Չէ՛, էդպես չի կարելի, դու իմ միջնեկ եղբոր նշանածն ես:

Նշան է տալիս, նշան առնում, մի երեք օր հյուր մնում, երեք օրից հետո ասում է.

- Մնաս բարով:

Ասում է.

- Ա՛յ քո տունը շինվի, ո՞ւր ես գնում:

Ասում է.

- Գնում եմ՝ Հազարան բլբուլը բերեմ:

Ասում է.

- Ա՛յ տունդ շինվի, դու չես կարող Հազարան բլբուլը բերել:

Ասում է.

- Ինչ էլ լինի, պիտի գնամ:

Գնում է, ընկնում Սև դևի հողը: Ձին լեզու է առնում, ասում.

- Ալո՛-Դինո, տեսնո՞ւմ ես, որ էս հողն էլ է սև, քարն էլ է սև, ծառն էլ է սև, խոտն էլ է սև: Էս քառասունգլխանի Սև դևի հողն է:

Գնում է, տեսնում մի քառասունունկանի պղինձ է դրված՝ մեջը քառասուն լիդր բրինձ, փլավ են եփել, չորս հատ էլ մորթած եզ վրան: Երեք օր Ալո-Դինոն հաց չէր կերել: Գալիս է, տեսնում փլավը, բերնի ջուրը գնում է, չորս բուռ է անում, կուլ տալիս, եզները ուտում է, բերանը սրբում, գնում է, սենյակում նստում: Իրիկնապահին տեսնում է՝ սենյակը շարժվեց, ասում է.

- Էս ո՞վ է գալիս:

Ասում է.

- Դևը գալիս է, ժամանակն է:

Դևը գալիս է տուն, իր որսած անասունները անում է բակը, ինքը բարձրանում է վերև, գնում է, տեսնում՝ մի մարդ նստած է սենյակում: Դևը միտք է անում, ասում է.

- Էս ո՛վ պիտի լինի, Ալո-Դինոյից բացի մարդ չի լինի:

Գնում է, ձեռք է մեկնում, ասում.

- Ալո՛-Դինո:

Ասում է.

- Դու ի՞նչ իմացար՝ իմ անունը Ալո-Դինո է:

Ասում է.

- Ես սարերում որս անելիս իմացա, երբ քարերը, սարերը, ծառերը, խոտերը ասացին՝ Ալո-Դինոն ծնվեց մորից: Դե՛հ, Ալո-Դինոյից բացի՝ մարդ չի կարող գալ իմ հողը:

Ապա դառնում է, կնոջն ասում.

- Կնի՛կ, վե՛ր կաց, հաց բեր ուտենք:

Կինն ասում է.

- Քո բաժինը էդ տղեն կերել է:

Ասում է.

- Վնաս չունի, նոր որսած անասունները մորթե՛ք, եփե՛ք, բերե՛ք:

Վեր են կենում, նոր որսած անասունները մորթում, եփում են, բերում, դնում են առաջները, ուտում են: Սև դևը տեսնում է, որ Ալո-Դինոն իսկի ոսկոր չի հանում, ինչ դնում է բերանը, կուլ է տալիս:

Դևն ասում է.

- Հիմի՞ կռիվ անենք, թե՞ առավոտ:

Տղեն ասում է.

- Դու գիտես:

Դևն ասում է.

- Մեր ադաթը էն է, որ իրիկունը հյուրին կպահենք, առավոտը կկռվենք:

Մնում է, առավոտը վեր են կենում, գնում են կռվի: Երեք օր, երեք գիշեր կռիվ են անում, վերջը Ալո-Դինոն դևին հաղթում է: Իջնում է ձիուց, դևի քիթ ու մռութը կտրատում, լցնում է խուրջինը, դառնում, գնում է դևի սենյակը:

Դևի կինը գալիս է, բարևում, ասում.

- Լա՛վ արիր, որ դևին սպանեցիր, սրանից հետո դու իմն ես, ես՝ քոնը:

Տեղերը գցում են, քնում: Մի երկու շաբաթ մնում է էդտեղ, մի օր Հազարան բլբուլը միտն է ընկնում, մի «ա՛խ» է քաշում: Կինն ասում է.

- Ինչի՞ «ախ» քաշեցիր, ինձանից լավի՞ն պիտի առնես:

Ասում է.

- Ա՛յ տունդ շինվի, մեր այգին չորացել է, ես եկել եմ, որ գնամ, Հազարան բլբուլը բերեմ, եկել նստել եմ էստեղ:

Կինն ասում է.

- Դրա բերելը շատ դժվար է, դրա տերը Չաչոնց թագավորն է: Դրա տերը քառասուն օր է՝ քնած է: Որ զարթնեց, քեզ պես քսանն էլ լինի, կսպանի:

Ասում է.

- Ինչ կուզի՝ թող լինի, պիտի գնամ:

Վեր է կենում, գնում, դեմ է առնում մի մեծ ծովի: Ձին ասում է.

- Ալո՛-Դինո, ես ծովեղեն չեմ, էդ ծովը չեմ կարող անցնել:

Ալո-Դինոն ձիուն ծովեզրին արձակում է, մեջքը դեմ անում մի քարի, քնում: Քնած էր, թե զարթուն էր, աստված գիտի, մի ձեն է լսում: Ասում են. «Ալո՛-Դինո, էդ քարը շարժի՛, էդ քարի տակ երեք հատ ծովեղեն ձիու սանձ կա»:

Վեր է կենում, քարը շարժում, տեսնում, որ իրոք երեք ծովեղեն ձիու սանձ կա: Վեր է կենում, ասում են. «Երկուսը կապի՛ր մեջքիդ, մեկը կա՛խ արա ծովը, ծովեղենը դուրս կգա: Նա կուզի քեզ կուլ տալ, դու ջա՛նք թափի, ձեռքդ գցի ձիու բաշը, պինդ բռնի: Էդ ժամանակ սանձը տո՛ւր ձիու բերանը: Ձին կասի՝ հը՞, Ալո՛-Դինո, ի՞նչ կուզես՝ ես անեմ: Ասա՝ Հազարան բլբուլը կուզեմ»:

Ալո-Դինոն երկու սանձը կապում է իր մեջքին, մեկն էլ կախ է անում ծովը: Ծովեղեն ձին դուրս է գալիս, ուզում է Ալո-Դինոյին կուլ տալ, Ալո-Դինոն ձեռքը գցում է, պինդ բռնում, թռչում, մեջքին նստում: Ձին ասում է.

- Ալո՛-Դինո, ի՞նչ ես ուզում՝ անեմ:

Ասում է.

- Հազարան բլբուլն եմ ուզում:

Ձին ասում է.

- Էդ իմ բանը չէ, ես քեզ կտանեմ ծովի էն ափը, իմ մեծ քույրն էնտեղ է, նրա բանն է, իմ բանը չէ:

Ձին տանում է ծովի մյուս ափը, Ալո-Դինոյի մտքից ընկնում է, սանձը թողնում է ձիու գլխին, ձին առնում, մտնում է ծովը:

- Վա՜յ,- ասում է,- ձին սանձը տարավ, ես ի՞նչ անեմ:

Էդ ծովի կղզում շատ է ման գալիս, գնում, տեսնում է՝ մի ծեր մարդ է նստած: Ասում է.

- Բարև քեզ, ափի՛:

Ասում է.

- Որդի՛, դու էլ ես ընկել Հազարան բլբուլի շառը:

- Բա՜,- ասում է,- ես էլ եկա, որ Հազարան բլբուլը տանեմ, ձին սանձը տարավ, ընկավ ծովը, մնացի էստեղ:

Էդ ասելու ժամանակ ձեռքը տանում է մեջքը, տեսնում՝ երկու սանձ էլ ունի: Ծերունին որ տեսնում է՝ էդ տղան երկու սանձ էլ ունի, ասում է.

- Որ բլբուլը կբերես, աստված սիրես, ինձ ցո՛ւյց տուր, նոր տար: Հարյուր հիսուն տարի ես էստեղ եմ էդ բլբուլի խաթեր:

Ալո-Դինոն սանձի մեկն առնում է ձեռքը, մյուսը կապում մեջքին, գնում, կախ անում էն կողմի ծովը, մի ծովեղեն ձի է դուրս գալիս, ուզում է Ալո-Դինոյին կուլ տալ: Ալո-Դինոն ձիուն գետնով է տալիս, նստում վրան:

Ձին ասում է.

- Տղա՛, ի՞նչ մուրազ ունես, ասա՝ անեմ:

Տղան ասում է.

- Հազարան բլբուլն եմ ուզում:

Ասում է.

- Ա՛յ տղա, էդ շատ դժվար բան է: Հրեն, Չաչոնց թագավորի պալատում՝ ծովի կողմից, բլբուլի վանդակը դրված է: Կարո՞ղ ես ինձ էնպես մտրակել, որ երեք հարյուր վաթսունվեց երակս դողա, ես բարձրանամ մինչև պատուհանը, ձեռքդ գցես, միանգամից վանդակը վերցնես: Թե չվերցրիր, երկուսս էլ վեր կընկնենք, կմեռնենք:

Տղան ասում է.

- Շատ լավ կլինի:

Մտրակը քաշում է, էնպես է տալիս ձիուն, որ ջիգյարը վառվում է, երեք հարյուր վաթսունվեց երակը վառվում է, ձին բարձրանում է, հասնում պատուհանին, տղեն ձեռքը գցում է, վանդակը վերցնում: Ձին իջնում է, էլի էն տեղում կանգնում, ասում է.

- Իջի՛, գնա՛ քո բանին, ես էսքանը հազիվ արեցի:

Ալո-Դինոն գալիս է ծերունու մոտ, էդ բլբուլը ցույց տալիս, ծերունին բլբուլը տեսնելուն պես մահանում է: Ալո-Դինոն էդ ծերունուն էդտեղ թաղում է, իր հավքն առնում, իր ձին նստում գալիս: Գալիս հասնում է Սև դևի հողը, իջնում իր կնոջ մոտ, ասում.

- Բլբո՛ւլ ջան, մի՛ խոսի, թող էս սև սարերը կանաչեն:

Բլբուլը խոսում է, սարերը կանաչում են: Կինը տեսնում է բլբուլի շնորհքը, զարմանում: Մեկ ամիս կամ երկու ամիս էստեղ են մնում: Մի օր Ալո-Դինոն ասում է.

- Ա՛յ կնիկ, վե՛ր կաց, գնանք մեր հայրենիք: Մեր թագավորությունը խան-գարված է էս հավքի պատճառով:

Վեր են կենում մարդ ու կին, դևին ինչքան թանկագին բաներ ուներ, վերցնում են, ձի նստում, քշում գալիս են Սպիտակ դևի հողը: Միջնեկ եղբոր հարսին վերցնում է, էն դևի թանկագին բաներն էլ է վերցնում, ձիերին բարձում են, քշում գալիս Կարմիր դևի հողը: Մի երկու օր էլ էստեղ են մնում, Կարմիր դևի թանկագին բաները հավաքում են, բարձում ձիերին, գալիս ծերունու մոտ: Հասնում են ծերունուն, Ալո-Դինոն ասում է.

- Բարիաջողում, պապի՛:

Ասում է.

- Բարո՛վ, հազա՛ր բարով, թագավորի՛ տղա:

Ասում է.

- Իմ երկու ախպերը եկան գնացի՞ն, թե՞ ոչ:

Ասում է.

- Չէ՛, թագավորի՛ տղա, դեռ մարդ չի եկել:

- Դե որ մարդ չի եկել,- ասում է,- էս երեք հարսին ու էս հավքը էստեղ պահի, ես գնամ, իմ ախպերներին բերեմ:

Ծերունին ասում է.

- Շատ լավ, թող մնան էստեղ, աստծուն ամանաթ:

Տղեն գնում է, քաղաքները ման գալիս, ախպերներին չի գտնում: Գնում է մի քաղաք, մի տուն հյուր լինում: Էդ տան տիրոջը հարցնում է.

- Էստեղ ղարիբ մարդուն ո՞նց կարող են գտնել:

Էդ տան տերն ասում է.

- Մեզ ղարիբների եկեղեցի ունենք, դու առավոտ կգնաս, զանգակները կքաշես, յոթ եզ կմորթես, ղարիբ մարդիկ կիմանան, որ էդ եկեղեցում ժամ-պատարագ կա, մատաղ կա, կթափեն կգան: Թե քո մարդկանց գտնես, էնտեղ կգտնես:

Գնում է գիշերով յոթ եզ առնում, մորթել տալիս, սեղանը պատրաստում, զանգակները տալիս: Զանգակները որ տալիս է, էդ երկու ախպերը հարցնում են տանտիրոջը, թե զանգակները ինչի՞ համար են տալիս:

Ասում է.

- Նրա համար են տալիս, որ ղարիբ մարդը գնա, մատաղ ուտի:

Մեծ ախպերն ասում է.

- Խազեի՛ն, մեզ էլ բաց կթողնե՞ս գնանք, մենք էլ մատաղ ուտենք, գանք:

Խազեինը բաց է թողնում, գալիս են տեսնում, որ ինչքան ղարիբ կա, նստած մատաղ են ուտում: Ալո-Դինոն տեսնում է, որ իր երկու ախպերները եկան, սրանց գինի է տալիս, մատաղ տալիս, ասում.

- Ինձ ճանաչո՞ւմ եք, ես ո՞վ եմ:

Ասում են՝ չէ՛: Ասում է.

- Բա դուք ի՞նչ տեղ եք ծառայում:

Ասում են.

- Մեկս հնոցապան է, մեկս՝ բաղնիք տաքացնող:

Վերցնում է էդ երկու ախպորը, գալիս խազեինի մոտ, ասում.

- Սրանց վարձը տո՛ւր, ես տանում եմ սրանց:

Ասում է.

- Սրանք քո ի՞նչն են, որ տանում ես:

Ասում է.

- Սրանք իմ ախպերներն են:

Մեծ ախպերն ասում է.

- Դու ո՞վ ես, որ մեր ախպերն ես:

Ասում է.

- Ես Ալո-Դինոն եմ: Վա՛յ, հողը ձեր գլխին, մեր թագավորությունը թողել եք, եկել եք, մեկդ հնոցապան է դարձել, մեկդ էլ՝ բաղնիք տաքացնո՞ղ:

Ասում է.

- Թե դու մեր ախպերն ես, ասա՛ տեսնեմ, մենք ինչի՞ ենք գնացել:

Ասում է.

- Հազարան բլբուլի. էն ա ես բերել եմ:

Ասում է.

- Ո՞րտեղ է:

Ասում է.

- Էն ծերունու մոտ, եկեք գնանք:

Տանում է, ամեն մեկին մի ձեռք մաքուր շոր է առնում, հագցնում, գնում են ծերունու մոտ:

Գնում են, բարև տալիս ծերունուն, ախպերները տեսնում են, որ էդտեղ երեք հարս կա կանգնած: Ասում են.

- Ալո՛-Դինո, սրանք ո՞վ են:

Ալո-Դինոն ասում է.

- Էս մեկը Կարմիր դևի նշանածն է, ա՛յ, պռոշները կտրել եմ,- հանում, ցույց է տալիս,- էս մեկը՝ քե՛զ: Էս մեկն էլ Սպիտակ դևի նշանածն է, սրան էլ սպանել, պռոշները կտրել եմ, հրե՛ս, տեսե՛ք: Էս էլ միջնեկ եղբորս նշանածն է: Էս էլ Սև դևի նշանածն է, էս էլ իմն է:

Մեծ ախպերը նախանձում է, ասում.

- Սիրունն ինքն է վերցնում, վատը մեզ տալիս:

Վերցնում են Հազարան բլբուլը, նստում են ձիերը, ամեն մեկն իր նշանածին նստեցնում է իր ձիուն, քշում են, գնում: Շատ են գնում թե քիչ, աստված գիտի, գնում են, ճամփին՝ անտառի մեջ, մի ջրհոր է պատահում:

Ասում են.

- Ո՞վ պիտի ջուր հանի, մեր ձիերն էլ են ծարավ, մենք էլ ենք ծարավ:

Միջնեկին ասում են՝ դու մտի ջրհորը, միջնեկը չի մտնում: Մեծ եղբորն են ասում՝ դու մտի ջրհորը. մեկն էլ չի մտնում: Հետո ասում են.

- Ալո՛-Դինո, դո՛ւ մտի:

Ալո-Դինոյի կինն առաջ է գալիս, ասում.

- Դու մի՛ մտի, քեզ հորում կթողնեն:

Ալո-Դինոն ասում է.

- Բա իմ եղբայրները ծարա՞վ մնան: Ես պիտի մտնեմ:

- Դե որ մտնում ես,- ասում է,- ա՛ռ իմ թաթմանի մի հատը, պահի մոտդ, մեկ էլ ա՛ռ իմ ոտնամանի թայը, պահի մոտդ: Ես թագավորից կուզեմ իմ թաթմանի ու ոտնամանի թայը: Թե որ գտան բերին, կիմանամ, որ դու հորից դուրս ես եկել:

Ալո-Դինոն որ մտնում է հորը, ախպերները խորհուրդ են անում, որ Ալո-

Դինոյին թողնեն հորի մեջ, որ չգնա, թագավորի մոտ պարծենա, թե ինքն է բերել Հազարան բլբուլը:

Ալո-Դինոյին թողնում են հորի մեջ, իրենք վերցնում են Հազարան բլբուլն ու հարսներին, գնում: Երբ մոտենում են իրենց քաղաքին, լուր են ուղարկում թագավորին, թե աչքդ լույս, տղերքդ եկան: Թագավորը, ոնց որ կարգն էր, վերցնում է իր ժողովրդին, ընդառաջ գալիս տղերքին, մեծ պատվով, հանդեսով տանում է տուն: Տանում է տուն, հարցնում է.

- Էս հարսները ո՞վ են:

Մեծ ախպերն ասում է.

- Էս մեկը իմ նշանածն է, էս մեկն էլ քո միջնեկ տղինն է, էս էլ աղախին ենք բերել:

Ալո-Դինոյի կինն ասում է.

- Թագավո՛ր, սուտ է ասում, ես դրա կնիկը չեմ, ես տեր ունեմ:

Թագավորն ասում է.

- Որդինե՛ր, ձեր մեջ վեճ կա, ես չեմ հավատում, որ Հազարան բլբուլը դուք բերած լինեք: Եկեք բլբուլին խոսեցնենք: Ով որ խոսեցրեց, նա բերած կլինի:

Մեծ ախպերն ասում է.

- Ես եմ բերել, կացեք խոսեցնեմ:

Ասում է.

- Դե խոսեցրո՛ւ, թող մեր այգին կանաչի:

Մեծ տղեն գալիս, ասում է.

- Բլբո՛ւլ ջան, խոսի՛, թող այգին կանաչի:

Բլբուլը չի խոսում:

Միջնեկ տղան է գալիս, ասում.

- Թագավորն ապրած կենա, դա՛ չի բերել, ես եմ բերել:

Ասում է.

- Դե՛հ, որդի՛, դո՛ւ խոսեցրու:

Գալիս ասում է.

- Բլբո՛ւլ ջան, խոսի՛, թող այգին կանաչի:

Էլի չի խոսում:

Մնում են մտածմունքի մեջ. այգին չի կանաչում:

Լուր տանք Ալո-Դինոյից:

Ալո-Դինոն հորում մնում է, շատն ու քիչը աստված գիտի, մի վաճառական գալիս է հորի մոտ, հրամայում իր ծառաներին, որ հորից ջուր քաշեն: Ալո-Դինոն հորում հասկանում է, որ հորի մոտ մարդ է եկել, ուզում են՝ ջուր քաշեն, ձեն է տալիս, ասում.

- Չեմ իմանում՝ հայ եք, թուրք եք, ինձ էս հորից հանեք, ինչքան ջուր ուզեք, ես կտամ:

Մարդիկ դույլը կախում են հորի մեջ, ինչքան ջուր հարկավոր էր, հանում են, հետո Ալո-Դինոն ձեն է տալիս.

- Ինձ էլ հանեք:

Ճոպանը կախ են տալիս, Ալո-Դինոն կապում է մեջքին, տասը-տասնհինգ հոգով քաշում են, հանում են հորի միջից: Դուրս է գալիս, վաճառականը հարցնում է.

- Ի՞նչ մարդ ես:

Ասում է.

- Աղա՛, ես ճամփորդ էի, գիշերը մութ էր, եկա, ընկա էս հորը:

- Բա,- ասում է,- ո՞ւր ես գնում:

Ասում է՝ պիտի գնամ էսինչ քաղաքը: Իրիկունը մնում է վաճառականի մոտ, հաց են ուտում, առավոտը վեր են կենում, բեռները բարձում են, ճամփա ընկնում, գալիս էդ թագավորի քաղաքը:

Ալո-Դինոն դուրս է գալիս էդ վաճառականի քարավանից, գնում իրենց քաղաքը, մի ծերունու տղա դառնում:

Ծերունին մի օր լսում է, որ թագավորի մարդկանցից մեկը ձեն է տալիս, թե՝ «Թագավորը տղին պսակում է, էսպիսի մի հատ թաթման կա, էս թաթմանից ո՞վ կարող է կարել»: Գալիս է, Ալո-Դինոյին պատմում, ասում.

- Մի հատ թաթման են ման տալիս ու հարցնում, թե ով կարող է էս թաթմանից կարի, թագավորի հարսն ուզում է:

Ալո-Դինոն ասում է.

- Ես էլ քեզ մոտ չեմ մնա, գնում եմ, աշկերտ դառնամ:

Գնում է մի դերձակի մոտ, մինչև իրիկուն կանգնում: Ուստեն ասում է.

- Ա՛յ տղա, ի՞նչ տղա ես:

Ալո-Դինոն ասում է.

- Ես անտեր տղա եմ, ի սեր աստծո, ինձ էդ արհեստը սովորեցրու:

Ուստեն ասում է.

- Որդի՛, արի գնա՛ էնտեղ նստի՝ դուքանում:

Ուստեն չգիտեր, թե դա ո՞վ է կամ ո՞ւմ տղան է:

Ալո-Դինոն վերցնում է ավելը, դուքանը մաքրում, ջուր է բերում շաղ տալիս, ուստեն տեսնում է, որ շատ լավ, խելոք տղա է:

Հաջորդ օրը թագավորի նազիր-վեզիրը էդ թաթմանը ման էին տալիս էդ դերձակների դուքաններում: Գալիս հասնում են էդ տղի դուքանի մոտ, ասում են.

- Ուստա՛, էս թաթմանից կարո՞ղ ես կարել:

Ասում է.

- Չեմ կարող կարել:

Տղեն տեղից վեր է կենում, մոտ է գալիս, ասում.

- Ես կկարեմ, ուստա՛:

Ուստեն բարկանում է աշկերտի վրա.

- Երեկ ես եկել, ո՞նց ես կարում:

Ասում է.

- Ես կկարեմ, ուստա՛:

Ուստեն շատ է բարկանում աշկերտի վրա, նազիրն ու վեզիրը բարկանում են ուստի վրա, ասում են.

- Ինչո՞ւ ես արգելում, որ էդ մարդը փորձի: Թե որ չկարողացար էսպես կարել, առավոտը թագավորը քո գլուխը կկտրի:

Ասում է.

- Շատ լավ կլինի:

Ուստեն մնում է շվարած:

- Ուստա՛,- ասում է,- ինչի՞ շվարած մնացիր:

Ասում է.

- Դու երեկ ես եկել, ես քսան տարվա ուստա եմ, ես չեմ կարող կարել, դու ո՞նց ես կարելու: Ջուր տեղը գլխիդ ինչի՞ ես փորձանք բերում:

Ասում է.

- Ուստա՛, ես կկարեմ, թե որ հինգ փութ պնդուկ բերես, ջարդեմ, ուտեմ:

Ուստեն գնում, չորս փութ պնդուկ է առնում, բերում տալիս աշկերտին:

Ասում է.

- Ուստա՛, ինչի՞ մի փութ պակաս բերիր:

Ասում է.

- Վնաս չունի, փող չունեի, էդքանն էլ հերիք է:

Տղեն պնդուկը ջարդում է ու ուտում, մինչև լույսը բացվում է:

Ուստեն ասում է.

- Գնամ տեսնեմ՝ կարե՞լ է:

Գալիս տեսնում է, որ մի թաթման վեզիրների բերած թաթմանի հետ դրված է: Գալիս է, որ վերցնի, Ալո-Դինոն ասում է.

- Ուստա՛, ձեռք տալու իրավունք չունես, կփչացնես:

Էդ խոսքի վրա թագավորի նազիրն ու վեզիրը գալիս են:

- Հա՛,- ասում են,- ուստա՛, կարե՞լ ես:

Ուստեն վախենում է, պատասխան չի տալիս:

Տղեն առաջ է գալիս, թաթմանները բերում է, տալիս, ասում է.

- Համեցե՛ք:

Մտիկ են անում, տեսնում, որ շատ զարմանալի կարված է:

- Դե,- ասում են,- ուստա՛, համեցեք գնանք, որ թագավորը ձեր վարձը տա:

Ալո-Դինոն ասում է.

- Ուստա՛, վե՛ր կաց, նազիր-վեզիրի հետ գնա, մեր վարձը ա՛ռ, արի՛:

Ասում է.

- Որդի՛, ես չեմ կարող, դո՛ւ գնա, բա որ չհավանեց. թող քո գլուխը կտրի:

Ալո-Դինոն վեր է կենում, նազիր-վեզիրի հետ գնում:

Թագավորին ցույց են տալիս թաթմանները, ասում է.

- Իմ բանը չէ, տարե՛ք, հարսին ցո՛ւյց տվեք, թե որ կհավանի՝ լա՛վ:

Հարսը տեսնում է, թաթմանները հավանում, հանում է, ուստին երեք հարյուր մանեթ փող բաշխում: Աչքալույս են գալիս թագավորին, ասում են՝ հարսը թաթմանները հավանեց:

Ասում է.

- Ուստին կանչեք՝ գա:

Ուստեն գալիս է, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

Տեսնում է, որ շատ լավ, սիրուն տղա է, ասում է.

- Դռ՞ւ ես կարել էս թաթմանը:

Ասում է.

- Հրամանք ես, թագավորն ապրած կենա:

Թագավորը կանչում է, երկու հարյուր մանեթ էլ ինքը բաշխում ուստին:

Ալո-Դինոն փողերը վերցնում է, գալիս դուքան, ասում.

- Ուստա՛, համեցեք, էս քո փողերը:

Ուստեն ուրախանում է, փողերը վերցնում:

Ալո-Դինոն ասում է.

- Ուստա՛, դու լավ մարդ չես:

Ասում է՝ ինչի՞ համար: Ասում է.

- Նրա համար, որ ես քեզնից ուզեցի հինգ փութ կաղին, դու գնացիր, չորս փութ բերեցիր, ես էլ քեզ մոտ չեմ մնա:

Էդ մարդուն թողնում է, գնում ոտնաման կարողի մոտ, դռանը կանգնում, ուստեն ասում է.

- Ա՛յ տղա, ի՞նչ տղա ես:

Ասում է.

- Ուստա՛, անտեր տղա եմ, տեր չունեմ, տիրական չունեմ, քո վարձքի խաթեր ինձ էդ արհեստը սովորեցրո՛ւ:

Տղեն գնում է, դուքանում նստում: Ուստեն գալիս է, ջուր ուզում, էդ տղեն վեր է կենում, կուժը վերցնում, ջուր բերում, լցնում, տալիս ուստին, ուստեն խմում է: Էդ ժամանակ թագավորի նազիր-վեզիրը, մի ոտնամանի թայ ձեռքներին, ման էին գալիս, թե՝ ով կարող է էսպիսի մի թայ կարի:

Էդ տղեն վեր է կենում, ասում.

- Ուստա՛, ես կկարեմ:

Ուստեն բարկանում է տղի վրա, ասում.

- Երեկ ես եկել, էսօր ո՞նց ես կարում:

Ասում է.

- Ուստա՛, մի՛ բարկանա, ես կկարեմ:

Ուստեն մնում է շվարած:

Նազիրն ասում է.

- Որ չկարեցիր, թագավորը ձեր երկուսի գլուխն էլ կկտրի:

Ուստեն ասում է.

- Դե՛, որդի՛, դու գիտես:

Ասում է.

- Ուստա՛, թե որ քսան փութ պնդուկ բերես, ես էս գիշեր ուտեմ, կկարեմ:

Ուստեն գնում է, տասնինը փութ առնում, մի փութ պակաս է առնում:

- Դե,- ասում է,- ուստա՛, դու գնա տուն, ես կկարեմ:

Ուստեն գալիս է տուն, չի համբերում, գիշերվա մի ժամի ասում է՝ գնամ տեսնեմ կարո՞ւմ է, թե՞ ոչ: Գալիս է, երդիկից մտիկ անում, տեսնում է, որ տղեն պնդուկ է ուտում, ասում է.

- Էս դատարկամիտը ո՞րտեղից ինձ պատահեց, առավոտն իմ գլուխը գնա՛ց:

Առավոտ լույսը բացվում է, ուստեն գալիս է դուքան, տեսնում, որ մի ոտնամանը երկուս է դարձել: Ուստեն վերցնում է, որ ոտնամանը տեսնի, աշկերտն ասում է.

- Ուստա՛, դրան ձեռք տալու իրավունք չունես:

Ասում է.

- Ինչի՞ համար:

Ասում է.

- Դու երեկ չէիր թողնում, որ ես կարեմ:

Էդ խոսքի վրա թագավորի նազիրն ու վեզիրը գալիս են, ասում.

- Ուստա՛, կարե՞լ եք:

Ուստեն ասում է.

- Ես տեղյակ չեմ, աշկերտի՛ն հարցրեք:

Աշկերտը վեր է կենում, ոտնամանը տալիս թագավորի նազիր-վեզիրին: Տեսնում են, որ շատ լավ է կարված:

- Դե՛, ուստա՛,- ասում է,- մեկդ եկեք գնանք, որ թագավորը ձեր վարձը տա:

Ուստեն ասում է.

- Որդի՛, դու գնա հետները:

Տղեն գնում է նազիր-վեզիրի հետ, տանում են ոտնամանը, թագավորին ցույց տալիս: Թագավորն ասում է.

- Իմ բանը չէ, հարսի բանն է, տարեք տվեք, տեսեք՝ հարսը հավանո՞ւմ է:

Տանում են հարսի մոտ, հարսն իմանում է, որ իր ոտնամանն է, տղին ճանաչում է, ասում է.

- Ինչի՞ չես գալիս:

Ասում է.

- Դեռ ժամանակ չունեմ:

Թագավորի հարսը հանում է մի հինգ հարյուր մանեթ, բաշխում ուստին:

Գալիս են, թագավորին ասում, թե հարսը ոտնամանները հավանեց:

Ասում է.

- Կանչե՛ք ուստին՝ գա:

Կանչում են, ասում է.

- Ուստա՛, հարսը հավանե՞ց ոտնամանները:

Ասում է.

- Հրամանք ես, հավանեց:

Հանում է մի հինգ հարյուր մանեթ էլ թագավորն է բաշխում ուստին:

Վեր է կենում, գալիս դուքանը, փողերը տալիս ուստին, ասում.

- Ուստա՛, ես էլ քեզ մոտ չեմ մնա, դու վատ մարդ ես:

Ասում է՝ ինչի՞: Ասում է.

- Ես քսան փութ պնդուկ ուզեցի, դու տասնինը փութ բերիր: Ես էլ քեզ մոտ չեմ մնա:

Վեր է կենում, գալիս ծերունու մոտ, որին տղա էր դարձել: Ծերունին ասում է.

- Որդի՛, ո՞ւր էիր էսքան ժամանակ:

Ասում է.

- Ջահել տղա եմ, ինձ համար քաղաքում ման էի գալիս: Հա՛, ափի՛, չլինի՞ միսդ պակասել է, ա՛ռ փող տամ, տար ծախսի:

Հանում է մի տասը բուռ ոսկի, տալիս ծերունուն:

Ծերունին մի օր գնում է շուկա, տեսնում՝ էնքան զորք է եկել, որ թիվ ու հաշիվ չկա: Ծերունին հարցնում է.

- Էս ի՞նչ զորք է:

Ասում են.

- Չաչոնց թագավորը եկել է, բլբուլ հավքի բերողին է ման գալիս: Թագավորին ասում է՝ կամ բլբուլ հավքին բերող տղին ուղարկի գա, կամ քո թախտը կկործանեմ:

Ծերունին գալիս է, պատմում տղին: Տղեն ասում է.

- Գնա թագավորին խնդրի, ասա՝ դու լինես էն Ալո-Դինո տղի արևը, պիտի

Ալո-Դինոյի ձին տաս, իմ տղեն նստի, գնա, էդ թագավորին պատասխան տա, որ քո քաղաքի մի հավին էլ վնաս չպատահի:

Ծերունին գնում է, ձին ուզում, թագավորն ասում է.

- Ինչ ձին բերել են, էնպես կապած մնում է, մարդ չի կարողանում մոտենալ, ո՞վ կարող է էն ձին դուրս հանի:

Ալո-Դինոյի կինն ասում է թագավորին.

- Թագավո՛ր, հրաման տուր, ես գնամ, հանեմ էդ ձին, տամ ծերունուն:

Հարսը հասկանում է, որ իր մարդն էր էդ ծերունուն ուղարկել: Թագավորը

իրավունք է տալիս, հարսը գնում է, ձին բերում, պատվիրում է, թե՝ «Խելոք կգնաս քո տիրոջ մոտ», քաշում է, տալիս ծերունուն: Ծերունին ձին քաշելով բերում է, տալիս Ալո-Դինոյին:

Ալո-Դինոն ձին նստում է, գալիս մեյդան, տեսնում է, որ իր մեծ ախպերը մի ձի է նստել, գնում է, որ թագավորին պատասխան տա:

Ալո-Դինոն հարցնում է.

- Ա՛յ տղա, ո՞ւր ես գնում:

Թագավորի տղեն ասում է.

- Բլբուլ հավքը բերել եմ, գնում եմ՝ թագավորին պատասխան տամ:

Գնում, մտնում է Չաչոնց զորքի մեջ, ասում է.

- Ո՞րն է թագավորի վրանը:

Ասում են՝ հրե՛ն, էն կարմիր վրանն է: Քշում, գնում է, յոթ անգամ թագավորին գլուխ տալիս:

Ասում է.

- Դո՞ւ ես թագավորի որդին:

Ասում է.

- Հրամանք ես, ես եմ:

Ասում է.

- Դո՞ւ բերիր Հազարան բլբուլը:

Ասում է.

- Հրամանք ես, ես բերի:

Ասում է.

- Ո՞նց բերիր:

Ասում է.

- Եկա ձեր անտառից, ծառի վրա կանգնած էր, բռնեցի, բերի:

Ասում է.

- Չեղավ, չեղավ: Դու չես բերողը, գնա՛, ռա՛դ եղի:

Հրամայում է զորքին, ո՛րը փայտով, ո՛րը ձեռքով ծեծում են, ճամփու գցում: Լաց լինելով տուն է գալիս:

Միջնեկ եղբայրն ասում է.

- Ինչի՞ անտեղի դու ծեծվեցիր, ախր ես եմ բերել հավքը:

Մեծ ախպերն ասում է.

- Որ դու ես բերել, գնա պատասխան տուր:

Միջնեկ ախպերը ձի է նստում, հպարտ-հպարտ գնում դեպի զորքը: Ալո-Դինոն հետևից հասնում է, ասում.

- Ա՛յ տղա, ո՞ւր ես գնում:

Ասում է.

- Բլբուլ հավքը բերել եմ, գնում եմ՝ թագավորին պատասխան տամ:

Ալո-Դինոն ասում է.

- Գնա՛, դու էլ կծեծվես, հետ կգաս:

Գնում է, զորքի մեջ հարցնում.

- Թագավորի վրանը ո՞րն է:

Ցույց են տալիս, ասում են՝ էն կարմիր վրանն է: Գնում է, յոթ անգամ գլուխ տալիս թագավորին, կանգնում:

Թագավորն ասում է.

- Դո՞ւ ես բլբուլ հավքը բերել:

Ասում է.

- Հրամանք ես, ես եմ բերել:

Ասում է.

- Ո՞նց բերիր:

Ասում է.

- Թագավորն ապրած կենա, իրիկունը մութ էր, մեկ էլ տեսա՝ էդ հավքը սարից եկավ, գնաց, մտավ իր բունը, ձեռքս տարա, բռնեցի, բերի:

Ասում է.

- Չեղավ, չեղավ, բլբուլը դու չես բերել, սուտ ես խոսում:

Հրամայում է զորքին, դրան ծեծելով դուրս են քշում: Հետևից հրաման է գալիս, թե՝ «Կամ բլբուլ հավքը բերողն եմ ուզում, կամ երկիրդ քանդում եմ»:

Ալո-Դինոն գալիս է, թագավորին խնդրում, ասում.

- Իրավունք տո՛ւր՝ ես գնամ, պատասխան տամ:

Թագավորը չէր ճանաչում, որ իր տղան է: Ասում է.

- Դե՛, որդի՛, թե կարող ես, գնա պատասխա՛ն տուր:

Ասում է.

- Թագավորն ապրած կենա, քեզ հետ ես պայման եմ կապում: Եթե ես էդ թագավորին պատասխան տվի, քո երկրիդ առանց վնաս տալու գնաց, երեք ժամ թագավորությունդ ինձ տուր, որ ինչ դատեմ, դատեմ:

Թագավորը համաձայնվում է, տղեն վեր է կենում, գնում Չաչոնց թագավորի մոտ, գլուխ տալիս, կանգնում.

Ասում է.

- Դո՞ւ ես թագավորի որդին:

Ասում է.

- Ես եմ:

Ասում է.

- Իմ Հազարան բլբուլը դո՞ւ բերիր:

Ասում է.

- Հրամանք ես, ես բերի:

Ասում է.

- Ո՞նց բերիր:

Ասում է.

- Եկա Կարմիր դևի հողը, ինքը երեքգլխանի էր, Կարմիր դևին սպանեցի, գնացի Սպիտակ դևի հողը, ինքը յոթգլխանի էր, դրան էլ սպանեցի: Կարմիր դևի նշանածին ուզեցի իմ մեծ եղբորը, Սպիտակ դևի նշանածին ուզեցի միջնեկ եղբորս: Եկա Սև դևի հողը, ինքը քառասունգլխանի էր, երեք օր կռիվ արինք, վերջը դևին սպանեցի, կնոջը ես առա: Եկա մի մեծ ծովի պատահեցի, էդ ծովի ափին մի քար կար, մեջքս դեմ արի էդ քարին, չիմացա՝ քնած էի, թե արթուն, մի ձեն լսեցի, ասացին՝ էդ քարի տակ ծովեղենի սանձ կա, վեր կացա, քարը տեղից պոկեցի, երեք սանձը հանեցի, սանձի մեկը ծովը գցեցի, ծովեղենը դուրս եկավ: Էդ ծովեղենը ինձ բերեց քո ծովի մոտ: Ծովեղեն ձին ասաց. «Դրա հնարքը իմ մեծ քույրը գիտի»: Մեկէլ սանձը գցեցի, ձին դուրս եկավ, հեծա, ասաց. «Ի՞նչ մուրազ ունես, ասա՝ կատարեմ»: Ասացի. «Իմ մուրազն էն է, որ Հազարան բլբուլը պիտի տանեմ»: Ձին ասաց. «Ինձ էնպես մտրակով կտաս, որ ջիգյարս վառվի, քեզ բարձրացնեմ թագավորի պատուհանի առաջ, միանգամից վանդակը վերցնես»: Ձին բարձրացավ, ես վանդակը վերցրի, եկա:

Ասում է.

- Ալո-Դինոն դո՞ւ ես:

Ասում է.

- Հրամանք ես, ես եմ:

Ասում է.

- Ո՞նց հավատամ, որ դու էդքան կտրիճություն ես արել:

Ալո-Դինոն ձիու վրայից խուրջինը իջեցնում է, Կարմիր դևի, Սպիտակ դևի ականջներն ու պոռոշները լցնում առաջը: Թագավորը համոզվում է, որ սա է բերել, ասում է.

- Որդի՛, քեզ հալալ լինի իմ հավքը,- ու զորքը քաշում է, գնում:

Իր հայր թագավորը մտիկ է տալիս, տեսնում է, որ Չաչոնց թագավորը իր զորքը քաշեց, առանց վնաս տալու գնաց: Տղեն գալիս է հոր մոտ, ասում.

- Ինձ չե՞ս ճանաչում:

Ասում է.

- Չէ՛, չեմ ճանաչում:

Ասում է.

- Ես քո Ալո-Դինո տղեն եմ:

- Դե՛,- ասում է,- որ դու իմ տղեն ես, բլբուլ հավքին խոսեցրո՛ւ, թող մեր այգին կանաչի:

Տղեն գալիս ասում է.

- Բլբո՛ւլ ջան, խոսի, թող այգին կանաչի:

Ասելուն պես բլբուլը խոսում է, այգին կանաչում է: Նոր թագավորը հասկանում է, որ իր տղեն է: Ալո-Դինոն պայմանը հիշեցնում է, ասում է.

- Երեք ժամ թագավորությունդ իմն է:

Թագավորն ասում է.

- Իրավունք ունես:

Նստում է, դատ կտրում իր ախպերների վրա, ախպերները հանձնառու են լինում, որ իրենք մեղավոր են: Թագավորին հարցնում է.

- Ի՞նչ պատիժ տամ սրանց:

Թագավորն ասում է.

- Դու գիտես, որդի՛:

Ալո-Դինոն ասում է.

- Չէ՛, սրանք ինձ չսպանեցին, ես էլ սրանց չեմ սպանի: Ես խնդրում եմ՝ ամեն մեկի կնիկը տաս իրեն ու քո հողից քշես, քանի ողջ եմ, էլ իրավունք չունենան մտնելու էս հողը:

Երեք ժամ հետո թագավորը իր թագավորությունը ստանում է:

Մնում է մի երկու տարի, թագավորը մահանում է, իր Ալո-Դինո տղան նստում է թագավոր:

Նրանք հասան իրենց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին:

Երկնքից երեք խնձոր ընկավ, երկուսը՝ լսողներին, մեկն էլ՝ ասողին:

ԱՐԵԳՆԱԶԱՆ

1

Շատ հին ժամանակ Մասիսի ստորոտում ապրում էր մի ծերունի իշխան՝ Արման անունով: Արմանն ուներ երեք զավակ՝ մորից որբ մնացած: Նրանցից երկուսն աղջիկ էին՝ մինը մյուսից գեղեցիկ, իսկ երրորդը՝ ավելի ևս չքնաղ և չնաշխարհիկ: Միայն բարի ոգիները նրա ինչ լինելը թաքցրել էին հողեղեններից: Այդպես էին կամեցել բարի ոգիները իրանց համար հայտնի նպատակով, և մի ուրիշ ժամանակով, երբ որ ժամանակը լրանար, այնուհետև նա կամ աղջիկ և կամ տղա պիտի դառնար: Բայց Արմանը նրան չէր տարբերում աղջիկներից և երեքին էլ միաձև աղջկա հագուստով էր պահում: «Թող սա էլ աղջիկ համարվի,- ասաց նա,- մինչև բարի ոգիների կամքը կատարվի», և անունն էլ դրավ Արեգնազան՝ միատեսակության համար, որովհետև մեծի անունը դրել էր Զանազան, իսկ երկրորդինը՝ Զարմանազան:

Արեգնազանը մեծացավ աղջկա պես և թեպետ հավատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ՝ ամենից գեղեցիկը, բայց ատելով ատում էր աղջկան

վայել բաները: Նա չէր սիրում բուրդ գզել, թել մանել, կար ու գործ անել և, ընդհակառակը, երբ մի լավ ձի կամ մի զենք էր տեսնում, խելքը գնում էր: Մայր չուներ, որ նրան ստիպեր, տնարարություն սովորեցներ, իսկ հայրը, կարծես գիտությամբ, ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս չէր անում, այլև նրան իր հետ որսի էր տանում և ձի հեծնել ու զենք գործածել էր սովորեցնում:

Այսպես անցավ մի ժամանակ: Մեկ օր Արմանը կանչեց իր զավակներին և ասաց.

- Ես ծառայում էի մեր բարի թագավորին, և նա ինձ շատ սիրում էր: Ահա այս դաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռքին են, բոլորը թագավորն է ընծայել ինձ իմ հավատարիմ ծառայությանս համար: Ապագա թշվառությունից ձեզ ազատելու համար ես մտածել եմ, որ ձեզանից մեկին, տղայի հագուստով, ուղարկեմ թագավորի մոտ ծառայելու: Թագավորը սիրով կընդունի և իմ տեղը ժամանակով նրան կտա: Այդպիսով, ձեզանից մեկը կարող է մյուսներիդ էլ տանել իր մոտ: Հիմա ո՞րդ կուզենաք գնալ:

- Ես կերթամ, հայրի՛կ,- ասաց մեծ աղջիկը:

- Ես էլ, հայրի՛կ, ես էլ,- մեջ ընկավ միջնակը:

Արեգնազանը լուռ էր:

- Իսկ դու, Նազանի՛կ, դու չե՞ս կամենալ,- հարցրեց հայրը Արեգնազանին. կարծես ուզում էր, որ գնացողը նա՛ լիներ անպատճառ:

- Ինչո՞ւ չէ, հայրի՛կ. բայց երբ որ իմ մեծ քույրն ուզում է, ես ինչո՞ւ արգելք լինեմ նրան:

- Այստեղ արգելքի բան չկա, հոգի՛ս. ինձ համար դուք երեքդ էլ մեկ եք, միայն դեռ չգիտեմ, թե ձեզանից որն ավելի հարմար կլինի:

- Ես ամենից հարմարն եմ, հայրի՛կ,- ասաց մեծը,- որովհետև ես ամենից մեծն եմ:

- Շա՛տ լավ, բայց ես առանց պայմանի ոչ մեկիդ չեմ ուղարկելու: Եթե դու կամենում ես, կերթաս, ուրեմն կփոխես հագուստդ, կընտրես զենք ու զրահ և առավոտը շատ վաղ քո ձին կհեծնես, կերթաս որսորդության: Եթե դատարկ չվերադառնաս, քեզ կուղարկեմ թագավորի մոտ:

Մյուս առավոտուն մեծ աղջիկը, ինչպես պատվիրել էր հայրը, ճանապարհ ընկավ դեպի դաշտ՝ մի բան որսալու համար: Երբ որ մտավ մի խոր ձորի մեջ և

ուզում էր անցնել մյուս կողմը, նրա առաջը կտրեց մի դիմակավորված ձիավոր՝ ոտքից մինչև գլուխ զինավորված: Աղջիկը նրան որ տեսավ, այնպես վախեցավ, որ քիչ մնաց լեզուն կապվի. սաստիկ երկյուղից մնաց կաշկանդված, փախչել անգամ չկարողացավ: Ձիավորը մոտեցավ նրան ու ասաց.

- Ա՛յ փղա, սիրո՛ւն փղա,
Ո՞ւր ես գնում այդպես մենակ,
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ:

Աղջիկը պատասխանեց կմկմալով.

- Ես... ես... գնում եմ... Ո՛չ... ո՛չ... չեմ գնում... Հա՛... հա՛... պիտի գնամ... Ինչ երեսով հետ դառնամ....

Ձիավորն ասաց սպառնալով.

- Դու գնո՞ւմ ես, ո՞ւր ես գնում,
Ո՞ւր ես փախչում դու ձեր գեղից,
Հե՛տ դառ իսկույն, թե չես ուզում,
Որ գլուխդ թռչի տեղից...

Այս ասելով՝ ձիավորը հանեց թուրը և բարձրացրեց, որ զարկե աղջկան, բայց նա բղավեց.

- Վա՛յ, վա՛յ, մի՛ զարկիր, մի՛ զարկիր, ես աղջիկ եմ, ես աղջիկ եմ, ահա՛, ահա՛, հետ եմ դառնում:

- Որ աղջիկ ես, ուրեմն՝ գնա ձեր տուն, ձեր հավերին կուտ տուր: Տղամարդի հագուստ ունենալը բավական չէ, պետք է տղամարդի սիրտ էլ ունենալ: Էլի լավ էր, որ ինձ պատահեցար և ո՛չ մի ուրիշին,- ասաց ձիավորը և անհայտացավ:

Աղջիկը դողդողալով վերադարձավ տուն:

- Է... ո՞ւր է բերած որսդ,- հարցրեց հայրը,- ինչո՞ւ այդպես շուտ վերադարձար:

- Ճանապարհին ջերմս բռնեց, հայրի՛կ, գլուխս ցավում է,- պատասխանեց աղջիկը:

Մյուս օրը միջնակին ուղարկեց: Նա էլ մեծին պատահած փորձանքին հանդիպեց, նրա պես վախեցած վերադարձավ տուն:

Երրորդ օրը Արեգնազանին ուղարկեց: Նրան ևս հանդիպեց միևնույն ձիավորը և ասաց.

- Ա՛յ տղա, սիրո՛ւն տղա,
Ո՞ւր ես գնում այդպես մենակ,
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ:

Արեգնազանը պատասխանեց բարկանալով.

- Քեզ ի՞նչ, թե ես ո՛ւր եմ գնում.
Ուր գնում եմ, այդ ե՛ս գիտեմ.
Ես չեմ գնում, որ քեզ նման՝
Խաղաղ մարդոց ճամփեն կտրեմ:
- Ուրեմն, ես ավազա՞կ եմ.
Դո՞ւ ես ասում ինձ այդ բանը.
Այս րոպեիս դու կստանաս
Քո այդ խոսքիդ պատասխանը:

- Այո՛, թե դու ավազակ ես,
Ցույց է տալիս քո դիմակը.
Բայց թե՝ ինչպե՛ս տղամարդ ես,
Այդ թող տեսնե իմ նիզակը…

Այս խոսքից հետո Արեգնազանը հարձակվեց նրա վրա՝ ասելով.

- Դե՛ն ձգիր դիմակդ, տեսնեմ՝ դու ինչ մարդ ես, եթե ոչ՝ այս րոպեիս կթռցնեմ գլուխդ:

Ձիավորն ընդդիմացավ, վահանով պաշտպանվեց և թրով հարձակվեց Արեգնազանի վրա: Արեգնազանը նույնպես պաշտպանվում էր վահանով և

հարձակվում թրով: Մի ժամ շարունակ տևեց նրանց կռիվը, և ոչ մեկը չկարողացավ զարկել մյուսին. զարկերը վահաններին էին դիպչում: Միայն Արեգնազանը հետզհետե զորանում էր, իսկ նրա հակառակորդը՝ թուլանում: Վերջը Արեգնազանը մի ճարպիկ ոստյունով թռավ իր ձիուց, հակառակորդի օձիքից բռնելով՝ վայր գլորեց ձիուց և հենց այն է՝ ուզում էր, որ մի հարվածով գլուխը թռցներ, նա իսկույն վեր առավ դիմակը…

- Ա՜խ, հայրի՛կ, հայրի՛կ,- բացականչեց Արեգնազանը.- այս ի՞նչ փորձանքի մեջ էիր գցում դու ինձ… եթե մի փոքր ուշ վեր առնեիր դիմակդ, ինձ հայրասպան պիտի շինեիր:

Հայրը մոտը նստեցրեց Արեգնազանին և նրա վրան նայելուց չէր կշտանում: Մի փոքր շունչ առնելուց հետո ասաց.

- Ապրի՛ս, ապրի՛ս, Արեգնազան,
Ծլիս, ծաղկիս, զորանաս,
Հիմա գիտեմ, որ իմ տեղը
Դո՛ւ անպատճառ կստանաս:

Իզուր չեմ քեզ սովորեցրել
Զենք ու զրահ գործածել.
Ի՛նքդդ գիտես, որ ամենքից
Քե՛զ եմ սիրել առավել:

Թող սա՛ լինի, ասացի ես,
Արու զավակ ինձ համար,
Սրա անվախ, անահ սիրտը
Քաջ տղամարդի է հարմար:

Էլ աղջիկ չես այսուհետև,
Չմոռանա՛ս այդ բնավ.
Դու աշխատիր, որ ստանաս
Բարի անուն, մեծ համբավ:

Արքայական ապարանքը
Մի մեծ բույն է փորձության.

Եթե սխալ մի քայլ անես,
Դու կորած ես հավիտյան:

Այժմ գնա՛, դու իմ հոգյա՛կ,
Օրհնությունս քեզ հետ տար,
Եղի՛ր բարի, մեծահոգի,
Եղի՛ր անմեղ ու արդար...

2

Երբ որ Արեգնազանը ներկայացավ թագավորին և հայտնեց, որ ինքը Արմանի որդին է, թագավորը շատ ուրախացավ:

- Ես այնպես էի կարծում,- ասաց թագավորը,- որ մեր Արմանը հասած տղա չունի: Անունդ ի՞նչ է, տղա՛ս:

- Տերությանդ ծառա՝ Արեգ:

- Արե՛գ... շա՛տ լավ անուն է և քեզ բոլորովին հարմար: Ուրա՛խ կաց, տղա՛ս, քեզ այստեղ լավ կպահեն: Եթե մի նեղություն, մի կարիք ունենաս, ինձ հայտնիր: Վաղը պիտի որսի երթանք, դու էլ կգաս ինձ հետ:

Թագավորը մինուճար մի աղջիկ ուներ՝ Նունուֆար անունով: Այնքան գեղեցիկ էր Նունուֆարը, որ արեգակին ասում էր՝ «Դու մի՛ դուրս գա, ե՛ս եմ դուրս գալու»:

Երբ որ թագավորը խոսում էր Արեգնազանի հետ, Նունուֆարը վարագույրի հետևից թաքուն նայում էր նրա վրա և զմայլվում:

«Սա իսկ և իսկ այն պատկերն է, որին քանի անգամ տեսել եմ ես երազումս»,- ասում էր Նունուֆարն ինքն իրան...

Մյուս առավոտը որսական փողերը հնչեցին:

Հազարից ավելի ձիավոր դուրս եկան՝ բոլորն էլ զինավորված լայնակամար նետ-աղեղներով, երկայնակոթ նիզակներով և այլ զենքերով: Իրանց հետ ունեին բազմաթիվ գամփռներ, բարակներ, բազեներ... Մի խոսքով՝ որսի ամեն պատրաստությունով:

Անցան գնացին, հասան մի լայնատարած դաշտ՝ չորս կողմից ահագին անտառներով շրջապատված: Որսական շներով անտառներից դուրս փախցրին բոլոր երեներին դեպի դաշտ, շղթայաձև շրջապատեցին ամբողջ դաշտը և, բոլոր որսերին կալմեջ արած, սկսեցին անխնա կոտորել:

Արեգնազանը թագավորի մոտից չէր հեռանում և նրանից էլ քիչ չէր կոտորում: Որսասպանության այս թունդ միջոցին թագավորը մի եղջերվի հետևից ձին չափ գցելիս, ինչպես պատահեց, վայր ընկավ ձիուց, թեև անվնաս, միայն ձին խրտնեց, փախավ, թագավորը մնաց հետիոտն և իսկույն ընկավ մի արջի առաջ: Արջը հետևի ոտքերի վրա կանգնեց, բերանը բաց արավ և հենց որ ուզում էր թագավորին իր գիրկն առնել, ջարդել, Արեգնազանը մի ակնթարթի մեջ նետի պես սլացավ իր ձիով և թրի մի հարվածով կես արեց արջի գլուխը և վայր գլորեց ամեհի գազանին: Թագավորն ազատվեց, և Արեգը դարձավ նույն օրվա հերոսը:

- Ա՜յ քեզ բախտ… ինչո՞ւ ես չէի մոտիկ թագավորին,- ասում էին որսորդներից շատերը…

Թագավորին սույն օրվա պատահած դեպքի լուրը շուտով քաղաք հասավ, և պատանի որսորդի արած քաջության համբավը մի րոպեում տարածվեց ամբողջ քաղաքի մեջ:

Տեսնելու բան էր, թե ինչպիսի՛ աղաղակ էին բարձրացնում քաղաքացիք որսորդների վերադարձին:

- Կեցցե՛ թագավորը, կեցցե՛ քաջ Արեգը,- գոռում էին միաբերան և երգում.

Ո՞վ է ազատել մեր թագավորին
Արջի ճանկերից, հա՛յ, արջի ճանկերից…
Մեր քաջ Արեգը, սիրուն պատանին.
Նա՛ է ազատել արջի ճանկերից,
Արջի ճանկերից, հա՛յ, արջի ճանկերից…

Երկայն նիզակը բերանն է կոխել,
Գլուխը թրով մեջտեղից կիսել,
Ամեհի գազանին գետին կործանել,
Մեր թագավորին անվնաս պահել
Արջի ճանկերից, հա՛յ, արջի ճանկերից:

Արեգն է սիրուն արեգակի պես,
Նոր է դուրս եկել որսական հանդես,
Արջի գլուխը արավ երկու կես,

Մեր թագավորին ազատեց այսպես
Արջի ճանկերից, հա՛յ, արջի ճանկերից:

Արեգն է դյուցազն, քաջ ու անվեհեր,
Կեցցե՛ հավիտյան, կեցցե՛ շատ օրեր.
Եթե նա այսօր այնտեղ չլիներ,
Մեր թագավորին էլ ո՞վ կազատեր
Արջի ճանկերից, հա՛յ, արջի ճանկերից:

Արեգնազանը, այս ցույցերը տեսնելով, ասում էր ինքն իրեն.

- Ա՜խ, ի՜նչ լավ բան է տղա լինելը. երանի՛ ես ճշմարիտ տղա լինեի: Աղջիկը որտեղի՞ց կարող էր այս պատվին արժանանալ…

- Դու այսօր ցույց տվիր ինձ քո շնորհքդ, Արե՛գ,- ասաց թագավորը,- այսուհետև դու ինձնից անբաժան կմնաս: Ապրի՛ս, տղա՛ս, ապրի՛ս: Դու մի հազվագյուտ էակ ես. գեղեցկության և ջահելության հետ շատ հաշտ չէ քաջությունը, բայց Երկինքն ուզեցել է քեզ մի բացառություն համարել: Վաղը դու մեր ձիերից կընտրես քեզ համար ամենալավը, իմ զենք ու զրահներից՝ ամենից ընտիրները: Դու ժամանակով դյուցազանց կարգը կընկնես և հենց այժմ էլ մի փոքրիկ դյուցազն ես…

Թագավորը շատ ուրախ էր, որ մի փոքրիկ դյուցազն է գտել, բայց Նունուֆարի ուրախությունը սահմանից անց էր կացել:

- Սրան Երկինքն է ուղարկել ինձ համար,- ասում էր Նունուֆարը ինքն իրեն,- բանն այնպես է գնում, ինչպես որ պետք էր ցանկանալ: Բայց ես ե՞րբ պիտի տեսնեմ նրան երես առ երես, կամ նա ինձ ե՞րբ պիտի տեսնի: Ա՜խ, ինչքա՜ն ցանկանում եմ, որ հենց ա՛յս րոպեին նա ինձ մոտ լինի, մենք միասին կխոսենք, ես նրան կասեմ… նա ինձ կասե… Եվ ինչո՞ւ չկանչել, ինչո՞ւ չխոսել: Հայրս նրան որդու պես է սիրում, որովհետև իր բարեկամի որդին է. նա ազատ ելումուտ ունի բոլոր պալատում: Այո՛, այո՛, պետք է կանչել: Էյ, ո՞վ կաք այդտեղ,- կանչեց Նունուֆարը, և ներս մտավ մի աղախին:

- Այս րոպեիս կերթաս Արեգի մոտ և կասես, որ գա ինձ մոտ. ասա՝ «Ե՛կ, ինձ տես»…

Աղախինը գնաց և կանչեց Արեգին:

- Չեմ կարող գալ,- պատասխանեց Արեգը:

- Ինչո՞ւ չեք կարող, պարո՛ն. նա հրամայել է,- պնդեց աղախինը:

- Ես նրա մոտ գործ չունեմ, հասկանո՞ւմ ես…

- Պարո՛ն, նա ասում է. «Ե՛կ, ինձ տես»… հասկանո՞ւմ ես…

- Գնա՛ ասա. «Ո՛չ կգամ և ո՛չ կտեսնեմ քեզ»…

Աղախինը գնաց:

Նունուֆարը, Արեգի մերժումը լսելով, այնպես սառավ ու տաքացավ, այնպես կարմրեց ու սփրթնեց փոփոխակի, որ աղախինը, այդ տեսնելով, սարսափի մեջ ընկավ:

Նունուֆարի սիրտն ուզում էր տրաքել, գլխի սկավառակն ուզում էր բարձրանալ: Նա անդադար այս ու այն կողմն էր ընկնում, մե՛րթ դուռն էր բաց անում, մե՛րթ պատուհանը. նրա սենյակը դարձավ մի հնոց և նրան այրում, խորովում էր:

- Մերժո՞ւմ… արհամարհա՜նք… ի՜նձ, ի՜նձ, օհ, գլուխս, գլուխս տրաքում է, տրաքում…

Աղախինը, տեսնելով իր տիրուհու անսահման սրտնեղությունը, վստահացավ ասել.

- Տիրուհի՛, ես զարմանում եմ, որ դու մի այդպիսի դատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում: Նա գուցե սաստիկ ամաչում է և դրա համար է, որ չեկավ: Երբ որ լսեց, որ դու կանչում ես իրեն, ամոթից կարմրեց, վարդ կտրեց և ինչքա՜ն գեղեցիկ էր…

- Ասա՛, ասա՛, խոսի՛ր, շարունակի՛ր… ես չլսեցի քո բոլոր ասածները… Օ՜հ, որքա՜ն ստոր եմ ես հիմա նրա աչքում, որքա՜ն ստոր… Բայց նա սխալվում է, այնպես չէ՞. նա սխալվում է…

Նունուֆարը, երկար ժամանակ հոգեպես տանջվելով, թուլացավ և ընկավ անկողին: Թագավորին իմաց տվին. նա գնաց տեսավ, բժիշկներ կանչեց: Հավաքվեցին բոլոր բժիշկները, հույս տվին թագավորին, թե հիվանդությունը վտանգավոր չէ, և շուտով կբժշկեն, բայց դրա հակառակ, քանի գնաց, Նունուֆարի տկարությունը վտանգավոր դարձավ: Բժիշկները հուսահատվեցին և ուղղակի հայտնեցին, որ չեն կարողանում իմանալ ո՛չ ցավի պատճառը և ո՛չ նրա բժշկելու հնարը:

Շատ տխրեց թագավորը: Նունուֆարը նրա միակ զավակն էր, միակ

մխիթարությունը, իր թագավորության միակ ժառանգուհին: Ամբողջ պալատը և համարյա ամբողջ քաղաքը տխրության մեջ ընկան: Արեգնազանն էր միայն անտարբեր մնացողը: Նրա հոգը չէր ամենևին, և չէր էլ երևակայում, որ ի՛նքն է նրա տխրության միակ պատճառը:

Նունուֆարին փոքրիշատե սփոփողը և ուրախ տրամադրություն տվողը թագավորի ծաղրածուն էր, իսկ նրա վրա հսկողն ու խնամք տանողը վեզիրի կինն էր:

Վեզիրի այրի կինը մի հասած տղա ուներ: Նա կարծում էր, որ թագավորին արժանավոր փեսացու միայն իր տղան կարող է լինել և ոչ մի ուրիշը: Այս պատճառով նա գիշեր-ցերեկ չէր հեռանում Նունուֆարի մոտից, աշխատում էր նրան առողջացնել և միևնույն ժամանակ նրա սերը գրավել:

- Տիրուհի՛, ի՞նչ կտաս, որ ես քեզ բժշկեմ,- ասաց մի երեկո ծաղրածուն:

- Ի՞նչ պիտի տամ, հիմա՛ր, եթե մի հնար գիտես, էլ ո՞ր օրվա համար ես պահում:

- Այդ լավ ասացիր. ինձ պես հիմարին ո՞վ բան կտա: Ուրիշ բան է, եթե ես մի հիմար բժիշկ լինեի: Սպասի՛ր, ես պիտի տեսնեմ՝ քո խելքը գլխո՞ւմդ է, թե՞ քեզանից խռովել է, գնացել է, ուրիշի գլուխ մտել:

- Այդ ինչպե՞ս պիտի իմանաս:

- Ա՛յ ինչպես: Եթե տասից երկու պակսեցնես, կարո՞ղ ես էլի նորմեկանց տասը շինել:

- Ինչո՞ւ չէ. տասից կպակսեցնենք երկու, կդառնա ութ, ութի վրա երկու կավելացնենք, կդառնա էլի տասը:

- Այդ ինչպե՞ս կարելի է: Տասից որ երկու պոկես, էլ ինչպե՞ս կարող ես կպցնել նրան: Հիմա որ քո մի կուռը կտրենք, մեկ էլ նորմեկանց տեղը դնենք, կկպչի՞...

- Այդպես չէ, հիմա՛ր: Եթե դու ունենաս տասը խնձոր, նրանցից երկուսն ուտես, տեղը չի՞ մնալ ութ: Հիմա այս տիկինը, որ քեզ երկու խնձոր տա, կավելացնես մնացած ութի վրա, էլի կունենաս տասը խնձոր:

- Հա՜, հիմա հասկացա: Ուրեմն՝ դու այնպես ես հաշվում, որ կերած խնձորների տեղը կարելի է ուրիշ խնձորներ դնել:

- Իհարկե կարելի է:

- Իսկ ես այնպես էի կարծում, թե կերածը կերած է, կորածը՝ կորած, մեռածը՝ մեռած. էլ դրանք հետ չեն դառնա: Ուրեմն, այս տիկինն ինչո՞ւ է մեկ մնացել: Սա

մեկ մարդ ուներ, մեռավ: Առաջ սա և իր մարդը երկու էին, հիմա եթե սրա վրա ուրիշ մեկ մարդ ավելացնենք, խոմ էլի կդառնա՞ երկու: Բայց առաջվան մեկը վեզիր էր, ողորմի իրան, խելոք մարդ էր կարծվում, երկրորդ մեկը թող լինի մեկ հիմար կարծվող ծաղրածու: Այս հանգամանքը խոմ մեր հաշվին չի՞ դիպչիլ. տիկինը, որ հիմա մեկով պակաս է, առաջվա պես կդառնա երկու...

- Դու իմ հոգսը մի՛ քաշիր, հիմա՛ր,- ասաց տիկինը.- դեղ գիտես՝ քո տիրուհուդ համար արա, թող ես մեկ մնամ...

- Տիկի՛ն, իմ տիրուհին մեկ է, սրան ուրիշ մեկ չի պակսիլ, բայց ուզում է երկու դառնա: Ես հիմա մտածում եմ, որ սրա համար մի այնպիսի «մեկ» գտնեմ, որ եթե սրա վրա ավելացնենք, դառնա էլի մեր առաջվան Նունուֆարը:

Ծաղրածուն մատը ճակատին դրավ և մի փոքր մտածելուց հետո բացականչեց.

- Գտա՛, գտա՛,- և սկսեց երգել.

Մե՛կ - ռե՛գ, մեր Արեգ,
Չո՛րս - մո՛րս, գնաց որս.
Վե՛ց - նե՛ց, ըսպանեց
Մի արջիկ, մի աղջիկ...

Ես հաշվեցի և գտա
Մեր պալատում մի փղա,
Նրան տեսնող աղջիկը
Խելքը հացով կուլ կտա:

Ես հիմար եմ, միշտ հիմար,
Ինձ ո՞վ կասի, թե գտար
Իմ սիրելի տիրուհու
Ցավի համար դեղ ու ճար:

Յարալլալի, շարալլալի,
Հայդե՛, հիմա՛ր, դո՛ւրս արի...

Երգեց հիմարը և, մի քանի ոստյուններ անելով, դուրս փախավ...

Վեզիրի կինը «մատը կծեց» և ընկավ մտատանջության մեջ: «Ես հիմա հասկացա ամեն բան,- ասաց իր մտքում:- Հիմարն իմ հաշիվը տակնուվրա արավ: Շա՛տ լավ. քո Արեգին մի այնպիսի տեղ ուղարկեմ, որ գնալն ըլի, գալը չըլի»:

- Մեր հիմարն այնքան հիմար չէ, ինչքան կարծում ենք,- ասաց տիկինը Նունուֆարին:

- Այո՛, բայց այս անգամ շատ հիմարացավ,- պատասխանեց Նունուֆարը:

Մյուս առավոտը ամենից կանուխ վեզիրի կինը գնաց թագավորի մոտ:

- Ի՞նչ կա, ինչպե՞ս է աղջկանս առողջությունը,- հարցրեց թագավորը:

- Էլի այնպես է, տե՛ր թագավոր, ինչպես տեսել ես. բայց ես եկել եմ քեզ մի ուրախառիթ լուր հաղորդելու:

- Ի՞նչ լուր, ասա՛ շուտով, գուցե իմ աղջկան է վերաբերում: Ուրիշ ո՛չ մի լուր ինձ չի կարող ուրախացնել:

- Այո՛, այո՛: Այս գիշեր երազումս երևաց մեր թագուհին և ասաց ինձ, որ Նունուֆարի միակ դեղը անմահական ջուրն է:

- Ան-մա-հա-կան ջրի՛ւր…- բացականչեց թագավորը,- բայց ո՞վ կարող է բերել այդ անմահական ջուրը, որի միայն անունն ենք լսած, իսկ իրան չենք տեսած:

- Ես հարցրի այդ մասին թագուհուն, և նա ասաց, որ միայն Արե՛գը կարող է բերել…

- Արեգը… լա՛վ, ես կուղարկեմ Արեգին, թող երթա, իր բախտը փորձե…

Թագավորը կանչեց Արեգին և առաջարկեց նրան գնալ անմահական ջրի:

- Գնա՛, տղա՛ս, եթե կարողանաս այդ ջրից բերել և իմ աղջկանս առողջացնել, ես նրան քեզ կտամ և նրա հետ իմ թագավորությունը:

- Այդ խոստումն էլ որ չլինի, տե՛ր արքա, ես պատրաստ եմ հնազանդիլ քո հրամանին,- ասաց Արեգը,- դու ինձ ասա միայն՝ որտեղ է գտնվում այդ անմահական ջուրը:

- Նրա տեղն ո՞վ կիմանա, որդի՛: Նա մի առանձին պարգև է, մի առանձին ողորմություն և շնորհք, որ բարի ոգիները միայն իրանց ընտրածին են տալիս: Թեպետ լսած ենք, թե նա մի աղբյուր է, թե նրա վրա հսկում են աներևույթ ոգիները, որ նա երբեմն բխում և երբեմն անհայտանում է, բայց այդ ո՞վ գիտե: Դու երեսդ կդարձնես դեպի արևելք, կընկնես երկրեերկիր, աշխարհքեաշխարհք, ամեն տեղ հարցուփորձ կանես, կա՛մ կգտնես, կա՛մ չես գտնիլ. այդ քո ճակատագրից, քո բախտիցն է կախված. բայց ինչ էլ որ լինի՝ հաջողություն թե անհաջողություն, դու շատ բան կտեսնես և շատ բան կսովորես: Իմ գանձարանը բաց է քեզ համար. որքան կարող ես, հետդ ոսկի և ակնեղեն վերցրո՛ւ. շատ տեղ հարկավոր կգա…

3

Արեգնազանը գնաց:

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխույժ ու զվարթ, միշտ անահ ու անհոգ. նեղության մեջ ընկած ժամանակ ևս իր ուրախ տրամադրությունը չէր փոխում: Նա գնաց իր Բազիկ ձիով, որ երեք-չորս օրվան ճանապարհը մեկ օրումն էր անցնում: Նա պտտեց մի քանի թագավորություն, շատ տեղ հարցուփորձ արեց, շատ բան տեսավ, շատ նեղություններից ազատվեց, մինչև հասավ կախարդական աշխարհը, որտեղ ամեն մի քայլափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք:

Մեկ օր սաստիկ արև էր: Շոգը որ շատ նեղեց Բազիկին, Արեգնազանը իջավ մի լճի մոտ, Բազիկին քաշեց, կապեց մի խիտ ստվերի մեջ, ինքն էլ մոտը նստեց, հանեց իր ճամփի պաշարը և սկսեց ճաշել: Հենց այդ միջոցին մեկ էլ տեսավ, որ ահա մի խումբ աղավնիներ թռած եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մոտիկ: Նետ-աղեղը լարեց, որ մի որս անե, մեկ էլ տեսավ, որ բոլոր աղավնիները հանեցին փետուրները և, աղջկերք դառնալով, թափվեցին ջուրը լողանալու:

Արեգնազանը մնաց ապշած մի րոպե. հետո մտածեց նրանց հետ մի խաղ խաղալ և տեսնել՝ ինչ կլինի հետևանքը: Կուզեկուզ մոտեցավ ափին այնպես, որ իրեն չտեսան, վերցրեց նրանցից մեկի փետուրները: Երկու մեծ թև էր աղավնու, մնացած փետուրներն էլ վրան:

Չանցավ մի քանի րոպե, բոլոր աղջկերքը դուրս եկան, հագան իրանց թևերն ու թռան, բայց մեկը, որ իր թևերը չգտավ, ամաչեց մերկ կանգնել ջրի ափին, իսկույն իրեն գցեց ջուրը: Արեգնազանը, այդ նկատելով, թևերը ձեռքին մոտեցավ աղջկան: Աղջիկը, ջրում ընկղմված, միայն գլուխը դուրս հանած, մոտեցավ Արեգնազանին և սկսեց երգել.

Ա՛յ տղա, սիրո՛ւն տղա,
Թևե՛րս տուր, թևե՛րս,
Թևերս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս՝ քեզ կտամ:
Իմ օրումս չեմ տեսած
Քեզ պես սիրուն մի տղա,
Այդքան գեղեցկության մեջ
Սիրտ չի լինիլ անզգա:

Խնայի՛ր ինձ, աղաչո՛ւմ եմ,
Թևերս փուր, թևերս,
Թևերս փուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս՝ քեզ կտամ։
Եթե իրավ տղա ես,
Կուզեմ դառնաս դու աղջիկ,
Որ քո սեռում չլինի
Քեզ հավասար գեղեցիկ։

Տե՛ս, ահա ես քեզ օրհնում եմ.
Թևե՛րս փուր, թևե՛րս,
Թևե՛րս փուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս՝ քեզ կտամ:

Աղավնի աղջիկը լռեց և, վիզը ծռած, մի ամենաքնքուշ ժպիտ բերանին, նայում էր Արեգնազանին և սպասում, որ իր թևերն ստանա: Արեգնազանին այնքան դուր եկավ Աղավնի աղջկա երգի եղանակը, որ ասում էր՝ «Ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, սա երգի, ես լսեմ»…

- Շարունակի՛ր, շարունակի՛ր, մի քիչ էլ երգիր,- խնդրեց Արեգնազանը:- Քո երգը ինձ շատ է դուր գալիս, դեռ այդպես բան լսած չկամ կյանքումս: Միայն մի բան ես չհասկացա, սիրո՛ւն աղջիկ: Դու ասում ես՝ «Եթե տղա ես, աղջիկ դառնաս». այդ ինչպե՞ս կարելի է:

Աղջիկը շարունակեց երգել.

Ամենայն ինչ կարելի է,
Ո՛չ մի դժվար բան չկա.
Եթե իրավ աղջիկ դառար,
Հիմա դարձի՛ր քաջ տղա:

Թող երեսիդ մորուք բըսնի
Թուխ ու երկայն բեղերով,
Թող կոշտանա սիրուն դեմքդ
Հաստ ջիղերի գծերով:

Օ՜հ, տեսնում եմ, դու փոխվում ես…
Թևե՛րս փուր, թևե՛րս,
Թևե՛րս փուր, թռչիմ գնամ
Ինչ կամենաս՝ քեզ կտամ:

Մի վայրկենական ուշաթափություն եկավ Արեգնազանի վրա, և նա զգաց մի անսովոր բան, բայց շատ հաճոյական: Նայեց ջրի երեսին, ուր, ինչպես հայելու

մեջ, պատկերացավ մի դեմք, բոլորովին Արեգնազանին նման, միայն նորածիլ բեղերով ու մորուքով: Այդ պատկերն առաջ մի քիչ խորթ թվաց Արեգնազանին, բայց հետո այնքան զմայլելի եղավ, որ վրան նայելուց չէր կշտանում:

- Այս ե՛ս կլինիմ անպատճառ,- ասաց ինքն իրեն:- Ես հիմա ճշմարիտ որ *Արեգ* եմ:

- Սիրո՛ւն աղջիկ, դու տվիր ինձ այն, ինչ որ իմ միակ ցանկությունս էր. այժմ դու ազատ ես, ես չէի սպասում քեզանից այսպես բան: Ուրեմն, դու ինձ կասես, դու անպատճառ կիմանաս, թե որտե՛ղ է գտնվում անմահական ջուրը, որի համար ես ահա քանի ժամանակ է՝ թափառում եմ:

Աղջիկն սկսեց երգել.

Թող Նունուֆարդ ուրախանա,
Որ ճանկ գցեց քեզ պես փեսա,
Հիմա հասար քո մուրազին,
Եկար աղջիկ, կերթաս տղա:

Անմահական ջո՞ւր ես ուզում...
Թևե՛րս տուր, թևե՛րս,
Թևե՛րս տուր, թռչիմ գնամ
Եվ իմ կտցով բերեմ տամ:

Գնա՛, օգնի՛ր տկարներին,
Հոգի՛ ու շո՛ւնչ տուր քարերին.
Թե որ կուզես, ինչպես հիմա,
Մնալ փոխված այդպես տղա:

Իսկ եթե ոչ՝ լա՛վ գիտենաս,
Որ տղայից քար կդառնաս,
Երբ քարացած քաղաքի մեջ
Կախարդ կնկան կմոտենաս:

Թևե՛րս տուր, թևե՛րս,
Թևերս տուր, շուտ հագնեմ,

Թռչիմ գնամ և քեզ համար
Անմահական ջուր բերեմ…

Աղջկա վերջին խոսքերից շատ բան չհասկացավ Արեգը, բայց, չուզենալով այլևս ուշացնել նրան, թևերը տվեց իրեն: Աղջիկը թևերը հագնելուն պես դարձավ աղունակ և թռավ գնաց: Մի քանի րոպե չանցած՝ մի փոքրիկ շիշ կտցին, անմահական ջրով լիքը, բերեց, Արեգին տվեց և ինքը կրկին թռավ, գնաց:

Արեգը ձին հեծավ և ճանապարհ ընկավ՝ ձիու հետ խոսելով.

- Բազի՛կ, ես հիմա տղա եմ, գիտե՞ս, էլ աղջիկ չեմ: Առաջ աղջիկ էի. այդ ոչ ոք չգիտեր, գուցե դու էլ չգիտեիր. հայրս պատվիրել էր, որ ոչ ոքի չասեմ, թե ես աղջիկ եմ. բայց հիմա տղա դառա: Օ՜, որ գիտենաս, Բազի՛կ, ինչքա՜ն ուրախ եմ հիմա: Դու չես իմանում. թեպետ աղջիկն էլ լավ է, բայց տղային որտե՞ղ կհասնի: Ես հիմա չգիտեմ՝ ո՛ւր եմ գնում: Բազի՛կ, դու ի՛նքդ գնա՝ որ կողմ կուզես. այսուհետև ինձ համար միևնույն է… Բայց սպասի՛ր, ես մի աշտարակի ծայր եմ նշմարում, նա անպատճառ մի քաղաք կլինի, գնանք դեպի այն կողմը: Զարմանալի անհոգ եմ ես, Բազի՛կ. մեկ չես ասում, թե ինչու այդ իմաստուն աղջկան չհարցրիր, թե ո՛վ դու, գեղեցի՛կ և իմաստո՛ւն աղջիկ, ո՞ր կողմով պիտի հետ դառնամ ես իմ աշխարհը: Դեռ լավ էր, նա առանց իմ ասելու՝ ինձ տղա դարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կլինեի: Ի՞նչ կարող էի մտածել, որ այդպես բան կարող է պատահել: Բայց երբ որ տեսա, թե այդպես բան լինում է, ինչո՞ւ չասացի՝ սիրո՛ւն աղջիկ, ինձ որ տղա դարձրիր, մեր Բազիկին էլ մարդ դարձրու, կամ եթե ոչ՝ գոնե խոսելու ձիրք տուր. հը՞, ի՞նչ կասես, Բազի՛կ: «Ոչի՛նչ, դու տղա դառար, ես էլի մնացի ձի»: Իրա՛վ, իրա՛վ, այդ լավ չեղավ: Մի բան տեսնելիս այնպես հափշտակվում եմ, որ բոլոր մնացած բաները մոռանում եմ. հետո միտս է գալիս, բայց ուշ է լինում…

Այսպես ձիու հետ խոսելով և նրա փոխանակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգված Արեգը դիմեց դեպի երևացող աշտարակը:

4

Երբ որ Արեգը մոտեցավ բարձր աշտարակին, հետզհետե երևացին և ուրիշ շատ տներ, և նրա առջև բացվեց մի մեծ քաղաք: Մոտեցավ քաղաքադռանը, տեսավ մի քանի մարդիկ կանգնած, հարցրեց նրանց.

- Տղե՛րք, ի՞նչ քաղաք է սա, և որտե՞ղ են իջնում օտարականները:

Մարդիկ ձայն չհանեցին:

- Ձե՛զ եմ ասում, տղե՛րք, չե՞ք հասկանում:

Ձայն չկա:

«Երևի խուլ են»,- մտածեց Արեգը և գնաց, ձեռքը դիպցրեց նրանց:

- Ո՞վ երկինք,- բացականչեց Արեգը,- այս ի՞նչ եմ տեսնում. այս ի՞նչ հիանալի արձաններ են, իսկ ես կարծեցի, թե ուղիղ մարդիկ են: Այս ինչքա՜ն ճարտար քանդակագործ է եղել սրանց շինողը...

Արեգը կարծելով, թե իր տեսածներն ուղիղ շինովի արձաններ են, ներս մտավ քաղաքը, և նրա առջև բացվեցին նորանոր տեսարաններ, բոլորն էլ քարեղեն:

Ահագին շուկա, կարգին խանութներ, թե՛ կրպակ, թե՛ տուն, թե՛ կատու, թե՛ շուն, ուտելիք ու հագնելիք, գեղեցիկ գորգեր և ուրիշ զարդեր... բոլորը, բոլորը քարացած: Ո՛չ ծուխ, ո՛չ կրակ, ո՛չ ձայն, ո՛չ շունչ... կյանքի հետք ու նշույլ չկա...

- Ես հիմա՛ հասկացա. սա՛ է Աղավնի աղջկա ասած քարե քաղաքը,- ասաց Արեգը և սկսեց շրջել քաղաքի մեջ, որտեղ ամեն մի քայլափոխում մի նոր տեսարանի էր հանդիպում:

Մի տեղ մի խումբ մարդիկ կանգնած որպես թե իրար հետ խոսում են. մեկի դեմքը բարկացած է, և բերանը՝ բաց, կարծես մյուսին հայհոյելիս լինի. մեկը ծիծաղում է, մյուսը լաց է լինում. մի կին, երեխան գրկած, ողորմություն է ուզում. մի տեղ հարսանիքի հանդես է իր ամեն սարք ու կարգով. հարսին տանում են փեսայի տուն: Մեկ խոսքով՝ եթե շարժման մեջ եղած մի քաղաք մի վայրկյանում տեղնուտեղը քարանա, ինչ պատկեր կստանա, ահա այդպիսի մի պատկեր էր ներկայացնում քարացած քաղաքը: Մրգավաճառը միրգը քաշել է և կիսով չափ ածել առնողի զամբյուղը, մինչև մյուս կեսն ածելը քարացել են ինքն էլ, կշեռքն էլ, առնողն էլ, միրգն էլ. ահա այսչափ արագ էր եղել քարանալը:

- Խե՜ղճ մարդիկ,- ասաց Արեգը,- հող դառնալու էլ չեք արժանացել, այլ դարձել եք ծախու ապրանք: Ճշմարիտ, եթե մեկը այս անթիվ արձանները կարողանար տանել հեռու աշխարհքներ վաճառելու, անչափ հարստություն կդիզեր: Ահա այն նորապսակ աղջկա արձանին, ով գիտե, իր քաշով մեկ ոսկի կտային: Բայց ի՞նչ եմ մտածում ես էլ. այս թշվառությունն աշկարա տեսնողն էլ ի՞նչ կարող է հարստության վրա մտածել: Ահա հարստություն՝ մեր առջև պատկերացած իր

իսկական կերպարանքով… Ա՜խ, երանի թե սրանցից մեկը լեզվավորվեր և ինձ պատմեր իրենց գլխի անցքը: Արի մեկ բղավեմ, ինչ կլինի՝ կլինի:

- Ո՞վ քաղաքացիք… ինչո՞ւ եք քարացել,- կանչեց Արեգը:

- Քարացել,- արձագանք տվին բոլոր քարերը:

- Ք…ա՜…ր,- հանկարծ մի նոր ձայն լսվեցավ:

- Ահա ձայն լսեցի,- ասաց Արեգը և մեկ էլ բղավեց.- ո՞վ կաք կենդանի՜…

- Ե…ե՜…ս,- պատասխանեց ձայնը:

Արեգը պարզորոշ լսեց, թե որտեղի՞ց է գալիս ձայնը, գնաց դեպի այն կողմը: Մի գեղեցիկ ապարանք էր, առջևը՝ ընդարձակ պարտեզ, բոլորն էլ քարացած: Մի փոքրիկ ծաղկոցում նա գտավ մի քարացած մարդու կենդանի գլուխ:

- Ո՞վ ես դու, ո՛վ մարդ,- հարցրեց Արեգը:

- Ջո՞ւր… ջո՞ւր,- պատասխանեց գլուխը, հազիվ կարողանալով խոսել:

- Ջո՞ւր ես ուզում:

- Ջո՞ւր… ջո՞ւր… տո՞ւր… տո՞ւր…

- Հայրի՜կ, ձեր քաղաքի ջուրն էլ է քարացել, ջուր չկա:

- Մի՜… մի՜… կա՜թ… կա՜թ…

- Մի կաթիլ ջուրը քեզ ի՞նչ կօգնե. քո ծարավը մի կարաս ջրով չի հագենալ: Ես ունիմ ինձ մոտ մի քանի կաթիլ ջուր, եթե կբավականանաս, չեմ խնայի քեզանից:

- Հա՜… հա՜… հա՜…

Արեգը հանեց անմահական ջրի շիշը և նրանից մի քանի կաթիլ կաթեցրեց կիսարձանի բերանը: Կենդանի գլուխը ոչ միայն կատարելապես զովացավ, այլև զգաց մի վերակենդանության ցնցում իր բոլոր մարմնի մեջ և սկսեց պարզապես ասել.

Դու բարի՜ հրեշտակ,
Որտեղի՞ց եկար,
Փախի՜ր, հեռացի՜ր
Միառժամանակ.
Բայց ո՛չ, սպասի՜ր,
Ես էլ եմ գալիս…
Այո՛, գալիս եմ,
Նայի՜ր, մեկ նայի՜ր…

Կիսարձանը կենդանացավ և սկսեց քայլել, առաջ մի փոքր դանդաղ, հետո ավելի շուտ-շուտ և սկսեց փախչել՝ իր հետևից կանչելով Արեգին.

- Փախի՛ր, փախի՛ր, որդի՛ս, ե՛կ իմ հետևից, մեզ հարկավոր է թաքչել. հիմա ուր որ է պիտի գա քարացնող պառավ հրեշը: Արի՛, արի՛, մտնենք իմ ապարանքը, գոնե քեզ չգտնե:

Արեգը մնացել էր շփոթված, չէր իմանում, թե ինչ աներ, բայց վերջը հետևեց փախչող մարդուն: Ձին քաշեց ներս, վարի հարկում մի մութ անկյունում կապեց, իսկ ինքը վերև բարձրացավ այն մարդու մոտ:

- Ես չեմ հասկանում, թե այդ ի՞նչ հրեշ է, որից այդքան վախենում ես դու,- ասաց Արեգը:

- Այդ հրեշը մի պառավ է, որդի՛, նա՛ է քարացրել մեր քաղաքը. ամեն օր այս ժամանակին գալիս է նայում և զվարճանում իր չարության վրա. հիմա ուր որ է պիտի գա և եթե մեզ տեսնի կենդանի, իսկույն կքարացնե:

- Հիմա հասկացա: Բայց ինչպե՞ս է եղել, որ քեզ բոլորովին չէր քարացրել:

- Ավելի տանջելու համար: Ես այս քաղաքի թագավորն եմ. ինձ կասեն Անդաս թագավոր: Քավթառ հրեշը գլուխս կենդանի թողեց՝ ասելով՝ աչքերդ բաց եմ թողնում, Անդա՛ս, որ տեսնես քո թագավորության ոչնչությունը իմ զորության, իմ ուժի առջև:

- Ո՞րն է նրա զորությունը, կամ ինչո՞վ է նա ուժեղ, չգիտե՞ք:

- Նրա զորությունը իր գավազանների մեջ է: Նրա գավազանները մահ են սփռում ամեն տեղ: Նա մի գործիք է չար ոգիների ձեռքում և նրանցով է անում, ինչ որ անում է: Կամ, ո՞վ գիտե, գուցե հենց ինքը մի չար ոգի է՝ պառավի կերպարանք առած:

- Ի՞նչ ես կարծում, եթե դրա ձեռքից խլենք իր գավազանները…

- Բայց ինչպե՞ս կարելի է մոտենալ նրան. միայն բարի ոգիք կարող են այդպիսի բան անել կամ այնպիսի մի մարդ, որ բարի ոգիների պաշտպանությունը իր կողմն ունի:

- Ինձ թվում է, որ բարի ոգիները կպաշտպանեն մեզ,- ասաց Արեգը և պատմեց Աղավնի աղջկա հետ հանդիպելը, նրա արածն ու ասածը…

- Օ՜… եթե այդպես է, ապա ուրեմն դու մի բարի ոգի ես, երկնքից ուղարկված,- բացականչեց թագավորը:- Ես կարող եմ այժմ համարձակ դուրս գալ նրա առաջ, իսկ դու ինձ մոտ թաք կկենաս, և երբ հարձակվի ինձ վրա, դու իսկույն կբռնես նրան և զինաթափ կանես: Ահա՛, ահա՛ երևում է նա. տե՛ս, ամպերի մեջ, խնոցու

վրա հեծած, օձե մտրակը ձեռքին գալիս է:

- Տեսնում եմ, տեսնում… դու սիրտդ պի՛նդ պահիր, չվախենաս, ես նրա հոգին կհանեմ:

Այս ասելով՝ իջան պարտեզ: Արեգը թաքնվեց մի քարացած ծերունու հետևում:

Պառավը վայր իջավ թագավորի դիմաց, ձեռքն առավ իր երեք գավազաններից մեկը և սպառնալով ասաց.

Այս ի՞նչ եմ տեսնո՛ւմ,
Այսպես ո՞վ եկա՛վ,
Այս կյանքն, այս հոգին
Սրան ո՞վ տվավ:

Հասե՛ք, ոգինե՛ր,
Հասե՛ք, շո՛ւտ հասեք,
Ձեր խեղճ պառավին
Եկե՛ք, օգնեցե՛ք:

Իսկ դու, գավազա՛ն,
Ինչպե՞ս ես զարկել,
Որ սա նորմեկանց
Ոտքի է կանգնել:

Հապա՛, գավազա՛ն,
Հապա՛ մեկ տեսնենք,
Քո զորությունը
Մեկ այժմ էլ փորձենք:

Գավազանը ձեռքին՝ հարձակվում էր պառավը, որ զարկեր թագավորին, ասելով՝

Քար էիր, Անդա՛ս,
Էլի քար դառնաս:



Այս միջոցին Արեգը բռնեց նրա մազերից և այնպես գետին փռեց, որ պառավը կիսաշունչ եղավ: Թագավորը, որ առանց ուղիղ քարանալու, այլ միայն երկյուղից մնացել էր քարացած, նոր սրտապնդվեց և մոտեցավ պառավին: Գավազանները խլեցին և պառավի ձեռք ու ոտքը կապեցին:

- Հիմա ի՞նչ պատժով պատժենք քեզ, գարշելի՛ պառավ,- ասաց թագավորը:

Պառավը պատասխանեց.

Ինչ պատիժ կուզեք, մեկ է ինձ համար,
Թող ձեր պատիժը ձեզ լինի հարմար:

Բայց այդ դու չէիր, Անդա՛ս թագավոր,
Այլ փղայացած աղջի՛կ զորավոր…

Գրվա՛ծ է արդեն իմ ճակատագրում
Եվ ոգիների մատենագրում,
Թե երբ մի աղջիկ կդառնա փղա՛,
Քո թշվառ կյանքին նա՛ վախճան կտա:

- Օ՜… եթե այդպես է, ես պատրաստ եմ,- ասաց Արեգը,- միայն դու պետք է առաջ կենդանացնես այս քաղաքը:

- Թող այդպե՛ս լինի, թող կենդանանա՛,
Թող ամեն մեկը իր գործի՛ն կենա.
Ուրիշ չարություն շատ ունիմ արած,
Թող Բելիարը նրանցով շատանա…
Ամպե՛ր, գոռացե՛ք,
Կայծակնե՛ր, զարկե՛ք,
Աղբյո՛ւրք, բխեցե՛ք,
Գետե՛ր, վազեցե՛ք:
Մարդ և անասուն,
Գազան և թռչուն,
Հասա՛վ ձեր ժամը,
Հիմա վե՛ր կացեք…

Պառավն իր խոսքը ավարտած-չավարտած՝ խորին լռությունը հանկարծ դղրդաց. քաղաքը մտքի արագությամբ կենդանացավ: Ամենքն էլ այնպես շարունակեցին իրանց կիսատ թողած գործերը, որ կարծես ո՛չ քարացած են եղել երբևիցե, ո՛չ բան: Աքաղաղը, որ իր կանչի կիսում էր քարացել, մյուս կեսը հիմա ավարտեց. զուռնաչին, որ զուռնան բերանում էր քարացել, շարունակեց ածելը. պար եկողն էլ, որ ձեռքերը բարձրացրած էր մնացել, շարունակեց իր պարը. խոհարարը շարունակեց մսի քափը քաշելը, և բոլորն այսպես… Ոչ մի մարդ, բացի թագավորից, չիմացավ, որ ինքը երբևիցե քարացած է եղել:

- Հիմա ի՞նչ անենք այս չար պառավին,- ասաց թագավորը:

- Գավազանները ձգենք ծովը,- պատասխանեց Արեգը,- իսկ պառավին թողնենք երթա, սրա զորությունը վերացած է այսուհետև:

Պառավը չուզեց կենդանի մնալ և ասաց նրանց.

- Ինձ է՛լ, ինձ է՛լ ծովը ձգեցեք,
Այնտեղից մոտ է Սանդարամետը,
Մահացու կյանքից ինձ ազատեցե՛ք,
Թող ինձ ընդունի Սատանապետը:

Լրացավ արդեն մի հազար տարին,
Որ ես գործիք եմ մեծ Բելիարի,
Միշտ չա՛ր գործեցի, չիմացա բարին,
Թող այժմ նորա կամքը կատարի:

Դեռ պառավն իր խոսքը չէր ավարտել, որ թագավորի մեծ վեզիրն ու սպարապետը եկան և, խոր գլուխ տալով թագավորին, ասացին.

- Տե՛ր արքա, բոլոր զորքը պատրաստ է, քո մեծության հրամանին ենք սպասում:

- Ինչի՞ համար եք պատրաստել զորքը,- հարցրեց թագավորը զարմանալով:

- Մենք կատարեցինք քո հրամանը. թշնամու զորքը մոտենում է, պետք է նրա առաջն առնել:

- Սպասեցե՛ք, սպասեցե՛ք... Այո՛, այո՛, ես հիմա հիշում եմ... Այդ մեզանից ուղի՛ղ քառասուն տարի առաջ էր, ինչ որ ասում եք. մեր քարանալու օրն էր... թշնամու զորքերը եկան և, մեզ քարացած գտնելով, սարսափած փախան...

Վեզիրն ու սպարապետը իրար երեսի նայեցին և շշնջացին միմյանց.

- Թագավորը խելագարվել է... Այո՛, այո՛, զարմանալի՛ փոփոխություն, երեկ չէ՞ր, որ մոտն էինք. մեկ օրվա մեջ ծերացել է...

- Տեսնո՞ւմ եք դուք այս պառավին,- ասաց թագավորը,- սա՛ է մեր քաղաքի քարացնողը: Քառասո՛ւն տարի շարունակ սա մեր քաղաքը քարացրած պահեց...

Վեզիրն ու սպարապետը, թագավորին գլուխ տալով, համաձայնություն ցույց տվին, որ իբր թե հավատում են նրա ասածին, բայց իրար հետ շշնջալով՝ «հաստա՛տ խելագարված է սա»,- ասացին:

- Եթե սա չլիներ,- շարունակեց թագավորը՝ ցույց տալով Արեգին,- եթե սա չլիներ, մենք հավիտյան քարացած կմնայինք: Սա որ մի հրաշքով աղջկանից տղա էր դարձել, և աղավնի դարձող աղջկանից անմահական ջուր էր ձեռք բերել, պատահմամբ ասեմ, թե Երկնքի տնօրենությունով, եկավ և ինձ կենդանություն տվավ իր ջրով, այս չար պառավին էլ բռնեց ու զինաթափ արեց: Այժմ այս պառավին ձեզ եմ հանձնում. տարեք սրան, ծովը ձգեցեք... ահա՛ այս գավազանները ևս ծովը ձգեցեք...

Վեզիրն ու սպարապետը դարձյալ սկսեցին շշնջալ՝ դեպի մի կողմ քաշվելով:

- Հաստա՛տ, հաստա՛տ խելագարվել է,- պնդեց վեզիրը:

- Դրան ի՞նչ կասկած,- կրկնեց սպարապետը:- «Սա՛, ասում է, աղջիկ է եղել, տղա է դարձել, մի աղջիկ էլ աղավնի է դարձել, ինքն էլ անմահական ջուր է խմել, իսկ մենք որպես թե քառասուն տարի է, որ քարացած ենք եղել...»: Խելքը գլխին մարդը մի՞թե այդպիսի բաներ կխոսի:

Այս մարդոց կասկածը շատ բնական էր: Վեզիրը քարանալուց առաջ ճաշի էր նստած և գդալը ձեռքին բերանը տանելիս քարացել էր, իսկ այսօր գդալը տարել էր բերանը և իր ճաշը վերջացրել, եկել: Սպարապետը, ոտքի մեկը ձիու ասպանդակում դրած՝ հեծնել ուզելիս էր քարացել, և այսօր էր ոտքը մյուս կողմն անցկացրել և հեծել ձին ու եկել. էլ ուրեմն, ինչպե՞ս կարող էին երևակայել, որ երբևիցե քարացած են եղել:

- Գիտես՝ ի՞նչ կա, թագավո՛ր,- ասաց Արեգը ծածուկ:- Այս մարդիկ քո խոսքերին չեն հավատում և քեզ խելագար են համարում: Այս շատ վտանգավոր բան է. կարող են քեզ ճշմարիտ խելագար համարել և թագավորությունից զրկել: Հիմա դու սպասիր, տե՛ս՝ ես ինչ եմ անում, և ի՞նձ հետևիր:

Հետո, դառնալով վեզիրին ու սպարապետին, ասաց.

Եկե՛ք, պարոններ, եկե՛ք,
Մի՛ կասկածեք բնավին,
Տեսե՛ք՝ ինչպե՞ս եմ պատժում
Այս անզգամ պառավին:

Այս ասելուց հետո, կախարդական գավազաններից մեկը ձեռքին, մոտեցավ պառավին և ասաց.

- Հրամանով Բելիարի, Ուրիելի, Սադայելի՝ քա՛ր դառ, պառա՛վ, քա՛ր…

Ասաց ու զարկեց գավազանը: Պառավը դարձավ մի էգ էշ և սկսեց զռալ…

- Ա՜յ քեզ բան,- բացականչեց Արեգը,- երևի այս գավազաններից ամեն մեկը մի ջոկ զորություն ունի, կամ գուցե իմ անեծքն էր իշավարի, և պառավն իր զռոցով ծիծաղում է ինձ վրա: Փորձենք երկրորդ գավազանը:

Սադայելի ահեղ սրով,
Տարտարոսի մեծ զնդանով,
Քեզ զարկում եմ, անիծում եմ,
Քա՛ր դառ, պառա՛վ, քա՛ր…

Պառավը դարձավ մի սև ագռավ և ուզեց թռչել, բայց ոտքերը կապած էին, չկարողացավ…

- Սպասեցե՛ք, երրորդ գավազանը փորձենք:

Առավ երրորդ գավազանը և սկսեց ավելի թունդ անիծել՝ կարծելով, թե իր անեծքի թուլությունից է, որ պառավը քար չի դառնում:

Քարեկարկո՛ւտ,
Արյունանձրև՛,
Մեգ, մառախո՛ւղ,
Թանձր, մռա՛յլ,
Խիտ աղջամո՛ւղջ,
Թունդ երկրաշա՛րժ,
Մահտարաժա՛մ,
Որո՛տ, կայծա՛կ,
Հրդեհ, կրա՛կ,
Նավթահեղեղ
Դժոխային
Թափվի գլխիդ,
Ո՛վ սև ագռավ,
Դահի՛ճ պառավ…
Քեզ զարկում եմ
Չա՛ր մահակով,

Դագանակով,
Որոտմունքի
Թունդ մտրակով,
Կայծակների
Ահեղ զարկով,
Անեծքս ա՛ռ,
Դարձիր լեռ քար…

Ասաց ու զարկեց գավազանը, և պառավը դարձավ մի դաժանատեսիլ քարե արձան: Հետո, դառնալով վեզիրին ու սպարապետին, ասաց Արեգը.

Հիմա ամառն է, բայց դուք չգիտեք.
Այս շոգ կրակին մուշտակ եք հագել.
Ձմեռն է եղել, երբ քարացել եք,
Էնդուր եք հիմա այդ ձևով եկել:

Մարդ ուղարկեցեք մի ուրիշ քաղաք,
Որ գնա բերե ձեր տարեթիվը,
Նրանով կիմանաք ձեր գլխի անցքը,
Կուղղեք ձեր այժմյան սխալ հաշիվը:

Եթե ոչ, ես ձեզ էշեր կշինեմ,
Կամ սև ագռավներ, երթաք կռկռաք,
Որ այնուհետև ձեր թագավորը
Ինչ որ ձեզ ասե, իսկույն հավատաք…

- Օ՜… ես հիմա հավատո՛ւմ եմ, հավատո՛ւմ,- ասաց վեզիրը,- այս բոլորը աչքովս տեսնելուց հետո էլ չե՛մ կարող չհավատալ… Ճշմարիտ որ ձմեռ է եղել, իսկ հիմա… ամառ է… այո՛, ամառ է…

- Ես էլ եմ հավատում, ես էլ… ես չեմ ուզում ո՛չ էշ և ո՛չ ագռավ դառնալ, իսկ քարանալու ախորժակ բնավ չունիմ… իրա՛վ, ի՞նչ շոգ է այսօր, քիչ է մնում, որ այրվեմ…

- Տե՛ր արքա, ճաշը պատրաստ է, թագուհին ձեզ է սպասում,- ասաց մի

պալատական՝ խոր գլուխ տալով թագավորին:

- Երթա՛նք, երթա՛նք, մի կտոր հաց ուտենք,- ասաց թագավորը:- Ահա՛ քառասուն տարի է, որ պատառ չեմ դրել բերանս, բայց ուղիղն ասեմ, չեմ էլ քաղցել: Միայն ծարավս շատ էր տանջում ինձ երբեմն և ավելի ևս սաստկացավ, երբ լսեցի Արեգի ձայնը: Երևի իմ ծարավելն էլ Երկնքի կամքով էր, նրանով պիտի գտնեի իմ փրկությունը... Երթա՛նք, երթա՛նք, մի կտոր հաց ուտենք...

Անդաս թագավորը լավ կշտացրեց թե՛ Արեգին և թե՛ նրա Բազիկին: Արեգին պահեց թագավորը մինչև քսան օր. այդ քսան օրվան մեջ բազմաթիվ թագավորներից դեսպաններ եկան և շնորհավորեցին Անդասի և նրա քաղաքի վերակենդանությունը: Նույն քաղաքից հազարավոր մարդիկ կային հեռավոր երկրներ գնացած, որոնք, իրանց քաղաքին պատահած պատուհասից վախենալով, չէին վերադառնում. այժմ եկան ավելի բազմացած թվով, որդոց և թոռանց տերեր դարձած, մինչդեռ քաղաքի աճելությունը, քարանալու պատճառով, դադարել էր:

Նորեկները իմանալով, որ Արեգն է այն բարի հրեշտակը, որ հաղթել է չարին և կյանք տարածել չարի մահ սփռած տեղը, նրան աստվածավայել պատիվներ տվին ճոխ խնջույքներով: Թագավորն ինքը մի մեծ խնջույք տվեց, որին ներկա էին հազարավոր անձինք: Ինքն էր բոլոր զվարճություններին ընթացք տվողը, ինքն էր առաջարկում կենաց թասերը: Երբ Արեգի կենաց բաժակը ձեռքն առավ, սկսեց խոսել թագավորը և ասաց.

- Ի՞նչ էինք երեկ և ի՞նչ ենք այսօր.
Դո՛ւ պատասխանիր, Անդա՛ս թագավոր.
- Քա՛ր էինք երեկ, քա՛ր անշունչ, կանգուն,
Իսկ այսօր՝ մարդիկ, կենդանի, շարժուն...

Ի՞նչ հեշտ պատասխան... բայց ո՞վ կըմբռնե,
Ո՞վ կզգա, թե ի՞նչ սոսկալի բան է
Շարունակ տանջվիլ քա՛-ռա՛-սո՛ւն տարի,
Փշալի՞ց ձեռքում մի անգութ չարի...

Եվ ահա այդ խիստ, չա՛ր կապանքներից,
Անխորտակելի այդ շղթաներից

Մեզ ազատում է մի չքնաղ ոգի,
Ամեն տեղ սփռում և՛ կյանք, և՛ հոգի…

Ո՞վ էր այդ Քաջը, այդ Առաքինին.
Ահավասիկ Նա՝ Արեգ պատանին.
Սա՛ է, որ սրբեց իմ սուգն ու լացը.
Խմե՛նք Արեգի անգին կենացը…

Թագավորի այս առաջարկության վրա հազարավոր ձայներ, միասին «կեցցե՛ Արեգը» գոչելով, թնդացրին ամբողջ ապարանքը: Աշուղներն էլ, որ թագավորի ակնարկելուն էին սպասում, խմբովին հնչեցրին հիսնաղի քնարները և երգեցին միաձայն.

Արի՛, բլբո՛ւլ, ուրախացի՛ր,
Քո վարդն ահա՛ բացվել է.
Վերադարձի՛ր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է:

Արեգն իջավ Երկնքիցը,
Ամենայն տեղ կյանք սփռեց,
Քարերն ամեն հոգի առան,
Քո կարմիր վարդն էլ բացվեց:

Արի՛, բլբո՛ւլ, ուրախացի՛ր,
Քո վարդուհին բացվել է.
Արի երգի՛ր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է…

Արեգը մեկ Արեգակ է,
Քաջ պատանու կերպ առած,
Սա բարի է, առաքինի,
Արևի պես ողորմած:

Արի՛, բլբո՛ւլ, ուրախացի՛ր,
Քո վարդուհին բացվել է.
Արի երգի՛ր, էլ մի՛ վախիր,
Քո թագուհին բացվել է…

Աշուղները դեռ երկար կշարունակեին Արեգին գովաբանել, եթե Արեգը, համեստությունից ստիպված, չընդհատեր նրանց իր հետևյալ պատասխանական ճառով.

Ես մի թույլ էակ, չնչին արարած,
Չգիտեմ արդյոք ի՞նչ ունիմ արած,
Որ ինձ տալիս եք այսքան փառք, պատիվ,
Այսքան գորովանք, մաղթանք անհաշիվ:

Ի՞նչ գտավ արդյոք Երկինքն ինձանում,
Ես այդ չգիտեմ և չեմ իմանում,
Որ ցույց է տալիս այսչափ սեր և գութ,
Հարթում է առջևս ամեն խոչ ու խութ:

Առյուծն իմ առջև քծնում է շան պես,
Վիշապը դառնում մի վախկոտ մողես,
Աղբյուր է բխում ապառաժ տեղում,
Դարավոր ճահիճն առաջիս ցամքում…

Եթե բոլորը, ինչ որ տեսել եմ,
Այժմ մի առ մի ձեր առջև պատմեմ,
Կտեսնեք, որ սա մի բախտ է միայն
Եվ շնորհք Երկնի միջամտության…

Ուստի մենք Նրա՛ն և միայն Նրա՛ն
Պիտի համարենք պաշտելու արժան.
Նա՛ վերացրեց չարի զորություն,
Նորա՛ն պիտի տանք փառք և գոհություն…

Չնայած Արեգի համեստությանը՝ քաղաքացիք նրան դյուցազանց կարգը ձգեցին, որ երախտապարտ չմնան Երկնքի առջև: Եվ ահա՛ ինչպես: Տեսան, որ պառավի սոսկալի արձանից վախենում են բոլոր երեխաները և շատ մեծեր էլ, նրան տարան, ծովը նետեցին: Նա ընկավ ուղղակի դժոխքի վրա և իր ուժգին զարկովը ամբողջ դժոխքը իր միջի չար ոգիների անթիվ լեգեոններով մի հազար մղոն էլ ցած գլորեց… Դրանից հետո հավաքվեցին քաղաքի բոլոր ճարտարապետներն ու նկարիչները, քաշեցին Արեգի պատկերը՝ Բազիկի վրա հենված. նրա ձևով շինեցին մի ոսկեձույլ արձան: Այդ արձանը կանգնեցրին քաղաքի կենտրոնում եղած մեծ պարտեզում, որ զբոսավայր էր ամենի համար, մանավանդ երեխայոց, որոնք այնուհետև միշտ նրա չորս կողմում էին խաղում և վրան նայելով՝ զմայլվում: Արեգը չտեսավ իր արձանը. նա այդ ժամանակ արդեն գնացել էր: Նա երազում տեսավ, որ Նունուֆարը վերջին շնչում է, շտապեց վերադառնալ, որ գուցե կարողանա օգնություն հասցնել:

5

Նունուֆարը վերջին շնչում է:

Էլ ո՛չ ծաղրածուի կատակները, ո՛չ վեզիրի կնոջ հոգատարությունը, ո՛չ հոր աղաչանքն ու հառաչանքը չեն ազդում նրա վրա:

Լեզու չունի, որ խոսի, ուժ չունի, որ ձեռքը շարժի:

Ակնապիշ նայում է դեպի վեր, կարծես Երկնքից լինի սպասելիս իր փրկությունը կամ ուզելիս լինի շուտով թռչիլ դեպի Երկինք:

Թագավորը և բոլոր պալատականները, ձեռքները խաչ արած, վիզները ծռած, նայում էին Նունուֆարի երեսին և ախ ու վախ քաշելով՝ խոստովանում իրանց անզորությունը Ամենակարողի կամքի առջև:

Այս աղեկտուր րոպեին մեկ էլ լսվեց, որ Արեգը եկել է:

Նունուֆարի աղախինը ամենից շուտ վազեց Արեգի մոտ և շտապեցրեց նրան՝ ասելով.

- Շո՛ւտ արա, եկ տե՛ս, վերջին շնչում է, աչքը քեզ է մնում…

- Ահա գալիս եմ,- պատասխանեց Արեգը,- հիմա կգամ և կտեսնեմ քո Նունուֆարին…

Քար կտրած հանդիսականների միջով լուռ ու մունջ անցավ Արեգը, մոտեցավ

Նունուֆարի մահճին, հանեց անմահական ջրի շիշը, մի կաթիլ կաթեցրեց բամբակի վրա և քսեց Նունուֆարի մեռելատիպ շրթունքներին:

Նունուֆարի աչքերը պարզվեցին:

Արեգն այդ նկատեց և մի քանի կաթիլ կաթեցրեց ուղղակի բերանի մեջ:

Նունուֆարը երկու ձեռքով ծածկեց երեսը…

Նա տեսավ Արեգին և… ճանաչեց:

Նա մի նոր կյանք զգաց, կյանք՝ աշխույժով լի, երևակայությամբ ճոխացած…

Ձեռքերով ծածկեց երեսը, որ երևակայությունն ամփոփե: Ամփոփե երևակայությունը, որ այդ րոպեի երկնային զվարճությունն ու զմայլմունքը լիուլի վայելե:

- Արեգը եկել է,- ասում է նա ինքն իրեն՝ երեսը ծածկած երկու ձեռքով, իբրև երկու վահանով, որ ուրիշ տպավորությունների տեղի չտան.- Արեգը եկել է,- կրկնում է Նունուֆարը,- և ես առողջ եմ, բոլորովին առողջ, շատ առողջ: Ես զգում եմ, զգում եմ, որ շատ առողջ եմ, և… Արեգն էլ եկել է… Ես տեսա. նա ինձ մոտ կանգնած է այս րոպեին: Ես զգում եմ նրա ներկայության անմահական հոտը: Անմահական էր նրա տված դեղը: Հենց ինքն էլ մի անմահ Ոգի է: Ինչպե՜ս մեծացել է, ինչպե՜ս առույգացել, ի՜նչ նորածիլ բեղեր ունի, ի՜նչ գանգուր մորուք… Բանամ երեսս, մեկ էլ նայեմ…

Նունուֆարը բաց արեց երեսը և նայեց Արեգի երեսին այնպիսի հայացքով, որ միայն մոր հայացքն է լինում իր երեխին, և կրկին փակեց երեսը:

Այդ հայացքը, որի մեջ ամփոփված էր կենդանության հրափայլ ոգին, ամենքը տեսան, և ամենքն էլ, կարծես խոսքը մեկ արած, միաձայն քրքիջ բարձրացրին՝ քա՛հ-քա՛հ ծիծաղելով: Այդ ծիծաղից անմասն չմնաց և ինքը՝ Նունուֆարը: Նա էլ ծիծաղեց. կարծես ուրիշների տեղիք տալուն էր սպասում, որ մի կուշտ ծիծաղի: Այս էլ որ տեսան մի վայրկյան առաջ սգավոր հանդիսականները, բոլորովին միամտվեցին. էլ ուշադրություն չդարձրին Նունուֆարի վրա և սկսեցին փոխ առ փոխ գգվել ու համբուրել Արեգին: Թագավորը իր գիրկն առավ Արեգին և սկսեց երեխայի նման հեկեկալ: Թագավորի ուրախության զգացումն անսահման էր: Նա մի վայրկյանում երկու որդի էր գտել, մինը՝ կորած տեղից, մյուսը՝ մեռած տեղից: Ամենքի աչքերից ուրախության և զմայլմունքի արտասուք հոսեց:

Հանդիսականների այս տեսակ իրարանցումից օգուտ քաղելով՝ Նունուֆարը

ծտի պես վեր թռավ տեղից, փախավ, մտավ մի այլ սենյակ, այնտեղ շուտով հագնվեց, զուգվեց թագուհուն վայել զարդարանքներով և դուրս եկավ հանդիսականների մեջ այնպես ուրախ ու զվարթ և այնպես առողջ, որ հիացան ամենքը, բայց մանավանդ Արեգը, որի համար մի բոլորովին նոր արև ծագեց:

Եթե Արեգը մի վայրկյանում վերակենդանացրեց Նունուֆարին, հիմա էլ Նունուֆարը իր գեղեցկության ազդեցությամբ Արեգի այնպիսի երակները շարժեց, որոնց միջով կարծես մինչև նույն րոպեն դեռ արյուն չէր խաղացած: Արեգը մի նոր կյանք զգաց իր մեջ, մի նոր զգացմունք՝ անսահման հաճոյական, բայց ինքն իրեն հաշիվ տալ չկարողանալով և միևնույն ժամանակ այդ իրեն համար տարօրինակ զգացմունքը զսպել ուզենալով՝ սկսեց խոսել խելքը թռցրածի պես.

- Հիմա՛ եմ զգում, որ ես էլ ես չեմ...
Բայց թե ես ո՞վ եմ, այդ էլ չգիտեմ.
Ինձ հափշտակեց Աղջիկ Աղավնին,
Եվ տեղս դրավ այժմյան Արեգին.

Անիրավ աղջիկն իմ ուշքս տարավ,
Արեգնազանիս լճի մեջ առավ,
Իր քաղցր երգով ինձ քնացրեց,
Եվ իմ տեղս նա ուրիշին դրեց...

Հանդիսականները բերանբաց նայում էին և ոչ մի բան չէին հասկանում Արեգի ասածներից:

- Ափսո՜ս տղա, երևի խելքը կորցրեց,- ասում էին շատերը:

Վերջը Նունուֆարը մոտեցավ Արեգին և խղճալի ասաց.

- Արե՛գ, իմ հոգյա՛կ, ի՞նչ է այդ, ի՞նչ կա,
Գուցե իմ տեսքով քեզ դուր չի եկա.
Դու հանգի՛սար եղիր. ես կերթա՛մ, կերթա՛մ,
Որ ինձ չտեսնես էլ ո՛չ մի անգամ...
Ես սիրում եմ քեզ, գիտե Երկինքը.
Բայց այդ չի ուզում գուցե Նա Ինքը,
Որ թույլ չի տալիս քեզ՝ ինձ ճանաչել
Եվ, ինչպես որ կամ, ինձ այնպես տեսնել.

Երթամ, ուրեմն, իմ սև օրս լամ,
Քանի որ էլ քեզ պիտի չերևամ:
- Ո՞ւր, ո՞ւր, սպասի՛ր, ես քեզ չե՛մ թողնիլ.
Առանց քեզ մի օր էլ ես չե՛մ ապրիլ.
Թող երկինք, գետինք իրար խառնվին,
Դու կպատկանիս միայն Արեգին.
Թող ամբողջ աշխարհք տակնուվրա ըլի,
Էլ քեզ ինձանից ոչ ոք չի՛ խլի.
Արարած աշխարհ ես պտտվեցա,
Գեղեցիկ, սիրուն շատերին տեսա,
Բայց քեզ պես չքնաղ, անհատ, աննման,
Քե՛զ է ստեղծել Երկինքը միայն.
Դու ի՛մն ես, ի՛մն ես, սիրո՛ւն Նունուֆար,
Իմ բոլոր կյանքս կտամ քեզ համար.
Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,
Հրամայի՛ր ինձ, իսկույն կստանաս:
Իմ ասածները դու չհասկացար,
Էնդուր ես կարծում, թե ինձ դուր չեկար.
Ես այն չե՛մ, այն չե՛մ, ում որ տեսել ես,
Նա գնա՛ց, կորա՛վ երևույթի պես.
Ես է՛լ եմ Արեգ, բայց ո՛չ առաջին,
Նրան գողացավ Աղջիկ Աղավնին...

- Եթե այդպես է, ինձնից հեռացի՛ր,
Դու ինձ կյանք տվիր, վարձդ ստացի՛ր:

- Ես չեմ կյանք տվել, ի՛նչ վարձ կամ ի՛նչ գին.
Դու ի՛նքդ ես իմ կյանքը, իմ սիրտը, իմ հոգին...

- Էլ ես կյանք չունիմ և պիտի մեռնիմ,
Երբ չկա Արեգ, էլ ինչո՞ւ ապրիմ...

- Իզուր մի՛ մեռնիլ, ես է՛լ եմ Արեգ,
Մի՞թե ես չունիմ նորա չափ արժեք…
- Բայց դու ուրիշ ես, ի՛նքդ ես ասում…

- Այդ ես ինքս էլ լավ չեմ հասկանում…

- Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, ես վերջ կտամ ձեր վեճին,- ասաց թագավորը:- Արե՛գ, ասա՛ ինձ, հոգի՛ս, դու ո՞ւմ որդին ես:

- Արման իշխանի որդին էի մի ժամանակ, բայց հիմա չգիտեմ՝ էլի նրա՞ որդին եմ, թե՞ մի ուրիշի:

- Քո այդ պատասխանն է ահա, որ մենք չենք հասկանում, բայց քեզ լավ ենք ճանաչում: Դու մեր Արեգն ես, միևնույն գեղեցիկ Արեգը, միայն մորուքդ է ավելացել ու բեղերդ…

- Սպասի՛ր, սպասի՛ր, խնամի՛ թագավոր,- մեջ ընկավ ծաղրածուն:- Աչքդ լո՛ւյս, փեսադ եկել է, բայց ուրախությունից ինքն իրան կորցրել է, հիմա ման է գալիս, չի գտնում: Արե՛գ եղբայր, ե՛կ, ես ու դու մի պայման անենք. ես դառնամ «դու», իսկ դու դառ «ես». այնուհետև Նունուֆարը կդառնա «իմ», իսկ հիմարը՝ «քեզ». համաձա՛յն ես,- ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՜խ, ես հիմար եմ անչափ,
Բայց ո՛չ այս փղայի չափ,
Ես որ մի աղջիկ գտնեմ,
Էլ չեմ ասիլ. «Ես ես չեմ…».
Յարալլալի, շարալլալի,
Հայդե՛, հիմա՛ր, պա՛ր արի…

Մինչդեռ ծաղրածուն այսպես երգով ու պարով զվարճացնում էր հանդիսականներին, ներս մտավ Արմանը: Արեգն իր հորը տեսնելուն պես վազեց, գիրկն ընկավ և մի քանի ուրախության բացականչությունից հետո փսփսաց ականջին.

- Գիտե՞ս, հայրի՛կ, ես հիմա տղա՛ եմ, տղա՛, իսկ և իսկ տղա, ճշմարիտ տղա. կարո՞ղ ես երևակայել…

- Իհա՛րկե, տղա ես, հոգի՛ս, հապա ի՞նչ պետք է լինեիր…

- Բայց չէ՞ որ, հայրիկ, բայց չէ՞ որ... ախը՛ր...

- Դու առաջ էլ էիր տղա, հոգի՛ս, բայց այդ չգիտեիր դու, նոր ես սկսել ճանաչել քեզ. առաջ անմեղ էիր ինչպես հրեղեն, հիմա մարդ ես դարձել հողեղեն, բայց այդ վնաս չունի, հոգի՛ս...

- Օ՜... եթե այդպես է, ուրեմն ես ե՛ս եմ եղել. վազեմ, Նունուֆարին ասեմ...

Արմանը մոտեցավ թագավորին և սկսեց շշնջալ նրա ականջին բանի էությունը, իսկ Արեգը վազեց Նունուֆարի մոտ:

Երբ որ Արեգը նորից մոտեցավ Նունուֆարին ավելի ուրախ ու զվարթ դեմքով, Նունուֆարը բռնեց Արեգի ձեռքից մի այնպիսի քնքուշ ժպիտով, որ Արեգը քիչ մնաց նորից թռցներ խելքը:

- Դու մեր Արեգն ես, այնպես չէ՞,- ասաց Նունուֆարը:

- Իհարկե, հոգի՛ս, հապա ո՞վ պետք է լինեմ,- պատասխանեց Արեգը:

- Ուրեմն, մենք է՛լ չենք բաժանվիլ միմյանցից: Եթե գիտենաս՝ ինչքա՛ն մաշվել եմ քո կարոտով... Հիմա եկել ես և հանկարծ ասում ես՝ «Ես ես չեմ». հապա ո՞վ ես, որ դու չես:

- Ո՛չ, ո՛չ, հիմա ես ե՛ս եմ. հիմարն ինձանից խելոք է... Արի՛ չոքենք թագավորի առջև, և նա օրհնե մեզ... Բայց, սպասի՛ր, հայրիկիս չհարցրի, թե ուր են իմ քույրերը:

- Նրանք այստեղ են: Քո գնալուց հետո ես ձերոնց բերել տվի, որ քո կարոտը նրանցից առնեմ: Ես արդեն ուղարկեցի իմաց տալու, հիմա կգան ուր որ է...

- Ինչքա՛ն բախտավոր եմ ես, ուրեմն, որ այդքան բարի ես եղել դու... Ուրեմն, դեռ չշտապենք. գնանք, մեր հագուստը փոխենք. հիմա՛ միտս ընկավ: Անդաս թագավորից ես քեզ համար էլ, ինձ համար էլ հարսանեկան հագուստ եմ բերել: Նա ընծայեց այդ հագուստները և խնդրեց, որ անպատճառ այդ ունենանք հագներիս մեր հարսանիքին, որին, իր ասելով, ինքը հոգով ներկա կլինի: Ես չէի ընդունում, որովհետև այս րոպեի քաղցրությունն այն ժամանակ երևակայել չէի կարող: Շատ բաներ եմ տեսել, հետո կպատմեմ քեզ: Չեմ տեսել միայն քեզ պես մի չքնաղ էակ... Ինչքա՛ն գեղեցիկ ես դու, Նունի՛կ...

Այսպես խոսելով, ձեռք ձեռքի տված՝ դուրս եկան Արեգն ու Նունուֆարը, բայց երկար սպասել չտվին:

Մի քանի րոպեից հետո տեսարանը մի կախարդական ասեմ, թե երկնային կերպարանք ստացավ:

Պալատի ընդարձակ դահլիճը լցվեցին թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք՝ շքեղ հագուստներով զարդարված: Այստեղ էին և Արեգի քույրերը:

Երբ որ Արեգն ու Նունուֆարը ներս մտան Անդասի ընծայած հագուստով զարդարված, անթիվ անգին քարերի ճառագայթները, ծիրանի ծովից ծագող արեգակի պես, գույնզգույն լույսով լուսավորեցին ամբողջ դահլիճը: Չոքեցին թագավորի առջև, որ օրհնե իրենց:

Թագավորը մի քանի րոպե չկարաց խոսել, հազիվ էր կարողանում բռնել ուրախության արտասուքը: Վերջապես սկսեց օրհնել մեր նորապսակներին՝ ասելով.

Ո՜վ Երկինք,
Ես մի հողեղեն,
Մի թույլ արարած,
Որ չարն ու բարին
Դեռ լավ չգիտե,
Իմ սրտի՛ն նայիր,
Եվ ո՛չ իմ լեզվին.
Եվ քո՛ իսկ ձեռքով,
Ինչ որ բարի է,
Դու այն տո՛ւր սրանց:

Ի՞նչ ունիս բարի,
Քո ծոցում պահած,
Որ մինչև այսօր
Ոչ մի հողեղեն
Դեռ չի սպացած,
Դու այն տո՛ւր սրանց:

Դու մինչ այսօր էլ
Շատ բան ես փվել.
Արև վառվռուն,
Աստղեր շողշողուն,
Զեփյուռ անշշունջ,

Օդ քաղցրաշունչ,
Անձրև հորդառատ,
Ցող մարգարտահատ.
Աղբյուրք զովարար,
Վտակներ վարար,
Գույն-գույն ծաղիկներ,
Ծառեր մրգաբեր,
Անտառներ մարմանդ,
Դաշտեր արգավանդ,
Լեռներ հովասուն,
Գետեր գալարուն,
Լճակներ վճիտ,
Սար, ձոր և հովիտ…
Այս ամեն բարիք,
Ո՛վ պայծառ Երկինք,
Թո՛ւյլ տուր վայելեն,
Քեզ փառաբանեն…

Թագավորի օրհնությունն ավարտած-չավարտած՝ մի նոր լույսով լուսավորվեց դահլիճը: Մի ծիածան կապվեց, ծիածան անտես, աննման, հրաշալի՜ այնքան, որ ամպերում կապվող աղեղը նրա մոտ մի մռայլ ամպ կարելի էր համարել… Ինչ լեզու կարող է պատմել, ինչ գրիչ կարող է գրել, կամ ինչ վրձին կարող է նկարել…

Ամենքն էլ նրան էին նայում և տեսնում էին, թե ինչպե՛ս էին կազմվում նրա գույները հետզհետե. կարծես աներևույթ ոգիք, արագ-արագ վազելով, երկնային մատներով մի նոր ծիածան լինեին հինելիս, և երկնքում լինին կապելիս Արեգի ու Նունուֆարի հարսանեկան Կանաչ-Կարմիրը: Հիրավի՜, այդ Կանաչ-Կարմիրը, թվում էր, թե դահլիճի առաստաղից շատ ու շատ բարձր է և շատ հեռու:

Եվ ահա՛, երբ ծիածանն ամբողջապես պատրաստ էր, նրա վրայով, իբրև մի լուսեղեն սանդուղքով, ցած իջան մի խումբ երկնային թագուհիք՝ աստղերի ճառագայթներից և ձյունափայլ ամպերից գործած հագուստով մի-մի արեգակ… Բայց ինչ արեգակ… եթե ցերեկ լիներ, և արեգակը նրանց տեսներ, ամպեղեն մի քող կքաշեր երեսին, որ տեղի տար նրանց լույսին…

Բոլոր երկնային օրիորդները, որոնք թվով մինչև ինը հոգի էին, երկու-երկու պսակաձև փնջեր ունեին ձեռներին՝ ո՛րը ցողից քաղած, ո՛րը ծաղիկների գույնից ու հոտից փնջած, ո՛րը վճիտ աղբյուրների բյուրեղացած գոհարներից հավաքած, ո՛րը քաղցրաշունչ զեփյուռից ու զովարար հովերից հյուսած, ո՛րն արևի շամանդաղի մեջ եղած գույնզգույն հյուլեներից կազմած… մի խոսքով՝ լուսեղեն մատներով բնության բոլոր զարդերի ոգին էին քաղել ու փնջել: Այդ փնջերի անմահական բուրմունքով լցվեց ամբողջ դահլիճը:

Ամենից առաջ մոտեցան Աղբյուրիկը, Ցողիկն ու Ծաղիկը և, իրանց պսակները տալով Արեգին ու Նունուֆարին, ասացին.

ԱՂԲՅՈՒՐԻԿ

Ես կարկաչյունն եմ Աղբյուրիկ,
Եկել եմ ձեզ աչքալուսիկ,
Բերել եմ ձեզ բյուրեղահյուս
Ականակիտ, վճիտ փնջիկ:

ՑՈՂԻԿ

Ես գոհարիկն եմ բույսերի,
Ես մարգրիտն եմ հովիտների
Ահա՛ մի փունջ՝ ցողից քաղած
Հազարավոր կանաչների:

ԾԱՂԻԿ

Ես Ծաղիկն եմ մշտադալար,
Ես անթառամն եմ բեղմնարար,
Բոլոր ծաղկանց գույնն ու հոտը
Ահա՛ բերել եմ ձեզ համար…

Այսպես մոտեցան և մյուսները և, մի-մի բան ասելով, իրանց պսակները նվիրեցին Արեգին ու Նունուֆարին…

Այս տեսարանը մի տխրություն և թմրություն բերեց հանդիսականների

վրա: Շատերը բոլորովին վերացան ապշությունից: Ամենից շատ տխրեցան աղջկերքը: Նրանց գեղեցկությունն աղոտացավ, թխացավ ու մգացավ հրեղենների գեղեցկության մոտ: Երիտասարդները դարձան մի տեսակ ապուշ վայրենիք, նրանց վստահությունը բոլորովին անհետացավ…

Միայն Արեգն էր ուրախ, միայն նա էր ազատ այդ ընդհանուր ապշությունից: Այդ հոգեկան թմրությունից հանդիսականներին սթափեցնելու համար Արեգը դարձավ լուսեղեն հյուրերին և ասաց.

- Ո՛վ երկնային թագուհիք, դուք ձեր շնորհաբեր այցելությունով ինձ չափազանց ուրախացրիք: Բայց, նայեցե՛ք, այս ի՞նչ ապշություն է, այս ի՞նչ տխրություն, որի մեջ ընկղմվել են ամենքը: Մի՛ զարմացեք: Այսպե՛ս ենք մենք՝ տկար հողեղեններս. ի՞նչ որ չափազանց բարի է, չափազանց գեղեցիկ, նույնը վայելելու կարողությունը չունենք մենք՝ մահկանացուներս: Ճշմարի՞տ բարվո և գեղեցկի ճաշակից զուրկ արարածներ ենք մենք: Ներշնչեցե՛ք մեր սրտերի մեջ վսեմ զգացմունք և բարձրագույն կարողություն, որ ձեր երկնային շնորհաբերությունը լիապես վայելել կարողանանք: Խնդրում եմ՝ ուրախանաք, խնդաք և զվարճանաք իմ հարսանյաց հանդեսին և ուրախացնեք ամենքին երկնային ուրախությամբ…

Բանից երևաց, որ մեր լուսեղեն օրիորդները, թեև մարմնացած, բայց չափազանց համեստ, չափազանց ամոթխած և երկյուղած են եղել. պետք է եղել, որ նրանց ստիպեն: Արեգի խոսքերից խրախուսվելով՝ առաջ անցավ Ծաղիկը և, իբրև կարգադրիչ, մի պար սարքեց: Ծիածանի կամարը՝ իբրև մի երկնային բյուրաղի քնար, թրթռացրեց իր հազարերանգ թելերը և այնպիսի եղանակներ հնչեցրեց, որ թե՛ հողեղենների և թե՛ նույնիսկ հրեղենների մեջ ձգեց հրաբորբոք մի աշխույժ: Ամեն ոք սկսեց թև առնել թռչել չափազանց ուրախությունից: Ծերերն անգամ թռչկոտում էին ու ջահելների դանդաղկոտության վրա ծիծաղում: Հետզհետե այնքան տաքացան, որ է՛լ զվարճություն չմնաց, որ չանեն: Ցողիկն ու Աղբյուրիկը այնքան զվարճացրին, որ էլ ոչ ոքի մեջ ուժ չմնաց շատ ծիծաղելուց: Մե՛րթ Արեգի մորուքից էին բռնում, մե՛րթ Նունուֆարի թշերը կսմթում և զանազան հաճոյական բաներ փսփսում նրանց ականջին…

Արեգը Ցողիկի հետ պարելիս մի խոր հայացք ձգեց նրա երեսին և փսփսաց ականջին.

- Ո՛վ համեստափայլ օրիորդ, ես կարծեմ ճանաչում եմ քեզ… Այո՛, ճանաչս

գալիս ես, բայց չեմ վստահանում ասել. վախենում եմ, թե միգուցե սխալված լինիմ:

- Սխալված չես, Արեգ,- պատասխանեց Ցողիկը,- ես նա ինքն եմ:

- Աղավնի աղջիկը:

- Այո՛: Սրանք էլ բոլորը իմ քույրերն են...

- Օ՜... դու իմ աստվածուհի՛ն ես... դու ինձ նորից ստեղծեցիր...

- Ո՛չ, Արեգ: Ես գիտեի միայն, որ դու ոչինչ չգիտես քո մասին: Այդ իմ մոր՝ Բարենանի կամքով էր եղած: Նա ուրիշ հնար չուներ այն չար պառավին վերացնելու աշխարհից: Պետք էր քեզ պես մի անմեղ և արդար անձ, որ մինչև անգամ չիմանար իր ինչ լինելը և ավելի աղջիկ, քան տղա համարվեր: Դու երբ որ ինձ մոտ տեսար քո կերպարանքը, տեսար, որ տղա ես, այսուամենայնիվ, դա քեզ համար մի խաղ էր, որ ես խաղացի, ինչպես որ դու, իմ թևերը վերցնելով, ուզեցիր մի խաղ խաղալ: Միայն այս երեկոյին զգացիր, որ դու տղամարդ ես: Դու մեղադրում էիր ինձ, մենք թաքուն նայում էինք քեզ վրա և ծիծաղում...

Ցողիկի այս ակնարկից ամոթի զգացումն առաջին անգամ զգաց Արեգը, բայց այնքան սաստիկ էր, որ նա կարմրեց վարդի պես և ուզեց խոսակցության առարկան ուրիշ բանի վրա դարձնել. հանկարծ մյուս կողմից մի այնպիսի ծիծաղ բարձրացավ, որ ամենքն էլ այն կողմը դարձրին իրենց ուշադրությունը:

Զանազանը և Զարմանազանը պարապում էին՝ մեկը վեզիրի տղայի հետ, մյուսը՝ սպարապետի: Ծաղիկը լսել էր նրանց փսփսոցը, նկատել էր, որ նրանք վաղուց աչքադրել են միմյանց և այժմ էլ պսակվելու ցանկություն ունեն, բայց ամաչում են ասել:

- Նոր սեր, նոր ուրախությո՛ւն,- գոչեց Ծաղիկը մի բարձրաձայն ծիծաղով և նորահարսներին քարշ տալով՝ տարավ թագավորի մոտ և ասաց.

- Մի պսակով ի՞նչ պետք է լինի, երեքը միասին կատարեցե՛ք:

Թագավորն ու Արմանը նրանց էլ օրհնեցին, և սկսվեց պսակների հանդեսը: Ցողիկը դարձավ իբր պսակադիր Նունուֆարի, Ծաղիկը՝ Զանազանի, իսկ Աղբյուրիկը՝ Զարմանազանի: Պսակի օրհնությունը կատարեց թագավորը Ծիածանի կամարի տակ, որ այդ փառավոր հանդեսին ավելի ևս շքեղություն էր տալիս: Թագավորն իր թագն էլ դրեց Արեգի գլխին, որով պսակեց նրան և՛ թագավոր միանգամայն:

Դրանից հետո հրեղեն օրիորդները շնորհավորեցին նորապսակներին և

պատրաստվեցին երթալու: Հազար տեսակ քաղցրեղեններ և մեղրաջրեր մոտ բերին, բայց հրեղենք նրանց համը չառան: Նրանք ուրիշ խմելիքներ ունեին իրենց հետ բերած, նրանից խմեցին և խմեցրին նաև նորապսակներին, որոնք ակամա խմեցին, առանց նրա համն զգալու, բացի Արեգից, որին էր միայն տրված նրա երկնային ճաշակն առնելու շնորհքը: Վերջը մի շրջան կազմեցին երկրայինք, և մինչդեռ հրեղենք վերանում էին ծիածանի սանդուղքով՝ ասելով՝ մնացեք բարյա՛վ, բարյա՛վ... հողեղենք էլ նրանց բարի ճանապարհ էին մաղթում՝ երգելով.

Գնացե՛ք բարյավ, սիրո՛ւն աղջիկներ,
Դուք մեր Դաշտերի Անմահ Ոգիներ...
Այս ի՜նչ շնորհք էր, ինչքա՛ն մեծ բարիք,
Որ դուք մարմնացած մեզ երևացիք...
Ա՜խ, երանի՜ թե միշտ մեզ մոտ մնաք,
Որ ձեր տեսության կարոտը չզգանք...
Գնացեք բարյա՛վ, բարյա՛վ, բարյա՛վ...

Հրեղեն աղջկերքը վերացան թե չէ, մեջտեղ եկավ ծաղրածուն, և սկսվեց մի նոր զվարճություն:

- Խնամի՛ թագավոր, շե՛ն կենա քո հոր օջախը... կերանք, խմեցինք, լիացանք,- ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՜խ, թագավոր, թագավոր,
Ինչո՞վ ասեմ շնորհավոր...
Ո՛չ հաց ունիս, ո՛չ գինի,
Այսպես հարսնիք կլինի՞...
Յարալլալի, շարալլալի,
Այսպես հարսնիք կլինի՜...

- Իրա՛վ, մի՞թե հաց չպիտի ուտենք,- ասաց թագավորը:- Մենք ամենքս էլ ամեն բան մոռացել ենք, որովհետև խելքներս կորցրել ենք, բացի հիմարից, որ խելք չի ունեցել կորցնելու...

- Դու սխալվում ես, թագավո՛ր,- պատասխանեց հիմարը,- ես տեսա, որ դուք ամենքդ էլ իմ հացը կտրել եք, գնացի, մի ճոխ սեղան պատրաստել տվի, որ քաղցած չմնամ:

Այս ասելով՝ ծաղրածուն վազեց, բաց արավ սեղանատան դռները, որտեղ, հիրավի՛, ճոխ ընթրիք կար պատրաստված: Հյուրերն սկսեցին թագավորի հետևից զույգ-զույգ մտնել սեղանատուն: Ծաղրածուն տեսնելով, որ ինքը մենակ պիտի մնա, վազեց մեզ ծանոթ վեզիրի կնոջ մոտ և, գլուխը վեր բերելով, երգեց.

Ով խելք ունի, սեր չունի,
Ով սեր ունի, տեր չունի.
Խեղճն ամենից հիմարն է,
Որ ոչ մի ընկեր չունի:
Արի՛, տիկի՛ն, ես ու դու
Շիտակ խոսք տանք մեկմեկու,
Թե «դու իմն ես, ես՝ քոնը».
Համաձա՞յն ես, ձեռքդ տու…

Ասաց ծաղրածուն և, տիկնոջ ձեռքից բռնելով, մյուսների հետ մտավ սեղանատուն…

Մյուս առավոտյան սկսվեց հարսանիքի տոնախմբությունը քաղաքացոց ու գյուղացոց համար և տևեց մինչև քառասուն օր և քառասուն գիշեր: Ամեն մեկ օրը մի րոպեի պես էր անցնում. այնքա՜ն զվարճալի էին: Ի՜նչ խաղեր, ի՜նչ պարեր, ի՜նչ ծաղրածություններ, մրցություններ և հազար ու մի տեսակ օյիններ…

Կերուխումին բնավ հաշիվ չկար: Տասը հազար միայն եզ ու կով մորթեցին, քսան հազար ոչխար, թռ՛ղ վայրի կենդանիները՝ եղջերուները, եղնիկները, վարազ-ները, թռ՛ղ և թռչունները՝ թե՛ տանու և թե՛ վայրենի: Քառասուն հազար սոմար միայն բրինձ գնաց փլավի համար, ինչքա՜ն եղ կերթար նրան, ինչքա՜ն չամիչ… հիսուն հազար կարաս միայն գինի խմվեցավ՝ չհաշված մյուս քաղցրահամ և դառնահյութ խմիչքները…

Քառասուն օրից հետո Արեգը մի թեթև ճանապարհորդություն արավ Նունուֆարի հետ Վանա ծովի վրա: Երբ որ ծովի ամենախոր տեղն էին հասել, Արեգը հանեց չար պառավի կախարդական գավազանները, որոնք անհայտ մետաղից էին, դժոխքի կրակով մխված, և ասաց.

Ո՛վ գավազաններ, գնացե՛ք անդունդ,
Որ էլ չերևաք աշխարհիս վրա.

Իշխանությունը չար ոգիների
Թողեք մեզանից իսպառ վերանա:

Ո՛վ գավազաններ, գնացեք անդունդ,
Որ ոչ մի մարդու էլ չիշացնեք.
Կորեք հավիտյան, որ էլ ոչ ոքի
Ագռավ չշինեք և կամ քարացնեք:

Թող թագավորե բնության կարգը,
Էլ այսուհետև նա չխանգարվի.
Թող միայն Երկինքն իշխե ամեն տեղ,
Ամեն արարած Նորան խոնարհի...

Այս ասելուց հետո գավազանները նետեց ծովի խորքը և չար ոգիների ու նրանց արբանյակների իշխանությունն ու զորությունը վերացրեց աշխարհից:

Ահա այս ժամանակն էր, որ Երկնքից իջավ՝

ԵՐԵՔ ԽՆՁՈՐ

Արեգի ձայնը Երկինքը լսեց
Եվ իսկույն երեք խնձոր վայր գցեց.
Մեկը կանաչ էր այդ խնձորներից,
Կարծես նոր քաղած գարնան ոստերից.
Երկրորդը կարմիր՝ վարդի հանգունակ,
Երրորդն սպիտակ՝ ձյունի նմանակ:
Նունուֆարն ասաց.- Արեգ, ի՞նչ կասես,
Այս խնձորները ինչո՞ւ են պես-պես.
- Չգիտեմ, հոգի՛ս, ճշմարիտն ասած.
Գուցե մեր կյանքն է ճիշտ օրինակված,
Տե՛ս, սա կանաչ է, իբր խակ մանուկ,
Իսկ այս՝ սպիտակ, ինչպես մի ծերուկ.
Ամենից սիրուն կարմիրն է միայն,
Դա՛ է նշանը մեր հասունության:

- Բէր այդ կարմիրը հենց հիմա կտրենք,
Եվ այստեղ ևեթ միասին ուտենք…
Նունուֆարն ուզեց,
Արեգն էլ կտրեց.
Կարմիր խնձորը միասին կերան,
Եվ իրանց սրտի փափագին հասան:
Ձեզ էլ կցանկամ, սիրո՛ւն պատանիք,
Որ մուրազներիդ նրանց պես հասնիք.
Կխնդրեմ միայն, որ ինձ էլ ներեք,
Եթե պատմածս ձանձրալի գտնեք.
Ձեր սիրո համար ես աշխատեցի,
Պատմեցի այնքան, ինչքան կարացի.
Կարծելով, որ դուք սիրով կկարդաք,
Եվ խեղճ աշուղիս ողորմի կտաք…

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար, սուսուփուս գնացինք, որտեղ ահ էր, կուզեկուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մնի մեջ էլ ըսկի ջուր չկար: Մին էլ, ըհը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

- Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թե՝ թվանք չունեմ:

- Հյուդի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

- Ես էլ չունեմ:

- Չատի... Մատի...

- Մենք էլ չունենք:

- Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՛ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի, որ զարկեցի, փռվեց էսպես՝ ամեն թևը հինգ գազ ու կես...

- Հադի՛, դանա՛կ...

Թե՝ դանակ չունեմ:

- Հյուդի, դու...

- Ես էլ չունեմ:

- Չատի՛, Մատի՛...

- Մենք էլ չունենք...

- Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան չունի:

Էս անբերան դանակը քաշեցինք: Հադին մորթեց, չկարաց. Հյուդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս քաշեցի, մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի, բադ մի ասիլ՝ մի գոմեշ ասա: Հադին շալակեց, չկարաց, Հյուդին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մնումն էլ իսկի շենլիկ չկա: Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մնի բերանումն էլ շունչ չկա:

- Տղե՛րք, ասինք, եկեք բադով փլավ անենք:

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը՝ ծակ, մինն էլ իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բադն ու բրինձը, անկրակ եփեցինք: Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՛կ, վրա եկանք, կերա՛նք, կերա՛նք, ո՛չ աչքներս բան տեսավ, ո՛չ բերաններս բան մտավ:

ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Լինում է, չի լինում մի պառավ: Էս պառավն իր էծը կթում է, կաթը ցած դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթը եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթի ամանը, ուտում:

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է, մի քարի վրա կանգնում ու էսպես խնդրում.

- Տատի՛կ, տատի՛կ, պոչս տո՛ւր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Պառավն ասում է.

- Դե գնա իմ կա՛թը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

- Կովի՛կ, կովի՛կ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կովն ասում է.

- Դե գնա ինձ համար խո՛տ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

- Արտի՛կ, արտի՛կ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ինձ համար ջո՛ւր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

- Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ, արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղբյուրն ասում է.

- Դե գնա կո՛ւժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

- Աղջի՛կ, աղջի՛կ, կո՛ւժդ տուր, կուժը տանեմ, աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ, արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ուլո՛ւնք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու մոտ:

- Չարչի՛, չարչի՛, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ, աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ, արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, ո՞րտեղ էիր:

Չարչին ասում է.

- Դե գնա ինձ համար ձո՛ւ բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:



- Հավի՛կ, հավի՛կ, ձո՛ւ տուր, ձուն տանեմ, չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ, աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ, աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ, արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, ո՞րտեղ էիր:

Հավն ասում է.

- Դե գնա ինձ համար կո՛ւտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

- Կալվո՛ր, կալվո՛ր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ, հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ, չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ, աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ, արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ, կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչա՛տ աղվես, ո՞րտեղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է, մի բուռը կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալիս, ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալիս, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալիս, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալիս, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալիս, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալիս, կաթը տանում է տալիս պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կցում է, կցմցում, վազում է, գնում, իր ընկերներին հասնում:

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

1

Լինում է, չի լինում մի խեղճ մարդ, անունը՝ Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում, էնքան էլ վախկոտ, էնքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնկա հետ շեմքն է դուրս գալիս: Որ շեմքն է դուրս գալիս, տեսնում է՝ ճրըքճրըքան լուս-լուսնյակ գիշեր, ասում է.

- Ա՛յ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր է... Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...

Կնիկը թե.

- Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նազարը թե.

- Անզգամ կնիկ, ինչու չես թող անում՝ ես գնամ, քարվան կտրեմ, բերեմ տունը

լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կռվում է, կնիկը տուն է մտնում, դուռը փակում:

- Հողեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա, քարվան կտրի:

Էս Նազարս մնում է դռանը: Վախից լեղապատառ է լինում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Ճարը կտրած՝ գնում է, մի պատի տակ կուչ է գալիս, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լույսը բացվում է: Նազարը խռոված, պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա, տուն տանի, ու միտք է անում: Ամառվա շոգ օր՝ գազազած ճանճեր, ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի. ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունկին վեր գալի, լցվում: Որ շատ նեղացնում են, ձեռքը տանում է, երեսին զարկում: Որ երեսին զարկում է, ճանճերը ջարդվում են, առաջին վեր թափում:

- Վա՛հ, էս ի՞նչ էր,- մնում է զարմացած:

Ուզում է համրի, թե մի զարկով քանիսն սպանեց, չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

- Վա՛հ,- ասում է,- ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

- Տերտե՛ր, օրհնյա ի տեր:

- Աստված օրհնի, որդի՛ս:

- Տերտե՛ր, բա չես ասիլ՝ էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան, իմանան: Տերտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած

թրի կտոր կապում մեջքին, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում:

2

Իրենց գյուղից դուրս է գալիս, մի ճամփա է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում, թե էդ ճամփեն ուր է տանում:

Գնում է, գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է՝ գյուղից հեռացել է: Էստեղ սիրտն ահ է ընկնում: Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մռմռալ, երգել, իրեն-իրեն խոսել, իշի վրա բարկանալ: Քանի հեռանում է, էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է, էնքան ձենը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ մյուս կողմից էշն է սկսում զռալ... Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանաչիցն են ջուրը թափում...

Նազարը ձենն ավելի է գլուխը գցում. իսկ որ մտնում է անտառը, թվում է, թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի հետևից որտեղ որ է՝ գազան է հարձակվելու կամ ավազակ, սարսափած սկսում է գոռգոռալ, ո՞նց գոռգոռալ՝ ականջդ ոչ լսի:

Դու մի ասիլ՝ հենց էս ժամանակ մի գյուղացի, ձին քաշելով, անտառում միամիտ գալիս է: Էս զարհուրելի ձենը ականջն է ընկնում թե չէ, կանգնում է:

- Վա՛յ,- ասում է,- ո՞նց թե, իմն էլ էստեղ էր հատե՞լ, կա-չկա՝ էս ավազակներ են...

Ձին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ու երկու ոտն ուներ, երկուսն էլ փոխ է առնում, փախչում:

Բախտդ սիրեմ, Քա՛ջ Նազար. գոռգոռալով գալիս է, տեսնում՝ մի թամքած ձի, ճամփի մեջտեղը կանգնած, իրեն է սպասում: Իշիցը վեր է գալիս, էս թամքած ձիուն նստում ու շարունակում իր ճամփեն:

3

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է, ընկնում մի գյուղ, ինքը՝ գյուղին անծանոթ, գյուղը՝ իրեն: Ո՞ւր գնա, ո՞ւր չգնա: Մի տանից զուռնի ձեն է լսում, ձին քշում է էս ձենի վրա, գնում է, ընկնում մի հարսանքատուն:

- Բարի օր ձեզ:

Храбрый
Назар
Незнакомый
со страхом
тысяч
объмиф
единым
махом

- Ա՛յ աստծու բարին քեզ, բարով, հազար բարի եկար:

Համեցեք, հա, համեցեք. դե հյուրն աստծունն է. սրան տանում են, իր դրոշակով սուփրի վերի ծերին բազմեցնում: Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը՝ թե՛ ուտելիք, թե՛ խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են՝ իմանան, թե ով է էս տարօրինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում, էսպես հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը մնում է վերի ծերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով հյուրի դրոշակի վրա կարդում է.

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա էլ՝ իր կողքի նստածին, սա էլ՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին. էսպեսով հասնում է մինչև դռան տակը, ու ամբողջ հարսանքատունը դրմբում է, թե բա չես ասիլ, նորեկ հյուրն է ինքը՝

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

- Քաջ Նազարն է, հա՛,- բացականչում է պարծենկոտի մինը,- ինչքա՜ն է փոխվել, միանգամից լավ չճանաչեցի...

Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը:

- Հապա ինչպե՞ս է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծառա չունի,- զարմանքով հարցնում են անծանոթները:

- Էդպես է դրա սովորությունը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

- Հապա ինչպե՞ս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

- Շնորհքն էլ հենց դրա մեջն է, է՛, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար, թե չէ՝ լավ թրով ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտքի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալիս, ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարոտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալիս: Ժողովականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կնշանակեր…

Աշուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է հորինում ու երգում:

Բարով եկար, հազար բարի
Հզոր արծիվ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջդ Նազար
Որ մին զարկես, ջարդես հազար:

Խեղճ տկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջդ Նազար
Որ մին զարկես, ջարդես հազար:

Մատաղ ենք մենք քո դրոշին,
Մեջքիդ թրին, տակիդ ռաշին,
Նրա ոտին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջդ Նազար
Որ մին զարկես, ջարդես հազար:

Ու ցրվելով հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է.

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար:

4

Հարսանքատանից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն: Գնում է, հասնում մի կանաչ դաշտ: Էս կանաչ դաշտում ձին թողնում է՝ արածի, դրոշակը տնկում է, ինքն էլ դրոշակի շվաքումը պառկում, քնում:

Դու մի ասիլ՝ օխտը հսկա եղբայրներ կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մոտիկ սարի գլխին է: Էս հսկաները վերևից մտիկ են տալիս, որ մի մարդ եկել է, իրենց հանդում վեր է եկել: Շատ են զարմանում, թե էս ինչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշվելու եկել է, իրենց հանդում հանգիստ վեր եկել ու ձին էլ բաց թողել: Ամեն մինը մի գուրզ ուներ քառասուն լդրանոց: Էս քառասուն լդրանոց գուրզերը վերցնում են, գալիս: Գալիս են, ի՞նչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տնկած, դրոշակի վրեն գրած.

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի, ջարդի հազար:

Վա՛յ, Քաջ Նազարն է՛... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած: Դու մի ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած: Էսպես թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն առնում է ու զարթնում: Որ զարթնում է, աչքերը բաց է անում, տեսնում գլխավերևը, քառասուն լդրանոց գուրզերը ուսերին, օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում: Մտնում է իր դրոշակի հետևն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքվա տերևը կդողա: Էս հսկաները որ տեսնում են, սա գունատվեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի որտեղ որ է՝ մի զարկով օխտիս էլ կսպանի, առաջին գետին են փռվում ու խնդրում են.

- Անհա՛ղթ հերոս Քաջդ Նազար, որ մին զարկես, ջարդես հազար, մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսությանդ էինք փափագում: Այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը: Մենք՝ քո խոնարհ ծառաներդ, օխտն ախպեր ենք, ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է, մեջը՝ մեր գեղեցիկ քույրը: Աղաչում ենք՝ շնորհ անես, գաս, մեր հացը կտրես...

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալիս, նստում է իր ձին, նրանք էլ, դրոշակն առած, առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը: Տանում են,

ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասել կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է:

5

Էս ժամանակ մի վագր է լույս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրա: Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե, Քաջ Նազարը կսպանի: Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դեմ գնա: Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալիս, վերևը՝ մի աստված, ներքևը՝ մի Քաջ Նազար:

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի, հետ գնա իրենց տուն, իսկ կանգնածները կարծում են, թե վազում է, որ գնա, վագրին սպանի: Նշանածը բռնում է, կանգնեցնում, թե ուր ես վազում էդպես առանց զենքի, զե՛նք առ հետդ, էնպես գնա: Զենք է բերում տալիս իրեն, որ գնա, իր փառքի վրա մի քաջություն էլ ավելացնի: Նազարը զենքն առնում է, դուրս գնում: Գնում է, անտառում մի ծառի բարձրանում, վրեն տապ անում, որ ո՛չ ինքը վագրին պատահի, ո՛չ վագրը՝ իրեն: Ծառի վրա կուչ է գալիս: Հակառակի նման անտեր վագրն էլ գալիս է, հենց էս ծառի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տեսնո՛ւմ, լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրը՛մփ, ծառիցը ընկնում է գազանի վրա: Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մեջքին: Էսպես զարհուրած Նազարը մեջքին կպած՝ էս խրտնած վագրը փախչում է, ո՞նց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են՝ վա՛հ, Քաջ Նազարը, վագրին նստած, քշում է:

- Հա՛յ-հարա՛յ, եկե՛ք, հա եկե՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել, հեծել… տվե՛ք, հա տվե՛ք…

Սրտավորվում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հռհռոցով հարձակվում են, խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են, սպանում:

Նազարը որ ուշքի է գալիս, լեզուն բացվում է.

- Ափսո՛ս,- ասում է,- ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել, նստել… էնքան պետք է քշեի ո՞ր…

Լուրը գնում է, հասնում է ամրոցը: Մարդ, կին, մեծ, պստիկ՝ ժողովուրդը դուրս

է թափում Նազարին ընդունելու: Վրեն երգ են կապում ու երգում:

Էս աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կլինի քեզ հավասար,
Ո՛վ Քաջ Նազար:

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թռար, հասար,
Ո՛վ Քաջ Նազար:

Ահեղ վագրին
Արիր քո ձին,
Հեծար, անցար դու սարեսար,
Ո՛վ Քաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՛վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագավորին ու թագուհուն:

- Լուսնկան նոր սարն ելավ,
Էն ո՞ւմ նման էր:
- Լուսնկան նոր սարն ելավ,
Էն Քաջ Նազարն էր:
- Արեգակ նոր շաղեշաղ,
Էն ո՞ւմ նման էր:

- Արեգակ նոր շաղեշաղ,
Էն իր նազ-յարն էր:
Մեր թագավորն էր կարմիր,
Իրեն արևն էր կարմիր,
Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապեն կարմիր, հա՛յ կարմիր,
Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սոլեր կարմիր, հա՛յ կարմիր,

Թագուհին կարմիր, հայ կարմիր,
Կարմիր թագուհուն բարև,
Կարմիր թագվորին արև:

Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ Նազարին շնորհավոր,
Իր նազ-յարին շնորհավոր,
Ողջ աշխարհին շնորհավոր:

6

Դու մի ասիլ՝ էս աղջկանը ուզած է լինում հարևան երկրի թագավորը: Որ իմանում է՝ իրեն չեն տվել, ուրիշի հետ են ամուսնացրել, զորք է կապում, պատերազմով գալիս է օխտն ախպոր վրա:

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի լուրը հայտնում

են, գլուխ են տալիս, առաջը կանգնում, հրաման են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է, սարսափում է Նազարը. դուրս է պրծնում, որ փախչի, հետ գնա իրենց գյուղը: Մարդիկ կարծում են՝ ուզում էր իսկույն դուրս վազել, հարձակվել թշնամու բանակի վրա: Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թե ախր առանց զենքի ու զրահի մենակ ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձե՞ռք ես վերցրել, ի՞նչ է…

Բերում են, զենք ու զրահ են տալիս, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չթողնեն Նազարին՝ իր քաջությունից տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Եվ լուրը գնում, տարածվում է զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ, առանց զենքի թռչում էր դեպի պատերազմի դաշտը, հազիվ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են…

Պատերազմի դաշտում մի ամեհի նժույգ ձի են բերում, Նազարին նստեցնում վրեն: Ոգևորված զորքն էլ հետը վեր է կենում ահագին աղմուկով. «Կեցցե՛ Քաջն Նազա՛ր… մա՛հ թշնամո՛ւն…»:

Նազարի տակի նժույգը որ տեսնում է՝ վրեն ինչ անպետքի միանն է նստած, խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, ուղիղ դեպի թշնամու բանակը: Զորքերը կարծում են՝ Քաջ Նազարը հարձակվեց, ուռա՛ են կանչում, ու իրենք էլ հետևից հարձակվում ամենայն սաստկությամբ: Նազարը որ տեսնում է՝ չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռը գցում է, ուզում է մի ծառից փաթաթվի: Դու մի ասիլ՝ ծառը փտած է, մի գերանաչափ ճյուղը պոկ է գալիս, մնում ձեռքին: Թշնամու զորքերը, որ առաջուց համբավը լսել էին, ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են, էլ փորներումը սիրտ չի մնում, երես են շուռ տալիս՝ փախի՛, որ փախի՛, թե մարդ ես՝ գլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը, ծառերն արմատահան անելով, գալիս է… Էդ օրը թշնամուց ինչքան կոտորվում է՝ կոտորվում, մնացածները թրերը դնում են Քաջ Նազարի ոտքի տակին, հայտնում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամրոցն է վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգևորությամբ, ուռաներով և կեցցեներով, երգով ու երաժշտությամբ, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամավորություններով ու ճառերով առաջն է դուրս գալիս, էնպես մի փառք ու պատիվ, որ Նազարը մնացել էր ապշած, շշկլված:

Էսպես առքով-փառքով էլ բերում, հայտարարում են իրենց թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ Նազարը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ մի պաշտոն է տալիս: Մին էլ տեսնում է՝ աշխարհքը իր բռան մեջ:

Ասում են՝ մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

- Ինչ քաջություն, ինչ խելք, ինչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունես՝ քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա:

ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է ղրկում: Էս աղջիկը կուժն առնում է, գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է, իրեն-իրեն միտք է անում.

- Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա, էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի, մեռնի...

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղնուտեղը ծառի տակին նստում է, սկսում է սուգ անել.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս,
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին....

Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան…

Մերն սպասում է, սպասում, տեսնում է՝ չեկավ, միջնեկ աղջկանն է ղրկում: Ասում է.

- Գնա՛, մի տե՛ս, քույրդ ընչի՞ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է, ձենն ավելի է բարձրացնում:

- Արի՛, արի՛, անբա՛խտ մորքուր, տե՛ս՝ քո Կիկոսն ինչ եղավ:

- Ի՞նչ Կիկոս:

- Բա չես ասիլ.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս,
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին…
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան…

- Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ,- գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին, ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է՝ չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է.

- Աղջի՛, մի գնա՛, տե՛ս քույրերդ ի՞նչ եղան: Գնացին, հետ չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝ երկու քույրն էլ, աղբրի գլխին նստած, լաց են լինում:

- Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՝ բա չես ասիլ.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,

Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս,
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին…
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան…

- Վա՛յ քու մորքուրին, Կիկո՛ս ջան, վա՛յ,- սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն ձենի տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է՝ աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ, երեք աղջիկն էլ կանչում են.

- Արի՛, արի՛, անբա՛խտ տատի, տե՛ս՝ թոռանդ գլխին ինչ է եկել:

- Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս,
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին…
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան…

- Վա՛յ, քոռանան քու տատի աչքերը, Կիկո՛ս ջան,- մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների հետևից, ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ՝ էս ինչ պատահեց, որ սրանք իրար հետևից գնացին, մնացին աղբրումը:

Վեր է կենում, գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալիս.

- Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես՝ քու Կիկոսի գլուխն ինչ է եկել... վայ քու Կիկոսին...

- Ինչ Կիկոս, ինչ եք ասում,- զարմանում է մարդը:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, այ հեր.

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գդակը պոպոզ,
Անունը Կիկոս,
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վայ, Կիկոս ջան,
Վայ, որդի ջան...

- Վայ, Կիկոս ջան,- ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

- Ա՛յ հիմարներ, ինչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք, լացով ինչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորսոտնանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ՝ մի քթոց ալյուր:

Գալիս են, էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Ամստված բարի տա ձեզ էլ, երկու ախպորն էլ: Լինում են, չեն լինում, երկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝ ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի մոտ ծառա մտնի, ռոճիկ ստանա, ղրկի տուն: Էսպես էլ մեծը վեր է կենում գնում, մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կկվի ձեն ածելը: Էս հարուստը մի չլսված պայման է դնում ծառային: Ասում է՝ մինչև էն ժամանակը թե դու բարկանաս, դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ, ես տամ:

- Ես որ հազար մանեթ չունեմ, որտեղից տամ,- ասում է ծառան:

- Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղեն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ինչ պետք է պատահի: Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով: Ասում է՝ լավ, համաձայնվում է:

Պայմանը կապում են, ու մտնում է ծառայության:

Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային, ղրկում արտը հնձելու:

- Գնա՛,- ասում է,- քանի լույս է, հնձի, որ մութն ընկնի, կգաս: Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգնած գալիս է տուն: Տերը հարցնում է.

- Էդ ո՞ւր եկար:

- Դե արևը մեր մտավ, ես էլ եկա:

- Չէ՛, էդպես չի: Ես քեզ ասել եմ՝ քանի լույս է, պետք է հնձես: Արևը մեր մտավ, բայց տե՛ս, նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ: Սա ինչ պակաս է լույս տալի...

- Էդ ո՞նց կլինի,- զարմանում է ծառան:

- Հը՞, դու արդեն բարկանո՞ւմ ես,- հարցնում է տերը:

- Չէ՛, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ... մի քիչ հանգստանամ... կակազում է վախեցած ծառան ու գնում նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում: Բայց լուսնյակը մեր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալիս: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում:

- Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված ռոճիկն էլ,- սկսում է հայհոյել հուսահատված:

- Հը՞, դու բարկանո՞ւմ ես,- կանգնում է գլխին հարուստը: Թե որ բարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է, որ ծառան կա՛մ հազար մանեթ տուգանք տա, կա՛մ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մեջ: Հազար մանեթ չուներ, թե տար, հոգին ազատ աներ, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալիս հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

- Հը՛, ի՞նչ արիր,- հարցնում է փոքր ախպերը:

Ու մեծ ախպերը նստում է, գլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր:

- Բան չկա,- ասում է փոքրը,- դարդ մի՛ անի. դու տանը կա՛ց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում, հիմի էլ փոքր ախպերն է գնում, ծառա է մտնում է՛լի նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կկվի ձեն ածելը ու պայման է դնում, որ եթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ

տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա, ու էն օրից էլ ծառան ազատ է:

- Չէ՛, էդ քիչ է,- հակառակում է տղեն:- Թե դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանեթ տաս, թե ես բարկանամ՝ ես քեզ երկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

- Լա՛վ,- ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպերն է մտնում ծառայության:

Առավոտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս է գնում, տուն է գալիս, էս ծառան դեռ քնած է:

- Ա՛յ տղա, դե վե՛ր կաց է՛, օրը ճաշ դառավ:

- Հը՞, բարկանո՞ւմ ես,- գլուխը վեր է քաշում ծառան:

- Չէ՛, չեմ բարկանում,- վախեցած պատասխանում է տերը,- միայն ասում եմ՝ պետք է արտը գնանք հնձելու:

- Հա՛, որ էդ ես ասում, ոչինչ, կգնանք, ի՞նչ ես վռազում:

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել: Տերը դուրս է գնում, ներս է գալիս, սա դեռ տրեխներն է հագնում:

- Ա՛յ տղա, դե շո՛ւտ արա, հագի է՛...

- Հը՛, հո չե՞ս բարկանում:

- Չէ՛, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝ ուշանում ենք...

- Հա՛, էդ ուրիշ բան է. թե չէ՝ պայմանը պայման է:

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արտն են գնում, ճաշ է դառնում:

- Էլ ինչ հնձելու ժամանակ է,- ասում է ծառան,- տեսնում ես՝ ամենքն էլ ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո էլ ասում է՝ մշակ մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չէ: Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

- Տո, վեր կաց, է՛, մթնեց, է՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը ղրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ... Էս ինչ կրակի մեջ ընկա,- սկսում է գոռգոռալ հուսահատված տերը:

- Հը՛, չլինի՞ թե բարկանում ես,- գլուխը բարձրացնում է ծառան:

- Չէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում, թե մթնել է, տուն գնալու ժամանակն է:

- Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թե չէ հո մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են՝ հյուր է եկել: Ծառային ղրկում են, թե գնա, ոչխար մորթի:

- Ո՞րը:

- Որը կպատահի:

Ծառան գնում է: Մի քիչ հետո լուր են բերում հարուստին, թե հասի՛, քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց: Էս հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է:

Գլխին տալիս է, գոռում.

- Էս ի՞նչ ես արել, ա՛յ անաստված, քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

- Դու ասիր՝ ո՛ր ոչխարը պատահի, մորթի՛, ես էլ եկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի, ուրիշ ավել-պակաս ի՞նչ եմ արել,- հանգիստ պատասխանում է ծառան,- բայց կարծեմ դու բարկանում ես...

- Չէ՛, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս է, որ էսքան ապրանքս փչացավ...

- Լա՛վ, որ բարկանում չես, է՛լ կծառայեմ:

Հարուստը մտածում է՝ ինչ անի, ոնց անի, որ էս ծառայից ազատվի: Պայման

է կապել մինչև մին էլ գարնան՝ կկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ ոռտեղ են գարունն ու կկուն...

Միտք է անում, միտք, մի հնար է մտածում: Կնոջը տանում է, անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում, որ «կուկու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում, թե արի գնանք անտառը որսի: Հենց անտառն են մտնում թե չէ, կինը ծառի վրայից կանչում է՝ «կուկո՛ւ, կուկո՛ւ»:

- Ըհը՛, աչքդ լույս,- ասում է ծառային տերը,- կկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի է ընկնում տիրոջ խորամանկությունը:

- Չէ՛,- ասում է,- ով է լսել, որ տարվա էս եղանակին՝ ձմեռվա կեսին, կկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում: Ես պետք է էս կկվին սպանեմ, սա ի՞նչ կկու է...

Ասում է ու հրացանը քաշում դեպի ծառը: Տերը գոռալով ընկնում է առաջը.

- Վա՜յ, չզարկես, աստծու սիրուն... սև լինի քու պատահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկա մեջը...

- Հը՛, չլինի՞ թե բարկանում ես...

- Հա՛, ախպե՛ր, հերիք է, արի, ինչ տուգանք տալու եմ, տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայմանն է, ես էլ պետք է տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում էն հին խոսքը, թե մարդ ինչ անի, իրեն կանի:

Էսպես հարուստը խելոքանում է, իսկ փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն:

ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴԸ

Առաջ ժամանակ լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը իր ապարանքի առաջ մի լավ վարդաստան է ունենում՝ մեջը մի անմահական վարդի թուփ: Բայց խեղճ թագավորը ինչ անում է, չի անում, ինչ այգեպան բռնում է, ինչքան զգույշ են լինում, չի լինում: Հենց գալիս է վարդի բացվելու ժամանակը, խարը գալիս է, էդ վարդն ուտում, գնում, չի թողնում, որ բացվի: Էսպես անց է կենում մի տարի, երկու տարի, երեք տարի, էդ թագավորը մնում է կարոտ էդ վարդի հոտին: Օրերից մի օր գալիս է մի այգեպան:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- որ ինձ այգեպան բռնես, քո վարդը էնպես կպահպանեմ, որ խարը չի ուտի: Հենց բացվեց թե չէ,- ասում է,- կքաղեմ, կբերեմ, կտամ քեզ:

- Տղա՛,- ասում է թագավորը,- աշխարհքում էլ այգեպան չի մնացել, եկել է, ի՞նչ է արել, որ դու ի՞նչ անես:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- ես կարող եմ: Չկարողացա՝ արյունս քեզ հալալ է:

- Լա՛վ, դո՛ւ գիտես,- ասում է թագավորը,- կարող ես՝ գնա պահպանի՛ր:

Բերում է, սրան բռնում իրեն այգեպան:

Գարունքը գալիս է թե չէ, էս այգեպանը նետ ու աղեղը վերցնում է, գնում, անմահական վարդի թփի տակ գիշեր-ցերեկ պահակություն անում: Մնում է մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, հենց էն է՝ պիտի վարդը բացվեր, մի ժամի տղի քունը տանում է: Էն կողմից խարը գալիս է, վարդն ուտում, թողնում գնում: Այգեպանը աչքը բաց է անում, տեսնում՝ ո՛չ վարդ կա, ո՛չ բան:

Գալիս է, թագավորին հայտնում.

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- ամբողջ շաբաթ գիշեր-ցերեկ պահակություն արեցի, հենց եկավ բացվելու ժամանակը, սատանայական քունս տարավ: Մեկ էլ աչքս բաց արի, տեսա՝ խարը եկել է, կերել, գնացել: Թագավորն ապրած կենա, էս անգամ բաշխի, գալիք տարի ոնց լինի՝ ես խարի հախից կգամ:

- Բա՛ն չկա,- ասում է թագավորը,- կերել է՝ կերել, նրա՛ն էլ չի մնա:

Էս մի տարին էսպես անց է կենում, գալիս է էն մի տարին: Գարունքը բացվում է թե չէ, էս այգեպանը վեր է կենում, էլի գնում, վարդին հսկում: Հենց գալիս է բացվելու ժամանակը, տեսնում է՝ խարն էլի եկավ, որ ուտի: Ուզում է նետ ու աղեղով տա, էն կողմից մի սոխակ թռչում գալիս է, խարին կտցում, տանում: Վարդը անվնաս է մնում: Այգեպանը ուրախ-ուրախ քաղում է, տանում տալիս թագավորին:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- հրես վարդը քաղեցի, բերի: Էս անգամ էլ խարը եկավ, որ ուտի, էն կողմից մի սոխակ թռավ եկավ, խարին կտցեց, տարավ:

- Բան չկա,- ասում է թագավորը,- էն սոխակին էլ չի մնա:

Էս տարին էլ է էսպես անց կենում: Հաջորդ տարի իր ժամանակին էս այգեպանը էլի գնում է վարդին հսկում, գիշեր-ցերեկ թփի տակ պահակություն անում: Հենց գալիս է բացվելու ժամանակը, տեսնում է՝ էլի մի խար դուրս է գալիս, վրա պրծնում վարդին: Հենց էն է՝ ուզում է ուտի, էն կողմից էլի էն սոխակը վեր է գալիս, որ խարին կտցի, տանի: Որտեղից որ է թփերի տակից մի վիշապ է դուրս գալիս, սոխակին էլ, խարին էլ միանգամից կուլ տալիս: Վարդը նորից իր տեղը մնում է անարատ: Այգեպանը ուրախանում է, աշխարհով մեկ լինում, վարդը քաղում է, տանում տալիս թագավորին:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- էս տարի էլ ամեն տարվա պես էլի

մի խար եկավ, ուզեց՝ վարդն ուտի, էն կողմից էլի էն սոխակը թռավ, վեր եկավ, հենց էն է՝ ուզում էր խարին կտցի, տանի, անմիջապես թփերի տակից մի վիշապ դուրս եկավ, վրա հասավ, երկուսին էլ միանգամից կուլ տվեց: Հրես վարդը անվնաս քաղեցի, բերի:

- Բան չկա,- ասում է թագավորը,- էդ վիշապին էլ չի մնա:

Էս մի տարին էլ է էսպես անց կենում: Հաջորդ տարի այգեպանը էլի վեր է կենում, գնում, որ վարդին հսկի: Գալիս է բացվելու ժամանակը, տեսնում է՝ էլի մի խար դուրս եկավ, վրա հասավ, որ վարդն ուտի: Էն կողմից էլի մի սոխակ

թռչում, վեր է գալիս, հենց էն է՝ ուզում է խարին կտցի, տանի, թփերի տակից էլի էն վիշապը դուրս է պրծնում, վրա հասնում, երկուսին էլ միանգամից կուլ տալիս: Այգեպանը որ տեսնում է, էս անգամ էլ չի համբերում, քաշում է նետ ու աղեղը, տալուն պես ուղիղ վիշապի գլխին զարկում, արնակոլոլ ընկնում է գետնին, սատկում: Էն ժամանակ վարդը քաղում է, տանում տալիս թագավորին:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- էս տարի էլ խարը եկավ, ուզեց վարդը ուտի, սոխակը եկավ, ուզեց խարին ուտի, էլի էն անխիղճ վիշապը թփերի տակից դուրս պրծավ, վրա հասավ, երկուսին էլ կուլ տվեց: Էս որ տեսա, ես էլ քաշեցի նետ ու աղեղս, տվի, վիշապին տեղնուտեղը չորացրի:

- Դո՛ւ էլ լավ ես արել,- ասում է թագավորը,- համա քե՛զ էլ չի մնա:

Այգեպանը էս խոսքի վրա մտքի մեջ է ընկնում, թե էս ինչ բան է, թագավորը ինչո՞ւ պիտի ասի. «Քե՛զ էլ չի մնա»: Միտք է անում, միտք է անում, խելքը բան չի կտրում: Գնար թագավորին հարցներ՝ վախենում էր, չլինի՞ թե բարկանա: Էսպես մնում է, ասում է. «Տեսնեմ՝ սրա վերջն ինչ է լինում»:

Թագավորի վարդաստանի մեջ մարմարից շինած մի ավազան կար, որտեղ թագավորը, իր կինը ժամանակ առ ժամանակ գալիս էին, լողանում: Օրերից մի օր այգեպանը բարձրանում է էդ ավազանի մոտի ծառը, վրան չորուկ-մորուկ կար, ուզում է կտրել: Հանկարծ տեսնում է՝ թագավորի կինը իր նաժիշտներով եկավ, որ ավազանում լողանա, նա էլ վախից ծառից չի իջնում, ասում է. «Մնամ, լողանա պրծնի, գնա՝ հետո»: Թագավորի կինը շորերը հանում է, մտնում ավազանը, լողանում, պրծնում, դուրս գալիս, շորերը հագնում, որ գնա: Պատահմամբ գլուխը բարձրացնում է, տեսնում՝ այգեպանը ծառի վրա է: Էլ ձեն-ծպտուն չի հանում, թողնում գալիս է ապարանքը, թագավորին մեկ առ մեկ պատմում:

- Բա չե՞ս ասի, ըսենց, ըսենց բան. ես գնացել էի ավազան, որ լողանամ: Լողացա պրծա, շորերս հագա, ուզում էի գնալ, հանկարծ վերև մտիկ արի, տեսա՝ մեր այգեպանը ծառի վրա: Դու մի ասի, նախապես եկել է, ելել ծառը, որ տեսնի՝ ոնց եմ լողանում:

Թագավորը էս որ լսում է, կատաղում, ասլան է դառնում: Էն ժամանակ ձեն է տալիս՝ դահի՛ճ, դահի՛ճ, դահի՛ճ:

Դահիճները գալիս են, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Ի՞նչ կհրամայես, թագավորն ապրած կենա,- ասում են:

- Կգնաք,- ասում է,- հենց հիմա այգեպանին կբերեք, իմ առաջ կգլխատեք:

Դահիճները գնում են, այգեպանին բերում թագավորի մոտ: Դե այգեպանը էս որ տեսնում է, անմիջապես գլխի է ընկնում, թե ինչն ինչոց է:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- չի՞ լինի, ինձ թողես՝ երկու խոսք ասեմ, հետո ի՞նչ ուզում ես՝ արա՛:

- Լա՛վ,- ասում է թագավորը,- ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ասում:

- Թագավորը ողջ լինի,- ասում է այգեպանը,- մի՞տդ է, որ ինձ այգեպան բռնեցիր, առաջին տարին եկա քեզ ասացի, թե խարը վարդը կերավ, դու ասացիր՝ բա՛ն չկա, նրան էլ չի մնա: Լա՛վ: Էն մի տարին էլ գնացի վարդին հսկելու, եկա ասացի՝ մի սոխակ էլ եկավ, խարին կերավ, դու էլի ասացիր՝ բա՛ն չկա, դրան էլ չի մնա: Լա՛վ: Երրորդ տարին էլ որ եկա, ասացի. «Էս անգամ էլ թփերի տակից մի վիշապ դուրս պրծավ, սոխակին կուլ տվեց», դու էլի ասացիր՝ բա՛ն չկա, նրան էլ չի մնա: Լա՛վ: Չորրորդ տարին որ եկա, ասացի. «Վիշապին էլ ես տվի, սպանեցի», դու էս անգամ ասացիր՝ բա՛ն չկա, քեզ էլ չի մնա: Հիմի, թագավորն ապրած կենա,-

ասում է,- դրուստ որ ինձ էլ չմնաց. քո խոսքը կատարվեց, որ ուզում ես անմեղ տեղը իմ գլուխը թոցնել տալ: Դե որ էդպես է, թագավորն ապրած կենա, հիմի էլ ես եմ ասում, որ «Քեզ էլ չի մնա»:

Թագավորը որ լսում է այգեպանի խելոք պատասխանը, նրան բաշխում է, էլ չի թողնում, որ գլխատեն:

ԱՆՄՈՐՈՒՍՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ

Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը ունենում է երկու տղա, էլ ոչ մի բան: Օրերից մի օր էդ թագավորը իր տղերքին, իր նազիր-վեզիրին կանչում է, ասում.

- Դուք էլ եք տեսնում, աստված էլ, որ հայ-հայս գնացել է, վայ-վայս է մնացել, վերջս եկել է, պիտի մեռնեմ: Եկեք, քանի ողջ ու կենդանի եմ, իմ ձեռքով կտակս անեմ: Իմ ամբողջ թագավորությունը,- ասում է,- տալիս եմ մեծ տղիս, մի աքլոր ու մի կատու ունեմ, էն էլ տալիս եմ պուճուր տղիս:

Ասում է ու հոգին տալիս: Թագավորին տանում են առոք-փառոք, ոնց որ կարգն է, թաղում են, թողնում գալիս: Էդ մեծ տղին դարձնում են թագավոր, նստեցնում են թախտին, որ հոր երկիրը կառավարի: Անց է կենում էսպես որոշ ժամանակ: Օրերից մի օր պուճուր ախպերը գալիս է մեծ ախպոր մոտ:

- Ա՛յ ախպեր,- ասում է,- հերիք է՝ ինչքան քո հույսին մնացի, մեր հերը ոնց որ կտակ է արել՝ բեր իմ բաժինը տո՛ւր, գնամ իմ բանին:

- Ա՛յ ախպեր,- ասում է մեծ ախպերը,- շատ էլ մեր հերը էդպիսի կտակ է

արել, ի՞նչ անենք, դու արի փեշիդ քարը թափի, էդպիսի բան մի՛ անի, արի ինձ մոտ մնա, մեր հոր երկիրը յոլա տանենք, քանի ողջ ու կենդանի ենք: Իրար հետ գլխներս հանգիստ ապրենք:

- Չէ՛, որ չէ,- ասում է պուճուր ախպերը,- մեր հոր խոսքը ես գետնին չեմ գցի. պիտի գնամ:

Մեծ ախպերը որ տեսնում է՝ էլ ուրիշ ճար չկա, բերում է, պուճուր ախպոր բաժինը տալիս է, մնաս բարով ասում, ճամփու դնում:

Պուճուր ախպերը աքլորն ու կատուն վերցնում է, մի ճամփա բռնում, գնում: Գնում է, գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ, վերջապես՝ մի ամիս, հասնում է մի գյուղ: Էդ գյուղի գլխին սրան մի անմորուս է ռաստ գալիս:

- Բարո՛վ, թագավորի՛ ցեղ,- ասում է անմորուսը,- էդ ո՞ր խաչից է՝ մեր գյուղ ես եկել:

- Աստծու բարին, անմորո՛ւս ախպեր, գնում եմ պանդխտության,- ասում է թագավորի տղեն:

- Բա որ էդպես է, արի գնանք մեր տունը հյուր, մի քիչ հաց-մաց կուտես, շունչ կքաշես, հետո կելնես, կգնաս քո ճամփեն:

Թագավորի տղեն սկզբից չեմուչում արեց, թե՝ չէ՛, չեմ գա, բայց տեսավ՝ անմորուսը շատ է պնդում, դեմ ընկնում, վերջը կակղեց:

- Լա՛վ,- ասում է տղեն,- ոնց ասացիր, էդպես էլ կանեմ:

Էդ ժամանակ անմորուսը կանչում է կնկան.

- Ա՛յ կնիկ,- ասում է,- շո՛ւտ արա, հացի պատրաստություն տես, մենք էլ ենք սոված, մեր հյուրն էլ: Խեղճը շատ ճամփա է եկել, հոգնած կլինի: Հաց ուտենք, որ մի քիչ հանգստանա, մեղք է:

Կինը սուփրեն բերում է գցում, հացից-մացից, մածնից-բանից, ինչ կա-չկա տանը, բերում է, սուփրի վրա շարոտում: Նստում են հացի:

Ուտելու ժամանակ անմորուսի տղեն մածունը դիտավորյալ հա՛ վերցնում է, լղոզում դոշին, հա՛ վերցնում է, լղոզում դոշին: Անմորուսն էս որ չի տեսնում, վեր է կենում տեղից, ա՛ռ հա՝ մի ապտակ տղի երեսին: Որ չի տալիս՝ քիչ է մնում՝ աչքի պեծը թռչի: Տղեն, որ գիտեր՝ ինչն ինչոց է, ապտակի վրա մի զռոց է գցում, մի զռոց է գցում, որ աստված հեռու տանի: Հերը, մերը ինչ անում են, չեն անում՝

տղեն ձենը չի կտրում:

- Ա՛յ որդի,- հարցնում է անմորուսը,- ի՞նչ ես ուզում, ասա՛ տանք, միայն ձենդ կտրես, ականջներս հանգստանան:

- Հավի միս եմ ուզում,- ասում է տղեն լացակումած:

Մերը վեր է կենում, ինչքան հավ ուներ, բոլորը մորթոտում է, էլի տղեն ձենը չի կտրում:

- Ախր ի՞նչ ես ուզում,- նորից հարցնում է հերը,- հավի միս էիր ուզում՝ մեր հավերը լրիվ մորթոտեցինք, հիմի՞ ինչ ես ուզում:

- Էս մեր հյուրի աքլորի միսը մինչև չուտեմ, ձենս չեմ կտրի, ի՞նչ ուզում եք՝ արեք:

Վերջը հյուրի զահլեն որ գնում է, ասում է.

- Ա՛յ ջանը՛մ, էդ երեխեն մեռավ լաց լինելով, մի աքլորի եղածն ի՞նչ է, վե՛ր կացեք, իմ աքլորը մորթեք: Մեղք է, գուցե ձենը կտրի:

Անմորուսն էլ էդ էր ուզում: Անմիջապես տեղից վեր է կենում, հյուրի աքլորը մորթում է, նոր տղեն ձենը կտրում է:

- Ա՛յ կնիկ,- ասում է,- էս լավ եղավ, հազիր ըսենց ազիզ հյուր ունենք: Էդ հավերից մի լավ հարիսա դի՛ր, գիշերհանա մեր հյուրն ուտի, նոր ճամփա ընկնի:

Կինը վեր է կենում, իրենց մորթած հավերը, թագավորի տղի աքլորը մի լավ փետրում, մաքրում, լավ փորը-մորը լվանում, լցնում մեծ պղինձը, թոնիրը վառում, հարիսեն դնում վրեն:

Երբ որ ժամի ձենը անմորուսի ականջն է ընկնում, վեր է կենում, գնում ժամ: Անմորուսը աստծու ամեն օր, ինչքան էլ որ վռազ բան ունենար, առավոտ, իրիկուն պիտի ժամ գնար: Անմորուսը որ վեր կացավ, գնաց, թագավորի տղեն էլ վեր կացավ, հագնվեց, որ գնա իր ճամփեն: Վեր կացավ, տեսավ՝ անմորուսը տանը չէ:

- Ա՛յ քուր,- ասաց անմորուսի կնկան,- դե ինձ ճամփո՛ւ դիր, գնամ իմ բանին, ես չեմ կարող մնալ մինչև մարդուդ գալը:

Անմորուսի կնիկը շատ է դեմ ընկնում, թե.

- Կա՛ց հարիսա ուտենք, հիմի որտեղ որ է՝ պատրաստ կլինի:

Թագավորի տղեն ականջ չի անում, ասում է.

- Պիտի գնամ, որ պիտի գնամ:

- Բա որ էդպես է,- ասում է անմորուսի կնիկը,- գնամ, մի հավ բերեմ, դի՛ր

հացիդ մեջ, ճամփին կուտես:

Գնում է, քափկիրը հարիսի մեջ տալուն պես, սատանի բան, հենց թագավորի տղի աքլորն է դուրս գալիս: Հանում է, մի հացի մեջ կոլոլում, բերում տալիս թագավորի տղին: Թագավորի տղեն անմորուսի կնոջ հետ մնաս բարով է անում, վեր կենում, ճամփա ընկնում:

Սրան թողնենք գնա, մենք լուր առնենք անմորուսից:

Ժամից որ դուրս են գալիս, անմորուսը վեր է կենում, գալիս է տուն: Գալիս է տուն թե չէ, կնոջը հարցնում է.

- Ա՛յ կնիկ, մեր հյուրն ո՞ւր է, չլինի՞ գնացել է:

- Բա ի՞նչ է արել: Ինչ արի, չարի՝ չմնաց, թե՝ վռազ եմ:

- Ճամփի պաշար հո չտվի՞ր:

- Բա ի՞նչ անեի, մեղք չէ՞ր: Էսքան հավի, աքլորի միջից բա մի բան չտայի՞:

Անմորուսը քափկիրը վերցնում է, վազում դեպի հարիսի պղինձը: Դես է քրքրում, դեն է քրքրում, դես է տալիս, դեն է տալիս, շատ է ման գալիս, բայց թագավորի աքլորը չի գտնում: Փոր-փոշման թողնում է, գալիս կնոջ մոտ:

- Վա՜յ, քո տունը չքանդվի, ա՛յ կնիկ,- ասում է,- դու էդ ի՞նչ օյին բերիր իմ գլուխը:

Ասում է ու ուղիղ դռնից դուրս, գլուխն առնում է, կորչում:

Թող անմորուսը գնա, գանք, լուր առնենք թագավորի տղից:

Էս տղեն գնում է, գնում է, շատն ու քիչը աստված գիտի, ճամփին մի սառը, քչքչան աղբյուրի է ռաստ գալիս: «Արի,- ասում է,- էս աղբյուրի մոտ նստեմ, մի քիչ հաց-մաց ուտեմ, հանգստանամ, նոր վեր կենամ, ընկնեմ ճամփա»:

Էդ աղբյուրի մոտ նստում է, բերում է սուփրեն, բաց անում, որ հաց ուտի: Էն հավի մսից ուտում է, ուտում է, ուտում, մինչև ջնազը որ ուտում է, տեսնում է, ըհը՛, ջնազի արանքում մի ժանգոտած մատանի: Վերցնում է, դնում մատը: Դնելուն պես տեսնում է՝ երկու արաբ եկան, դեմը կանգնեցին:

- Հը՛, ի՞նչ ես հրամայում, թագավորի՛ ցեղ,- ասում են արաբները:

Թագավորի տղեն մնում է զարմացած, թե էս ի՞նչ բան է, էս արաբները ո՞րտեղից դուրս եկան, դեմը ցցվեցին: Որոշ ժամանակ մնում է շշված, մոլորված, բայց հանկարծ որ ուշքը վրեն է գալիս, ասում է.

- Ինձ տարե՛ք էսինչ թագավորի երկիրը:

Էդ ժամանակ արաբները տղին վերցնում են, դնում ուսերի վրեն, ուղիղ տանում՝ որտեղ ասել էր, էնտեղ վեր են դնում, թողնում, գնում: Էդ տղեն գնում է, գնում, տեսնում է հրեն մի գյուղ է երևում, մութն էլ գետինը կոխել էր, ասում է. «Գնամ տեսնեմ էն գյուղը ինչ կա, ինչ չկա»:

Ճամփա է ընկնում դեպի էդ գյուղը: Հասնում է էդ գյուղը, մի քուչա բռնում, ուղիղ գնում: Գնում է, գնում, տեսնում է՝ հրեն մի պառավ կին, դարպասի առաջ նստած, թեշին ձեռքին թել է մանում:

- Բարո՛վ, նանի՛,- ասում է թագավորի տղեն:

- Աստծու բարին, ա՛յ որդի,- ասում է պառավը,- էս ուշ ժամին ո՞ւր ես գնում,- հարցնում է:

- Եսիմ, նանի՛, պանդուխտ, անտեր տղա եմ, գնում եմ, էլի: Նանի՛, ինձ քեզ տղա չե՞ս դարձնի,- հարցնում է թագավորի տղեն:

- Ինչի՞ չեմ դարձնի,- ասում է պառավը,- մանավանդ որ տղա չունեմ: Հրես պառավել եմ, մեկը չունեմ, որ ինձ պահի, պահպանի, նեղ օրիս օգնության հասնի, մատիցս փուշ հանի:

- Բա որ էդպես է, ես քեզ՝ տղա, դու ինձ՝ մեր, համաձա՞յն ես:

- Համաձայն եմ,- ասում է պառավը:

Թագավորի տղին դեմն է անում, տանում տուն:

Անց է կենում էսպես մի ժամանակ, մեր ու տղա շատ սիրով իրար հետ յոլա էին գնում:

Օրերից մի օր տղեն գալիս է, մորն ասում.

- Նանի՛ ջան, քեզ մի բան եմ ուզում ասել, չեմ իմանում՝ ականջ կանե՞ս, թե՞ չէ:

- Ասա՛, ա՛յ որդի,- ասում է պառավը,- ասա՛, ականջ կանեմ, ինչի՞ չեմ անի:

- Ուզում եմ՝ գնաս, թագավորի աղջիկն ուզես ինձ, ի՞նչ կասես:

- Վա՛յ, հողն իմ գլխին, հո չե՞ս գժվել, ըտենց բան ո՞նց կլինի: Մենք աղքատ, օրվա հացի կարոտ ենք, թագավորը խելքը հո հացի հետ չի՞ կերել՝ քեզ աղջիկ տա: Հլա չե՞ս վախենում՝ մեր գլխներն էլ կտրել տա, թե ինչի չեք ձեր ոտքը ձեր կարպետի չափ մեկնում: Էն ժամանակ ի՞նչ կասես:

- Որ չուզես,- ասում է տղեն,- ես էլ գլուխս կառնեմ, կկորչեմ:

Սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, տղեն մորը որ շատ է համոզում, մերը վեր է կենում, գնում թագավորի մոտ: Դառը-տխուր գնում է,

թագավորի խնամաքարի վրեն նստում:

Նազիր-վեզիրը պառավին տեսնելուն պես մոտ են գալիս, հարցնում.

- Հը՛, նանի՛, խե՛ր լինի, ինչի՞ ես եկել:

- Եկել եմ թագավորի մոտ,- ասում է պառավը,- խնդիրք ունեմ ասելու:

Նազիր-վեզիրը գնում են, թագավորին իմաց տալիս, թե.

- Թագավորն ապրած կենա, ըսենց, ըսենց, ըսենց մի պառավ է եկել, ուզում է՝ քեզ տեսնի: Թողնե՞նք գա, թե՞ չէ:

- Թողեք գա,- ասում է թագավորը,- տեսնենք՝ էդ պառավը ինչ է ուզում:

Նազիր-վեզիրը գնում են, պառավին առաջներն անում, բերում թագավորի մոտ: Պառավը, ձեռքերը դոշին դրած, թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Հը՛, ա՛յ պառավ, ի՞նչ ես ուզում,- հարցնում է թագավորը:

- Թագավո՛րն ապրած կենա,- ասում է պառավը,- մի խնդիրք ունեմ, համա երեսս չի բռնում՝ ասեմ:

- Ասա՛, բան չկա, ասա՛ տեսնենք՝ խնդիրքդ ի՞նչ է:

- Թագավո՛րն ապրած կենա, ես մի տղա ունեմ, եկել եմ՝ քո աղջիկը ուզեմ իմ տղին: Հիմի կտաս՝ դու գիտես, չե՛ս տա՝ էլի դու գիտես, մեր արյունը քեզ հալալ է:

- Կտամ, ինչի՞ չեմ տա, համա մի բան պիտի ուզեմ: Թե արեցիք՝ շատ լավ, թե չէ՝ հո երկուսիդ գլուխն էլ կթռչի: Համաձա՞յն ես:

- Համաձայն եմ, ասա՛ տեսնենք,- ասում է պառավը:

- Մի գիշերվա մեջ իմ ապարանքի նման պիտի էնպիսի մի ապարանք շինեք, որ տեսնողի բերնի ջուրը գնա, որ աղջիկս գա, էդ ապարանքի մեջ ապրի: Շինեցիք՝ լա՛վ, աղջիկս ձեզ հալալ է, չշինեցիք՝ իմա՛ց կացեք, երկուսիդ գլուխն էլ կտրել կտամ, իմացա՞ր:

- Իմացա, թագավո՛րն ապրած կենա,- ասում է պառավը:

Թագավորին գլուխ է տալիս, թողնում դուրս գալիս, գնում:

Դառը- տխուր, նոթերը կիտած գալիս է տուն:

- Հը՛, նանի՛,- հարցնում է տղեն,- թագավորի մոտ գնացի՞ր:

- Գնացի, բա ի՞նչ արի,- ասում է պառավը:

- Է՜, ի՞նչ ասաց թագավորը,- նորից հարցնում է տղեն:

- Ի՜նչ ասեմ, որդի՛, թագավորը ընենց բան է ուզում, որ անելու ճար չկա:

- Մի՛ վախի, նանի՛, ասա տեսնենք՝ ինչ է ուզել, որ դու էդպես դարդոտել ես:

- Ա՛յ որդի, ասելու բա՞ն է, որ ասեմ: «Մի գիշերվա մեջ,- ասում է,- իմ ապարանքի պես մի ապարանք պիտի շինեք, որ իմ աղջիկը գա, մեջն ապրի»: Դե՛ ո՞նց շինենք, ա՛յ որդի, էս ախր իսկի լինելու բա՞ն է:

- Ա՛յ նանի, դու իսկի դարդ մի՛ անի, դրանից հեշտ բան չկա: Հենց էգուց թագավորի ապարանքը պատրաստ կլինի, դու հանգիստ քո բանին կաց:

Տղեն ասում է, հանում է մատանին, դնում մատը, անմիջապես արաբները գալիս են:

- Ի՞նչ կհրամայես, թագավորի՛ ցեղ,- ասում են:

Տղեն ասում է.

- Էստեղ էնպիսի ապարանք պիտի կանգնեցնեք, էնպիսի ապարանք, որ ողջ աշխարհքը ման գաս, հատը չգտնվի: Մի խոսքով, ով տեսնի՝ խելքամաղ լինի մնա: Մեկ էլ, որ ապարանքը մինչև լույս պիտի պատրաստ լինի, իմացա՞ք:

- Աչքներիս վրա, թագավորի՛ ցեղ,- ասում են արաբներն ու աներևութանում:

Առավոտ գիշերհանա պառավը զարթնում է, աչքերը բաց անում, ի՞նչ տեսնի. թագավորին վայել ապարանքի մեջ թեք ընկած է: Չորս կողմը մտիկ է տալիս, մնում է մոլորված, թե էս ո՞րտեղ է: Խեղճը իսկի երազում էլ չէր տեսել էսպիսի ապարանք, ո՛ւր մնաց՝ ինքն էլ մեջը քնած լիներ: Հանկարծ միտն է ընկնում, որ էս ամենը իր տղի հունարն է, ուրախանում է, աշխարհով մեկ է լինում:

- Հը՛, նանի՛,- էն կողմից ձեն է տալիս տղեն,- մեր ապարանքը հավանո՞ւմ ես: Դե՛, շո՛ւտ արա, գնա թագավորի աղջիկը բե՛ր:

- Գնամ, ա՛յ որդի,- ասում է պառավը,- էս անգամ հույս ունեմ, որ թագավորն իր աղջիկը կտա:

Արագ հագնվում է, երեսը լվանում, գլուխ-մլուխը կապում, կոկում, զուգում, վեր կենում գնում դեպի թագավորի ապարանքը: Գնում է ուղիղ թագավորի խնամաքարի վրա նստում: Թագավորը պատուհանից պառավին տեսնում է, անմիջապես գլխի է ընկնում, որ իր աղջկա համար է եկել, մանավանդ որ լուրը բերել էին, որ պառավի տղեն իր ուզած ապարանքը շինել է, պատրաստել: Ապարա՞նք, ապարա՞նք, ապարա՞նք եմ ասում, որ տեսնողի խելք էր գնում: Թագավորը իր նազիր-վեզիրին ուղարկում է, որ գնան, պառավին բերեն իր մոտ:

Նազիր-վեզիրը գնում են, պառավին բերում թագավորի մոտ:

- Հը՛, պառա՛վ, եկա՞ր,- ասում է թագավորը,- իմ ուզած ապարանքը տղեդ

պատրաստել է, համա մենակ էդ չէ, էլ բան պիտի ուզեմ:

- Թագավորը ողջ լինի,- ասում է պառավը,- ասա տեսնեմ՝ ի՞նչ է ուզածդ:

- Մի էնպիսի մեծ գորգ պիտի պատրաստեք, որ իմ ապարանքից մինչև ժամ, ժամից մինչև ձեր տուն փռած լինի: Էս ու էն կողմերն էլ կանաչ ուռի ծառեր տնկոտած լինեն, վրեն էլ սոխակները ծլվլան, աղջկանս հաճույք պատճառեն, իմացա՞ր:

- Իմացա, թագավո՛րն ապրած կենա, ինչի՞ չիմացա,- ասում է պառավը:

Թագավորին գլուխ է տալիս, թողնում, դուրս է գալիս, գնում: Էս պառավը գնում է տուն, էլի դառը-տխուր նստում է մինչև տղի գալը: Տղեն գալիս է տուն, տեսնում է՝ էլի մերը նոթերը կիտած նստել է:

- Ի՞նչ կա, նանի՛, էլի ինչի՞ ես էդպես դարդոտել:

- Էհ, ա՛յ որդի, թագավորը հիմի էլ էնպիսի բան է ուզում, որ իսկի լինելու բան չէ:

- Ի՞նչ է ուզում, նանի՛, ասա տեսնենք:

- Էնպիսի մեծ գորգ է ուզում, որ իր ապարանքից մինչև ժամը, ժամից մինչև մեր տուն փռված լինի, էս ու էն կողմերն էլ՝ ուռի ծառեր տնկոտած, վրեն էլ սոխակները ծլվլան, աղջիկը գա, էդ գորգի վրայով անց կենա: Դե՛, քեզ եմ հարցնում, ա՛յ որդի, էս իսկի լինելո՞ւ բան է:

- Դու դարդ մի՛ անի, նանի՛, էդ գորգն էլ կպատրաստեմ, տեսնենք՝ դրանից հետո ի՞նչ պիտի ուզի:

Տղեն էս ասում է թե չէ, մատանին հանում է, դնում մատը: Դնելուն պես արաբները անմիջապես գալիս են, էնտեղ կանգնում:

- Ի՞նչ կհրամայես,- թագավորի՛ ցեղ,- հարցնում են արաբները:

- Ձեզնից էնպիսի մեծ գորգ եմ ուզում, որ թագավորի ապարանքից մինչև ժամը, ժամից մինչև մեր տուն փռված լինի, էս ու էն կողմերն էլ՝ ուռի ծառեր տնկոտած, վրեն էլ սոխակները ծլվլան, իմացա՞ք:

- Իմացանք, թագավորի՛ ցեղ,- ասում են արաբներն ու աներևութանում:

Մթնում է: Մեր ու տղա թեք են ընկնում, հանգիստ քնում:

Լուսադեմին հանկարծ թագավորի ականջը սոխակի մի անուշ ձեն է ընկնում, մնում է հայիլ-մայիլ եղած: Ասում է. «Արի մի վեր կենամ, տեսնեմ՝ սոխակները էս ո՞րտեղ են ծլվլացնում»:

Դուրս է գալիս, ի՞նչ տեսնի՝ իր ապարանքի առաջ էնպիսի մի ճամփա

է սարքած, էնպիսի՛ մի ճամփա, ահագին գորգն էլ վրեն: Էս ու էն կողմերն էլ՝ ուռի ծառեր տնկոտած, վրեն էլ սոխակները հո չե՛ն ծլվլում, կլկլացնում, մարդի խելքամաղ են անում, թողնում: Մարդ ասում էր՝ չուտի, չխմի, չհագնի, չմաշի, հենց էդ գորգի վրայով ման գա, սոխակների ձենին ականջ դնի, էնքա՛ն մի սիրուն թամաշի բան էր:

«Չէ՛,- ասում է թագավորն ինքն իրեն,- էս անգամ պառավը պիտի աղջիկս տանի, որ տանի: Հիմի էլ կաց էնպիսի մի բան ուզեմ, որ չկարողանա գլուխ բերել»:

Թագավորն էստեղ, պառավն ու իր տղեն էլ էնտեղ են զարթնում սոխակների անուշ ձենից:

- Հը՛, նանի՛,- ձեն է տալիս տղեն,- թագավորի ուզած գորգն ու ճամփեն պատրաստ են, դե՛ գնա թագավորի աղջիկը բեր:

- Գնամ,- ասում է պառավը ուրախացած:

Վռազ-վռազ հագնում է, գլուխ-մլուխը կապում, զուգում ու ուղիղ դեպի թագավորի ապարանքը: Գնում է ուղիղ թագավորի խնամաքարի վրա նստում: Նազիր-վեզիրը նրան որ տեսնում են, գնում են, բերում թագավորի մոտ: Պառավը թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Հը՛, պառա՛վ,- ասում է թագավորը,- եկար, որ աղջիկս տանե՞ս:

- Հա՛, թագավորն ապրած կենա,- ասում է պառավը:

- Իմ ուզած երկու պայմանն էլ կատարել եք, մնացել է մեկը: Էդ էլ որ բերեք, իմա՛ց կացեք՝ աղջիկս ձերն է ու ձերը:

- Ասա՛, թագավորն ապրած կենա, ասա տեսնենք՝ վրա երեքին ինչ է,- ասում է պառավը:

- Էս անգամ աղջկանս համար մի ձեռք էնպիսի շոր պիտի բերեք, որ ո՛չ ասեղ կպած լինի, ո՛չ թել, ո՛չ մկրատ, որ աղջիկս հագնի, գնա ժամ, էնտեղից էլ՝ ուղիղ ձեր տուն, իմացա՞ր:

- Իմացա, թագավորն ապրած կենա,- ասում է պառավը, թագավորին գլուխ է տալիս, ապարանքից դուրս գալիս, թողնում գնում:

Պառավը դառը-տխուր գալիս է տուն:

- Հը՛, նանի՛,- հարցնում է տղեն,- թագավորն ի՞նչ ասաց:

- Է՛հ, ա՛յ որդի,- ասում է,- թագավորն էս անգամ էնպիսի բան է ուզում, որ իսկի գլուխ գալու բան չէ:

- Ասա տեսնեմ՝ ինչ է ուզում,- հարցնում է տղեն:

- Ասում է. «Մի ձեռք էնպիսի շոր պիտի բերեք աղջկանս համար, որ ո՛չ ասեղ կպած լինի, ո՛չ թել, ո՛չ մկրատ, ո՛չ բան»: Դե արի ու էդպիսի շոր գտի:

- Դու դարդ մի՛ անի, նանի՛, էդ մի ձեռք շորն էլ կպատրաստեմ, տեսնենք հետո ի՞նչ պիտի ասի, որ չտա:

Տղեն ասում է, մատանին հանում է, դնում մատը, անմիջապես արաբները գալիս են:

- Ի՞նչ կհրամայես, թագավորի՛ ցեղ,- ասում են արաբները:

- Աղջկա մի ձեռք էնպիսի շոր եմ ուզում ձեզանից, որ ո՛չ ասեղ կպած լինի, ո՛չ թել, ո՛չ էլ մկրատ, իմացա՞ք:

- Աչքներիս վրա,- ասում են արաբները ու չքվում, աներևութանում:

Առավոտ լույսը բացվում է թե չէ, տղեն մորն ասում է.

- Նանի՛, դե ե՛լ գնա թագավորի ապարանքը, նրա ուզած մի ձեռք շորը հիմի հասած կլինի:

- Լա՛վ, որ ասում ես, կգնամ:

Պառավը հագնվում է, գլուխ-մլուխը կապում, զուգվում, զարդարվում ու շտապում դեպի թագավորի ապարանքը: Գնում է, ուղիղ թագավորի խնամաքարի վրա նստում: Նազիր-վեզիրը պառավին որ տեսնում են, գնում են, կանչում են բերում թագավորի մոտ: Պառավը թագավորին գլուխ է տալիս, կանգնում: Տեսնում է՝ թագավորի մոտ իր աղջիկը նստել է, հագին մի էնպիսի շոր կա, որ էլ ի՞նչ ասեմ, մարդ չուտի՛, չխմի՛, հենց նրան ու նրա շորերին մտիկ անի, էնքա՛ն մի սիրուն բան էր:

- Պառա՛վ,- ասում է թագավորը,- հիմի որ աղջիկս տարաք: Դե գնա՛, տղեդ բե՛ր, պսակենք:

Պառավը ուրախ-ուրախ վեր է կենում, գալիս տուն:

- Ա՛յ որդի,- ասում է,- շո՛ւտ արա, վե՛ր կաց գնանք, թագավորը քեզ կանչում է, ասում է՝ թող գա, աղջիկս տամ իրեն:

- Ճի՞շտ,- հարցնում է տղեն:

- Ճի՛շտ,- ասում է մերը:

Մեր ու տղա վեր են կենում, գալիս թագավորի պալատ: Թագավորը իր աղջիկը տալիս է նրան, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում: Ինչ քեֆ, ինչ

ուրախություն, որ էլ չափ ու սահման չկար: Հարսանիքից հետո տղեն թագավորի աղջկան վերցնում է, բերում իր տուն:

Սրանց թողնենք էստեղ, գանք, լուր առնենք մեր անմորուսից:

Անմորուսը, ախր, իմաստուն էր եղել: Թագավորի տղի գլխով անցածը լրիվ գիտեր: Ամեն բան գիտեր ու միտք էր անում՝ ո՞նց անի, որ իր վրեժը նրանից լուծի, էն հունարով մատանին նրա ձեռքից խլի:

Օրերից մի օր ահագին գույնզգույն ուլունքներ, մարջաններ, մարգարիտներ ու ապակուց շինած տեսակ-տեսակ զարդեր է վերցնում, գալիս, թագավորի տղի տան առաջ մի պուճուր դուքան է դնում, որ ծախի: Թագավորի տղի կնիկը, դե ինչքան չլինի՝ կնիկ էր է՛լի, ամեն օր պահակներին փող էր տալիս, գնում էին էն անմորուսի դուքանից ուլունք-մուլունք, մարջաններ առնում, բերում: Մի օր էլ պատուհանից տեսնում է՝ ավելի մեծ-մեծ, լավ-լավ մարջաններ կան անմորուսի դուքանում, ասում է. «Ես գնամ, իմ ձեռքով լավերը ջոկեմ, առնեմ»:

Վեր է կենում, գալիս անմորուսի դուքանը: Անմորուսը սրան որ տեսնում է, ուրախանում է, աշխարհով մեկ է լինում:

- Խանո՛ւմ ջան, ի՞նչ ես ուզում,- հարցնում է Քոսեն:

Թագավորի տղի կնիկը մի քանի հատ մարջան է ջոկում, վերցնում:

- Սրանց գինն ի՞նչ է,- հարցնում է անմորուսը:

- Չէ՛, խանո՛ւմ ջան,- ասում է անմորուսը,- էս փողով չեմ տալիս:

- Բա ինչո՞վ ես տալիս,- հարցնում է:

- Ժանգոտած մատանիներով, վաղուցվա հին բաներով, թե չէ՝ փող չեմ ուզում,- ասում է անմորուսը:

- Լա՛վ,- ասում է թագավորի տղի կնիկը,- մեր պահարանում մի ժանգոտած մատանի կա, սպասի գնամ բերեմ:

Գնում է, մատանին բերում, տալիս անմորուսին, մարջաններն առնում, թողնում գալիս տուն:

Դու մի ասի, էդ մատանին էն հունարով մատանին է լինում: Անմորուսը քիչ է մնում՝ ուրախությունից գժվի: Անմիջապես մատանին դնում է մատը: Դնելուն պես արաբները գալիս են:

- Հը՛, ի՞նչ ես ուզում, անմորո՛ւս,- հարցնում են արաբները:

- Հենց հիմա գնացե՛ք, թագավորի տղին ու պառավին բերե՛ք էստեղ, ինձ ու նրա կնկան տարե՛ք ծովի միջի ցամաքը հանեք, իր ապարանքն էլ շալակե՛ք, տարե՛ք էդ ցամաքի վրեն դրեք, որ մենք երկուսով դրա մեջ ապրենք:

Էհ, արաբների ձեռքին էս հո դժվար բան չէր: Անմիջապես թագավորի տղի ապարանքը վերցնում են, տանում ծովի միջի ցամաքի վրեն դնում, անմորուսին ու թագավորի տղի կնկան տանում են, էդ ապարանքի մեջ նստեցնում, թագավորի տղին ու պառավին էլ բերում անմորուսի դուքանի մեջ դնում, թողնում են, գնում իրենց բանին:

Թագավորի տղեն մի ժամի աչքը բաց է անում, ի՞նչ տեսնի՝ պառավի հետ անմորուսի դուքանի մեջ, թագավորի աղջիկն էլ մոտը չէ:

Անմիջապես գլխի է ընկնում, թե ինչն ինչոց է: Շատ է գլխին վա՛յ տալիս, լաց լինում: Էլ ի՞նչ՝ բանը բանից անց էր կացել:

- Նանի՛,- ասում է թագավորի տղեն,- սրանից դենը իմ ապրելը հարամ է: Դու էստեղ կաց, ես գնամ երկրեերկիր, աշխարհեաշխարհ ման գամ, գուցե մի ճար անեմ, իմ վրեժը անմորուսից հանեմ, նո՛ր որ սիրտս հանգստանա: Ողջ հետ եկա՝ էլի մեր ու տղա ենք, թե չէ՝ աստված քեզ հետ:

Ճամփի պատրաստություն է տեսնում, պառավի ձեռքը պաչում, իր կատուն վերցնում, ճամփա է ընկնում: Գնում է, գնում է, գնում, մի օր, երկու օր, երեք օր, չորս օր, վերջապես՝ մի շաբաթ, հասնում է մի գյուղ, մութն առնում է գետինը: Մտնում է էդ գյուղը, մի տան դուռ ծեծում: Տանտերը գալիս է, դուռը բաց անում:

- Ո՞վ ես,- հարցնում է տանտերը,- էս ուշ ժամին ո՞ւր ես գնում:

- Ճամփորդ եմ,- ասում է թագավորի տղեն,- չի՞ լինի՝ էս գիշեր տեղ տաք՝ քնեմ, առավոտ վաղ վեր կկենամ, գնամ իմ բանին:

- Ինչի՞ չի լինի, հյուրն աստծունն է,- ասում է տանտերը ու նրան ներս տանում:

Բերում են ներքնակ են գցում, հյուրին նստեցնում վրեն: Մի քիչ ժամանակ է անցնում, բերում են հաց են գցում, մի խուրձ էլ դագանակ են բերում: Ամենքին մի-մի դագանակ են տալիս, մեծն էլ տալիս են հյուրին: Թագավորի տղեն շատ է զարմանում էս բանի վրեն, հարցնում է.

- Էս ի՞նչ բան է, էս դագանակները ինչի՞ եք բերել:

- Մի քիչ համբերի,- ասում է տանտերը,- հետո կիմանաս, թե էս դագանակները ինչի համար են:

Թագավորի տղեն լուռ է մնում: Հենց նստում են հացի, մեկ էլ ի՛նչ տեսնի՝ ամեն կողմից մեծ-մեծ մկներ դուրս եկան ու վրա տվեցին հացին: Նրանք էլ դագանակներով տալիս էին մկներին, որ կարողանային մի քիչ հաց ուտել: Մի կողմից դագանակներն էին վրա բերում, մի կողմից հաց ուտում: Թագավորի տղեն էս որ տեսնում է, անմիջապես տեղից վեր է կենում, գնում է, իր խուրջինի բերանը բաց է անում: Բաց է անում թե չէ, կատուն էնտեղից դուրս է գալիս: Մկները կատվին տեսնելուն պես բոլորը փախչում են, մի-մի ծակ մտնում, ինչ է՝ կատուն իրենց չուտի: Տանտերը մնում է զարմացած, թե ի՛նչ տեսակ հյուր է, որ մկները նրանից վախեցան: Դու մի ասի, սրանց երկրում կատու չի լինում: Մի քանի օր թագավորի տղեն սրանց տանը մնում է, տանտերերը ապահով հաց էին ուտում, կատվի ահից մի մուկ անգամ չէր մոտենում: Վերջը մկների ճարը որ կտրվում է, հավաքվում են, գնում իրենց թագավորի մոտ գանգատ, թե. «Բա չես ասի, ըսենց, ըսենց, ըսենց բան: Էսինչ թագավորի տղեն եկել է մեր երկիրը, հետն էլ մի կատու է բերել, նրա ահից չենք կարողանում բներիցս դուրս գալ: Մնացել ենք սոված, ձեռքներս բան չի ընկնում, որ ուտենք, քիչ է մնում՝ բոլորով սատկենք»:

Մկների թագավորը մի քաջ մուկ է ջոկում:

М. Сарьян
1929

- Կգնաս,- ասում է,- թագավորի տղի մոտ, կասես. «Ինչ ուզում ես, ասա՝ տանք, միայն քո կատուն առնես, էստեղից գնաս»:

Էս քաջ մուկը վեր է կենում, գնում թագավորի տղի մոտ:

- Թագավորի ցեղը ողջ լինի,- ասում է մուկը,- մեր թագավորը ասում է. «Ինչ լեզուդ կպտտի, ասա տամ, միայն կատուդ վերցնես, մեր երկրից քաշվես»:

Թագավորի տղեն ասում է.

- Էսինչ ծովի մեջ մի ապարանք կա: Էդ ապարանքի մեջ մի անմորուս է կենում, նրա մոտ մի մատանի կա: Թե կարաց էդ մատանին բերել տա, կատուս կվերցնեմ, էստեղից կգնամ, թե չէ՝ չեմ գնա:

Էդ մուկը լուրը տանում է իրենց թագավորին, թե թագավորի տղեն ասում է. «Էսինչ ծովի մեջ մի անմորուս է ապրում, անմորուսի մոտ մի մատանի կա, մինչև էդ մատանին բերել չտաս, էս երկրից չեմ գնա»:

Մկների թագավորը էս որ լսում է, անմիջապես մի քաջ մուկ է ուղարկում էդ անմորուսի ապարանքը, որ գնա, ոնց էլ լինի՝ մի հնարով էդ մատանին գողանա, վերցնի, բերի:

Էդ քաջ մուկը վեր է կենում, ճամփա ընկնում դեպի անմորուսի ապարանքը: Էդ մուկը ծովի տակով փորելով, ճամփա բացելով գնում է, գնում մի օր, երկու օր, երեք օր, վերջապես՝ մի շաբաթ, հասնում է անմորուսի ապարանքը: Գիշերը տակից փորում է, ելնում վերև, տեսնում է՝ անմորուսը քնած է: Անմորուսը քնելիս հունարով մատանին դնում էր բերանը, էդպես էր քնում, որ չլինի թե կինը գողանա, դնի մատը, արաբները գան, իրեն վնասել տա: Մուկը դեսուդեն է ընկնում, մատանին չի գտնում: Վերջը որ շատ է ման գալիս, ուշադիր զննում է, տեսնում է՝ անմորուսի բերանում է պահված: Էդտեղ մի ման թունդ քացախ է դրված լինում, մեկ էլ աղի թասով սև պղպեղ: Գնում է, պոչը նախ թաթախում քացախի մեջ, հետո սև պղպեղի մեջ, հետո ա՛ռ հա՝ խցկում է անմորուսի պինչը: Խցկելուն պես անմորուսը փռշտում է, մատանին բերնից ընկնում է: Մուկն էլ դրան էր սպասում, վերցնում է ու իր եկած ճամփով ուղիղ գալիս, հասնում է իրենց երկիրը, մատանին տանում տալիս է թագավորի տղին: Թագավորի տղեն իր կատուն վերցնում է, էդ գյուղից դուրս է գալիս, գնում է, գնում է մի մեկուսի տեղ, մատանին դնում է մատը: Դնելուն պես արաբները գալիս են:

- Ինչ կհրամայես, թագավորի՛ ցեղ,- ասում են արաբները:

- Ինձ վերցրեք, տարեք մեր երկիրը:

Արաբները նրան վերցնում են, տանում են իր երկիրը: Հետո թագավորի տղեն ասում է.

- Հենց հիմա կգնաք, էսինչ ծովի միջի ապարանքից անմորուսին կվերցնեք, կգցեք ծովը, ապարանքը իր սարք ու կարգով, թագավորի աղջկանով կբերեք, կդնեք իր առաջվա տեղը:

Թագավորի տղեն կնոջը որ տեսնում է, ուրախանում է, աշխարհով մեկ է լինում, ուրախություններից չեն իմանում՝ ինչ անեն: Նոր նստում են էստեղ, դեսից-դենից խոսում են, ջան ասում են, ջան լսում, իրենց գլխով անցածը իրար պատմում են: Պառավի ուրախությանը հո չափ ու սահման չկար: Սրանից հետո մարդ ու կնիկ իրար հետ սիրով ու հաճույքով ապրում են մինչև իրենց մահը:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

ՕՁԱՄԱՆՈՒԿ ԵՎ ԱՐԵՎԱՀԱՏ

Ժամանակով մի թագավոր է լինում: Էդ թագավորը մի օր դուրս է գալիս պատշգամբ, ման գալիս, տեսնում է, որ մի օձ իր ճտերը բերել է բակ ու գուրգուրում է: Թագավորը էդ որ տեսնում է, ասում է.

- Տե՛ր աստված, ի՞նչ կլինի, որ ինձ էլ մի զավակ տայիր, ես էլ սիրեի իմ զավակին: Բա ես էս օձի չափ էլ չկայի՞, որ անգամ մի օձի ճուտ ինձ չես տալիս:

Էդ ժամանակ աստծու ողորմության դուռը բաց է լինում, աստված լսում է թագավորի խնդիրքը ու օձի ճուտ է տալիս: Գալիս են թագավորին աչքալուսանք, ասում են.

- Թագավո՛ր, աչքդ լույս, կնիկդ ազատվեց, համա ինչ անես, որ մի օձի ճուտ է բերել:

Թագավորն ասում է.

- Փա՛ռք աստծու, ի՞նչ անեմ, էլի զավակ է, էդ է կամեցել աստված:

Էդ օձի ճուտը օրական մեծանում էր, մի շաբաթ անց համարյա դարձավ մի վիշապ: Թագավորի խորհրդականներն ասացին.

- Սրան ինչո՞վ կշտացնենք:

Ինչ բան տվին, չկերավ, հա գոռում էր, ուտելիք էր ուզում, պատերը քանդել էր ուզում:

Մի օր նազիրի աղջիկը եկավ, որ էդ օձին տեսնի: Օձը էդ աղջկա թևից բռնեց, քաշեց ներս, կուլ տվեց: Էդպես իմացան, որ դրա կերածը աղջիկ պիտի լինի:

Թագավորը հրամայեց, որ ամեն օր մի աղջիկ տան վիշապին՝ ուտի: Զինվորները գնացին հանդերը ման գալու, որ անտեր աղջիկ գտնեն, բերեն տան վիշապին:

Օրերից մի օր մի աղջիկ գտան, անունը՝ Արևհատ, բերին թագավորի մոտ: Թագավորն ասաց.

- Տարեք, տվեք իմ տղին:

Էլ չէին կարողանում դուռը բաց անել էդ վիշապի ահից, Արևհատին տարան, երդիկից կախ արին, տվին վիշապին: Արևհատն ասաց.

- Բարի լույս քեզ, թագավորի՛ որդի:

Վիշապը օձի շապիկը պատռեց, դարձավ մի լավ տղա, եկավ աղջկա մոտ: Շատ սիրեցին իրար:

Թագավորն ասաց.

- Գնացեք տեսեք՝ աղջկան կերե՞լ է, թե՞ ոչ:

Գնացին տեսան, որ վիշապը դարձել է մի լավ տղա: Տղեն ասաց.

- Ինչո՞ւ եք դռները փակել, բա՛ց արեք:

Դռները բաց արեցին, գնացին թագավորին ասացին.

- Քո վիշապը մի լավ տղա է դարձել: Էն աղջկա հետ ասում-խոսում է:

Թագավորը շատ ուրախացավ, եկավ իր տղի մոտ, ասաց.

- Բարի լույս, որդի՛:

Տղեն ոտքի ելավ, Արևհատն էլ ոտքի կանգնեց, գլուխ տվին թագավորին: Թագավորը շատ ուրախացավ, տեսավ, որ իր տղեն շատ կատարյալ տղա է, Արևհատն էլ շատ ամոթով աղջիկ է:

- Է՛,- ասաց,- որդի՛, հիմա ի՞նչ ես ուզում:

Տղեն ասաց.

- Թագավորն ապրած կենա, ինձ պսակի Արևհատի հետ:

Թագավորը հարսանիք արեց, յոթ օր, յոթ գիշեր կերան-խմեցին, Արևհատի ու Օձամանուկի կենացը խմեցին:

Հարսանիքից հետո թագավորը կանչեց Արևհատին ու ասաց.

- Որդի՛, մի պատմի՛ տեսնենք՝ դու ում աղջիկն ես:

Արևհատը ասաց.

- Թագավորն ապրած կենա, ես մի անտեր աղջիկ եմ, հեր չունեմ, մեր չունեմ: Մի խորթ մեր ունեի, ամեն օր ինձ մի գրվանքա բուրդ էր տալիս ու ասում. «Տավարը տար արածեցրո՛ւ, էս բուրդն էլ կմանես, իրիկվան կբերես»: Ուտելու էլ մի կտոր չոր հաց էր տալիս ու ասում. «Հացի կեսը իրիկունը հետ կբերես»: Մի օր իլիկը ձեռքիս քարափի գլխին կանգնած մանում էի, հանկարծ քարափը ծակվեց, իլիկս ընկավ մեջը: Կռացա, մտիկ տվի, տեսա մի պառավ կա քարանձավի մեջ: Ասացի. «Նանի՛, մի թեշիս տո՛ւր, էդտեղ ընկավ»: Պառավն ասաց. «Որդի՛, ես չեմ կարողանում տեղիցս կանգնել, արի իլիկը վերցրո՛ւ, տա՛ր»: Ասացի. «Դուռը ո՞րտեղ է»: Ասաց. «Որդի՛, ձորի միջից արի»: Ձորի միջով գնացի, տեսա էդ քարանձավի դուռը բաց, մտա ներս, որ իլիկս վերցնեմ, մեկ էլ տեսա՝ դուռ չկա: Ասացի. «Նանի՛, դուռը ի՞նչ եղավ»: Նանն ասաց. «Որդի՛, հլա արի ինձ մոտ, բան պիտի ասեմ, հետո ես դուռը ցույց կտամ»:

Գնացի պառավի մոտ, պառավն ասաց. «Մի ավելը վերցրու, իմ տունը մաքրի»: Ավելը վերցրի, պառավի տունը մաքրեցի, պառավն ասաց. «Որդի՛ ջան, մեր տունն է մաքո՞ւր, թե՞ ձեր տունը»: Ես պառավին ասացի. «Նանի՛, ձեր տունը մաքուր է», համա մաքուր չէր, շատ կեղտոտ էր: Հետո ասաց. «Որդի՛ ջան, արի նստի, գլուխս դնեմ ծնկանդ, մի քիչ քթիվ արա»: Գնացի նստեցի, պառավը գլուխը դրեց ծնկանս, քթիվ արեցի: Ասաց. «Որդի ջան, իմ գլուխն է մաքո՞ւր, թե՞ քո մոր»: Ասացի. «Նանի՛ ջան, քո գլուխը մաքուր է»: Հետո ասաց. «Քունս տանում է, թող մի քիչ քնեմ ծնկանդ վրա: Իմ քնած ժամանակ մի սև ջուր կգա, ինձ իմաց չտաս, հետո մի կարմիր ջուր կգա, էլի իմաց չտաս, հետո մի դեղին ջուր կգա գետի նման: Ջուրը գալուն պես ինձ իմա՛ց տուր»: Ասացի՝ լավ: Պառավը քնեց, տեսա՝ սև ջուրը եկավ, ձեն չհանեցի: Մի քիչ անցավ, տեսա՝ կարմիր ջուրը եկավ, էլի ձեն չհանեցի: Մեկ էլ տեսա՝ դեղին ջուրը եկավ, ասացի. «Նանի՛, նանի՛, վե՛ր կաց, դեղին ջուրը եկավ»: Նանը տեղից վեր թռավ, ոտքերիցս բռնեց, գլուխս կոխեց ջրի մեջ, մազերս լրիվ դարձան ոսկի: Հետո պառավն ինձ դուռը ցույց տվեց, ասաց. «Դե՛հ, գնա, որդի՛, աստված քեզ հետ լինի»: Դուրս ելա քարանձավից, եկա մեր տավարի մոտ, ասացի. «Ինչ անեմ, ինչ չանեմ, ես էս ոսկե մազերով գնամ տուն, իմ խորթ մերը ինձ կծեծի, մազերս կպոկի»: Գնացի մի հովվի աղաչեցի, որ մի գառ մորթի, միսը իրեն լինի, ստամոքսը տա ինձ: Հովիվն ասաց. «Շատ լավ կլինի, ա՛յ քուր, ես էլ քեզ էդ լավությունը կանեմ»: Հովիվը վեր կացավ, մի գառ բերեց, մորթեց, ասաց. «Ա՛յ քուր, նստի՛, մի քիչ խորոված անեմ, ուտենք»: Խորոված արեց, կերանք, հետո ստամոքսը վերցրի, քաշեցի գլխիս, մազերս ծածկեցի: Մինչև իրիկուն մնացի արևի տակ, ստամոքսը գլխիս չորացավ, տավարը քշեցի, բերի տուն: Մերս ասաց. «Ա՛յ անզգամ, ինչի՞ ամբողջ բուրդը չես մանել»,- բարկացավ ինձ վրա, մի քանի ապտակ տվեց: «Դեհ,- ասաց,- արի գլուխդ լվանամ, էսօր շաբաթ է»: Ասացի. «Չեմ ուզում, իմ գլուխը մի՛ լվա»: Իմ պուճուր քույրը, որ մորս հալալ աղջիկն էր, վրա թռավ, գլխիս ստամոքսը պոկեց, ոսկե մազերս փռվեցին գետնին: Մերս ասաց. «Ա՛յ անզգամ, էս ի՞նչ բան է»: Նստեցի, ամբողջը պատմեցի մորս, մերս ասաց. «Տո լի՛րբ, առավոտ կտանես, իմ աղջկանն էլ ցույց կտաս էդ քարափը, որ իմ աղջիկն էլ ոսկե մազ ունենա»: Առավոտ լույսը որ բացվեց, մերս տավարը դուրս հանեց, մի գրվանքա բուրդ տվեց քրոջս, մի կտոր չոր հաց, գնացինք: Գնացինք, քրոջս ցույց տվի քարափը, գնաց, կանգնեց գլխին, իլիկը մանեց: Էլի քարափը ծակվեց, իլիկը ընկավ մեջը, կռացավ, տեսավ՝ մի պառավ կին

նստած է, բարկացած ասաց. «Նանի՛, թեշին տո՛ւր»: Պառավն ասաց. «Որդի՛, արի՛, վերցրո՛ւ տար, ես մեծ կին եմ, չեմ կարող տեղիցս կանգնել»: Աղջիկը բարկացած ասաց. «Սրա դուռը ո՞րտեղ է»: Ասաց. «Որդի՛, ձորի միջով արի»: Աղջիկը ձորի միջով իջավ, տեսավ մի քարանձավի դուռ բաց է, ներս մտավ, կռացավ, որ իլիկը վերցնի, տեսավ՝ դուռը չկա: Ասաց. «Նանի՛, դուռը կորցրի, ո՞ւր է»: Նանն ասաց. «Որդի՛, հլա արի, բան պիտի ասեմ»: Գնաց պառավի մոտ: Ասաց. «Մի ավելը վերցրո՛ւ, մեր տունը մաքրի»: Աղջիկը մաքրեց, պրծավ, պառավն ասաց. «Որդի՛, մեր տո՞ւնն է մաքուր, թե՞ ձեր»: Աղջիկը բարկացած ասաց. «Մեր տունը մաքուր է, ձեր տունը՝ կեղտոտ»: «Դե՛հ,- ասաց,- որդի՛, վնաս չունի, մեծ կնիկ եմ, իմ սրբողն ո՞վ է: Դե մի քիչ նստի, գլուխս դնեմ ծնկանդ, մի քիչ քթիվ արա»: Աղջիկը նստեց, պառավը գլուխը դրեց ծնկան վրա, աղջիկը քթիվ արեց: Որ պրծավ, պառավն ասաց. «Որդի՛, ի՞մ գլուխն է մաքուր, թե՞ քո մոր գլուխը»: Աղջիկը բարկացած ասաց. «Վա՛յ քո գլխին, իմ մոր գլուխը մաքուր է»: Պառավն ասաց. «Որդի՛, ես մի քիչ կքնեմ, մի դեղին ջուր կգա, ինձ իմաց չտաս, մի կարմիր ջուր կգա, էլի իմաց չտաս, հետո մի սև ջուր կգա, ինձ իմա՛ց տուր»: Պառավը քնեց, աղջիկը տեսավ, որ դեղին ջուրը եկավ, ձեն չտվեց, հետո եկավ կարմիր ջուրը, էլի ձեն չհանեց, եկավ սև ջուրը, պառավին ձեն տվեց: Պառավը զարթնեց, աղջկա ոտքերից բռնեց, կախեց ջրի մեջ: Խեղճ աղջիկը սև-սևացավ, մի մսի կտոր էլ ճակատից կախ ելավ: Պառավն ասաց. «Որդի՛, դուռը բաց է, գնա՛»: Աղջիկը մտիկ արեց, տեսավ, որ դուռը բաց է, իլիկը վերցրեց, եկավ ինձ մոտ: Տեսա, զարհուրեցի: Մի այլանդակ բան էր դարձել: Ասացի. «Աղջի՛, ինչո՞ւ էդպես եղավ»: Ասաց. «Եսի՞մ, պառավն ինձ կոխեց սև ջրի մեջ, էսպես եղա»: Վեր կացանք, գնացինք տուն: Մերս որ տեսավ իր աղջկան էս օրին, փետը վերցրեց, ինձ ծեծեց, տանից դուրս արեց: Եկա հանդը, նստեցի ծառի տակ, լաց էի լինում, քո զինվորները եկան, ինձ բռնեցին, բերին: Ասացի. «Ո՞ւր եք տանում»: Ասացին. «Քեզ տանում ենք թագավորի տղի համար»: Ես էլ վեր կացա եկա, թագավորն ապրած կենա:

ՀԱԲՐՄԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ ու կին են լինում: Էդ մարդը գնում, աղբանոցից մի հավկիթ է գտնում, բերում, դնում է պատուհանի գոգին: Թոնիրը որ վառում են, կնոջն ասում է.

- Մի հավկիթ եմ գտել, դրել պատուհանի գոգին, գնա՛ երկու հատ էլ դու բեր, արա ձվածեղ, ուտենք:

Կինը մոտենում է պատուհանին, տեսնում է մի ահագին, մեծ օձ. ճչալով շուռ է գալիս, փախչում:

Ասում է.

- Ինչ եղավ, ա՛յ կնիկ:

- Քո տունն ավիրի, ասում էիր՝ հավկիթ կա. մի ահագին օձ է:

Մարդը ելնում է, որ մոտենա պատուհանին, օձը դառնում է մի ջահել տղա, գալիս: Ուրախանում են տղի վրա, ասում են, թե.

- Մեզ տղա չունենք, դու կլինես մեզ տղա:

Տասն օր հետո տղեն հորն ասում է.

- Գնա՛, թագավորի աղջիկն ուզի ինձ համար:

- Որդի՛,- ասում է,- մենք աղքատ մարդ, թագավորը մեզ ինչի՞ պիտի աղջիկ տա:

Ինչքան ասում է, տղի հետ ճար չի լինում, ելնում գնում, նստում է խնամաթոռի վրա: Լուրը տանում են թագավորին, թե էսինչ աղքատը եկել նստել է խնամաթոռի վրա:

Ասում է.

- Գնացեք տեսեք՝ պարտքի տե՞ր է, սովա՞ծ է, տկլո՞ր է, ի՞նչ է ուզում, տվեք:

Գալիս ասում են.

- Թագավորն ասում է՝ ի՞նչ ես ուզում՝ տանք:

Ասում է.

- Ես եկել եմ, թագավորի աղջիկն եմ ուզում, ոչ մի բանի կարոտ չեմ:

Գնում են, թագավորին ասում, թե.

- Ասում է՝ եկել եմ՝ աղջիկդ եմ ուզում, ես ոչ մի բանի կարոտ չեմ:

Ասում է.

- Գնացեք ասեք՝ գա:

Գալիս են, կանչում տանում:

Գնում, թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Հը՛,- ասում է,- դո՞ւ ես եկել՝ իմ աղջիկն ուզում:

Ասում է.

- Ես եմ եկել՝ քո աղջիկն ուզում եմ:

Ասում է.

- Դու գիտե՞ս, որ ես թագավոր եմ, իմ աղջիկը աղքատի տուն չի գնա, իմ տան պես տուն պիտի լինի: Լուսուն ելնեմ, տեսնեմ քո տունը, քո կարողությունը իմ տան պես եղավ, իմ աղջիկը կտամ քո տղին, չեղավ՝ քո գլուխն էլ կզարկեմ, քո տղինն էլ:

Թողնում գալիս է:

Տղեն ասում է.

- Ի՞նչ ասաց:

Ասում է.

- Ասում է՝ թե լուսուն ելնեմ, տեսնեմ քո տունը, քո կարողությունը իմի պես եղավ, իմ աղջիկը կտամ քո տղին, չեղավ՝ քո գլուխն էլ կզարկեմ, քո տղինն էլ:

Ասում է.

- Էն տեղից, որ էն հավկիթը վերցրիր, գնա՛ կանգնի, ասա՛. «Հաբրմանն ասում է՝ լուսուն ելնեմ, տեսնեմ իմ տունը, իմ կարողությունը երկուս լինի՝ նոր թագավորինը մեկ լինի, որ թագավորը իր աղջիկը տա ինձ»:

Լուսուն թագավորը ելնում է, լվացվելու ժամանակ տեսնում, որ քաղաքի մեջ մի տներ են շինված, մի տներ՝ իր տներից երկու անգամ լավ:

Տղեն հորն ասում է.

- Դե՛հ, ե՛լ գնա, թագավորի աղջիկը ուզի ինձ:

Հերը գնում է, նստում խնամաթոռի վրա, լուրը տանում են թագավորին, թե երեկվա մարդը եկել է նստել խնամաթոռի վրա:

Ասում է.

- Ասե՛ք՝ գա:

Գալիս ասում են.

- Թագավորը քեզ ասում է՝ թող գա:

Ելնում գնում է, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

Թագավորն ասում է.

- Ինչ ուզեցի՝ կատարեցիր, մի բան էլ կուզեմ, թե կատարեցիր, իմ աղջիկը կտամ քո տղին, թե չկատարեցիր, քո գլուխն էլ կզարկեմ, քո տղինն էլ:

Ասում է.

- Ասա՛ տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում:

- Լուսուն ելնեմ, տեսնեմ՝ իմ քաղաքի մոտ մի սար լինի, մի կողմը աշուն լինի, մի կողմը ձմեռ լինի, մեկը ամառ լինի, մեկն էլ գարուն լինի, գնամ, թամաշա անեմ, իմ աղջիկը տամ քո տղին:

Էդ մարդը ելնում գալիս է:

Տղեն ասում է.

- Ի՞նչ ասաց:

- Ասաց՝ քաղաքի մոտ մի սար է ուզում, մի կողմը աշուն լինի, մի կողմը ձմեռ լինի, մեկը ամառ լինի, մեկն էլ գարուն լինի, որ իր աղջիկը տա իմ տղին:

Ասում է.

- Էն հավկիթը որ վերցրիր, գնա՛ կանգնի էնտեղ, ասա՛. «Հաբրմանն ասում է՝ լուսուն թագավորը ելնի, տեսնի՝ քաղաքի մոտ մի սար լինի, մի կողմը աշուն լինի, մի կողմը ձմեռ լինի, մեկը ամառ լինի, մեկն էլ գարուն լինի, որ թագավորը գնա, թամաշա անի, իր աղջիկը տա ինձ»:

Լուսուն թագավորը ելնում տեսնում է՝ քաղաքի մոտ մի սար կա: Տեսնում է, որ մի կողմը ձմեռ է, ձյուն է գալիս, մի կողմը ամառ է, կալ են անում, մի կողմն էլ գարուն է, ամեն մարդ ելել, աշխատում է:

Թագավորն ասում է.

- Տարավ աղջիկը:

Տղեն հորն ասում է.

- Ե՛լ գնա, թագավորի աղջիկն ուզի ինձ:

Ելնում գնում է, նստում թագավորի խնամաթոռի վրա:

Լուր են տանում թագավորին, թե էն մարդը էլի եկել է:

Ասում է.

- Գնացե՛ք, կանչե՛ք գա:

Գալիս են, կանչում, գնում է: Գնում է, գլուխ տալիս թագավորին ու կանգնում:

Թագավորն ասում է.

- Ուզածս երկու բանը կատարել ես, մեկն էլ եմ ուզում. կատարեցիր՝ լավ, չկատարեցիր՝ քո գլուխն էլ կզարկեմ, քո տղինն էլ:

Ասում է.

- Ուզի, տեսնեմ՝ ինչ ես ուզում:

Ասում է.

- Դու գիտես, որ ես թագավոր եմ, իսկ դու աղքատ մի մարդ ես: Ախր իմ աղջիկը քո ձեռքը բռնի, պսակ գնա՝ շատ պակասություն է ինձ: Ճամփի էրկու կողմը էնպիսի բարդի ծառեր եմ ուզում, որ թանձրությունից էս կողմի մարդը էն կողմի մարդուն չտեսնի: Մեջն էլ մի մեծ գորգ փռած լինի՝ իմ դռնից մինչև ժամի դուռը, ժամի դռնից էլ՝ քո դուռը, որ իմ աղջիկը բռնի քո տղի ձեռքը, ու մի մարդ չկարողանա թամաշա անել: Լուսուն ելնեմ, տեսնեմ, կատարեցիր՝ լավ, չկատարեցիր՝ քո գլուխն էլ կզարկեմ, քո տղինն էլ:

Գալիս է տուն: Տղեն ասում է.

- Ինչ ուզեց:

- Ասաց՝ իմ դռնից մինչև ժամի դուռը, ժամի դռնից էլ մինչև քո դուռը ճամփի երկու կողմն էլ էնպիսի բարդի տնկած լինի, որ թանձրությունից էս կողմի մարդը էն կողմի մարդուն չտեսնի: Որ իմ աղջիկն ու քո տղեն իրար ձեռք բռնեն, գնան պսակ՝ մարդ չտեսնի:

Ասում է.

- Էն տեղից որ հավկիթ վերցրիր, գնա՛, կանգնի՛ էնտեղ, ասա. «Հաբրմանն ասում է՝ թագավորի դռնից մինչև ժամի դուռը, ժամի դռնից մինչև իմ դուռը ճամփի երկու կողմը էնպիսի թանձր բարդի լինի, որ էս կողմի մարդը էն կողմի մարդուն չտեսնի, մեջը գորգ փռած լինի, որ ես ու թագավորի աղջիկը գնանք պսակ:

Հերը գնում ասում է, դառնում գալիս իր տուն:

Լուսուն թագավորը ելնում է, տեսնում, որ իր ուզածը կատարվել է: Պատրաստություն են տեսնում թագավորի աղջկան բերելու: Թագավորին երկու փեսա էլ ուներ: Թագավորի երեք փեսեն երեք օր պիտի ջիրիդ խաղային:

Հաբրմանը իր նշանածին ասում է.

- Երեք օր որ կխաղանք, քո քույրերը իմ մասին կասեն՝ իմ նշանածն է, չլինի՝

դու ասես՝ իմ նշանածն է:

Սկսում են ջիրիդ խաղալ: Երկու օր ու կես մեկն ասում է՝ իմ նշանածն է, էն մեկն ասում է՝ իմ նշանածն է, երկու քույր կռվում են տղի համար: Երկուս ու կես օրվա վրա պստիկ քույրն ասում է.

- Էդ իմ նշանածն է, քոռնան ձեր աչքեր, դուք ինչո՞ւ եք կռվում:

Հաբրմանը ձին քաշում է, կանգնում, ասում.

- Հը՛, քոռանան դրանց աչքեր, քոռանան քո աչքեր, ես գնում եմ: Թե ինձ շատ դեմ կընկնես, Պղնձե քաղաքը կանցնես, Արծաթե քաղաքն էլ կանցնես, կգաս Ոսկե քաղաք, ինձ կգտնես: Երկաթե կոշիկ կհագնես, պողպատե գավազան կվերցնես: Երբ որ կոշիկներդ ծակվեն, գավազանդ մաշվի, ինձ կգտնես:

Ասում է ու գնում:

Լուրը հասնում է թագավորին, թե քո փեսեն գնաց: Թագավորը աղջկան նախատում է, թե իմ փեսեն քեզնից կուզեմ, դու ի՞նչ ասացիր, որ իմ փեսեն գնաց:

Աղջիկը տղամարդու շոր է հագնում, երկաթե կոշիկ հագնում, պողպատե գավազան վերցնում ու ընկնում աշխարհք ման գալու: Մեկ օր, թե մեկ շաբաթ, մեկ ամիս, թե մեկ տարի, շատ է ման գալիս, քիչ է ման գալիս, աստված կիմանա, մի աղբյուրի մոտ գնում է նստում: Տեսնում է, որ կոշիկները ծակվել են: Տեսնում է, որ պղնձե սափորները ձեռքներին՝ եկան, ջուր են տանում: Հարցնում է, թե էդ ինչ քաղաք է:

Ասում են՝ Պղնձե քաղաքն է:

Ասում է.

- Դրանից էն կողմ ի՞նչ քաղաք կա:

Ասում են.

- Առավոտից մինչև իրիկուն գնաս, կհասնես Արծաթե քաղաք:

- Դրանից էն կողմ ի՞նչ քաղաք կա:

Ասում են.

- Ոսկե քաղաքն է. մի օր էլ մինչև իրիկուն գնաս՝ կհասնես Ոսկե քաղաք:

Փառք է տալիս աստծուն, որ լուր առավ, ելնում, առավոտից մինչև իրիկուն գնում է Արծաթե քաղաք. էն մեկէլ օրն էլ գնում է, իրիկվան հասնում Ոսկե քաղաք: Գնում նստում է աղբյուրի մոտ: Տեսնում է, որ քառասուն աղջիկ, ոսկե սափորները ձեռքներին, ջուր են լցնում ու տանում: Շատ աղաչանք-պաղատանք է անում, ջուր

չեն տալիս՝ խմի: Էն մեկին որ շատ է խնդրում, տալիս է:

Ասում է.

- Ինչո՞ւ եք այդպես ջուր կրում:

Ասում են.

- Մեր թագավորի տղեն գնացել է հողածինի երկիր, հողածնի թագավորի աղջկան է առել, հիմա եկել է, նրա սիրուց գիշեր-ցերեկ վառվում է: Հիմա մենք քառասուն աղջիկներով ջուր ենք կրում, լցնում ենք վրեն, չի հովանում:

Էս աղջիկը տղի մատանին հանում, գցում է սափորի ջրի մեջ, էն աղջիկը վռազ-վռազ տանում է, ջուրը լցնում տղի վրեն: Մատանին ընկնում է առաջը: Ասում է.

- Ո՞վ լցրեց էդ ջուրը, ես հովացա, հերիք է լցնեք:

Աղջիկները, իրար վրա գցելով, ասում են.

- Էս աղջիկը լցրեց:

Ասում է.

- Ախչի՛, ո՞վ կար աղբյուրի մոտ, երբ դու էդ ջուրը լցրիր:

Ասում է՝ մի տղա էր:

- Գնա՛ բեր տեսնենք էդ տղին:

Գալիս, տանում է: Հաբրմանը տեսնում է, որ իր նշանածն է: Տանում է, մի քանի օր գողտուկ պահում է: Հաբրմանի հերն իմանում է աղջկա գալը:

Ասում է.

- Ախչի՛, իմ հերն իմացել է քո գալը, լուսուն քեզ կկանչի, կտանի: Որ կտանի, կասի՝ իմ ոտները տրորի: Չլինի ծունկդ դնես նրա ոտների տակ, նա կզարկի քեզ, կգնաս, յոթ անգամ գետնի տակ կյանքդ կմաշես: Էնտեղ կոճ կա դրած, կվերցնես, կդնես ոտների տակ, բարձ կդնես վրեն, ոտքը կդնես բարձի վրեն, հեռուն կկանգնես, էնքան, որ քո ձեռքը հասնի: Ոտները կտրորես, նա քեզ կուզի խաբի, ոտքը կվերցնի: Որ կվերցնի, կզարկի, կոճը գոռալով կգնա գետնի տակ: Կասի՝ «Դու իմ տղի հոգին առար, գնա՛՝ իմ տղեն քեզնից ազատվի»: Դու կթողնես, կդառնաս կգաս:

Լուսուն թագավորը կանչում է աղջկան, թե արի տեսնեմ ի՞նչ աղջիկ ես, որ իմ տղեն էդքան քեզ համար կվառվեր:

Աղջիկը ելնում, գնում է: Գնում է, գլուխ տալիս, հեռուն կանգնում:

Ասում է.

- Իմ ոտները դի՛ր քո ծնկի վրեն, տրորի՛:

Բերում է, ծածուկ կոճ է դնում ոտների տակ, բարձը դնում է վրեն, ոտքը դնում է վրեն, տրորում: Մեկ էլ ոտքը վերցնում ու զարկում է, կոճը գոռալով գնում է գետնի տակ:

Ասում է.

- Գնա՛, թող իմ տղի հոգին քեզնից ազատվի, հերիք է՝ իմ տղի հոգին առար:

Աղջիկը թողնում գալիս է տղի մոտ:

Երկու օր հետո տղի մերն է իմանում:

Տղեն ասում է.

- Ախչի՛, իմ մերն իմացել է, քեզ կկանչի, կտանի: Որ տարավ, ինքը թախտի վրեն պառկած է. մեր հացթուխը ոտքով թոնրում կրակն է հանդարտեցնում, կրծքերով թոնրի կողերն է մաքրում, ձեռքերով հաց է թխում: Տախտակը կբերես, կդնես, խմորը կգնդես, գրտնակը կախած է՝ կբերես, փետը էնտեղ դրած է՝ թոնրի կրակը

կհանդարտեցնես, շորը կախած է, կբերես, թոնրի կողերը կմաքրես, ռաֆադեն կբերես, կնստես, մեկ-երկու հաց կթխես ու կելնես, կկանգնես: Հացթուխը որ կնստի հաց թխելու, դու կթողնես, կգնաս: Իմ մերը ձեն կտա, թե, հացթուխ, բռնի՛, դրան կոխի թոնիրը, թող վառվի, իմ տղի հոգին ազատվի: Հացթուխը կասի. «Թող գնա, աստված դրա բանը հաջողի, քառասուն տարի իմ ոտ ու ձեռն այրվել էր. ոտներով թոնրի կրակն էի հանդարտեցնում, կրծքերով թոնրի կողերն էի մաքրում, ձեռներով հաց էի թխում: Դա ամեն բան սովորեցրեց, թող գնա, աստված դրա բանը հաջողի»:

Երկու օր անց մերը կանչում է աղջկան, թե՝ գա տեսնեմ՝ ի՞նչ աղջիկ է, որ իմ տղեն դրա սիրուց վառվում է: Աղջիկը գնում է, գլուխ տալիս մորը, կանգնում: Տեսնում է, որ հաց թխելու ժամանակը եկավ, բերում է տախտակը դնում, խմորը գնդում, գրտնակը բերում է, ռաֆադեն դնում, փետը բերում է, թոնրի կրակը հանդարտեցնում, շորը առնում, թոնիրը մաքրում է, նստում, մի երկու հաց է բացում՝ թխում, ելնում է, կանգնում: Հացթուխը նստում է հաց թխելու, աղջիկը թողնում գնում է:

Մերն ասում է.

- Հացթուխ, ե՛լ, բռնի բեր, կախի՛ թոնիրը, թող վառվի, իմ տղի հոգին դրանից ազատվի:

Ասում է.

- Թող գնա, աստված դրա բանը հաջողի: Էս քառասուն տարի իմ ոտ ու ձեռն այրվել էր, ոտներով թոնրի կրակն էի հանդարտեցնում, կրծքերով թոնրի կողերն էի սրբում, ձեռքերով հաց էի թխում: Այդ աղջիկն ամեն բան սովորեցրեց: Թող գնա, աստված իր բանը հաջողի:

Աղջիկը պրծնում գալիս է տղի մոտ:

Ասում է.

- Ախչի՛, պրծար եկա՞ր:

Ասում է՝ եկա:

Տղեն ելնում է, վերցնում աղջկան ու գնում: Լուր է հասնում տղի հորը, թե էն հողածինը, որ եկել էր, առավ քո տղին, գնաց: Հերը ելնում, ընկնում է հետևից:

Տղեն ասում է.

- Ախչի՛, հիմի իմ հերը կգա, ո՞նց անեմ, որ քեզ փրկեմ:

Մեկ էլ թիկունքից տեսնում է, որ եկավ: Աղջկան դարձնում է երկու հատ աղբյուր, մեկը՝ տաք, մեկը՝ պաղ, ինքն էլ դառնում է մի ալևոր՝ ջուր ծախող:

Թագավորը գալիս հարցնում է, ասում.

- Ալևո՛ր, մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր:

Ասում է.

- Ջուր եմ ծախում:

Ասում է.

- Մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր,- կրկնում է:

Ասում է.

- Էս տաք աղբյուրի թասը մեկ կոպեկ է, պաղ աղբյուրի թասը երկու կոպեկ է, որից կխմես՝ խմի՛:

Ասում է.

- Ասում եմ՝ մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր:

Ասում է.

- Որ փող չունես, անփող խմի՛, գնա՛:

Թողնում, դառնում է, ասում է.

- Էս կողմերը չեն եկել, չի տեսել:

Նա որ գնում է, տղեն աղբյուրը դարձնում է աղջիկ, ինքը դառնում է տղա, ճամփա են ընկնում, գնում:

Թագավորը որ դառնում գալիս է, մորը լուր է հասնում՝ հողածինը որ եկել էր, առավ քո տղին, գնաց:

Գալիս է, թագավորին ասում.

- Ի՞նչ տեսար ճամփին:

Ասում է.

- Երկու հատ աղբյուր տեսա, մի ալևոր նստել էր, ջուր էր ծախում:

- Բա ի՞նչ ասացիր դու:

- Հարցրի, թե մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր: Նա ինձ ասաց՝ ջուր եմ ծախում: Ասի՝ մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր: Ասաց՝ մի աղբյուրը տաք է, մեկը՝ պաղ: Մեկ էլ ասի՝ մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր: Ասաց՝ տաքի թասը մեկ կոպեկ է, պաղինը՝ երկու: Էլի ասի՝ մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր: Ասաց՝ փող չունես՝ անփող խմի՛, գնա՛:

- Քո տունն ավերի,- ասում է,- էն աղբյուրը որ կար, աղջիկն էր, էն ալևորը



տղեն էր: Մի թաս ջուր դու խմեիր՝ աղջիկը կմեռներ, մեր տղին կազատեիր, կբերեիր:

Ասում է.

- Դարձի՛ գնա, ինչ կտեսնես՝ բռնի՛, ա՛ռ արի:

Ասում է.

- Սոված եմ, մի կտոր հա՛ց տուր ուտեմ, գնամ:

Ասում է.

- Չեմ տա, մինչև տղին չբերես, չեմ տա:

Դառնում, նորից ընկնում է տղի հետևից:

Ասում է.

- Ախչի՛, իմ մերը իմ հորը հետ դարձրեց, հիմա իմ հերը կգա, ի՞նչ անեմ, որ քեզ փրկեմ:

Աղջկան դարձնում է մի վանք, ինքը դառնում է մի հատ տիրացու ու կարդում:

Թագավորը գալիս է, հարցնում, թե՝ տիրացո՛ւ, մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր:

Ասում է.

- Նոր եմ եկել, կարդում եմ:

Մեկ էլ է հարցնում.

- Մի աղջիկ, մի տղա չտեսա՞ր:

Ասում է.

- Իմ գործը միշտ էս է, էս վանքի մեջ եմ ծառայում:

Ասում է.

- Մի տղա, մի աղջիկ չտեսա՞ր:

Ասում է.

- Ի՞նչ գիրք լինի, էն կկարդամ:

Թագավորն ասում է՝ չի տեսել, էլի թողնում դառնում է: Տիրացուն էլի դառնում է տղա, վանքն էլ դարձնում է աղջիկ, գնում են:

Թագավորը դառնում է, գնում իր տուն:

Մերն ասում է.

- Բերի՞ր տղին:

Ասում է՝ չէ՛:

Ասում է.

- Ի՞նչ տեսար:

Ասում է.

- Մի վանք, մի տիրացու:

Ասում է.

- Քո տունն ավերի, էն վանքը աղջիկն էր, էն տիրացուն՝ մեր տղեն: Չկարողացա՞ր էն վանքից մեկ քար, մեկ բուռ հող բերեիր, աղջիկը կմեռներ, մեր տղեն կազատվեր:

Ասում է.

- Դարձի գնա՛, ինչ որ կտեսնես, կտրի՛, ա՛ռ արի՛:

Ասում է.

- Սոված եմ, մի կտոր հաց տուր ուտեմ, գնամ:

Ասում է.

- Մինչև տղին չբերես, քեզ հաց չեմ տա:

Էլի դառնում է, սոված ընկնում հետևից:

Տղեն ասում է.

- Ախչի՛, իմ մերը իմ հորը մեկ էլ դարձրեց մեր հետևից, էս անգամ որ գա, ճար չկա, քեզ կսպանի, ինձ կտանի:

Ասում է.

- Ի՞նչ անեմ, որ ազատեմ դրա ձեռքից:

Աղջկան դարձնում է խնձորի մի դալար շիվ, ինքը դառնում է մի երկա՛ր, բարակ օձ: Քոքից փաթաթվում է, ելնում է մինչև գլուխը, իսկի բաց տեղ չի թողնում:

Թագավորը գալիս է կանգնում, ասում է.

- Ի՞նչ անեմ, Հաբրմա՛ն, քոքին զարկեմ՝ իմն է, ծերին զարկեմ՝ իմն է, դու լինես, քո աստված. ես գիտեմ՝ դու կգնաս հողածնի երկիրը: Քո լեզուն հա՛ն, ես պագեմ, փափագս առնեմ ու գնամ:

Հենց որ բերանը բացում է թագավորը, Հաբրմանը իր թույնը թափում է թագավորի բերանի մեջ, թագավորը չորանում է: Շիվը դարձնում է աղջիկ, ինքը դառնում է տղա, ճամփա են ընկնում ու գալիս, թե մեկ օր, թե տասը օր՝ շատն ու քիչը աստված կիմանա, գալիս հասնում են թագավորի քաղաքը: Աչքալույս է գնում թագավորին, թե աչքդ լույս լինի, աղջիկդ ու փեսեդ եկան: Թագավորը հարսանիքի պատրաստություն է տեսնում, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում:

Նա հասավ իր մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: Երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ լսողին, մեկը՝ ասողին, մեկն էլ ականջ անողին:

ՄՈՋԻՆ

Լինում են, չեն լինում՝ մի մարդ, մի կնիկ են լինում: Սրանք երեխա չեն ունենում: Շատ ու շատ խղճով են լինում: Ով թասով է տալիս, սրանք տաշտով են տալիս, ով տաշտով է տալիս, սրանք պարկով են տալիս: Սրանք շատ հարուստ են լինում, բայց ոչ մի բան աչքներին չի գալիս:

Մարդ ու կնիկ միշտ ասում են.

- Էհ, ինչներիս է պետք էսքան ունեցվածքը, էս անքուն ցեցը, երբ մենք մի երեխա չունենք, որ նրանով խնդանք, ուրախանանք: Երնեկ աստված սրա կեսի, կեսի կեսը մեզ տված լիներ ու մի սիրուն տղա:

Սրանք որ շատ են պառավում, հույսներն էլ երեխա ունենալուց կտրած են լինում, մի օր սրանց տուն է գալիս մի դերվիշ: Կնիկը որ լիաբուռ աղքատաբաժին է տալիս, դերվիշը հարցնում է.

- Ա՛յ քուր, ինչի՞ ուրիշները բռով ու թասով են բաժին տալիս, իսկ դու՝ տաշտով:

- Էհ, ի՞նչ անեմ, ա՛յ ախպեր,- ասում է պառավը,- դատարկ օջախ ենք, անքուն ցեցի տեր, տուն ու դուռը լիքը՝ ուտող չունենք: Էդպես լիաբուռ տալիս ենք, ո՞ւմ համար պահենք:

Դերվիշը գրպանից հանում է երեք խնձոր ու պառավին տալիս.

- Էս խնձորները վերցրո՛ւ, օրը մի խնձո՛ր կեր, տարին չլրացած՝ տղա կունենաս:

Պառավը խնձորները վերցնում է ու տանում, շարում թարեքին: Իրիկուն ժամ է գնում, հետ գալիս, նայում է՝ խնձորները էնպես են փայլ տալիս, որ սիրտը թրթռում է, էլ չի կարողանում համբերել, վերցնում ու մի խնձորի թշից մի լավ կծում է: Խնձորը էնքան անուշ է լինում, որ բերնի ջրերը գնում են: Պառավը վերցնում է, երեք խնձորն էլ ուտում: Քիչ ժամանակ անց է կենում, էս պառավը հղիանում է: Անց է կենում ինը ամիս, ինը օր, ինը ժամ, պառավը մի հորթ է բերում: Խեղճ պառավը ուրախանալու փոխարեն սուգ է կապում: Գիշեր-ցերեկ աղի արտասուք է թափում ու դերվիշին անեծքաչոր անում:

Մի տարի անց մարդը մեռնում է: Հորթն էլ մոզի դարձած է լինում: Առավոտները հանդ է գնում՝ արածելու, իրիկունները տուն է գալիս, մորը բարի իրիկուն է ասում ու կրակի կողին թեք ընկնում, քնում:

Էսպես անց է կենում երեք տարի: Մի իրիկուն Մոզին մորն ասում է.

- Ա՛յ մեր, ես արդեն հասակս առել եմ, պետք է կնիկ ուզեմ: Առավոտ շուտ վեր կկենաս, կգնաս թագավորի մոտ, կասես՝ իմ Մոզին քո աղջկան ուզում է:

Պառավը մնում է ապշած, սիրտ չի անում՝ մի բան ասի: Վերջն ասում է՝ երևի էստեղ մի բան կա, թե չէ սա ո՞նց կհամարձակվեր թագավորի աղջկանն ուզել: Պառավը ճամփա է ընկնում, գնում թագավորի մոտ:

Պառավը ուղիղ գնում է, նստում թագավորի խնամախոսի քարի վրա: Թագավորի նազիր-վեզիրները գալիս են, ուզում են վեր կացնել, նա վեր չի կենում: Ասում է, որ գնան, թագավորին իմաց տան, թե մի պառավ է եկել, թագավորի աղջկան իր Մոզու համար է ուզում: Թագավորը հրաման է տալիս, որ պառավին իր մոտ կանչեն: Պառավին կանչում են թագավորի ապարանքը:

- Ի՞նչ խոսք ունես, ա՛յ մեր,- հարցնում է թագավորը քաղցրությունով:

- Թագավորն ապրած կենա,- ասում է պառավը,- իմ Մոզին աղջկանդ ուզում է:

- Շատ լավ, թող ուզի,- ասում է թագավորը,- բայց երեք բան ունեմ նրանից ուզելու, թե որ կատարեց՝ շատ լավ, թե չէ՝ նրա գլուխը կտրել կտամ: Գնա՛, քո Մոզուն ասա՛, որ ինձ մի ոսկե սկուտեղ ուղարկի՝ ոսկով լիքը, ոսկե սկուտեղով ծածկած:

Պառավը վեր է կենում ու տխուր-տրտում տուն գալիս:



Իրիկունը Մոզին հանդից տուն է գալիս, տեսնում, որ մերն ունքերը կիտած, տխուր-տրտում նստած է օջախի մոտ:

- Բարի իրիկուն, ա՛յ մեր, ինչի՞ ես էդպես ունքերդ կիտել, ի՞նչ ասաց թագավորը:

- Ո՞նց ունքերս չկիտեմ, ա՛յ որդի, ախր մեր ի՞նչ բանն է թագավորի աղջիկ ուզելը: Էնպիսի բաների անուն է տալիս, որ մեր տուն ու տեղը ծախենք, էլի չենք կարող նրա ուզածը տալ:

- Է՛, ա՛յ մեր, ի՞նչ ասաց:

- Թագավորն ուզում է մի ոսկե սկուտեղ՝ ոսկով լիքը, ոսկե սկուտեղով ծածկած:

- Դրա համար ես դարդ անո՞ւմ: Դրա բանը հեշտ է,- ասում է Մոզին,- իրիկունը քնելիս վերցրո՛ւ մի պղնձե սկուտեղ, մի սև փող դի՛ր մեջը, մի պղնձե սկուտեղով ծածկի, դի՛ր ծալքի վրա, առավոտը մինչև իմ վեր կենալը ո՛չ ծալքին կմոտենաս, ո՛չ սկուտեղը կշարժես:

Ոնց որ Մոզին ասել էր, պառավը էդպես անում է: Մթնում է, քնում են:

Հաջորդ առավոտ վեր են կենում, տեսնում, որ պղնձե սկուտեղները ոսկի են դարձել , միջի փողն էլ՝ ոսկի փողեր, սկուտեղը լցվել, կողքերից թափվում է:

Պառավը վերցնում է, տանում տալիս թագավորին:

Թագավորն ասում է.

- Գնա՛, քո Մոզուն ասա, որ իմ աղջկա համար մի ձեռք շոր ուղարկի, որ ո՛չ ձեռք դիպած լինի, ո՛չ ասեղ շարժված:

Պառավը վեր է կենում, տխուր-տրտում տուն գալիս:

Իրիկունը Մոզին հանդից տուն է գալիս, տեսնում, որ մերն ունքերը կիտած, տխուր-տրտում օջախի մոտ նստած է:

- Բարի իրիկուն, ա՛յ մեր, ինչի՞ ես էդպես ունքերդ կիտել, ի՞նչ ասաց թագավորը:

- Ո՞նց ունքերս չկիտեմ, ա՛յ որդի, ախր մեր ի՞նչ բանն է թագավորի աղջիկ ուզելը: Էնպիսի բաների անուն է տալիս, որ մեր տուն ու տեղը ծախենք, էլի չենք կարող նրա ուզածը տալ:

- Է՛, ի՞նչ ասաց:

- Թագավորն ուզում է իր աղջկա համար մի ձեռք շոր, որ ո՛չ մարդու ձեռք դիպած լինի, ո՛չ վրեն ասեղ շարժված լինի:

- Դրա համար ես դարդ անո՞ւմ: Դրա բանը հեշտ է,- ասում է Մոզին,- իրիկունը քնելիս վերցրո՛ւ մի սկուտեղ, մի թզենու տերև դի՛ր մեջը, մի սկուտեղով էլ ծածկի՛, դի՛ր ծալքի վրա, առավոտը մինչև իմ վեր կենալը ո՛չ ծալքին կմոտենաս, ո՛չ սկուտեղը կշարժես:

Ոնց որ Մոզին ասել էր՝ անում է: Մթնում է, քնում են:

Հաջորդ առավոտ վեր են կենում, տեսնում, որ պղնձե սկուտեղները ոսկի են դարձել, թզենու տերևը դարձել է մի ձեռք շոր, որ ո՛չ վրեն ասեղ է շարժվել, ո՛չ մարդու ձեռք է դիպել: Պառավը վերցնում է, տանում տալիս թագավորին:

Երրորդ անգամ թագավորն ասում է.

- Գնա՛, քո Մոզուն ասա՛, որ իմ աղջկան էնպես պետք է տուն տանես, որ ո՛չ գլուխն արև տեսնի, ո՛չ ոտը՝ գետին:

Պառավը վեր է կենում ու տխուր-տրտում տուն գալիս:

Իրիկունը Մոզին հանդից տուն է գալիս, տեսնում, որ մերն ունքերը կիտած, տխուր-տրտում օջախի մոտ նստած է:

- Բարի իրիկուն, ա՛յ մեր, ինչի՞ ես էդպես ունքերդ կիտել, ի՞նչ ասաց թագավորը:

- Ո՞նց ունքերս չկիտեմ, այ որդի, ախր մեր ինչ բանն է թագավորի աղջիկ ուզելը: Էնպիսի բաների անուն է տալիս, որ մեր տուն ու տեղը ծախենք, էլի չենք կարող նրա ուզածը տալ:

- Է՛, ինչ ասաց:

- Թագավորն ուզում է, որ իր աղջկան էնպես տուն տանես, որ ո՛չ գլուխն արև տեսնի, ո՛չ ոտը՝ գետին:

- Դրա համար ես դարդ անո՞ւմ: Դրա բանը հեշտ է,- ասում է Մոզին,- իրիկունը քնելիս մի պարկ լցրո՛ւ փալաս-փուլուսով ու տաշեղներով, դի՛ր ծալքի վրա. առավոտը մինչև իմ վեր կենալը ո՛չ ծալքին կմոտենաս, ո՛չ սկուտեղը կշարժես:

Ոնց որ Մոզին ասել էր՝ անում է: Մթնում է, քնում են:

Գիշերվա մի ժամի Մոզին վեր է կենում ու վերցնում պարկը, ճամփա ընկնում դեպի թագավորի ապարանքը: Որ հասնում է նրա սենյակներին, մի տաշեղ է դնում, մի փալաս, մի տաշեղ, մի փալաս... մինչև իրենց տուն ու գալիս, կրակի մոտ թեք է ընկնում, քնում:

Հաջորդ առավոտ վեր են կենում, տեսնում, որ տաշեղները դարձել են ուռի ծառեր, փալաս-փուլուսներն էլ դարձել են գորգեր:

Մոզին դհոլ-զուռնա է վերցնում ու ճամփա ընկնում դեպի թագավորի ապարանքը: Թագավորը յոթ օր, յոթ գիշեր հարսանիք է անում ու իր աղջկան Մոզու հետ ճամփու դնում:

Գիշերը, երբ փեսեն հարսի մոտ պիտի գնա, մեկ էլ հարսը տեսնում է, որ Մոզին կաշին հանեց ու մի կողմ դրեց: Կաշվի միջից մի տղա է դուրս գալիս, որ արեգակի նման մարդու աչք է ծակոտում: Աղջիկը շատ է ուրախանում: Քնում են, հաջորդ առավոտ տղեն վեր է կենում, նորից իր կաշին հագնում, դառնում մոզի ու գնում հանդն արածելու:

Էսպես անց է կենում մի օր, երկու օր, երեք օր, աղջիկը շատ աղաչում, պաղատում է իր մարդուն, որ էլ կաշին չհագնի, բայց մարդը չի անում: Աղջիկը նրա հակառակին մի գիշեր վեր է կենում ու մարդուց թաքուն նրա կաշին թոնրի մեջ գցում, վառում: Հաջորդ առավոտ մարդը վեր է կենում, ման գալիս, կաշին չի գտնում: Հա՛յ էս պուճախ՝ կաշի, հա՛յ էն պուճախ՝ կաշի. չկա ու չկա: Մարդը դառնում է աղունիկ ու դուրս թռչում: Կնիկը վերցնում է երեք խնձոր ու նրա հետևից ճամփա ընկնում:

Շատ է գնում, թե քիչ՝ տեսնում է ճամփին մի երեխա:

- Ա՛յ ախպեր, մարդ չե՞ս տեսել դեսը գնալիս:

- Չէ՛, ա՛յ քուր,- ասում է էն տղեն,- բայց առավոտ շուտ դեսը մի աղունիկ թռավ, գնաց:

Կնիկը խնձորներից մեկը տալիս է էդ տղին, ինքը գնում:

Շատ է գնում, թե քիչ՝ տեսնում է միջահասակ մի մարդ ճամփով գալիս է:

- Ա՛յ ախպեր, դեսը մարդ չե՞ս տեսել գնալիս:

- Չէ՛, ա՛յ քուր,- ասում է էն մարդը,- բայց ճաշին դեսը մի աղունիկ թռավ, գնաց:

Կնիկը խնձորներից մեկն էլ տալիս է էդ տղամարդուն ու գնում:

Շատ է գնում, թե քիչ՝ նրան մի ալևոր է հանդիպում ճամփով գնալիս:

- Ապե՛ր, դեսը մարդ չե՞ս տեսել գնալիս:

- Չէ՛, աղջի՛կս,- ասում է ալևորը,- բայց հենց նոր մի աղունիկ թռավ, գնաց, թե որ մի քիչ արագ գնաս, հետևից կհասնես:

Կնիկը վերջին խնձորն էլ նրան է տալիս ու գնում:

Շատ է գնում, թե քիչ՝ տեսնում է հրես իր մարդուն՝ թռած գնալիս: Նրան տեսնելն ու աղունիկ դառնալը մեկ է լինում: Մարդու հետևից որ հասնում է, մարդը մի անտակ ծովի մեջ է ընկնում: Կնիկն էլ նրա հետևից ընկնում է ծովի մեջ: Երկուսն էլ իրար գտնում են ու ծովի տակին ապրում, որ մարդիկ իրենց չտեսնեն:

Խերն ու բարին՝ էստեղ, շառն ու փորձանքը՝ անօրենի գլխին:

ԱՐՋԻ ՏՂԵՆ

Լինում է, չի լինում մի տերտեր: Էս տերտերը էնքան ուժեղ է լինում, որ ամեն օր գյուղի ժամը շալակում է, տանում անտառ, էնտեղ աղոթք անում, էլի հետ բերում գյուղ:

Մի օր էլ էդպես ժամը շալակել տարել էր անտառ, մի Արջի տղա ռաստ եկավ, հարցրեց, թե էդ ժամը ինչի է բերել:

Տերտերն ասաց.

- Բերել եմ, մեջը աղոթք անեմ:

- Բա որ էդպես է,- ասաց Արջի տղեն,- որ դու էդքան ուժով ես, արի իրար հետ կոխ բռնենք: Ով ում գետնով տա, նա նրան ուտի:

Տերտերն ասաց.

- Լավ, արի կոխ բռնենք:

Արջի տղեն ու տերտերը կոխ բռնեցին: Արջի տղեն տերտերին վեր հանեց, գետնով տվեց, ուզում էր նրան պատառ-պատառ անել, տերտերը աղաչեց-պաղատեց, ասաց.

- Աստծու սիրուն, ինձ մի՛ կեր, ես քեզ կտանեմ մեր տուն, լավ կպահեմ, կխնամեմ:

Արջի տղեն համաձայնեց ու տերտերի հետ եկավ գյուղ: Արջի տղեն տերտերի տանը էլ հաց չթողեց, կերավ: Խեղճ տերտերը սրա ձեռքից չէր իմանում՝ ինչ անի, ուր գնա: Վերջը միտք արեց, որ սրան տանի, իրենց թագավորին նվիրի, գուցե ձեռքից պրծնի, թե չէ իրենց տաշտ ու մաղը կկապի, տանը էլ բան չի թողնի, կուտի, կվերջացնի:

Տերտերը էդպես էլ արեց: Վերցրեց, Արջի տղին տարավ թագավորին նվեր: Թագավորն էլ առավ, հավեսի համար պահեց: Բայց մի քանի օր հետո տեսավ, որ՝ չէ, էս Արջի տղեն իր տունը կքանդի. ինչքան տալիս են, ասում է՝ սոված եմ: Միտք արեց, որ մի ձևով կորցնել տա:

Թագավորն իր նազիր-վեզիրին ասաց, որ մի ջադու պառավ կանչել տան, գուցե նա սրան մի ճար անի: Գնացին, մի պառավ կին բերին: Թագավորը հարցրեց, թե էն տեսակ տեղ չի՞ իմանում, որ էս Արջի տղին ուղարկեն, էլ հետ չգա:

Պառավն ասաց.

- Թագավորն ապրած կենա, ինչի՞ չեմ իմանում: Յոթ սարի հետև մի անտառ կա, դրան որ ուղարկես էն անտառից ցախ բերի, էլ հետ չի գա: Էնտեղ քառասուն ախպեր դևերը դրա մեծ թիքեն ականջը կթողնեն:

- Լավ,- ասաց թագավորը:

Կանչել տվեց Արջի տղին, ասաց.

- Պիտի գնաս, յոթ սարի հետև մի անտառ կա, ինձ համար էնտեղից հարյուր սել ցախ բերես, պե՛տք է:

- Ջուխտ աչքիս վրա,- ասաց Արջի տղեն,- ինձ հարյուր սե՛լ տուր՝ իր սելվորներով, ճամփի պաշար: Նրանից դենը՝ ցախ բերելը իմ շլնքին:

Արջի տղեն ինչ ուզել էր ճամփի համար, թագավորը տվեց ու ճամփու դրեց: Էս մեր Արջի տղեն, հարյուր սել առաջն արած, խաղ ասելով, քեֆ անելով էր ճամփա գնում: Գիշերը որտեղ մթնում էր, կանգ էր առնում, կրակ անում, սելերի եզներից մեկը մորթում, եփում, սելվորների հետ ուտում, սելն էլ մյուս սելերի հետևից կապում, էլի գնում: Էնպես որ մինչև անտառ հասան, Արջի տղեն հարյուր սելի եզներն էլ կերել, վերջացրել էր: Մնացել էր մի հատ, էդ էլ էստեղ մորթեց, կերակուր արեց, կերան:

Քառասուն դևերը տեսան, որ անտառեզրին մի ծուխ է բարձրանում, մնացին զարմացած, թե էս ով պիտի լինի՝ սիրտ է արել, եկել էս կողմերը, ուր հավքն իր թևով, օձն իր պորտով մինչև հիմա չեն կարողացել ոտք դնել: Դևերի մեծ ախպերը պուճուր ախպորն ուղարկեց, որ տեսնի՝ էն ինչ ծուխ է վեր ելնում անտառի եզրին:

Պուճուր ախպերը գնաց, տեսավ՝ մի Արջի տղա, հարյուր մարդ կրակի չորս բոլորը նստոտել են, կերակուր են ուտում: Հեռվից ձեն տվեց.

- Ինչ մարդ եք, որ էս անհարմար ժամին եկել եք, մեր անտառի եզրին կրակ արել: Ինս եք, ջինս եք, ջանավա՞ր եք, շուտ ձեն հանեք, թե չէ ձեզանից մեկն էլ ողջ չի պրծնի դև ախպերների ձեռքից:

Արջի տղեն ավելի կատաղեց, ասաց.

- Դու հլա մի առա՛ջ արի, տեսնենք՝ ինչ ջանավար ես, որ հեռվից էդպես մեծ-մեծ փրթում ես, հետո կիմանաս, թե մենք ի՞նչ մարդ ենք:

Դևը մոտեցավ կրակին թե չէ, Արջի տղեն ձեռքի դագանակով մի հարված որ չհասցրեց, էն սհաթին դևը շշմեց, վեր ընկավ: Արջի տղեն տարավ սրան, սելից պարանով կապեց, որ չլինի թե փախչի, ինքն էլ հետ եկավ, իր հացը կերավ:

Մեծ դևը տեսավ, որ պուճուր ախպերը ուշացավ, չեկավ, մեկէլ ախպորը ուղարկեց, տեսնի՝ ինչի ուշացավ:

Արջի տղեն սրա գլխին էլ էն օյինը խաղաց, տարավ ախպոր կողքը, սելից կապեց: Մի խոսքով՝ էսպես երեսունինը դևին էլ շարքով իրար կողքի կապոտեց:

Մեծ դևը տեսավ, որ իր ախպերները գնացին, էլ հետ չեկան, վերջը ինքը վեր կացավ, կատաղած, փրփրած գնաց տեսնի՝ էս ինչ բան է, որ նրանք էսքան ուշացան: Գնաց տեսավ իր ախպերները, երեսունինն էլ, սելից շարքով կապոտած են, կրակի շուրջը մի Արջի տղա, հարյուր մարդ նստոտած հաց են ուտում: Հարցրեց.

- Ինչ մարդ եք, էս ժամին էս տեղերում ի՞նչ եք շինում:

Արջի տղեն ձեն-ծպտուն չհանեց, քաշեց դագանակը, սրան էլ մեկէլ ախպերների օրը գցեց, տարավ նրանց կողքը կապեց: Առավոտը լուսացավ թե չէ, Արջի տղեն հրամայեց քառասուն դևին էլ, որ գնան, անտառից իրենց ձեռքով ցախ կտրեն, բերեն սելերը բարձեն: Դևերը վրա պրծան անտառին, մի ժամում էնքան ցախ կտրատեցին, որ հարյուր սելը բարձեցին, դեռ մի բան էլ ավելացավ: Արջի տղեն հարյուր սելն էլ իրար հետևից կապոտեց, քառասուն դևին առաջին սելից լծեց, ինքն էլ ճիպոտը ձեռքն առավ, նստեց, սելը քշեց: Էստեղից մինչև թագավորի

երկիրը, որ վեց ամսվա ճամփա էր, դևերը մեկ ամսում եկան:

Լուր տարան թագավորին, որ Արջի տղեն գալիս է: Թագավորը մնաց շվարած, թե էլի պիտի գա, իրեն տանջանք պատճառի: Էդ ժամանակ հրամայեց՝ էն ջադու պառավին գլխատեն, որ սուտ դուրս եկավ, Արջի տղին էնպիսի տեղ ուղարկել տվեց, որ էլի հետ եկավ:

Արջի տղեն սելերը բերեց, դատարկեց թագավորի ապարանքի առաջ: Դևերին էստեղից ճամփու դրեց իրենց տեղը, ինքը գնաց, թագավորին ասաց, որ իր ուզած հարյուր սել ցախը բերել է: Թագավորը երեսանց իրեն էնպես էր ցույց տալիս, իբր թե նրա ցախ բերելու վրա ուրախ է, իսկ մտքում, ո՛վ գիտի, ինչ տեսակ բաներ էին անց կենում:

Թագավորը կանչել է տալիս մի ուրիշ ջադու կին, հարցնում, թե էնպիսի տեղ չի՞ իմանա, որ Արջի տղին ուղարկեն, էլ հետ չգա:

Պառավն ասում է.

- Ֆրանգստանի թագավորը մի սիրուն աղջիկ ունի, նրան քեզ համար բերել տուր, էնտեղ գնացողը ոտքով-գլխով էլ հետ չի գա:

Թագավորը պառավին ականջ արեց, կանչեց Արջի տղին, ասաց, որ պիտի գնա Ֆրանգստան, էնտեղից թագավորի աղջկան իրեն կին բերի:

Արջի տղեն ասաց.

- Լա՛վ, ջուխտ աչքիս վրա, թագավորն ապրած կենա:

Առավոտը լույսը բացվեց թե չէ, Արջի տղեն ճամփա ընկավ դեպի Ֆրանգստան: Գնաց, գնաց, շատն ու քիչը աստված գիտի, տեսավ՝ մի մարդ ամեն մի ոտքից մի ահագին ջաղացքար է կապել ու էնպես է արագ վազ տալիս, որ փախչող նապաստակի հետևից հասնում է, բռնում: Էս մարդը Արջի տղին որ տեսավ, հարցրեց.

- Ախպե՛ր, էդ ո՞ւր ես գնում:

- Գնում եմ Ֆրանգստան, էնտեղի թագավորի աղջկան մեր թագավորի համար կնիկ բերեմ:

- Ի՞նչ կլինի՝ ինձ էլ հետդ տանես:

- Արի գնանք, մեկ չլինեմ, թող երկուս լինենք:

Երկուսով գնացին, գնացին, տեսան՝ մի մարդ ծովի մեջ կանգնել է. ամբողջ ծովը փորն է քաշում, դեռ ասում է. «Ամա՛ն, ես ծարավ մեռա»: Էս ծով կուլ տվողը հարցրեց.

- Էդ ո՞ւր եք գնում, ինձ էլ ձեզ ընկեր չե՞ք անի:

- Ինչո՞ւ չենք անի, երկու չլինենք, թող երեք լինենք, արի գնանք:

Էսպես երեքով ընկեր եղան, գնացին: Գնացին, գնացին, շատն ու քիչը աստված գիտի, մի յոթաչքանի ջաղացի ռաստ եկան: Ներս մտան, տեսան մի ջաղացպան էնտեղ ալյուր է աղում, էլ չի համբերում, որ ալյուրը դուրս գա, հունցի, հաց թխի, ուտի: Հենց էնպես ագահորեն ալյուրը հում-հում է ուտում, դեռ մի բան էլ ասում է. «Ամա՛ն, մի ճար արեք, սոված մեռա»:

- Բարի՛ աջողում, ջաղացպա՛ն ախպեր,- ասացին մեր ճամփորդները:

- Բարով, աստծու բարին, տերն աջողի՝ գնալներդ ո՞ւր է:

- Ֆրանգստան, էնտեղի թագավորի աղջկան բերելու:

- Որ ես էլ գամ ձեզ հետ, չե՞ք տանի:

- Ինչո՞ւ չենք տանի, երեք չլինենք, թող չորս լինենք, գալիս ես՝ արի:

Չորս հոգով իրար հետ ընկեր եղան, գնացին: Գնացին, գնացին, շատն ու քիչը աստված գիտի, տեսան մի մարդ ականջը գետնին է կպցրել, լսում է, հետը խոսում:

- Բարո՛վ, իմաստո՛ւն ախպեր,- ասացին մեր ճամփորդները:

- Բարին ձեր որդիների արևը: Աստված աջողի՝ էդ ո՞ւր եք գնում:

Գնում ենք Ֆրանգստան, թագավորի աղջկան բերենք:

- Չի՞ լինի՝ ես էլ գամ:

- Ինչո՞ւ չի լինի: Գալիս ես՝ արի: Չորս չլինենք, թող հինգ լինենք:

Հինգով ահագին տեղ գնացին, գնացին, տեսան՝ մի մարդ սազը ձեռքին նվագում է: Էլ սա՛ր, էլ քո՛լ, էլ քա՛ր իրենց տեղներից ժաժ են եկել սազի ձենից, մինչև երկնքի հավքերն էլ եկել էին, ականջ էին դնում նրա սազին:

Մեր ճամփորդները ասացին.

- Բարի՛ աջողում, սազ ածող ախպե՛ր:

- Բարո՛վ, աստծու հազար բարին, խերին: Աստված հաջողի՝ գնալներդ ո՞ւր է:

- Ֆրանգստան, թագավորի աղջկան բերելու:

- Ի՞նչ կլինի, ինձ էլ ձեզ հետ վերցրեք:

- Ի՞նչ պիտի լինի: Գալիս ես՝ արի: Հինգ չլինենք, թող վեց լինենք:

Վեցով գնացին, գնացին, տեսան մի մարդ Մասիսը շալակում է, տանում Սիսի մոտ, Սիսը տանում Մասիսի մոտ:

Մեր ճամփորդներն ասացին.

- Բարի՛ աջողում, կտրի՛ճ ախպեր, էդ ի՞նչ ես անում:

- Հե՛չ, ուժս եմ փորձում, դուք էդ ո՞ւր եք գնում:

- Գնում ենք Ֆրանգստան:

- Չի՞ լինի, որ ինձ էլ ընկեր անեք:

- Գալիս ես՝ արի: Վեց չլինենք, թող յոթ լինենք:

Էս յոթ հոգին՝ Արջի տղեն, Արագ վազողը, Անկշտում ջաղացպանը, Ծով կուլ տվողը, Իմաստունը, Սազ ածողը ու Մասիս շալակողը եկան, եկան, հասան Ֆրանգստան:

Գնացին, ուղիղ թագավորի դուռը ծեծեցին: Նոքարը դուրս եկավ, հարցրեց, թե ում են ուզում: Արջի տղեն ասաց.

- Թագավորին:

Նոքարը գնաց, թագավորին իմաց տվեց, թե յոթ տեսակ-տեսակ մարդիկ ուզում են նրան տեսնեն, թողնի՞ գան, թե՞ չէ: Թագավորն ասաց.

- Գալիս են՝ թող գան, տեսնենք՝ էդ ինչ մարդիկ են:

Թագավորի նոքարը գնաց, նրանց կանչեց: Արջի տղեն իր ընկերներով եկավ, թագավորի առաջ կանգնեց, ասաց.

- Թագավորն ապրած կենա, եկել ենք՝ աղջկանդ տանենք: Տալիս ես՝ քո կամքով տո՛ւր, թե չէ, որ բանը մեզ մնա, իմացի՛ր՝ զոռով էլ կտանենք:

Թագավորն ասաց.

- Տալը կտամ, համա երեք բան կասեմ. թե արեցիք, հո աղջիկս ձերն է ու ձերը, թե չէ՝ ձեր բոլորի գլուխն էլ թռցնել կտամ: Դուք գիտեք:

Արջի տղեն ասաց.

- Համաձայն ենք, թագավորն ապրած կենա, կանենք: Թե չկարողացանք, մեր արյունը քեզ հալալ է, ինչ ուզում ես՝ արա:

Թագավորը իր ամբողջ երկրում հայտարարել տվեց, որ ամեն մի տուն մի մեծ բղուղ լիքը կերակուր բերի իր հյուրերի համար: Էդպես էլ հացը՝ իր երկրի բոլոր հացթուխներին պատվիրեց, որ ամբողջ օրը անընդհատ հաց թխեն, իրար հետևից հասցնեն, գուցե նրանք դեմ առնեն, չկարողանան ուտել:

Ոնց որ թագավորը պատվիրել էր, ամեն տուն մի բղուղ կերակուր բերեց, էնպես որ հազար մարդ ուտեր՝ կկշտանար, դեռ մի բան էլ կավելանար: Բայց էս

մեր հյուրերը յոթ հոգով էնպես կերան, ամանները սրբեցին, որ թագավորը մնաց զարմացած, միտք արեց, որ էս չեղավ, պիտի ուրիշ բան մտածվի, թե չէ իր աղջիկը էս արնախում ջանավարների ձեռքը կգցի, անդարձ կկորցնի:

Արջի տղին կանչեց, ասաց.

- Իմ կողմից ես մի մարդ կուղարկեմ յոթ սարի հետևը, էնտեղ մի անմահական աղբյուր կա, էն աղբյուրից ջուր բերի: Դու էլ քո մարդկանցից ուղարկի. ո՛ւմ մարդը շուտ գա, իմացի՛, որ նա տարել է:

Արջի տղեն համաձայնվեց, կանչեց էն Արագ վազ տվողին, ասաց, որ պիտի գնա, յոթ սարի հետևից անմահական ջուր բերի:

Արագ վազողն ասաց.

- Աչքիս վրա, ախպե՛ր, դրանից էլ հեշտ բա՞ն կա աշխարհքում:

Թագավորը դրանից մի շաբաթ առաջ հրեղեն ձիավոր մարդ էր ուղարկել անմահական ջրի, որ նրանից շուտ գա, քանի որ էդ ճամփեն շատ հեռու էր, երկու-երեք շաբաթում լավ արագավազ ձին հազիվ գնար, գար:

Բայց Արագ վազողը էնպես գնաց, որ թագավորի ուղարկած ձիավորին ճամփին ռաստ եկավ, նրանից անց էլ կացավ, գնաց անմահական աղբյուրից ջուր լցրեց, հետ եկավ, դեռ նա նոր էր հասել աղբյուրին: Տարավ, անմահական ջուրը թագավորին տվեց:

Թագավորն ասաց.

- Ախպե՛ր, էս անգամ էլ հաղթեցիք: Մնաց մի բան: Թե էս էլ արիք, հո աղջիկս ձերն է, տարե՛ք, ձեզ հալալ լինի: Իմ բաղնիքը տաքացնել եմ տվել, գնացե՛ք, մի լավ լողացեք, էնտեղից եկեք հաց կերեք, հացից հետո աղջկաս վերցրեք, տարեք, ոտքով-գլխով ձեզ եմ տալիս:

Արջի տղեն իր ընկերներով գնաց թագավորի բաղնիք: Թագավորը նախապես իր նոքարներին պատվիրել էր, որ բաղնիքը էնքան տաքացնեն, որ նրանք մտնելուն պես տեղնուտեղը խաշվեն, մնան: Արջի տղեն գնաց բաղնիք, տեսավ՝ էնքան տաքացրել են, որ պատերն էլ են կարմրել, հեռվից նրա գոլորշին մարդ է այրում: Ծով կուլ տվողին ասաց, որ փչի, բաղնիքը սառեցնի: Ծով կուլ տվողը հենց որ փչեց, բաղնիքի պատերը, ջուրը էնպես սառեցին, հենց իմանաս՝ իսկի տաքացրած չլիներ: Բոլորով մտան ավազանը, մաքուր լողացան, դուրս եկան, գնացին թագավորի մոտ, որ հաց ուտեն, հետո նրա աղջկան վերցնեն, տանեն:

Թագավորը տեսավ, որ ոչ մի բանով էլ չկարողացավ Արջի տղին նեղել, իր նոքարներին հրամայեց, որ նրանց առաջ կերակուր բերելիս ամանների մեջ դեղ գցեն, որ նրանք ուտեն թե չէ, տեղնուտեղը չորանան, գուցե սրանով պրծնի էս մարդակեր ջանավարների ձեռքից:

Որ նստեցին հացի, նրանց Իմաստուն ընկերը ականջը գետնին դրեց, անմիջապես հասկացավ, որ իրենց ամանները դեղել են: Ընկերների ականջին փսփսաց, թե իրենց առաջ դրված կերակուրների մեջ դեղ է գցված, չուտեն:

Սազ ածող ընկերը էս որ իմացավ, իր սազն ածեց: Թագավորը, նրա կինը, աղջիկը, նոքարները բոլորն էլ սազի ձենից խելքամաղ եղան, մնացին: Մինչև անգամ նրանց առաջի ամաններն էլ սազի ձենը որ լսեցին, իրենց տեղերից շարժվեցին: Դեղած ամանները գնացին թագավորի ու նրա տանեցիների առաջ, նրանց ամանները եկան սրանց առաջ: Սազ ածողը սազը ձեռքից վայր դրեց, որ նրանք կարողանային հաց ուտել: Թագավորը իր ամանից որ մի գդալ չկերավ, էդ պահին միջից տրաքեց, պատռվեց: Կինը էս որ տեսավ, վախից նա էլ տեղնուտեղը մեռավ:

Սրանից հետո Արջի տղի ձեռքը էլ ո՞վ կարող էր բռնել, թագավորի աղջիկը նրանն էր ու նրանը, ուզեր՝ կվերցներ ու կտաներ իրենց թագավորին: Բայց մեկ էլ միտք արեց, թե ինչի տանի նրան, ավելի լավ է՝ իրեն կին դարձնի:

Իր ընկերներով թագավորի զորքի հետ կռիվ արեց, հաղթեց, ինքն էլ էնտեղ նստեց թագավոր: Թագավորի աղջկան էլ իրեն կին առավ, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արեց:

Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ ասել տվողին, մեկն էլ՝ ականջ դնողին:

ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՐՍԸ

Լինում են, չեն լինում, երեք քույր են լինում: Մի անգամ սրանց մերը գնում է աղջիկներին շոր առնելու: Տուն դառնալիս նստում է մի աղբյուրի մոտ ու հանկարծ հիշում, որ մոռացել ու փոքր աղջկա համար շոր չի առել:

- Վա՛յ,- ձեռքերը ծնկներին է զարկում նա:

Էդ վայրկյանին աղբյուրից դուրս է թռչում մի ծերունի ու հարցնում.

- Ո՞վ ինձ ձեն տվեց, ո՞վ ասաց՝ վա՛յ:

- Ես ասացի,- պատասխանում է կինը ու ծերունուն պատմում, որ մոռացել ու փոքր աղջկա համար շոր չի առել:

- Գնա նրան բե՛ր էստեղ: Կկանչես՝ վա՛յ, ու քո աղջկան շոր կտամ:

Մերն աղջկան բերում է աղբյուրի մոտ, կանչում է՝ վա՛յ: Աղբյուրից դուրս է թռչում ծերունին, բռնում աղջկա ձեռքից ու քաշում, տանում իր մոտ: Ինչքան էլ խեղճ կինը կանչում է՝ վա՛յ, վա՛յ, ոչ ոք չի պատասխանում, ոչ ոք չի երևում:

Տխուր-տրտում դառնում, գնում է տուն:

Անցնում է մի ամիս, երկու, մերը գալիս է աղբյուրի մոտ ու ասում.

- Վա՛յ:

Դուրս է թռչում ծերունին, տեսնում նրան, շուռ է գալիս ու իր տղին ասում.

- Քո զոքանչն է եկել, ուզում է՝ աղջկան տեսնի:

- Թող նա գնա մոր մոտ, մի քանի օր նրա տանը մնա:

Կնոջն էլ ասում է, որ այցի կգա նրան, կտեսնի:

Աղջիկը աղբյուրից դուրս է գալիս զուգված-զարդարված, համբուրում մոր ձեռքն ու նրա հետ գնում: Մորը խնդրում է իրեն առանձին սենյակ տալ: Մերն էդպես էլ անում է: Ամեն իրիկուն աղջկա մոտ է թռչում գալիս ամուսինը՝ կաքավ դարձած: Առավոտվա աղոթքից առաջ էլ աղջիկը ճամփու էր դնում իր սիրելիին:

Քույրերն սկսում են իրենց փոքր քրոջը նախանձել, որ նրան նման բախտ էր բաժին ընկել: Որոշում են քրոջ բախտավորությունը հարամել: Գնում, առնում են սուր ածելիներ ու շարում պատուհանի շրջանակին: Վիրավորվում է փոքր քրոջ ամուսինը, արյան տաք շիթերը ներկում են պատուհանը, հազիվհազ հասնում է նա աղբյուրին: Ոխով է լցվում կնոջ հանդեպ՝ մտածելով, թե էդ ամենը նրա ձեռքի գործն է: Իսկ կինը սպասում էր իր սիրելիին: Սպասում է չորս օր, հինգ օր, վեցերորդ օրը մոր հետ գնում է աղբյուրի մոտ: Դեռ չէին հասցրել կանչել՝ վա՛յ, աղբյուրից դուրս է թռչում ծերունին:

- Քո կինն ու զոքանչն են եկել,- ասում է նա տղին:

- Հե՛ր, հագի՛ արծվի թևեր, վե՛ր տար կնոջս անապատի ավազների վրա ու ցած գցի, թող գազանները պատառոտեն,- ասում է որդին:

Հերը որդու խնդիրքը կատարում է, իր հարսին վերևից գցում է անապատի ավազների վրա, բայց սա հրաշքով կենդանի է մնում:

- Աստվա՛ծ, թո՛ւյլ տուր՝ մեղքս քավեմ,- աղաչում էր թշվառականն ու թափառում ավազներում՝ դառը արցունք թափելով: Երբ մութն ընկնում է, նա թաղվում է ավազի մեջ՝ հանգիստ առնելու: Մեկ էլ տեսնում է՝ իր կողմը երկու դերվիշ են գալիս: Քիչ էն կողմ նստում են ու ինչ-որ բան սուլում. չգիտես որտեղից մեծ թվով օձեր են սողալով գալիս: Սկսում են տարբեր վերքեր բուժելու գաղտնիքներ իրար բացել: Նա լսում է, որ ածելու կտրվածքները բուժում են տղա բերած կնոջ կաթի ու ջահել կնոջ արյան խառնուրդով:

- Երեք անգամ քսես՝ հետքն էլ չի մնա,- ասում է դերվիշը:

Սրտապնդվելով կինը դռներն է ընկնում, աղաչում տղա բերած կանանց,


Capbarto 1929.

որ իրեն մի քիչ կաթ տան: Հետո մատը ճղում է, արյուն հանում, չորացնում, դարձնում փոշի, խառնում ծննդկանների կաթին, պատրաստում է հրաշք դեղ ու գնում աղբյուրի մոտ: Կանչում է՝ վայ:

Աղբյուրից դուրս է թռչում ծերունին ու հարցնում.

- Ո՞վ ասաց՝ վայ:

- Ես ասացի,- պատասխանում է ջահել կինը:- Ես հեքիմ եմ, դեղը մոռացել եմ գյուղում, դրա համար էդ «վայը» բերնիցս թռավ:

Ծերունին սուզվում է աղբյուրի մեջ ու տղին ասում.

- Էնտեղ մի հեքիմ է նստած, կարող է՝ քեզ օգնի: Ուզո՞ւմ ես՝ կանչեմ:

- Կանչի՛,- պատասխանում է տղեն:

Կինը հիվանդին նստեցնում է, նայում վերքերը, ասում.

- Ես սրան շատ արագ ոտքի կհանեմ:

Վերքերին քսում է կախարդական խառնուրդը, ծերունու տղեն լավանում է: Ծերունին հարցնում է.

- Ի՞նչ արժե քո բուժումը, ասա՛:

- Թե ուզում ես շնորհակալ լինել, հիշի՛ր իմ անունը:

- Ի՞նչ է քո անունը:

- Նազելի:

- Նազելի՞: Էդպես էր իմ կնոջ անունը:

- Ես հենց քո կինն եմ,- ասում է կինը, ընկնում ամուսնու վզով ու պատմում բոլորը՝ ոնց եղել է:

Ու նորից նրանք ապրում են հաշտ ու համերաշխ, իրենց սերը նորից վայելում են:

ՈՍԿԵ ՁՈՒԿԸ

Լինում է չի լինում, առաջ ժամանակ մի թագավոր է լինում: Էս թագավորը մի մինուճար տղա է ունենում: Էս տղեն որ մեծանում է, դառնում ութ-ինը տարեկան, թագավորը տալիս է սրան վարժատուն՝ կարդալու: Մի հինգ-վեց տարի էդ տղեն մնում է վարժատանը, լավ ուսում առնում, խելք սովորում, վերջը լավ գիտուն մարդ դուրս գալիս:

Անց է կենում մի տարի, երկու տարի, էս թագավորի աչքերը բռնվում են, կուրանում է:

Աշխարհքում էլ հեքիմ չի մնում, բերում են, բայց սրա աչքերին ճար չի լինում: Վերջը լուր են առնում, որ Չինումաչինի քաղաքում մի Լողմա հեքիմ կա. թե լավացնի, նա կլավացնի:

Թագավորը մարդ է ուղարկում Չինումաչինի քաղաքը, էն Լողմա հեքիմին բերել տալիս:

Լողմա հեքիմն ասում է.

- Թագավորն ապրած կենա, ինչքամ դեղ, դարման անեն, զուր է. քո աչքերին ճար չի լինի: Մնում է մի բան. թե որ էն ճարեցիք, կլավանա, թե չէ՝ չէ: Ծովի մեջ

մի Ոսկե ձուկ կա. թե կարողացաք բռնել բերել, որ մորթեմ, դրա արյունը քսեմ աչքերիդ, կլավանա, թե չէ՝ էլ լավանալու ճար չկա:

Թագավորը անմիջապես հայտարարում է իր ողջ երկրում, որ ինչքան ձկնորս կան, բոլորը հավաքվեն ծովի ափին, ցանց գցեն: Նրա երկրի բոլոր ձկնորսները հավաքվում են, ծովը ցանց գցում:

Գցում են, գցում, մի տարի, երկու տարի, երեք տարի, հինգ տարի, վերջապես տասը տարի, էն Ոսկե ձուկը չեն կարողանում հանեն: Վերջը մեկ էլ որ թոռը գցում են քաշում, տեսնում են ի՛նչ՝ դուրս եկավ մի ձո՛ւկ, մի ձո՛ւկ՝ էնքա՛ն սիրուն, էնքան նախշուն, որ կասես հրեշտակ լիներ:

Ձկնորսները ուրախությունից աշխարհով մեկ են լինում, որ թագավորի ուզած ձուկը հանեցին: Բայց դու արի տես՝ թագավորի տղեն սևասրտել է՝ տխրել, թե ոնց էս նման սիրուն ձուկը պիտի տանեն մորթեն, որ ինչ է՝ հոր աչքերը լավանան: Տղի ափսոսը գալիս է. վերցնում է ու անձայն Ոսկե ձկանը հետ է գցում ծովը:

Ձկնորսները դառը-տխուր գալիս են, թագավորին պատմում, թե.

- Թագավորն ապրած կենա, մենք էս տասը տարի մեռանք չարչարվելով, հազիվ կարողացանք Ոսկե ձուկը բռնել, տղեդ հետ գցեց ծովը:

Թագավորը էս որ լսում է, կատաղում է, հրամայում, որ անմիջապես տղին իր երկրից աքսորեն, քշեն, որ մեկ էլ նրա երեսը չտեսնի:

Թագավորի հրամանն էր. ի՞նչ կարող էին անել. ճամփի համար ինչ որ պետք էր, տալիս են ու տնից դուրս անում: Թագավորի տղեն հաց-մաց լցնում է տոպրակը ու ճամփա ընկնում:

Գնում է, ծովի ափով անց կենում, ձեն տալիս.

- Ոսկե՛ ձուկ, մնաս բարով, ես գնացի:

Գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, մի աղբյուրի մոտ սրան մի Արաբ է պատահում: Թագավորի տղեն ասում է.

- Բարի՛ աջողում, Արա՛բ ախպեր:

- Բարո՛վ, հազար բարին, թագավորի՛ ցեղ. էդ ու՞ր ես գնում:

- Խեղճ մարդ եմ, գնում եմ Ստամբուլ՝ աշխատանքի. տեսնեմ՝ մի քանի դրամ ձեռքս կընկնի՞, թե՞ չէ:

- Չե՞ս գա՝ իրար հետ ախպեր լինենք. ի՞նչ որ աշխատենք, հալալ ախպոր նման կիսենք:

- Լա՛վ,- ասում է թագավորի տղեն,- արի՛ լինենք. ինչքան կաշխատենք՝ կեսն ինձ, կեսը քեզ:

Էս երկուսով ախպերանում են, գնում: Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում են Ստամբուլ քաղաք (Ստամբուլը էդ վախտ Հոռոմի թագավորի ձեռքին էր): Էստեղ երկուսով մի սենյակ են վարձում, մեջը մնում: Թագավորի տղեն գնում էր բանելու, Արաբը մնում էր տանը, կերակուր-մերակուր եփում, պատրաստում, որ ախպերը աշխատանքից գա, ուտեն:

Էդ վախտերքը լուր էր ընկել քաղաքը, թե թագավորի աղջկա լեզուն բռնվել է, չի խոսում. ո՛վ կարողանա խոսեցնի, թագավորը իր աղջկան նրան կտա, վրեն էլ յոթ ուղտաբեռ ոսկի: Ո՛վ գնացել է, չի կարողացել խոսեցնի, բոլորի գլուխներն էլ կտրել է տվել:

Էս բանը որ ընկնում է Արաբի ականջը, միտք է անում, որ գնա փորձի, գուցե կարողանա թագավորի աղջկան խոսեցնի: Ու մի օր էլ, երբ ախպերը առավոտը գնում է իր բանին, ինքն էլ նրանից թաքուն վեր է կենում, գնում, թագավորի խնամաքարի վրա նստում:

Թագավորը հարցնում է.

- Ա՛յ հողածին, ինչի՞ ես եկել:

- Թագավորն ապրած կենա, եկել եմ՝ աղջկանդ խոսեցնեմ:

- Էսքան մարդ եկել են՝ ինչ են արել, որ դու ինչ անես: Գնա՛, որդի, մեղք ես, ջահել-ջիվան ես. գնա՛, արևիդ ձենն ածա:

- Չէ՛, թագավորն ապրած կենա, ես իմ թքածը չեմ լիզի, պիտի խոսեցնեմ. թե չկարողացա, արյունս քեզ հալալ է:

- Լա՛վ,- ասում է թագավորը,- որ ինձ չես լսում, մեղքն ու վարձքը քո վիզը, արի. համա առաջուց պիտի իմանաս, որ պայմանը երեք անգամից է, աղջկանս երեք անգամ պիտի խոսեցնես:

- Լա՛վ, թող երեք անգամ լինի,- ասում է Արաբը,- համաձայն եմ:

Արաբը գնում է, ուղիղ մտնում թագավորի աղջկա սենյակը: Տեսնում է ինչ՝ մի հուրի-մալաք աղջիկ, որ չուտես, չխմես, հենց նրանով հիանաս, նստել, ասեղնագործում է, բայց ձեն, ծպտուն չի հանում: Արաբը դե՛ս է մտիկ անում, դե՛ն է մտիկ անում, աչքով բան չի ընկնում՝ մի ժանգոտած ճամպրուկից բացի: Գնում է, էդ ժանգոտած ճամպրուկը բերում, դնում առաջը, հետը խոսում:

- Բարո՛վ,- ասում է,- ճամպրո՛ւկ ախպեր. քեֆդ, հա՞լդ: Շատ վախտ է՝ իրար չենք տեսել. իսկի ինչ նոր բան կա:

- Ասսո՛ւ բարին, Արա՛բ ախպեր. փա՛ռք աստծու, լավ եմ. դու ո՞նց ես: Ինչ նոր բան պիտի լինի. դո՛ւ ես դռնից գալիս. նոր բան ինձ ես հարցնում: Ես իսկի դուրս գալի՞ս եմ, որ իմանամ՝ աշխարհում ինչ է լինում, ինչ չէ. հենց էս է՝ տարին տասներկու ամիս էստեղ վեր ընկած եմ:

- Բա իսկի, ճամպրո՛ւկ ախպեր, հեքիաթ-մեքիաթ չե՞ս իմանում՝ ասես, ականջ դնենք:

- Չէ՛, Արա՛բ ախպեր, ես հեքիաթ չեմ իմանում, թե դու գիտես՝ ասա՛:

- Լա՛վ, կասեմ. բայց պիտի լա՛վ ականջ դնես, հա՛:

- Ասա՛, ականջ կանեմ:

Արաբն ասում է.

- Լինում է, չի լինում մի մարդ: Էս մարդն ունենում է երկու տղա՝ մեկը պսակված, մեկէլը՝ չէ: Զատկի օրը էդ պսակված տղի կնիկը մարդի հետ գնում է հերանց գեղ, էնտեղ մի քանի օր մնում: Զատիկը որ անց է կենում, էս ազապ ախպերը վեր է կենում գալիս՝ հարսին բերի: Ախպերն ասում է.

- Դու կնկանս վերցրո՛ւ գնա՛, ես էլ հրես հետևներիցդ գալիս եմ:

Էս ազապ ախպերը հարսին նստեցնում է ձին, ինքն էլ առաջն ընկնում, գալիս: Գալիս են, գալիս, շատն ու քիչը աստված գիտի, մի զուլալ աղբյուրի են հասնում: Էս տղեն ասում է.

- Հարսի՛կ, կա՛ց էս աղբյուրի մեջ մի քիչ լող տամ, հետո գնանք:

Ձին կանգնեցնում է, շորերը հանում, լող տալիս: Որտեղից որ է՝ էն կողմից ախպերը գալիս է, տեսնում՝ իր ախպերը լողացել է, հրեն շորերն է հագնում: Մտքով ուրիշ բան է անց կենում. գալիս է թուրը հանում, ախպորը վրա քշում, որ սպանի: Նա սրա՛ն է տալիս, սա նրա՛ն՝ երկու ախպեր տալիս են, իրար գլուխ թռցնում: Խեղճ կնիկը մնում է մոլորված, չի իմանում՝ ինչ անի. չի իմանում՝ ո՞րն է իր տեգոր մարմինը, ո՞րը՝ մարդունը: Վերցնում է, մարդի գլուխը տեգոր մարմնի վրա է դնում, տեգոր գլուխը՝ մարդի մարմնի վրա: Նստում է էնտեղ, աստծուն էնքան աղոթք անում, լաց լինում, որ աստված լսում է սրա աղոթքը, էս երկուսին էլ հոգի է տալիս, կենդանացնում: Երկու ախպեր հիմի էլի կռիվ են անում. մեկն ասում է՝ էս իմ կնիկն է, մեկէլն ասում է՝ չէ՛, իմ կնիկն է: Թագավորն ապրած կենա, կնիկը հիմի որի՞ն կհասնի:

Թագավորն ասում է.

- Պարզ չէ՞՝ մարդի գլուխը ո՞ր մարմնի վրա է, նրան կհասնի:

Հետո թագավորի նազիր-վեզիրին ա հարցնում.

- Նազի՛ր-վեզիր, կնիկը որի՞ն կհասնի:

- Պարզ չէ՞՝ մարդի գլուխը ո՞ր մարմնի վրա է, նրան կհասնի:

Թագավորի աղջիկը էլ չի կարողանում իրեն պահի, էնտեղից ձեն է տալիս.

- Ա՛յ ձեր դատաստանը քանդվի. ինչի՞ կնիկը էն մարմնին կհասնի, որ մարմնի վրա մարդի գլուխն է. հազիր էն մարմնին կհասնի՝ ո՞ր մարմնի վրա տեգոր գլուխն է: Ի՞նչ անենք, որ գլուխը մարդինը չէ. ամբողջ մարմինը հո՞ մարդինն է:

- Թե որ էն կնիկը նրան կհասնի,- ասում է Արաբը,- բա դո՛ւ էլ ինձ կհասնես:

Թագավորը, նրա նազիր-վեզիրը բոլորը մնում են սառած, թե ոնց խոսեցրեց աղջկան:

- Էս մի անգամ խոսեցրիր,- ասում է թագավորը,- մնաց երկու անգամ. թե որ էս երկու անգամն էլ խոսեցրիր, ի՞նչ որ խոստացել եմ, կտամ. թե չէ՝ իմաց կաց՝ գլուխդ կթռչի:

- Լա՛վ, թագավորն ապրած կենա, թո՛ղ էդպես լինի,- ասում է Արաբը:

Արաբը գնում է տուն. ճաշ-մաշ է պատրաստում, որ ախպերը գա, հաց ուտեն: Ախպերը որ գալիս է տուն, Արաբը նրան բան չի ասում, թե գնացել էր թագավորի աղջկան խոսեցնելու:

Առավոտը որ լուսանում է, ախպերը գնում է իր բանին, Արաբն էլ վեր է կենում, ուղիղ գնում, թագավորի խնամաքարի վրա նստում: Թագավորը էդ ժամանակ դուրս է գալիս, Արաբին կանչում, տանում աղջկա սենյակ:

Արաբը սենյակի մեջ դե՛ս է ման գալիս, դե՛ն է ման գալիս, տեսնում է՝ էն ժանգոտ ճամպրուկը չկա. դու մի ասի՝ թագավորի աղջիկն է դիտավորյալ վերցնել տվել, որ Արաբը գա, հետը խոսելու էլ բան չգտնի: Գնում է, սենյակները ման գալիս, մի ժանգոտ, քնձռոտ թուր է գտնում, բերում դնում առաջը, հետը խոսում:

- Բարո՛վ, ժանգո՛ոտ թուր ախպեր. էս քանի տարի է՝ իրար չենք տեսել. իսկի չես ասում՝ իմ Արաբ ախպերն էս ո՞ւր է, չի երևում:

- Բարին արևդ, Արա՛բ ախպեր: Ի՞նչ անեմ, ամեն մարդ իր դարդով է մոլորված, ես էլ՝ իմ դարդով: Առաջ ես ի՞նչ տեսակ լավ թուր էի. թագավորը ինձ վրեն էր կապում, գնում կռիվ... Ո՛վ գիտի՝ կռվի մեջ քանի՞ գլուխ մի հարվածով էի թռցնում: Բայց հիմի թագավորը էլ ինձ մտիկ չի անում. ժանգոտել եմ, դարձել անպետք մի բան. իսկի երեսիս նայող չկա:

- Բա՛ն չկա, թո՛ւր ախպեր. աստված ողորմած է: Դու է՛ն ասա, հեքիաթ, զրույց չգիտե՞ս՝ ասես, ականջ դնենք, օր մթնեցնենք:

- Չէ՛, Արա՛բ ախպեր, ես բան չգիտեմ, թե էդ տեսակ հունար ունես, ասա՛, հազիվ պարապ եմ, ականջ դնեմ:

- Լա՛վ, կասեմ. համա պիտի լա՛վ ականջ դնես, հա՛:

- Ասա՛, ականջ կդնեմ:

Արաբն ասում է.

- Լինում է, չի լինում մի խառատ, մի դերձակ, մեկ էլ մի տերտեր: Սրանք երեքով ախպեր են դառնում, վեր կենում գնում օտարություն՝ աշխատանքի: Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, մի անտառի մոտ մութը վրա է հասնում: Էստեղ վեր են գալիս, որ գիշերը մնան, առավոտը էլի իրենց ճամփեն գնան: Քանի որ հետները ահագին փող էին վերցրել, ասում են. «Եկե՛ք գիշերը հերթով պահակ կանգնենք, որ մեզ հարամի, բան չմոտենա»: «Լա՛վ,- ասում է խառատը,- էդ շա՛տ լավ կլինի: Ուզո՞ւմ եք, սկզբից հենց ե՛ս պահակ կկանգնեմ.

հետո դերձակին կզարթնեցնեմ, ես կքնեմ: Լուսադեմին նա էլ թող տերտերին վեր կացնի»: Բոլորն էլ համաձայնվում են, ու առաջ խառատն է պահակ կանգնում: Էս խառատը շա՛տ գլուխ ուստա է լինում. աշխարհքումը սրա նման ուստա չէր լինի: Էս մեր խառատը ուրագը մեջքն է խրում, պահակ կանգնում, ընկերներն էլ քնում են: Էդ գիշեր էլ սատանայական է՛ն տեսակ ցուրտ էր, է՛ն տեսակ ցուրտ... Խեղճ խառատը ցրտից դողում էր, չէր իմանում՝ ինչ անի: Վերջը ասում է. «Արի՛ մի խրտվիլակ սարքեմ, հետո պառկեմ քնեմ, ո՞վ կիմանա, թե ես քնել եմ»:

Գնում է անտառ, լավ-լավ չամի փետեր կտրտում, բերում էն տեսակ մի փետե մարդ շինում, որ գիշերը մարդ տեսներ, կասեր՝ էն ի՞նչ մարդ է էնտեղ կանգնած, էնքան մարդի նման էր: Էսպես շինում է, դիք կանգնեցնում, ինքը պառկում քնում: Քնում է, քունն առնում: Հետո գիշերվա մի վախտ զարթնում է, դերձակի կողքին բոթում. «Դերձա՛կ ախպեր, վե՛ր կաց. քո հերթն է. պահա՛կ կանգնի»:

Ասում է, ինքը քնում: Դերձակը վեր է կենում, տեսնում ի՞նչ՝ մի մարդ էնտեղ դիք կանգնած է. ո՛չ շարժվում է, ո՛չ էլ: Ինքն իրեն ասում է՝ բա որ սա գող լինի՞: Էլ ձեն, ծպտուն չի հանում. կամաց-կամաց մոտենում է, թուրը քաշում, տալի վեր գցում: Թրի ծերով դե՛ս, դե՛ն է բրթում, տեսնում է, որ մարդ չէ, փետից է շինած: Նոր գլխի է ընկնում, որ էս խառատի սատանությունը կլինի: Ինքն իրեն ասում է. «Բա ես էլ խառատի արածին մի բան չավելացնե՞մ»: Գնում է անտառ, ծառի լեն տերևներ պոկոտում, բերում էս փետե մարդի համար մի ձեռք շոր է կարում, հագցնում: Էս անգամ որ տեսնեիր, մարդից չէիր ջոկի. կասեիր՝ ճիշտ որ մարդ է: Լուսադեմին վեր է կենում, տերտերին բոթում. «Տերտե՛ր, տերտե՛ր, վե՛ր կաց. հերթը քոնն է. մի քիչ էլ ե՛ս աչքս կպցնեմ»:

Տերտերը վեր է կենում, տեսնում ի՞նչ՝ մի երկեն մարդ, շորերը սիրուն հագին՝ էնտեղ կանգնած: Թուք-մուքը չորանում է. մոտենում է, ձեն տալիս. «Ո՞վ ես, ո՞վ ես, ո՞վ ես». ձեն չի տալիս: Տանում է բերում, որ մի դըրբ չի տալիս, տապալվում է, երեսի վրա վեր ընկնում: Նոր տնտղում է, տեսնում, որ փետե մարդ է: Սիրտը մի քիչ որ հանդարտվում է, իմանում է, որ խառատի ու դերձակի սատանությունն է: «Ա՛յ հարա՛յ,- ասում է,- նրանք էնքան եղան՝ էս տեսակ մարդ շինեցին, բա ես էլ չկարողանա՞մ սրան հոգի տամ, որ էսքան սուրբ տերտեր եմ»: Էս մեր տերտերն էդ ցուրտ սառնամանիքին չոքում է, աստծուն աղոթք անում, աղոթք անում. էնքա՛ն աղոթք է անում, որ աստված լսում է նրա ձենը, էս փետե մարդին հոգի է տալիս:

Դառնում է իսկական մարդ, հետները խոսում, զրույց անում: Դու արի տես՝ հիմի էս երեքով իրար հետ վիճում են. խառատն ասում է. «Էս մարդը ինձ կհասնի, քանի որ ես գնացի, անտառից փետ կտրեցի, բերի շինեցի»: Դերձակն ասում է. «Չէ՛, ինձ կհասնի. քանի որ ե՛ս նրա համար շոր կարեցի, հագցրի, թե չէ հիմի ցրտից լրիվ չորացել էր»: Տերտերն էլ ասում է. «Հազի՛ր ինձ կհասնի. ես որ չչոքեի, աստծուն աղոթք չանեի, նրան ո՞վ հոգի կտար. դատարկ փետե մարդը որ հոգի չունենար՝ ինչի՞ էր պետք»: Թագավորն ապրած կենա, հիմի էն մարդը որի՞ն կհասնի:

- Հաստատ որ խառատին. քանի որ նա բոլորից առաջ միտք արեց, բերեց, փետից մարդ շինեց:

- Նազիր-վեզի՛ր, ո՞ւմ կհասնի:

- Հաստատ որ դերձակին. քանի որ նրա համար շորեր կարեց, ցրտից պրծացրեց:

Թագավորի աղջկա սիրտը էլ չի դիմանամ, էն կողմից ձեն է տալիս.

- Տո՛ ձեր դատաստանը քանդվի, ո՞րտեղից նրանց կհասնի. տերտերը որ չլիներ, էն փետե մարդին ո՞վ հոգի կտար. հազի՛ր տերտերին կհասնի:

- Թե որ նա տերտերին կհասնի,- ասում է Արաբը,- բա դու էլ ի՞նձ կհասնես:

Թագավորը, իր նազիր-վեզիրը էլի մնում են զարմացած, թե ոնց Արաբը էս երկու անգամ աղջկանը խոսեցրեց:

- Մնաց մի անգամ,- ասում է թագավորը,- թե խոսեցրիր, աղջիկս քոնն է, թե չէ՝ գլուխդ պիտի թռչի:

- Լա՛վ, թագավորն ապրած կենա,- ասում է Արաբը,- թող էդպես լինի:

Արաբը գալիս է տուն, ախպոր համար կերակուր պատրաստում: Հացի վախտը ախպերը գալիս է, հաց են ուտում: Բայց էլի նրան բան չի ասում: Առավոտը ախպերը որ գնում է իր բանին, Արաբն էլ վեր է կենում գալիս, թագավորի խնամաքարի վրա նստում:

Թագավորը դուրս է գալիս, Արաբին կանչում, տանում աղջկա սենյակը:

Արաբը սենյակի մեջ դե՛ս է մտիկ տալիս, դե՛ն է մտիկ տալիս, տեսնում է սենյակը լրիվ դատարկ է. ոչ մի բան, չկա, որ բերի, հետը խոսի: Գնում է, թագավորի աղջկա ձեռագործի շրջանակը բերում, դնում առաջը, հետը զրույց անում:

- Բարո՛վ, ախպե՛ր, հերիք չէ՞ բանես, մի քիչ էլ հանգի՛ստ առ, մե՛ղք ես:

- Է՛հ, ինչ հանգիստ առնեմ, Արա՛բ ախպեր. տարին-տասնէրկու ամիս իմ բան

ու գործը հա էս է, հո նոր չէ:

- Լա՛վ, բա մի հեքիաթ, բան չգիտե՞ս, ասես՝ ականջ դնենք:

- Չէ՛, Արա՛բ ախպեր. ես ի՞նչ հեքիաթ իմանամ, թե դու գիտես՝ ասա՛:

- Լա՛վ, ուզում ես՝ ասեմ. համա պիտի լա՛վ ականջ դնես, հա՛:

- Ասա՛, ականջ կդնեմ. ասա՛, տեսնենք:

Արաբն ասում է.

- Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը մի հուրի-մալաք, սիրուն աղջիկ է ունենում: Էս աղջկան հա՛մ թագավորի նազիրի տղեն է սիրելիս լինում, հա՛մ վեզիրի տղեն, հա՛մ էլ նրա խորհրդականի տղեն: Հիմի թագավորը չի իմանում՝ որին տա: Համա էս էլ պիտի ասեմ, որ նրա աղջկան բոլորից առաջ վեզիրի տղեն էր սիրել: Թագավորն ապրած կենա, քո խելքով աղջիկը որի՞ն կհասնի:

- Հաստատ որ թագավորի խորհրդականի տղին,- ասում է թագավորը:

- Նազի՛ր-վեզիր, աղջիկը ո՞ւմ կհասնի:

- Հաստատ որ թագավորի խորհրդականի տղին:

Թագավորի աղջիկը էս անգամ էլ չի դիմանում, էնտեղից ձեն է տալիս.

- Տո՛ ձեր դատաստանը քանդվի. աղջիկը ինչի՞ պիտի խորհրդականի տղին հասնի. հազի՛ր վեզիրի տղին կհասնի, որ բոլորից առաջ իրար հետ խոսք ու զրույց են ունեցել, իրար սիրել:

- Որ նա նրա՛ն կհասնի,- ասում է Արաբը,- բա դու էլ ի՞նձ կհասնես:

Թագավորը էլ ի՞նչ պիտի ասեր, որ աղջկան չտար. էս էլ երեք անգամ խոսեցրեց: Բերում է, աղջկան տալիս Արաբին, վրեն էլ յոթ ուղտաբեռ ոսկի:

Արաբը աղջկան վերցնում է, գալիս տուն, ախպոր համար կերակուր պատրաստում: Ախպերը որ գալիս է տուն, աղջկան տեսնում՝ մնում է զարմացած:

Հարցնում է.

- Արա՛բ ախպեր, էս աղջիկը ո՞րտեղից է:

Նոր Արաբն ասում է.

- Բա չե՞ս ասի, էսպես, էսպես, էսպես բան...

Հետո Արաբն ասում է.

- Թագավորի ցեղն ապրած կենա, հերիք է՝ ինչքան աշխատանք արինք. արի՛ էստեղից վեր կենանք, գնանք: Փա՛ռք աստծու, հիմի էլ հո՞ աղքատ չենք. թագավորի տված յոթ ուղտաբեռ ոսկին մեզ հալալ լինի:

Երկուսով իրենց ունեցած-չունեցածը հավաքում են, ճամփա ընկնում: Գալիս են, գալիս, շատ ու քիչն աստված գիտի, հասնում են էն աղբյուրի մոտ, որտեղ առաջ ախպեր էին դարձել: Էստեղ բեռները իջեցնում են, նստում, հաց ուտում:

Հաց են ուտում՝ պրծնում, Արաբն ասում է.

- Է՛, թագավորի՛ ցեղ, դե՛ արի մեր աշխատանքը բաժին-բաժին անենք. ոնց որ էստեղ ախպերացանք, էդպես էլ հիմի բաժանվենք:

- Ա՛յ ախպեր, ինչի՞ բաժանվենք,- ասում է թագավորի տղեն,- հազիր ախպեր ենք, է՛լի. կգնանք, իրար հետ էլի մի տեղ կկենանք:

- Չէ՛,- ասում է Արաբը,- պիտի բաժանվե՛նք:

Ինչքան փող էին աշխատել, բերում է Արաբը հալալ կես անում. մնում է աղջիկը: Թուրը քաշում է, որ աղջկան էլ կես անի:

- Ա՛յ ախպեր,- ասում է թագավորի տղեն,- էլ աղջկան ինչի՞ ես կես անում. էդ աղջիկը քոնն է ու քոնը, դրանից ես բաժին չեմ ուզում, է՛լի:

- Չէ՛, որ չէ՛,- ասում է Արաբը,- պիտի էս աղջկան էլ կես անեմ. թե կիսում ենք, հալալ կիսենք:

Թուրը քաշում է, որ տա, էդ պահին աղջկա բերանից մի մեծ վիշապ է դուրս գալիս, էնտեղ վեր ընկնում: Արաբը աղջկան էլ ձեռք չի տալիս. հասնում է, վիշապին սպանում, կտոր-կտոր անում:

- Ինձ ճանաչո՞ւմ ես,- ասում է Արաբը,- թագավորի՛ ցեղ. ես էն Ոսկե ձուկն եմ, որ ափսոսեցիր մորթել, թե ինչ է՝ հորդ աչքերը լավանան, ու հետ գցեցիր ծովը: Իմ պատճառով հերդ քեզ աքսորեց, տանից դուրս արեց: Էս որ իմացա, ես էլ ծովի միջից դուրս եկա, դարձա Արաբ, որ քո արած լավության տակից դուրս գամ, ձեռքիցս եկած լավությունն էլ ե՛ս քեզ անեմ: Հրես ա՛ռ. էսքա՛ն փողն էլ քեզ, է՛ս աղջիկն էլ քեզ. ես հետ եմ գնում ծով, աստված շնորհավո՛ր անի. աստված երկուսիդ մի բարձի ծերացնի: Իմ թեփուկներից էլ քեզ մի հատ կտամ, տար հորդ աչքերին քսի, անմիջապես կբացվեն:

Արաբը էդ ժամանակ դառնում է առաջվա Ոսկե ձուկը: Իր թեփուկներից մի հատ պոկում է, տալիս թագավորի տղին, մնաս բարով անում հետները, գնում, էլի ընկնում ծովը:

Թագավորի տղեն բեռները կապում է, ընկնում ճամփա՝ դեպի իրենց երկիրը: Գալիս է, գալիս, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է հոր քաղաքը: Տեսնում

է, որ դեռ էն Լողմա հեքիմը հոր աչքերի վրա չարչարվում է: Հանում է Ոսկե ձկան թեփուկը, քսում է հոր աչքերին թե չէ՝ անմիջապես բացվում են:

Թագավորը իր թախտից վեր է գալիս, տղին նստեցնում: Բերում է աղջկանն էլ տղի հետ պսակում, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

ՌԱՆՉՊԱՐ ՕՀԱՆԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի ռանչպար կար, անունը Օհան էր, մի հատ աստծու երեսից ընկած տղա ուներ: Հերը տեսավ, որ էդ տղից խելքը բան չի կտրում, ասաց.

- Լավ կլինի, որ գլխիցս ռադ անեմ:

Հենց էդ մի տղեն ուներ:

Ասաց.

- Կնի՛կ, տղին պիտի վերցնեմ, տանեմ տամ փեշակի:

Ասաց՝ տա՛ր: Վերցրեց գնաց: Տղեն էլ էնքան հասած չէր, ջահել տղա էր:

Շատ գնացին, քիչ գնացին, աստված գիտի, գնացին, մի հարթ տեղ կանգ առան, տեսան՝ էդտեղ մի տուն կա: Տղեն ասաց.

- Ափի՛, էս ինչ լավ եղավ, գիշերն էստեղ կկենանք:

Խեղճը չգիտեր, թե ինչ տեղ է: Ներս մտան, տեսան՝ քառասուն հարամի նստած:

- Էս ի՛նչ լավ եղավ,- ասացին հարամիները,- մենք ընկել ենք սար ու ձոր, որս ենք ման գալիս, որսը իր ոտքով եկավ: Ա՛յ մարդ, ի՞նչ մարդ ես:

- Ես էս տղեն բերել եմ՝ տամ ձեզ աշկերտ:

Հարամիները ծիծաղեցին:

- Կվերցնենք, բիձա՛: Մեր արհեստն ի՞նչ է, որ դու կարոտում ես մեր արհեստին:

- Ի՞նչ ուզում է՝ լինի: Դուք էսօր ապրում եք էդ արհեստով, թող էս էլ ձեզ պես ապրի:

- Դե, բիձա՛, առավոտը վե՛ր կաց, գնա: Տղեն որ արհեստը սովորեց, մենք կվերցնենք, կբերենք, կտանք քեզ:

- Ա՛յ տղա,- ասացին,- կուժը վերցրո՛ւ, էստեղ մոտիկ աղբյուր կա, լցրո՛ւ բեր:

Տղեն կուժը վերցրեց, գնաց աղբյուրը, ջուրը լցրեց, ուզեց, որ քաշի, տեսավ՝ կուժը չի գալիս, մեկ էլ թափ տվեց՝ մի սպիտակ ձեռք երևաց: Մի ձեռքով կուժը բռնեց, մեկով էլ էդ ձեռքը: Էդ ձեռքի տերը ճչաց ու մի հատ թաս նետեց էդ տղի վրա: Ձեռքը բաց թողեց, կուժը ջրով լիքը վերցրեց, եկավ թասի մոտ: Թասը հողոտ էր, սրբեց, դրեց ծոցը, գնաց հարամու տուն: Հարամիքը մնացին զարմացած, իրար երեսի նայեցին:

- Ա՛յ տղա, էդ ջուրը ո՞րտեղից բերիր:

- Ձեր տան մոտի աղբյուրից: Կուժը իջեցրի ջուրը, որ ջուր հանեմ, կուժը դուրս չէր գալիս: Ուժով քաշեցի, մի հատ ձեռք դուրս եկավ: Էնքան սպիտակ էր, կասեիր ձյուն լիներ: Հետո որ ձեռքը բռնեցի, էն մի ձեռքը տարավ ծոցը, մի թաս հանեց, շպրտեց: Ձեռքը թողի, հասա թասին: Հրե՛ս, ծոցս է:

Հարամիների գլխավորը թասն առավ, տնտղեց, խելքը գնաց: Ասաց.

- Էս թասը գին չունի:- Վեր կացավ ու տղի ճակատը պաչեց:- Տղա՛, հալալ է քեզ:

- Դե՛, տղե՛րք, էլ մեզ հարամությունը հարամ է, տանենք, էս թասը ծախենք, քանի սաղ ու կենդանի ենք, ուտենք, չի հատնի: Դե՛,- ասաց,- ձիս դո՛ւրս քաշեք, գնամ ծախեմ, փողը բերեմ, կես անենք, ամեն մարդ իր փողը վերցնի, գնա իր տուն:

Հարամիների գլխավորը ձին հեծավ, գնաց քաղաք, տարավ մի դրամափոխի մոտ, որ փող առնի: Դրամափոխն ասաց.

- Մեր բանը չէ էդ: Էդ որ առնի, էսինչ դրամափոխը կառնի:

Վերցրեց տարավ էդ երևելի դրամափոխի մոտ.

- Ա՛ռ,- ասաց,- էս թասի դիմաց փո՛ղ տուր:

Նա թասն առավ ձեռքը, պտտեց, տեսավ, որ անգին բան է, ասաց.

- Տանենք թագավորի մոտ, ա՛յ տղա, թասը գնահատի՝ փողը տամ:

Գնացին թագավորի մոտ, դրամափոխն ասաց.

- Թագավո՛ր, էն տարին, որ իմ սուտակ ու գոհար դուքանը կտրեցին, էդ թասը դուքանում էր: Հիմա գողին բռնել եմ, խնդրեմ վճռես՝ իմ ապրանքը վերցնես, տաս:

- Ա՛յ տղա, էս թասը քո ձեռքը ո՞րտեղից է ընկել:

- Թագավորն ապրած կենա, մեզ մի աշկերտ ունենք, նա է բերել աղբյուրից:

- Դուք ի՞նչ փեշակի մարդ եք, որ աշկերտ ունեք, ճի՛շտն ասա, թե չէ գլուխդ կթռցնեմ:

- Որ արդարն ասեմ, մենք քառասուն հարամի ենք, մեզ մի նոր աշկերտ բռնեցինք, էդ թասը նա է բերել:

Թագավորը մարդ ուղարկեց, երեսունինը ընկերներին ու աշկերտին վերցրին, բերին:

Աշկերտը եկավ, թագավորին յոթ անգամ գլուխ տվեց, ասաց.

- Թագավորն ապրած կենա, էդ թասը բերողը ես եմ, թե որ էդ թասից տասնմեկն էլ բերեցի, քո քաղաքում նման մարդ չպիտի մնա, որ չբերեցի, առաջ իմ վիզը կտրի, հետո ընկերներիս:

- Դե՛ տարեք, էս քառասուն մարդուն էլ բռնեցեք, թող էս տղեն գնա, էդ թասից բերի:

Տղեն հեծավ հարամիների գլխավորի ձին, թասն առավ, որ դրանից տասնմեկն էլ բերի, ու գնա՛ց, գնաց:

Շատ գնաց, թե քիչ գնաց, աստված գիտի, գնաց մի թագավորանիստ քաղաքի ռաստ եկավ: Գնաց, մտավ մի տուն: Տեսավ ըտեղ մի մեծ կին կա, էնքան է նոթերը կիտած, կախ, որ լուն ունքից վեր ընկնի, հարյուր կտոր կլինի:

- Նանի՛, նոթերդ ինչո՞ւ ես կիտել էդպես:

- Օ՜ֆ, ինձանից գործ չունես, հացդ կե՛ր, քեզ համար նստի՛:

- Աստված սիրես, նանի՛, ինչո՞ւ ես նոթերդ կիտել, ասա՛, կարող է՝ քո դարդին դարման եմ անում:

- Ա՛յ բախտավոր, քեզ պե՞ս տղերք են գնացել հսկել, չեն կարողացել ճար անել:

- Ի՞նչ է, նանի՛, ասա՛:

- Մեր թագավորը մի շատ լավ տղա ուներ, մեռել էր, տարանք թաղեցինք: Ցերեկը թաղած է մնում, գիշերը հանում են, դնում գետնի երեսը՝ պատանք-մատանք ճղճղած:

- Դե՛, նանի՛, արի հացը վերցրո՛ւ, էլ հաց չեմ ուտում:

- Ա՛յ տղա, ինչի՞ չես ուտում, կե՛ր, կե՛ր:

- Չեմ ուտում, վերցրո՛ւ, հարամ լինի:

Պառավը էդ տղին վերցրեց, տարավ թագավորի մոտ, ասաց.

- Էս տղեն ասում է. «Ես գերեզմանը էնպես կհսկեմ, որ քար չշարժվի, թե որ չհսկեցի, իմ վիզը կտրի»:

Թագավորն ասաց.

- Գնա հսկի՛:

Գնաց, գերեզմանից հեռու նստեց, մտիկ արեց: Եկավ գիշերվա կեսը, երբ հավքերն էլ էին քնած, տեսավ՝ երեք հատ աղունիկ վեր եկան, փետուրները հանեցին, դարձան երեք հատ շատ սիրուն աղջիկ, մեկը մյուսի հետ խոսեց, ասաց.

- Հաց ուտե՞նք, թե՞ թագավորի տղին բերենք, նոր հաց ուտենք:

- Ա՛յ տունդ շինվի, էն տեսակ տղեն էնտեղ քնած՝ մենք հա՞ց ուտենք, հացը կուլ կգնա՞:

Մեկը մեջքից սուփրան արձակեց, մի կարմիր ճիպոտ առավ ձեռքը, խփեց սուփրին, ասաց.

- Դե՛, բացվի՛, սուփրա՛:

Սուփրեն բացվեց՝ ամեն բան վրան:

Հետո վեր կացան, գնացին գերեզմանի մոտ, մեկը ճիպոտով հարվածեց քարին, ասաց.

- Քա՛ր, բացվի՛:

Քարը բաց եղավ:

- Հո՛ղ, բացվի՛:

Հողը բաց եղավ: Մեռելին վերցրին, դրին գետնի երեսին, ճիպոտով տալուն պես սթափվեց, նստեց: Մի ձեռք շոր բերին, հագցրին տղին ու տարան սուփրի գլխին նստեցրին, իրենք էլ շարքով դեմը նստեցին:

Տղեն մտիկ արեց, տեսավ, որ երեք աղջիկը մի շարքի են նստած, իսկ տղեն սուփրի գլխին է նստած, ասաց.

- Էս շատ լավ եղավ, նետս էնպես գցեմ, որ երեքին դիպչի, տղին չդիպչի:

Նետը գցեց, գցելուն պես խառնվեցին իրար, սուփրեն էլ թողին, ճիպոտն էլ թողին, փետուրները հազիվ հագան ու թռան: Տղեն եկավ թագավորի տղի մոտ թուրը ձեռքին, ասաց.

- Բարի իրիկո՛ւն, թագավորի՛ որդի:

- Աստծու բարին, հազար բարին, ա՛յ տղա:

- Ես քո հոր պահակներից եմ, նստենք, մի քիչ հաց ուտենք:

Հացը կերան, տղեն ասաց.

- Դե՛ արի, քեզ դնեմ տեղը:

- Ա՛յ ջանըմ, հազիվ եմ ազատվել, արի գնանք մեր տուն:

- Չէ՛, պիտի մտնես տեղդ:

Սուփրեն կապեց մեջքին, ճիպոտը վերցրեց, տեսավ՝ մի մատանի էլ սուփրի պռնկին է, վերցրեց, դրեց մատը:

- Դե՛ մտի տեղդ:

Տղեն մտավ տեղը, ճիպոտով տվեց, ամեն բան իր տեղն առավ:

Լույսը բացվեց, մարդ եկավ տեսավ, որ գերեզմանի քարը չի շարժվել, ոնց որ կար՝ էնպես կա: Նազիրը գնաց թագավորին ասաց.

- Թագավո՛ր, աչքդ լույս լինի, ոնց որ թողել ենք, էնպես մնացել է, քար չի շարժվել:

Տղեն եկավ թագավորի մոտ, թագավորն ասաց.

- Ա՛յ տղա, ո՞նց ես պահել գերեզմանը:

- Գնանք թագուհու հետ, տեսե՛ք:

Վեր կացան թագավորը, թագուհին, նազիրն ու էդ տղեն, գնացին գերեզման:

- Թագավո՛ր, աչքովդ տեսա՞ր, որ քար չի շարժվել: Որ տղիդ ողջ-առողջ հանեմ տամ քեզ, ինձ ի՞նչ կտաս:

- Ինչ ուզես՝ կտամ:

- Դե դուք գնացե՛ք ձեր տուն, ես էս պահին հանեմ, բերեմ:

Թագավորն ու թագուհին նազիրի հետ գնացին տուն, տղեն հանեց թագավորի տղին, թևը բռնեց, խոսելով բերեց թագավորի տուն:

- Ա՛ռ քո որդին, թագավո՛ր:

Ուրախացան, աշխարհքն աչքալույս եկավ թագավորին:

- Ուզի՝ տամ,- ասաց թագավորը:

Տղեն հանեց թասը, ասաց.

- Էս թասի նման տասնմեկ թաս եմ ուզում: Իմ քառասուն ախպերները սրա համար բռնված են:

- Դրանից չունեմ, որդի՛ ջան, աղջիկ ուզի՝ տամ, գանձ ուզի՝ տամ, քաղաք ուզի՝ տամ, մենակ դրանից ես չունեմ:

Տղեն ձին հեծավ, ասաց.

- Բան չեմ ուզում քեզնից,- ու գնաց:

Գնաց, գնաց, շատն ու քիչը աստված գիտի, գնաց, մի թագավորի քաղաքի ռաստ եկավ: Ծովի եզրին էր էդ քաղաքը: Մտավ մի տուն էդ տղեն, տեսավ՝ տան տերը նոթերը շատ կիտած է:

- Ախպե՛ր, դե հյուր ես եկել, հազար բարի ես եկել, որ հաց չկա՝ դնեմ առաջդ ուտես, ես ի՞նչ անեմ:

- Ինձ հաց շատ ունեմ, ախպե՛ր ջան, քեզ էլ կուտեցնեմ, դու դարդ մի՛ արա:

Սուփրեն հանեց, ճիպոտով զարկեց, ամեն բան բացվեց:

- Էրեխեքին կանչի, գան, մի պինդ ուտեն, լիանան:

Եկան, կերան, կշտացան:

- Դե ասա՝ տեսնեմ, էս ի՞նչ բան է, ձեր քաղաքում ինչո՞ւ հաց չկա: Հող չունե՞ք՝ վարեք-ցանեք, հնձեք, բերեք կառավարվեք:

- Մենք վար ու ցանքի տեղ չունենք, ախպե՛ր ջան:

- Բա ձեր հացը ո՞րտեղից է գալիս:

- Մենք նավով ծովի էն ափից ենք բերել տալիս:

- Բա ինչո՞ւ չեք բերել տալիս:

- Ա՛յ մարդ, մի ձեռք է դուրս եկել ծովի մեջտեղից, էստեղից գնալիս բան չկա, գնում ենք ցորեն, ալյուր բարձում ենք, գալիս էդ տեղը, էդ ձեռքը քաշում է նավերը, բոլորը խորտակում: Հնար չենք գտնում, որ ձեռքից պրծնենք:

- Որ գնամ էդ ձեռքին հնար անեմ, նավը լիքը բերեմ, աշխարհը լիացնեմ, թագավորը իմ ուզածը կտա՞:

- Այ հա՛յ, էնպես կտա՞, լեզուդ ինչ պտտի՝ կտա:

- Դե ե՛լ, գնանք թագավորի մոտ:

Վեր կացան, գնացին թագավորի մոտ: Տղեն ասաց.

- Թագավո՛ր, ի՞նչ կտաս, որ գնամ, նավերը բերեմ, լիացնեմ ձեր երկիրը:

- Ինչ ուզես՝ կտամ:

- Լավ,- ասաց:

Նստեց մակույկը, նավերը հետևից քշեցին: Քառասուն նավ ցորեն, ալյուր լիքը լցրին, մակույկը առաջ գցեց, եկավ ձեռքի մոտ: Տեսավ մի սպիտակ ձեռք՝ ոսկե թևնոցը արմունկին, ջրի մեջ ֆոֆռում է: Ձեռքով պինդ բռնեց դաստակը, թափ տվեց: Թափ տալուն պես թևնոցը ձեռքին մնաց, թևնոցի տերը սուզվեց ջրի մեջ: Նավերը ճամփեն շեղեցին, եկան անցան, անվնաս եկան քաղաք: Լիությունը ընկավ քաղաքը:

Տղեն եկավ թագավորի մոտ, ասաց.

- Դե՛, թագավո՛ր, իմ ուզածը տո՛ւր, գնամ:

Թագավորն ասաց.

- Ի՞նչ ես ուզում:

Տղեն հանեց թասը, ասաց.

- Տասնմեկ էսպիսի թաս եմ ուզում քեզնից:

- Այ հա՛յ,- ասաց թագավորը,- էդ իմ ամբողջ կարողությունը արժի, ես էդպիսի տասնմեկը ո՞րտեղից տամ: Ուզի աղջիկս՝ տամ, թագավորությունս՝ տամ, քաղաք՝ տամ:

- Չէ՛, ոչ մի բան էլ հարկավոր չէ, իմ քառասուն ախպերը բռնված են, իմ քունը չի տանում, էդպիսի տասնմեկը պիտի տանեմ, որ ազատեմ:

- Դե որ էդպես է, ես նավապետին տեսնեմ,- ասաց թագավորը,- առավոտվա կողմ քեզ մի պատասխան կտամ:

Թագավորը կանչեց նավապետին.

- Հուրի թագավորի աղջիկների ճաշարանի տեղը գիտե՞ս:

- Գիտե՛մ:

- Լավ, մի տղա կա, նրան կտանես, ցույց կտաս:

Կանչեց տղին, ասաց.

- Գնա՛, էս նավապետը քեզ ցույց կտա Հուրի թագավորի աղջիկների ճաշատունը, էնտեղ կգտնես էդ թասից:

Ձին թողեց էն մարդի տանը, ինքը նստեց մակույկն ու գնաց: Յոթ օր, յոթ գիշեր գնաց, գնաց հասավ ծովի եզրին: Տեսավ երկաթից մի պուճուր դուռ կա:

Նավապետն ասաց.

- Էս է դուռը, որդի՛, դու ճրբ պիտի դուրս գաս, որ գնամ գամ՝ գնանք:

Ասաց.

- Մի տասնհինգ օրից հետո:

Դուռը հրեց, ներս մտավ: Տեսավ մի ալևոր մարդ, ձեռքերը քշտած, կերակուր է եփում:

- Բարի աջողում,- ասաց,- ափի՛ ջան:

- Աստծու բարին, հազար բարի, մա՛րդ արարած:

Համա էն տեսակ սիրուն էր էդ ալևորը, որ երկու անգամ չէիր կարող նայել երեսին:

- Ա՛յ տղա, օձը իր պորտով, հավքը իր թևով էստեղ չէր գա, դու ո՞նց ես եկել:

- Ձեր սերն է բերել ինձ:

- Սիրով ու ուրախ կենաս, ա՛յ տղա: Դե՛,- ասաց,- արի մտի անկողնու մեջ: Ժամանակն է, հուրիները կգան, կտեսնեն քեզ, վնաս կտան, ափսոս ես:

Տղեն մտավ անկողնու մեջ, սուս արեց:

Մի քիչ անցավ, Հուրի թագավորի աղջիկները եկան:

- Հը՛, էս ի՞նչ մարդու հոտ է գալիս էստեղ:

- Ա՛յ քո տունը շինվի,- ասաց կերակուր եփողը,- մենք մարդ ենք, մեզնից է գալիս:

- Չէ՛, օտար մարդու հոտ է գալիս:

- Գլխներդ վկա՝ չէ:

- Է՛հ, ճաշը պատրա՞ստ է:

Սուփրեն բերին քաշեցին, երեք քույրը եկան նստեցին: Նստելու ժամանակ Հուրի թագավորի նազիրը, մի նամակ ձեռքին, ուզեց ներս գալ: Ասացին.

- Համբերի՛, թող ճաշ անենք՝ նոր:

Ճաշին մեծ քույրը գինին ածեց, ասաց.

- Ես մի կենաց պիտի խմեմ: Ես խմում եմ էն տղի կենացը, որ քառասուն հարամին չկարողացան յոթ տարի իմ ջրի համը տեսնեն, էն տղեն եկավ տարավ: Էն անիծածը էնպես հուպ տվեց դաստակս, որ ծոցիս թասը հանեցի, շպրտեցի, նոր հոգիս ազատեցի: Կեցցե՛ էն տղեն:

Էն քույրը ծիծաղեց.

- Բա որ իմն ասեմ:

- Քոնն էլ ասա՛:

Նորից բաժակները լցրին:

- Ես խմում եմ էն տղի կենացը, որ սուփրեն ու ճիպոտը խլեց ինձնից ու իմ մեռցրած մեռելին հարություն տվեց: Կեցցե՛ էն տղեն:

Պստիկ քույրը ծիծաղեց.

- Ես էլ խմում եմ էն տղի կենացը, որ դաստակս հուպ տվեց, քառասուն նավը հացով տարավ, աշխարհքը լիացրեց: Կեցցե՛ էն տղեն:

Կերակուր եփողը միտք արեց. «Չլինի՞ էս տղեն եղած լինի, որ սիրտ արեց, ներս մտավ էստեղ»: Ասաց.

- Էդ տղեն որ էստեղ գար, ի՞նչ կտայիք:

- Ինչ որ ուզեր՝ կտայինք,- ասացին երեքն էլ:

Մեկ էլ հանկարծ տղեն անկողնուց դուրս եկավ, կանգնեց, ասաց.

- Բարև ձեզ, հուրի՛ մալաքներ:

Աղջիկները քար կտրեցին: Ասացին.

- Արի՛, արի՛ հաց ուտենք:

Նստեցին, հաց կերան:

Էդ ժամանակ նազիրը ներս մտավ, յոթ անգամ գլուխ տվեց, նամակը տվեց մեծ աղջկան, ձեռքը ծալեց, կանգնեց:

Նամակը բացեց, կարդաց, սկսեց աչքերից հեղեղի պես արտասուք թափել: Միջնեկը ձեռքից առավ կարդաց, նա էլ էդպես, պուճուրն առավ՝ պուճուրը ավելի շատ:

- Էդ նամակի մեջ ի՞նչ է գրված, որ էդքան լաց եք լինում,- ասաց տղեն:

Ասաց.

- Պատմե՞նք:

Ասաց.

- Պատմի՛:

Գնաց, պահարանը բացեց, մի պատկեր հանեց, բերեց դրեց տղի առաջ, ասաց.

- Մի ախպեր ունեմ, էս յոթ տարի է՝ Ազրայիլի ձեռին բռնված է, չենք կարողանում մի ճար անել, թե ճար անես, դու կանես: Ինչ ուզես՝ կտանք:

Ասաց.

- Կգնամ, կբերեմ:

- Որ բերես, դու կբերես, մարդ չի կարող բերել:

- Բա իմ քառասուն եղբայրը, որ բռնված են, նրանց ճարը:

- Դրա ճարը հեշտ է, քեզ օր ու կեսում կհասցնենք տեղ:

- Տեղ հասնելը հեշտ է, ինձ էսպիսի տասնմեկ թաս է պետք:

- Էհ, տնաշեն, քսանը կտանք, էդ էլ բան է՞:

Գնացին թագավորի մոտ: Տղեն յոթ անգամ գլուխ տվեց, ձեռքը ծալեց, կանգնեց:

Թագավորն ասաց.

- Էս մարդ արարածին ինչո՞ւ ես բերել:

- Բերել եմ, որ գնա ախպորս ազատի:

- Էհ, էս պտի ազատի՞: Կարո՞ղ ես ազատել:

- Աստուծով:

- Դե լավ, գնա ազատի: Ազրայիլը տեսե՞լ ես:

- Չէ՛:

- Լա՛վ կբերես: Ի՞նչ ես ուզում, որ բերես:

- Մտնեմ ախոռիդ մեջ, իմ սրտի ուզած ձին դուրս քաշեմ, քո վրի թուրը գցեմ իմ շլինքը, մի հատ էլ վահան՝ նետը հետը գցեմ ուսս, մի հատ էլ գուրզ առնեմ ձեռս՝ կգնամ կբերեմ:

- Դրանք պատրաստ են, դու բան ուզի:

- Մարդ էլ ուզում եմ, որ տանի, Ազրայիլի սարը ինձ ցույց տա:

- Գնա՛, աստված քեզ հետ, տեսնենք՝ ինչ կլինի:

Տղեն մտավ գոմը, մի շատ լավ ձի դուրս քաշեց, հեչ արեգակի երես չէր տեսել, աստղերի հետ խաղում էր: Թուրը գցեց շլինքը, նետն ու վահանը գցեց ուսը, գուրզն առավ ձեռը, եկավ, թագավորի դռան առաջ կանգնեց: Ձին մղկտալով խրխնջաց: Թագավորը դուրս եկավ: Որ տղին տեսավ, ջանը դող ընկավ, ասաց.

- Շան որդին կբերի տղին:

- Դե՛,- ասաց,- նազիրին ասա՝ գա ձին հեծնի, գնանք:

Նազիրը հեծավ, առաջ ընկավ, գնացին: Գնացին, Ջանջավազ սարի տակ կանգնեցին:

- Մինչև էստեղ իրավունք ունեի գալու,- ասաց նազիրը:

- Դե՛ մնաս բարով,- ասաց տղեն ու քշեց:

Քշեց գնաց, բարձրացավ էդ սարը, տեսավ՝ բարձր տներ կան ըտեղ, մի բարձր ճվոց է գալիս:

- Տների՛ տեր,- գոռաց,- դո՛ւրս արի, կռիվ եմ ուզում:

Երկու արաբ դուրս եկան, ասացին.

- Ի՞նչ մարդ ես:

- Կռիվ եմ ուզում:

Եկան, մեյդանի գլխին կանգնեցին, ասացին.

- Էս ի՛նչ բան է, որ մեր աղին քնահարամ անենք, վեր կացնենք:

Տղեն տեսավ, որ ճամփեն կտրել են, թուրը քաշեց, դրանց երկուսի շլինքն էլ կտրեց, ձիուց իջավ, գլուխները վերցրեց, շպրտեց պատշգամբը:

Թրխկոցի վրա Ազրայիլը վեր կացավ, եկավ, պատշգամբ, տեսավ՝ մի խենթ կռվարար գոռում է, ի՛նչ տեսակ է գոռգոռում:

- Կա՛ց,- ասաց,- գալիս եմ, մեծ թիքեդ ականջդ կթողնեմ:

Իջավ, ձին պատրաստեց ու հեծավ, եկավ, մեյդանի գլխին կանգնեց:

- Բարո՛վ, հազար բարի էկար, ա՛յ տղա, գուրզի հերթը ո՞ւմն է:

- Քոնն է, գցի՛, ես հյուր եմ: Յոթ գուրզ ունես, յոթ նետ ունես, յոթ էլ՝ թուր, գցի՛, աստված կա՛մ քեզ կտա, կա՛մ ինձ:

Ազրայիլը գցեց գուրզը, սար ու ձոր դողաց: Վրա պրծավ տղեն, գուրզը բռնեց, ասաց.

- Հանաքի վախտ չէ, ա՛ռ գուրզդ, կարգին գցի:

Յոթ գուրզ գցեց, տղին հեչ բան չարեց, յոթ նետ գցեց՝ չբաշարեց, յոթ հատ էլ թուր գցեց՝ քարերին դիպավ, մեջտեղից կտրեց:

- Հերթը քոնն է,- ասաց, կանգնեց:

Տղեն ձին քշեց: Ձին շատ քրտնեց, աչքերից քրտինքը կաթեց: Գնաց մեյդանի գլուխը, ասպանդակների վրա կանգնեց ու գուրզը գցեց, Ազրայիլի գլուխը ջնջխեց, ջանդակը վեր ընկավ: Եկավ, գլուխը կտրեց, տեսավ՝ ինքն իրեն գլուխը գլորվեց, գնաց:

- Տո՛,- ասաց,- էս գլուխն ո՞ւր է գնում,- թուրը քաշեց, տվեց, մեջտեղից երկու կես արեց:

- Տղա՛, մեկ էլ,- ասաց գլուխը:

- Չէ՛,- ասաց,- իմ մորից ես մի անգամ եմ ծնվել:

Ձին կապեց դռնից ու ներս մտավ: Գնաց տեսավ՝ Հուրի թագավորի տղեն սենյակում շղթայով ամուր կապված է: Շղթան արձակեց, ասաց.

- Դե արի գնանք, հասցնեմ քո հորը:

Թագավորի տղեն իջավ, նստեց ձին, քշեցին: Եկան հասան քաղաքին մոտիկ, էդ թագավորի տղեն ասաց.

- Ա՛յ տղա, որ ինձ տանես հորս մոտ, կասես՝ պուճուր աղջիկդ եմ ուզում, մեկ էլ՝ մատիդ մատանին:

Եկան տուն: Հերը, մերը, քույրերը փաթաթվեցին տղին, լաց եղան:

Թագավորն ասաց.

- Ուզի՝ տամ, որդի՛:

Ասաց.

- Քեզ առողջություն եմ ցանկանում:

- Ուզի՛, ուզի՛:

- Ուզում եմ քո պուճուր աղջկան, քո մատի մատանին, տասնմեկ հատ էլ թաս:

- Տվի, տա՛ր, խերը տեսնես:

Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արին, էդ տղին ու աղջկան պսակեցին, տարան դրին մի սենյակ: Տղեն հանեց թուրը, դրեց մեջտեղ:

Աղջիկն ասաց.

- Ինձ հավան չե՞ս, թե՞ իմ հորը, որ թուրդ դրիր մեր մեջտեղը:

Ասաց.

- Ախր իմ քառասուն ախպերն են բռնված:

Առավոտը վեր կացան, տասնմեկ թասն առան, գնացին իրենց երկիր: Տարավ էդ աղջկան իրենց տուն, հերը մնաց զարմացած: Ինքը գնաց թագավորի մոտ, հանեց տասներկու թասն էլ, դրեց թագավորի առաջ:

Կանչեցին դրամափոխին.

- Արի տեսնենք՝ քո թասը ո՞րն է, ճանաչի՛:

Նա որը վերցրեց, տեսավ՝ մեկը մեկից լավ, չիմացավ՝ որն է իրենը:

Թագավորը տեսավ, որ նա խարդախ է, բերել տվեց քառասուն ախպորը, բոլոր խաբեբա դրամափոխներին հավաքեց, քաղաքից վռնդեց:

Նազիրներից մեկը թագավորին ասաց.

- Էս տղի հետ մի աղջիկ էլ եկավ, հլա կանչի, տե՛ս:

Ինքն էլ ծեր թագավոր էր, ժառանգ էլ չուներ: Կանչեց էդ աղջկան, տեսավ՝ շվարեց, ձեռ ու ոտը գետնից կտրվեց: Ասաց.

- Աղջի՛կ ջան, ո՞ւմ աղջիկն ես:

Ասաց.

- Հուրի թագավորի:

- Էս տղին առե՞լ ես:

- Առել եմ:

- Անարատ կո՞ւյս ես:

Կանչեց ժողովրդին, ասաց.

- Ես իմ հոժար կամքով իմ թագավորությունը տալիս եմ էս տղին, հոժա՞ր եք:

Միաձայն գոռացին.

- Հոժա՛ր ենք:

Իր մատի մատանին հանեց, դրեց տղի մատը:

- Որ էս թագավորությունը ինձ տվիր, ես էլ էս թագավորի մատանին եմ բաշխում քեզ,- ասաց տղեն ու Հուրի թագավորի մատանին տվեց թագավորին:

Տղեն դարձավ թագավոր, էդ քառասուն հարամուն էլ շինեց նազիր, վեզիր:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, երկուսը՝ լսողին:

ՌԱՆՉՊԱՐԻ ՏՂԵՆ

Ժամանակով մի ռանչպար գնացել էր արտը վարելու: Ցերեկը դրա կինը ուզեց հաց տանել մարդուն:

Էդ մարդը յոթ տարեկան մի տղա ուներ: Տղեն մորն ասաց.

- Անա՛, հորս համար դո՛ւ մի՛ հաց տար, թող ես տանեմ:

Մերն ասաց.

- Տղե՛ս, դու դեռ փոքր ես, արտն ի՞նչ գիտես, որ հաց տանես:

Տղեն մորը շատ աղաչեց ու ասաց.

- Անա՛ ջան, հոգուդ մեռնեմ, ես արտը կգտնեմ, դու մի՛ վախենա:

Վերջապես մերը համաձայնեց, հացը դրեց սփռոցի մեջ, կապեց տղի մեջքին, կերակուրն էլ լցրեց ամանը ու ճամփու դրեց: Տղեն հացն առավ գնաց ու առանց շփոթելու ուղիղ տարավ հասցրեց հոր մոտ: Հերը հարցրեց.

- Որդի՛, դու արտն ի՞նչ գիտեիր, որ ինձ հաց բերիր... որ էդպես է, գնա հացը պատրաստի, գանք ուտենք:

- Չէ՛, ափի՛,- ասաց տղեն,- մի քիչ համբերի, հիմի մեզ երկու ձիավոր պիտի հյուր գան: Երբ եկան, նոր կուտենք:

- Մենք ռանչպար մարդ ենք,- ասաց հերը,- մեզ ո՞վ պիտի հյուր գա... քանի՞ անգամ եմ ասել՝ գլխիցդ դատարկ խոսքեր դուրս մի՛ տուր, գնա՛ հաց դիր, ուտենք, մի քիչ հանգստանանք:

Երբ որ հեր ու տղա իրար հետ էսպես խոսում էին, տեսան, որ երկու ձիավոր իրենց կողմն են գալիս: Երբ ձիավորները հասան, տղեն ասաց.

- Համեցեք, հա՛ց կերեք:

Ձիավորները իրար երես նայեցին ու աչքով-ունքով իրար հասկացրին, թե՝ սա պստի տղա է, ու իրենք էլ՝ ռանչպար մարդիկ, սրանք ի՞նչ պիտի ունենան, որ մենք ուտենք:

Սրանք դեռ էդ մտքի հետ էին, որ տղեն հոր համար բերած հացի կապոցը բացեց, որ գան ուտեն: Ձիավորները շատ էլ չէին ուզում, բայց դե ի՞նչ անեին՝ ճարահատյալ ձիերից իջան, հաց կերան ու շնորհակալ եղան իրենց պատվող մարդկանց:

Հացից հետո տղեն համարձակություն ձեռք բերեց ու հարցրեց.

- Բարի՛ մարդիկ, դուք ո՞րտեղից եք գալիս ու ո՞ւր եք գնում:

Սրանք էլ պատասխան տվին, թե.

- Մեր թագավորի տղեն անճար հիվանդ է, Լոխման հեքիմը Հալեպ քաղաքն է, գնում ենք նրա հետևից, որ բերենք, գուցե գա, լավացնի:

Տղեն ասաց.

- Լոխմանը հիմի Հալեպ չէ, Շամ է:

Նրանք էլ ասին, թե.

- Մենք իմացել ենք, որ Հալեպ է, դու ո՞րտեղից գիտես, որ Շամ է գնացել:

- Որտեղից գիտեմ-չգիտեմ՝ դա թող մնա, հիմի դուք իմ խոսքի՞ն հավատացեք,- ասաց տղեն,- զուր տեղը մի՛ չարչարվեք, գնացե՛ք դեպի Շամ, նա քաղաքի մոտ, մի նշանով տեղ, ձեզ կհանդիպի, կառնեք, հետներդ կտանեք:

Ինչպես որ էդ տղեն ասել էր, ձիավորները գնացին, Լոխմանին գտան ու առան, հետները տարան:

Ճամփին գնալու ժամանակ Լոխմանը ձիավորներին հարցրեց.

- Ինչպե՞ս եղավ, որ դուք եկաք, ինձ գտաք, քանի որ ես Հալեպ էի. ձեզ ո՞վ ասաց, թե Շամ եմ գնացել:

Ձիավորները ասին.

- Ճամփին մի ռանչպարի հանդիպեցինք, որ իր համար վար ու ցանք էր անում, էդ մարդը մեզ հաց տվեց, պատվեց: Դրան մի յոթ տարեկան պստիկ տղա ուներ, նա մեզ ասաց քո տեղը: Նրա ասածի պես էլ եկանք, քեզ գտանք:

Էս բանը որ Լոխմանը լսեց, ինքն իր մեջ ոխով լցվեց ու ասաց. «Հիմիկվանից որ էդ տղեն իր պստի հասակի մեջ էդքան գիտուն ու իմաստուն է, էգուց որ մեծացավ, ի՞նչ պիտի լինի իմ վիճակը, անպատճառ հացս ձեռքիցս կխլի: Չէ՛, ես պիտի դրա գլխին մի լավ խաղ խաղամ, որ փչանա, ու չլինի թե հետո իմ հացը խլի ու անունս կոտրի»:

Վերջապես որ հասան թագավորի մոտ (թագավորը Բաղդադ էր նստում), թագավորը հարցրեց Լոխմանին.

- Ի՞նչ է հարկավոր, որ տղես լավանա:

Լոխմանը սարից ու դաշտից բաներ հարցրեց հիվանդին, իբր թե քննեց, իմացավ ցավը (բայց իր փորի ցավը ուրիշ էր) ու ասաց թագավորին.

- Անատոլու երկրի մեջ մի ռանչպարի յոթ տարեկան տղա կա, քո ձիավորները տեղը գիտեն, դրան պիտի բերել տաս, մորթենք, երիկամներն ու սիրտը հանենք, տղիդ ուտեցնենք, որ լավանա, մորե մեկ լինի, թե որ չէ՝ էլ ուրիշ հնարք չկա:

Թագավորը անմիջապես ձիավորներ հանեց, շատ ոսկի տվեց ու հրամայեց, որ գնան Անատոլու երկիրը, էն ռանչպարի յոթ տարեկան տղին թե՛ խաթրով, թե՛ զոռով ու թե՛ փողով առնեն ու գան:

- Չլինի թե,- ասաց,- ասեք՝ սպանելու համար է, ասեք, թե թագավորին պետք է ու ժամանակին էլի շուտ կդառնա ու կգա:

Էսպես պատվերներով ձիավորներին ճամփու դրեց: Ձիավորները ճամփա ընկան գնացին, գնացին, շատն ու քիչն աստված գիտի, հասան Անատոլի: Ռանչպարին գտան ու թագավորի հրամանը հայտնեցին: Ռանչպարը էս որ իմացավ, կարծես կայծակից զարկվեց ու ասաց.

- Թագավորը ողջ լինի, նա ի՞նչ գիտի, թե ես ով եմ, իմ տղին ի՞նչ է ճանաչում... Ես մի աղքատ մարդ եմ, իմ տղին ինչի՞ պիտի կանչի...

Բայց տղեն շատ իմաստուն ու գիտուն էր, անմիջապես հասկացավ բանի էությունը, հորը գողտուկ ասաց.

- Դու մի՛ վախենա, քեզ ինչ որ պետք է, թագավորի մարդկանցից ա՛ռ ու քեֆիդ ապրի, ինձ թող գնամ: Աստված ողորմած է, ես կգնամ ու ողջ-առողջ հետ կգամ:

Ռանչպարն էլ, տղի խոսքերից սիրտ առնելով, բավականին ոսկի առավ ու տղին օրհնելով՝ թողեց, որ գնա:

Ձիավորները տղին հետներն առան, ուրախ-ուրախ գնացին հասան թագավորի երկիրը: Էդ տանող մարդիկ տղին հանեցին, թագավորին ու Լոխմանին ցույց տվեցին: Թագավորը վեզիրին ասաց, որ տղին տանի պահի մինչև առավոտ: Վեզիրը տղին առավ գնաց իրենց տուն, մի առանձին սենյակի մեջ տեղ տվեց, ինքն էլ պահապանի պես մոտը մնաց: Բայց անվերջ ախուվախ անելով՝ սենյակում մեկ ման էր գալիս, մեկ նստում էր, միտք էր անում ու դադար չէր առնում:

Տղեն էս բանը վաղուց նկատել էր, բայց վախից ձեն չէր հանում: Մեկ էլ ինքն իրեն ասաց. «Ինչ ուզում է՝ լինի, ես էս մարդու ցավը պիտի հարցնեմ, իմանամ»: Դարձավ ասաց.

- Վեզի՛ր, քո ցավն ի՞նչ է, որ դու էդքան տանջվում ես:

Վեզիրը սրտից մի խորունկ ախ քաշեց, ասաց.

- Աստված էլ գիտի, ա՛յ տղա, որ ես դարդ ու պակասություն չունեմ, մենակ իմ դարդ ու կրակն էն է, որ Լոխմանի հրամանով առավոտ քեզ պիտի սպանեն,

երիկամներդ ու սիրտդ թագավորի տղին կերցնեն, որ հիվանդությունից ազատվի:

- Թե որ էդպես է,- ասաց ռանչպարի տղեն,- որ ինձ էդքան ցավում ես, դրա հնարքը շատ հեշտ է: Էս մեծ քաղաքի մեջ մի պստի, իմ հասակի մեռել չկա՞: Դրա երիկամներն ու սիրտը հանե՛լ տուր, տար թագավորին ու Լոխմանին: Դրանց հավատացրո՛ւ, իբր ես քո տնից փախչում էի, հետևիցս ընկար, զարկեցիր, սպանեցիր, ու տարածդ իմ երիկամներն ու սիրտն են: Էդպիսով ես էլ կազատվեմ, դու էլ:

Էս բանը վեզիրի խելքը մտավ, տեսավ, որ տղեն շատ խելոք է ասում: Նրա խոսքին հավատալով՝ գնաց, նոր մեռել գտավ, երիկամներն ու սիրտը հանել տվեց, դրեց մի ամանի մեջ ու տարավ թագավորին ու Լոխմանին: Երբ որ տեսան, հարցրին, թե էս ի՞նչ բան է, դու ինչի՞ սպանեցիր:

Վեզիրը առանց ահ ու երկյուղի ասաց.

- Թագավորն ապրած կենա, էդ տղեն ինձնից գողտուկ տնից փախել էր, ընկա հետևից, արյուն-քրտինք մտնելով հասա, բռնեցի ու բարկությունս չկարողացա զսպել, թրով զարկեցի, գլուխը կտրեցի, երիկամներն ու սիրտը առա բերեցի: Գիտեի, որ մենակ սրանք են ձեզ հարկավոր: Հիմի որ բանը էսպես եղավ, ինչպես ուզում ես, էնպես հրամայի:

Լոխմանի սրտի ուզածն էլ էդ էր, ինքն իրեն ուրախացավ, վեզիրի խոսքերին հավատաց ու իր իմացածի պես դեղ արեց թագավորի տղին, լավացրեց:

Սրանից հետո վեզիրը միամտեց, ռանչպարի տղին գողտուկ փախցրեց, նա գնաց հասավ իր հոր երկիրը:

Շատ ու քիչն աստված գիտի, մի ժամանակ որ անցնում է, Մսրա երկրի ձկնորսները մի օր առավոտից երեկո ցանց գցելով հոգիները դուրս է գալիս, բայց մի ձուկ էլ բռնել չեն կարողանում: Իրիկվա դեմ՝ տուն դառնալու ժամանակ, ձկնորսներից մեկն ասում է.

- Էս մի ցանցն էլ գցում եմ, իմ բախտից ինչ դուրս կգա, թող գա:

Երբ ցանցը ջրից դուրս է քաշում, տեսնում է որ, ի՞նչ տեսնի, էնպիսի մի պատվական, գեղեցիկ ու նախշուն ձուկ դուրս եկավ, որ սիրունությունից հնարավոր չէր երեսին նայել, էնքան որ աննման սիրուն էր:

Ցանց գցողը դառնում է, ընկերներին ասում.

- Արդեն քսան տարի է՝ ես ձկնորս եմ, էսպես սիրուն ձուկ չեմ տեսել, ես

սրան ո՛չ կսպանեմ, ո՛չ էլ նորից կթողնեմ: Ամանով ջրի մեջ կգցեմ ու կտանեմ թագավորին, կարող է՝ ինձ մի ընծա տա:

Խոսքները մեկ են անում, վերցնում, տանում են թագավորին: Թագավորի մարդիկ նրան հայտնեցին ձկան մասին, հրաման տվեց, թե՝ բերեք տեսնեմ՝ ինչ ձուկ է: Ձկնորսները ձուկը ներս տարան, թագավորը տեսավ, զարմացավ դրա գեղեցկության ու նախշունության վրա, շատ սիրեց ու իր վեզիրներին էլ կանչեց, որ գան նայեն: Դրանից հետո հրամայեց, որ տանեն մյուս սենյակը՝ թագուհին էլ տեսնի:

Ձկնորսները թագավորի մոտից դուրս եկան, գնացին դեպի թագուհու հարկաբաժին: Ծառաները թագավորի ուղարկած ձկան մասին հայտնեցին թագուհուն, թե՝ կուզի՞, որ էդ ձուկը բերեն, ինքն էլ տեսնի: Թագուհին հրամայում է.

- Թե ձուկը էգ է, թող ներս բերեն, թե որձ է, թող չբերեն:

Ձուկը, թագուհու էդ խոսքը իմանալով, ամանի ջրի միջից դուրս է թռչում ու բարձր ծիծաղում: Ձկան ծիծաղելու մասին հայտնում են թագավորին, թե՝ էսպես ու էսպես, ձուկը վեր թռավ ու թագուհու խոսքի վրա ծիծաղեց, անպատճառ էդտեղ մի բան կար, որ անգամ ձուկը ծիծաղեց:

Էս բանը թագավորի սրտին շատ մեծ դարդ եղավ, ուզեց անպատճառ իմանալ ձկան ծիծաղելու պատճառը: Դրա համար էլ հավաքել տվեց իր երկրի մեջ եղած բոլոր խելոք ու գիտնական մարդկանց, որ գուցե էդ ծիծաղելու պատճառն ասեն իրեն, սիրտը մի քիչ հանդարտվի: Բայց ոչ մեկն էլ չկարողացավ էնպիսի մի բան ասել, որ խելքի մոտիկ լիներ: Շատ հարցուփորձ անելուց հետո իմանում են, որ Անատոլու երկրի մեջ մի ռանչպարի իմաստուն տղա կա, թե որ իմանա, նա կիմանա, թե որ չէ՝ էլ մարդ չի կարողանա իմանալ:

Թագավորը էս որ իմացավ, էդ տղի հետևից մարդ ուղարկեց՝ կանչելու: Էս անգամ էլ տղի հերը առաջվա պես դեմ էր, չէր թողնում, որ գնա, բայց տղեն հորը համոզեց, թե՝

- Քեզ ինչ պետք է՝ վերցրո՛ւ ու ինձ թող՝ գնամ, աստված ողորմած է, ինձ չի կորցնի, ես էլի շուտ կպրծնեմ, կգամ:

Տղի խոսքի վրա ռանչպարը թույլ տվեց: Մի քանի բեռ ոսկի առավ ու տղին օրհնելով՝ ճամփա գցեց:

Թագավորի մարդիկ տղին առան, գնացին: Երբ հասան իրենց երկիրն ու տղին

տարան թագավորի մոտ, ռանչպարի տղեն յոթ անգամ գլուխ տվեց, թագավորի փեշը համբուրեց ու ձեռները բարև բռնեց, կանգնեց:

Թագավորը ձկան ծիծաղելը մեկ առ մեկ սկզբից պատմեց, ինչպես որ եղել էր, ու հետո տղին հարցրեց , որ պատճառն իրեն ասի, գուցե մի քիչ հանգստանա:

Ռանչպարի տղեն, երբ ամեն ինչ լավ գլխի ընկավ, դարձավ թագավորին, ասաց.

- Թագավորն ապրած կենա, ձկան ծիծաղելը գիտեմ ինչի համար է, բայց չեմ ասի:

Թագավորը շատ ստիպեց, որ ասի, բայց էդ տղեն համառեց ու չասաց: Թագավորը տեսավ, որ չի ասում, ահ ու երկյուղ տալու համար հրամայեց, որ տանեն գցեն բանտ ու առավոտը գլուխը կտրեն:

Առավոտը լուսացավ, տղին նորից բերին թագավորի մոտ: Թագավորն ու իր մարդիկ էլի շատ ստիպեցին տղին, որ ասի, բայց չեղավ ու չեղավ:

Էս անգամ թագավորը շատ բարկացավ, դահիճներին հրամայեց, որ տանեն, գլուխը կտրեն:

- Թե որ էդպես է, տեր թագավոր,- խնդրեց տղեն,- ինձ հրամա՛ն տուր՝ մի առակ ասեմ, էլի հրամանը քոնն է, գլուխս զարկել կտաս՝ տո՛ւր:

Թագավորը էս խոսքին համաձայնվեց:

- Թագավորն ապրած կենա,- ասաց տղեն,- մի թագավոր որսի գնաց, շատ ման գալուց հետո սաստիկ ծարավեց ու հետի մարդկանց ասաց՝ ով որ ինձ մեկ աման ջուր տա, ինչ ուզի՝ կտամ: Հետի մարդիկ էս որ լսեցին՝ էս կողմ, էն կողմ ընկան, ման եկան, որ ինչ է՝ ջուր գտնեն: Վերջապես մի մարդ մի փոս քարի մեջ ջուր գտավ ու թագավորին ձեն տվեց, որ գա խմի: Թագավորը եկավ: Ջուրը լցրին ամանը ու տվին իրեն: Էն է՝ պիտի խմեր, թագավորի շունը, որ մոտը բարձր քարին կանգնած էր, թաթով էնպես զարկեց, որ թագավորի ձեռքի ջրով ամանը մի կողմ ընկավ, հազար փշուր եղավ: Էս բանի վրա թագավորի բարկությունը եկավ, թուրը քաշեց, զարկեց շանը, մեջից կիսեց, երկու կտոր արեց ու ասաց.

- Անպիտա՛ն կենդանի, մի՞թե դու արժան չտեսար, որ ես էս մի թաս ջուրը խմեի, ծարավս կոտրեր:

Մոտը կանգնած խելոք մարդիկ ասացին.

- Տեր թագավոր, մեզ խոսք չի հասնում, բայց զուր տեղը էդ խեղճ կենդանուն

ինչի՞ սպանեցիր: Գուցե մի բան կար, որ էդ անասունը իր անլեզու-անբերան տեղով էդպես արեց... Բերեք առաջ մեր ձիերից մեկին խմեցնենք, փորձենք, տեսնենք՝ ինչ է, հետո դու էլ խմի:

Ձիերից մեկի սանձը հանեցին, քաշեցին ջրի վրա, մեկ-երկու կում խմել-չէր խմել, մեկ էլ հանկարծակի տեղնուտեղը տրաքեց ու սատկեց:

Էս բանը թագավորը որ տեսավ, իր արածից շատ փոշմանեց ու ասաց.

- Հազար ափսոս, որ իմ շանը իզուր տեղը սպանեցի:

- Հիմի քոնն է, տեր թագավոր, զգո՛ւյշ եղիր, որ ինձ սպանել տալուդ համար վերջը չփոշմանես ու ասես, թե ես ռանչպարի տղին ինչի՞ սպանել տվի, կարող է՝ մի օր ինձ պետք գար: Դու գիտես, հիմի վերջը լավ մտածի:

Թագավորը էս խոսքերի վրա հրամայեց, որ էլ չսպանեն, նորից տանեն, գցեն բանտ:

Հաջորդ առավոտ տղին էլի բերին թագավորի մոտ: Թագավորը շատ ստիպեց, որ ձկան ծիծաղելու պատճառն ասի, բայց տղեն մի անգամ որ հեծել էր սատանի ձին, ինչ արին-չարին՝ չասաց ու էլի իր էշը քշեց, թե գիտեմ, բայց չեմ ասի:

Թագավորը սաստիկ բարկացավ ու ասաց.

- Տարե՛ք, էդ անպիտան տղի գլուխը զարկե՛ք, որ աչքս էլ դրան չտեսնի:

Ռանչպարի տղեն էս անգամ էլ խնդրեց.

- Թագավորն ապրած կենա, հրամանը քոնն է, ինչպես կուզես, էնպես էլ արա՛, բայց մի առակ էլ կա, թող ասեմ, դրանից հետո էլի սպանե՛լ տուր:

Թագավորն էս անգամ էլ համաձայնեց:

Տղեն ասաց.

- Մի թագավոր մի մեծ վեզիր ուներ, էդ վեզիրը մի օր թագավորին իր տնով-տեղով ու շքախմբով իր տուն հյուր կանչեց: Ճաշը վերջանալուց հետո, երբ քեֆները լավացել էր, ուզեցին մի քիչ ուրախանալ: Բերել տվին մի կապիկ ու դռանը խաղացնել տվին: Էս ժամանակ թագավորը որ տեսավ, թե լավ խաղ ու խնդում կա, թագուհուն էլ դուրս կանչեց, որ մի քիչ էլ նա ուրախանա: Թագուհին երեխին օրոցքի մեջ քնած թողեց, ու ինքը դուրս եկավ ուրախանալու: Բայց էդ ժամանակ թագավորի շունը մնաց օրոցքի մոտ: Մեկ էլ մի մեծ վիշապ օձ պատի ծակից դուրս եկավ ու ուզում էր երեխին խեղդեր: Բայց շունը տեսավ թե չէ, վրա

հասավ, վիշապի բկից բռնեց, հետը կռվեց ու վերջը էդ հսկա գազանին հաղթեց, կտոր-կտոր արեց: Մարմինը օրոցքի մոտ կիտված թողեց, ինքը գնաց, շեմքի վրա նստեց, արնոտ թաթիկներն էր լիզում, որ մաքրեր:

Դռան մոտի մարդիկ շանը արնաթաթախ որ տեսան, զարմացան, թագավորը էնպես իմացավ, թե իր որդուն կերել է էդ անպիտան անասունը… Էդ պահին թուրը քաշեց, շանը զարկեց, միջից կես արեց:

Դրանից հետո ներս մտան, տեսան, որ օրոցքը կողքի վրա շուռ է եկել, ուղղեցին, տեսան, որ երեխեն իր համար ողջ-առողջ քնած է: Մեկ էլ հանկարծ աչքները օրոցքի մյուս կողմն ընկավ, տեսան, որ մի ահագին աժդահա վիշապ կտրտած լցված է: Իմացան, որ շան արածն է: Էս բանի վրա թագավորն իր արածից թեև շատ փոշմանեց, բայց էլ ի՞նչ օգուտ, եղածը եղած էր: Քանի՜-քանի՜ անգամ ասաց՝ հազար ափսոս, որ իմ հավատարիմ շանը զուր տեղը սպանեցի:

- Հիմի քոնն է, տե՛ր թագավոր, զգո՛ւյշ եղիր, որ ինձ սպանել տալուդ համար վերջը չփոշմանես ու ասես, թե ես ռանչպարի տղին ինչի սպանել տվի, կարող է՝ մի օր ինձ շատ պետք գար:

Թագավորը էս անգամ էլ հրամայեց, որ չսպանեն, նորից տանեն, գցեն բանտ:

Էն մեկէլ առավոտը տղին նորից բերին թագավորի մոտ: Թագավորն էս անգամ շատ սաստիկ նեղացավ, ոտները գետնին խփեց ու ստիպեց, որ անպատճառ ձկան ծիծաղն իրեն բացատրի:

Հիմի էդ տղեն էլի իր զոռին էր տվել, թե՝ գիտեմ, չեմ ասի: Էս անգամ թագավորի հոգուն հասավ, հրաման տվեց, թե՝ տարե՛ք, էդ կամակոր տղի գլուխը զարկեք, թող էլ աչքիս չերևա, ու ես դրա երեսն էլ չտեսնեմ:

Ռանչպարի տղեն էս անգամ էլ թագավորի ոտ ու ձեռն ընկավ, խնդրեց-աղերսեց ու ասաց.

- Թագավորն ապրած կենա, մեկ առակ մնաց, թող էն էլ ասեմ, դրանից հետո արյունս քեզ հալալ լինի, ինչպես որ կուզես, էնպես արա:

Թագավորը ճարը կտրած էս անգամ էլ համաձայնվեց:

Ռանչպարի տղեն ասաց.

- Մի թագավոր մի հավք ուներ, որին շատ էր տեղ տալիս: Մի օր էդ հավքը թագավորի ծնկին նստած ժամանակ շատ տխրեց, քիթն ու թևերը կախեց: Թագավորը, էս բանը տեսնելով, հարցրեց.

- Սիրելի՛ հավք, ինչի՞ էդպես տխրեցիր, կուտ ու ջո՞ւրդ է պակաս, թե՞ ապրուստդ լավ չէ, որ էդպես անտրամադիր ես, ախր քեզ ի՞նչ եղավ:

Աստծու հրամանով հավքը լեզու առավ ու ասաց.

- Թագավորն ապրած կենա, դու գիտես, որ ես էլ հեր ու մեր, ազգականներ ունեմ, պատի ծակից հո չե՞մ դուրս եկել, ախր մի անգամ չես ասել, թե՝ գնա՛, հորդ ու մորդ տես ու էլի հետ արի... Ի՞նչ անեմ, որ չտխրեմ:

Թագավորն էս խոսքերը իմացավ թե չէ, հրամայեց, որ դռները բացեն, ու հավքին ասաց.

- Քո հերն օրհնվի, դրա համար էլ ինչի՞ ես քիթդ կախել, դե թռի, գնա ծնողներիդ տես ու ինձնից էլ բարև արա:

Հավքն էս խոսքի վրա ուրախ-ուրախ դուրս թռավ ու գնաց հորն ու մորը գտավ: Փաթաթվեցին իրենց տղին, սիրեցին, պատիվ տվին ու տասնհինգ օր հետո նորից ճամփու դրին, գնաց: Դառնալու օրը հավքը հորն ու մորը ասաց.

- Ախր ես եկա, ձեզ տեսա ու նորից գնում եմ, իմ թագավորին ի՞նչ ընծա տանեմ:

Հերն ու մերը բերին, երկու հատ խնձորի կուտ տվին, թե՝ թագավորին նվեր տար:

Հավքը, կտերը կտուցով բռնած, թռավ եկավ, թագավորի ապարանքի պատուհանից ներս մտավ, ուղիղ գնաց, թագավորի մոտ նստեց ու կտերը նրա ծնկի վրա դրեց:

Թագավորը հավքի որպիսությունը հարցնելուց հետո կտերը ձեռքն առավ, տեսավ, իր մարդկանց էլ ցույց տվեց ու այգեպանին ուղարկեց, որ տանի, այգում տնկի, տեսնեն, թե ինչ կլինի: Այգեպանն էլ տարավ, էդ կտերը տնկեց: Դրանք ծիլ տվեցին, երկու-երեք տարվա մեջ դարձան երկու էնպիսի բարձր ծառ, որ դրանց նմանը այգում չկար... Էդ տարին ամեն մեկի վրա մի հատ խնձոր էր բուսնել: Այգեպանն էն մտքին էր, որ խնձորները լավ հասնեն, կարմրեն, թագավորին տանի, որ իրեն պարգև տա:

Մի օր էլ գնաց տեսավ, որ մի խնձորը ծառից ընկել է. վերցրեց, տարավ թագավորին: Թագավորն ու իր մարդիկ խնձորը որ տեսան, զարմացան դրա տեսքից, մեծությունից ու գույնն էլ շատ հավանեցին:

Հետո վեզիրներից մեկն ասաց.

- Տե՛ր թագավոր, խնձորը տեսանք, ամեն ինչով շատ լավ է, հիմի կտրի ուտենք ու տեսնենք, թե հա՞մն ինչպես է:

Թագավորը գրպանից հանեց ալմաստ կոթով դանակը, խնձորը կտրեց ու էն է՝ մի կտոր բերանը պիտի դներ, որ ուտեր, էդ պահին հավքը թևով էնպես զարկեց թագավորի ձեռքին, որ խնձորի կտորը թագավորից ահագին հեռու ընկավ... Էս արարմունքի վրա բոլորը շվարած մնացին:

Թագավորը էնպես բարկացավ, որ մեկեն բռնեց հավքի ոտքերից ու երկու կտոր արեց, դեն գցեց ու ասաց.

- Սատկա՛ծ անտեր, քո բերածն էր, արժան չտեսա՞ր, որ էս մի կտորն ուտեի:

Թագավորի մարդիկ զարմացք առած ասացին.

- Թագավորն ապրած կենա, կարող է՝ մի բան կար, որ էդ խեղճ թռչունը էդպես արեց, դու իզուր տեղը դրան ինչի՞ էդ օրը գցեցիր: Մի գառ բերել տուր, թող էս կճեպները ուտի, փորձենք, տեսնենք, թե ինչ կլինի:

Թագավորը հրամայեց, որ մի գառ բերեն: Գառը բերին, խեղճ անասունը մի քանի կճեպ կերել-չէր կերել, մեկ էլ տեսան՝ տրաքեց ու սատկեց:

Էս բանը թագավորը որ տեսավ, իր արածից փոշմանեց, բայց բանը բանից անցել էր...

Դրանից հետո թագավորը սրտի հերսից հրամայեց, որ հաջորդ օրը այգեպանի ու նրա կնկա գլուխները զարկեն:

Այգեպանը էս բանը որ իմացավ, քիթ ու մռութը կախած, դեմքը թթվեցրած գնաց տուն: Կնիկը տեսավ, որ մարդու ունքերը կախ են, հարցրեց, թե՝ ինչի՞ ես տխուր: Մարդն ասաց.

- Ո՞նց տխուր չլինեմ, երբ էսինչ բանի համար թագավորը էգուց մեր երկուսի գլուխն էլ զարկել պիտի տա:

- Թե որ էդպես է,- ասաց կնիկը,- գնա՛, էն մնացած մի խնձորն էլ բեր, քան թե մեզ սպանեն՝ մենք ուտենք ու մեռնենք:

Մարդը տեսավ, որ կնիկը լավ է ասում, գնաց, խնձորը բերեց, կտրեցին կերան, բայց մեռնելու տեղը ամեն մեկը եղավ տասնհինգ տարեկան ջահել մարդ:

Էն մեկէլ օրը թագավորը մարդ ուղարկեց այգեպանի ու նրա կնկա հետևից, որ բերել տա, գլուխները զարկի... Տեսավ, որ երկուսն էլ դարձել են տասնհինգ տարեկան: Հարցրեց, իմացավ, որ մնացած խնձորը կերել են, որ գառի պես

սատկեն, բայց իրենց բախտից ջահելացել են:

Վերջը այգեպանն ասաց.

- Թագավորն ապրած կենա, էդ խնձորները անմահական խնձոր են: Էն մեկը, որ ծառից ինքն իրեն ընկել էր, երևի օձը եկել թույնել էր, դրա համար գառը կերավ թե չէ՝ սատկեց:

Էս բանի վրա թագավորը այգեպանի կյանքը բաշխեց իրեն:

- Հիմի, տե՛ր թագավոր, ես իմ առակը ասի պրծա, սրանից հետո հրամանը քոնդ է, թե կուզես՝ ինձ սպանել տուր, բայց զգո՛ւյշ եղիր, որ վերջը չփոշմանես ու ասես, թե ես ռանչպարի տղին ինչի՞ սպանել տվի, կարող է՝ մի օր ինձ պետք գար:

Թագավորը էս անգամ տղին անուշությամբ ասաց.

- Դե ձկան ծիծաղելու պատճառն ասա, որ կյանքդ քեզ բաշխեմ:

Տղեն պատասխան տվեց, թե՝

- Ես իմ երեք առակն ասի պրծա, իսկ էդ բանը պիտի ասեմ, բայց էստեղ չեմ ասի: Մի ձմերուկ առ, գնանք թագուհու մոտ, էնտեղ ուտենք ու ասեմ, որ թագուհին ինքն էլ իմանա:

Թագավորը մի ձմերուկ բերել տվեց, իր ալմաստ կոթով դանակը զարկեց վրեն: Տղեն ձմերուկը առավ թևի տակ, ու գնացին:

Ներս մտած վախտը, երբ թագավորը թագուհու հետ խոսում էր, տղեն մի կերպ հարմարեցրեց, թագավորի դանակը գողացավ, պահեց:

Խոսելը որ վերջացրին, թագավորն ասաց.

- Դե հիմի ասա տեսնենք՝ ինչն էր ձկան ծիծաղելու պատճառը:

- Շատ լավ,- ասաց տղան,- առաջ ձմերուկն ուտենք, հետո ասեմ, թե ինչ էր:

Երբ ձմերուկը պիտի կտրեին, տեսան, որ դանակը չկա: Էս կողմ՝ դանակ, էն կողմ՝ դանակ, դանակը դարձավ մի փշուր հացի կտոր ու կորավ. չկա, որ չկա:

Ռանչպարի տղեն ասաց.

- Թագավորն ապրած կենա, էստեղ մեզնից բացի ուրիշ մարդ չկա, որ մեղքն առնենք. թե գողացանք, մենք գողացանք: Եկեք առաջ ինձ ստուգեք, թե որ չգտաք, հետո բոլորին էլ կստուգենք:

Էս որ ասաց, իր շորերը հանեց, մեկ-մեկ ամեն տեղ նայեցին, տեսան, որ չկա: Երբ թագավորն ուզում էր իր շորերը հանել, տղեն չթողեց.

- Դու սպասի՛, տե՛ր թագավոր, ես կասկած ունեմ, որ դանակը թագուհու մոտ

կանգնած կանաչ շորերով նաժիշտի մոտ կլինի, առաջ դրան ստուգենք:

Երբ ուզեցին ստուգել, թագուհին առաջ եկավ ու բարկանալով ասաց.

- Էդ ինչ եք անում, գլխներիցդ ձեռք եք քաշել, ո՞վ է տեսել կամ լսել, որ տղամարդու մոտ կնիկարմատը, էն էլ աղջիկ, շորերը հանի, ամոթ չէ՞, էս ինչ խայտառակություն է:

Ռանչպարի տղեն էս որ իմացավ, ասաց.

- Թե որ էդպես է, ես էլ ձեզ ձկան ծիծաղելու պատճառը չեմ ասի:

Էս պատճառի վրա թագավորը շատ սաստիկ բարկացավ ու հրամայեց, որ ինչ ուզում է լինի, անպայման նաժիշտը պետք է շորերը հանի, որ ստուգեն, կորած դանակը ման գան:

Թագավորի հրաման էր, ո՞վ կարող էր դեմ կանգնել: Նաժիշտի թևից քաշելով՝ զոռով առաջ բերին ու շորերը հանել տվին, տեսան, որ՝ օհ՜... Ադամի զավակ էր, ոչ թե Եվայի դուստր:

Էս օրինակով մնացած քառասուն նաժիշտներին էլ ստուգեցին, տեսան, որ բոլորն էլ տղամարդ են, տեղնուտեսը սառան, մնացին:

Դրանից հետո տղան ասաց.

- Տեսա՞ր, տե՛ր թագավոր, թե ձկան ծիծաղելը ինչի համար էր: Քո թագուհին հավատարիմ երևալու համար ձկան էգ ու որձն էր հարցնում, բայց ինքը իր խոսքի տերը չէր, էդ պատճառով էլ խեղճ անլեզու ձուկը վրան ծիծաղել է:

Թագավորը սրտի հերսից տղի խոսքը կտրեց ու հրամայեց, որ թագուհու ու բոլոր նաժիշտների գլուխները զարկեն, հոտները աշխարհի երեսից կտրեն:

Ռանչպարի տղին էլ իրեն տղա դարձրեց, ամբողջ ունեցվածքը նրան կտակեց: Իրենից հետո էլ թախտն ու թագը նրան տվեց, դարձրեց թագավոր:

Էդ տղեն էլ գիր գրեց, հորն ու մորը բերեց իր մոտ: Աստծու տված մի կտոր արդար հացը, քանի դեռ ողջ ու կենդանի էին, կերան, խմեցին ու վայելեցին մինչև իրենց մեռնելու օրը:

Երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ սրտով ուզողին:

ՈՐՍՈՐԴԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի որսորդ է լինում, ունենում է մի տղա: Որսորդը որ մեռնում է, կինը շատ խելքով է լինում, տղին տալիս է ուսումի: Էս տղեն շատ ուսումնասեր է լինում, շատ լավ է սովորում: Դառնում է տասը-տասնհինգ տարեկան: Մի օր ուսումնարանից տուն գալու ժամանակ տեսնում է, որ երեխեքը վեգ են խաղում: Որսորդի տղեն գալիս է, վեգը շուռ է տալիս: Էդ տղերքը հայհոյում են դրան.

- Քո որսորդի ըսենց-ընենցը, ինչի՞ ես մեր վեգը շուռ տալիս:

Որսորդի տղեն վեգը թողնում է, սիրտը լիքը գնում տուն: Մերը հարցնում է, ասում.

- Որդի՛, ինչի՞ ես լաց լինում:

Ասում է.

- Մե՛ր, ես ո՞ւմ տղեն եմ:

Ասում է.

- Որսորդի տղեն ես:

- Իմ հերը,- ասում է,- ի՞նչ ունի:

Ասում է.

- Մի թվանք, մեկ էլ մի հատ վառոդաման:

Ասում է.

- Տո՛ւր, ես պիտի գնամ, որս անեմ:

Ասում է.

- Գնա՛ ուսումիդ:

- Չէ՛,- ասում է,- հերս ինչ արհեստ բանեցրել է, ես էլ էն արհեստը պիտի բանեցնեմ:

Ասում է.

- Որդի՛, մեղքը քո վիզը:

Թվանքը տալիս է տղին, սա պատրաստվում է, որսի գնում:

Մերը շատ խելքով է լինում, գուշակի շնորհք է ունենում: Ասում է.

- Որդի՛, որ գնում ես, ինչքան ման գաս՝ գիշերը արի՛ տուն, չլինի թե չոլում մնաս:

Տղեն ամեն օր որս է անում, գիշերը գալիս տուն:

Օրերից մի օր ասում են՝ Մասիսի լանջին եղնիկներ շատ են լինում, տղեն վեր է կենում, գնում է Մասիս սարը, շատ է ման գալիս, ձեռքը որս չի ընկնում: Իրիկունը մութն ընկնում է, մնում է անտառում: Գնում է, մի ծառի փչակի մեջ կուչ գալիս: Գիշերվա մի ժամի մտիկ է տալիս, տեսնում, որ մի լույս իր կողմն է գալիս:

- Այ հա՛յ,- ասում է,- էս ջանավար է, կգա, ինձ կուտի:

Թվանքը ձեռքին պատրաստ է պահում: Տեսնում է, որ ջանավարը գալիս է իր կողմը, նշան է բռնում, տալիս, ջանավարին վեր գցում: Էդ գիշեր էդտեղ լուսացնում է, առավոտը վեր է կենում, գնում է, տեսնում, որ ջանավարը հենց ինքը՝ Շամ-չրաղն է: Էդ ջանավարին քերթում է, փոստը ոլորում, դնում թևատակն ու գնում: Բերում է տուն, մերն ասում է.

- Ինչի՞ գիշերը դուրսը մնացիր:

Ասում է.

- Մե՛ր, իմ բերած որսը էս է, պիտի տանեմ, թագավորին նվեր անեմ:

- Տա՛ր,- ասում է,- որդի՛, տանես էլ՝ փոշմանություն է, չտանես էլ՝ փոշմանություն է:

Առավոտը տղեն վերցնում է էդ փոստը, տանում է թագավորի ապարանքը: Նազիրն ասում է.

- Էդ ի՞նչ է, ավչո՛ւ տղա:

Ասում է.

- Փոստ է, բերել եմ՝ թագավորին նվեր անեմ:

Նազիրը, որ տեսնում է Շամ-չրաղի փոստը, ասում է.

- Ավչո՛ւ տղա, ա՛ռ հարիր մանեթ փող տամ, էդ փոստը տո՛ւր ինձ:

Ասում է.

- Թագավորը որ ինձ փող էլ չտա, ես պիտի նվեր անեմ թագավորին:

Տանում է, նվեր անում թագավորին: Թագավորը շատ է ուրախանում, ասում է.

- Նազի՛ր, տա՛ր, իմ գանձարանից ավչու տղին բավականին փո՛ղ տուր:

Էս նազիրը տանում է, էդ տղին խռովածի նման երկու ապտակ է տալիս ու երկու կոպեկ փող:

Էդ տղեն ամոթու թագավորին չի ասում, թողնում, գալիս է իրենց տուն: Մերն ասում է.

- Որդի՛, ի՞նչ տվեց թագավորը:

Ասում է.

- Նազիրի տունը քանդվի, երկու ապտակ տվեց, երկու կոպեկ փող:

Հետո տղեն էլի վեր է կենում, գնում որսի: Թագավորը իրիկունը էդ փոստը հանում է, դնում իր պատշգամբում: Էդ քաղաքում էնպես է լույս լինում, ոնց որ ցերեկը: Շատ է ուրախանում թագավորը:

Նազիրն ասում է.

- Թագավո՛ր, հլա էդ ես տեսել, ուրախացել, եթե փղի ոսկորից մի հատ ապարանք տեսնես, ինչքան կուրախանաս:

Ասում է.

- Ո՞վ կբերի էդքան փղի ոսկորը:

Ասում է.

- Ավչու տղեն կբերի:

- Ա՛յ գիտի,- ասում է,- գնացե՛ք, ավչու տղին կանչեք, գա:

Ավչու տղեն գալիս է թագավորի մոտ, գլուխ տալիս, կանգնում:

Թագավորն ասում է.

- Պիտի գնաս, փղի ոսկոր բերես, մի հատ ապարանք շինեմ:

Ավչու տղեն մտքի մեջ է ընկնում, հետ գալիս իրենց տուն: Մերը հարցնում է.

- Որդի՛, ինչի՞ ես տխուր:

Ասում է.

- Ի՞նչ անեմ, ա՛յ մեր, թագավորը էնպիսի բան է ասում, որ գլուխ գալու բան չէ:

Ասում է.

- Ի՞նչ է ասում թագավորը:

- Ա՛յ մեր,- ասում է,- թագավորը փղի ոսկոր է ուզում, ես ո՞րտեղից բերեմ:

Ասում է.

- Էդ հեշտ է, որդի՛: Կգնաս, թագավորին կասես. «Ինձ կտաս քառասուն բեռ յոթ տարվա քացախ, քառասուն բեռ արաղ, քառասուն բեռ գինի, քառասուն բեռ չամիչ, ամեն բեռին մի մարդ՝ կացինը ձեռքին, դանակը ձեռքին: Էդ բոլորը պիտի նազիրի քսակից լինի, թե որ քեզանից լինի, չեմ կարողանա բերել»:

Թագավորը կանչում է նազիրին, ասում.

- Էս բանը դու ես ասել, արի՝ տո՛ւր էս ծախսը, թե որ չտաս, քո գլուխը կկտրեմ:

Նազիրը գալիս է, համաձայնվում, իր ունեցած-չունեցածը դնում, բոլորը միասին պատրաստում, բարձում, ճամփու դնում:

Տղեն գնում է մոր մոտ.

- Մե՛ր,- ասում է,- ուղարկեցին, ես ո՞ւր գնամ ախր:

Ասում է.

- Որդի՛, կգնաս Արագած սար, մի հատ աղբյուր կա. բուրդը, բամբակը կխցկես էդ աղբյուրի ակը, ջուրը լրիվ կկտրես, տակի ջրերը կցամաքեցնես, էդ քացախը, գինին, արաղը շուռ կտաս աղբյուրի ակը, չամիչը շաղ կտաս հանդը, բեռ-բեռ վեր կածես, փղերը կգան, չամիչը կուտեն, սրտները կպապակվի, կգան, կընկնեն քացախի, գինու ու արաղի վրա, կխմեն, կհարբեն, կփռվեն գետնին: Կհրամայես էդ մարդկանց, կացիններն ու դանակները կքաշեն, փղերին կմորթեն, միսն ու կաշին կթափեն գետնին, ոսկորը կվերցնեն, կբարձեն իրենց ուղտերին, կբերեն, իրենց թագավորին նվեր կանեն:

Տղեն գնում է, մոր ասածի պես անում, ոսկորները բերում տալիս է թագավորին:

Թագավորն ասում է.

- Նազի՛ր, տար ավչու տղին իմ գանձարանից շատ փո՛ղ տուր:

Նազիրը տանում է գանձարան, տղին տալիս է չորս կոպեկ փող, երկու հատ էլ լավ ապտակ: Տղեն էլի ամոթու թագավորին բան չի ասում, դառնում գալիս է իրենց տուն:

Մերն ասում է.

- Ինչի՞ ես տխուր, որդի՛:

Ասում է.

- Ի՞նչ անեմ, ա՛յ մեր, նազիրը չորս կոպեկ փող տվեց, երկու ապտակ:

Ասում է.

- Բան չկա, որդի՛, գնա՛ քո գործին:

Տղեն վեր է կենում, թվանքը գցում ուսը, գնում որսի: Թագավորը սկսում է ուստեք բերել, փղի ոսկորից մի շատ լավ սենյակ է շինում: Թագավորը մեջը նստում է, Շամ-չրաղը դնում է պատշգամբում: Էնպես է ուրախանում թագավորը՝ ոնց որ տասնհինգ տարեկան տղեն:

Նազիրն ասում է.

- Թագավո՛ր, հլա դու դրա վրեն ես ուրախանում:

- Էլ ի՞նչ կա, նազի՛ր:

- Եթե դրախտական ծառը քո դռանը լիներ, բա ինչքա՜ն կուրախանայիր, թագավո՛ր:

Ասում է.

- Ո՞վ կբերի էդ դրախտական ծառը:

Ասում է.

- Ավչու տղեն կբերի:

Թագավորը կանչում է ավչու տղին, ասում է.

- Որդի՛, դու պիտի դրախտական ծառը բերես ինձ համար:

Տղեն տխուր հետ է դառնում, գալիս իրենց տուն: Մերն ասում է.

- Որդի՛, ինչի՞ ես տխուր:

Տղեն ասում է.

- Թագավորի տունը քանդվի, էնպիսի բան է ասել՝ բերել չի լինի:

Մերն ասում է.

- Որդի՛, դա նազիրի արածն է, թագավորը մեղք չունի: Կգնաս, թագավորին կասես. «Մի հատ նավ կշինես ծովի երեսին, քառասուն խալվար ցորեն կդնես մեջը, քառասուն խալվար կորեկ, քառասուն խալվար բրինձ, երկու հատ մարդ կդնես մեջը՝ դանակները ձեռքներին»: Նավը կթողնես ծովի երեսին, կքշես ներքև, ամեն քայլին մի պարկ կճղես, շուռ կտաս ծովը, կքշես դեպի վերև, ամեն քայլին մի պարկ կճղես, շաղ կտաս ծովը, ծովի երեսին էդ նավը էնքան ման կածես, որ էդ պարկերը բոլորը հատնեն: Ծովի մեջ սով է ընկել, ձուկը քեզ կտա դրախտական ծառը:

Էդ խրատն է տալիս մերը: Տղեն գնում է թագավորի մոտ, ոնց որ մերն ասաց, թագավորին ասում է.

- Թագավորն ապրած կենա, էդ բոլորը պիտի պատրաստես, բայց բոլորը պիտի նազիրի քսակից լինի, թե չէ գործը գլուխ չի գա:

Թագավորը կանչում է նազիրին, ասում է.

- Նազի՛ր, պիտի էս բոլորը պատրաստես:

Նազիրը եղած-չեղածը վեր է դնում, պատրաստում: Նավը շինում է, թողնում ծովի երեսը, ցորեն, կորեկ ու բրինձը տանում է, դնում մեջը, երկու մարդ էլ տանում

է, դնում նավի մեջ: Տղեն գնում է, մտնում նավը, քշում: Էդ տղերքը պարկերը իրար հետևից ճղում են, շաղ տալիս ծովի մեջ, մինչև վերև-ներքև անելով՝ էդ ապրանքը հատնում է:

Ծովի տակը լիանում է, նավը գալիս է ծովի մեջտեղը, ձկան թագավորը բարձրանում է:

- Տղա՛,- ասում է,- էս յոթ տարի է՝ իմ ծովի տակը սով էր, դու ո՞նց լիացրիր, քո մուրազդ ասա՝ կատարեմ:

Տղեն ասում է.

- Քեզ նվեր է, մուրազ չունեմ, որ կատարես:

Ձուկն ասում է.

- Տղա՛, ասա՛, կունենաս, մի՛ ամաչի:

- Դե որ ասում ես, կասեմ: Ես եկել եմ՝ դրախտական ծառը տանեմ:

- Է՛, տղա՛, շատ դժվար բան ասացիր, համա որ մեռնեմ էլ, պիտի մուրազդ կատարեմ:

Ասում է.

- Ձեռքիդ սուր դանակ կա՞:

Ասում է՝ կա:

Ասում է.

- Հանի՛ քո դանակը: Ես որ բարձրանամ, իմ մեջտեղի լողակից մի մազ կկտրես, թղթի մեջ կկոլոլես: Որտեղ թաղես, կդառնա դրախտական ծառ:

Ձուկը բարձրանում է, տղեն դանակը գցում է, դրա մեջտեղի լողակից մի հատ մազ կտրում: Կտրելուն պես ձուկը գնում է ծովի անդունդը: Թղթի մեջ կոլոլում է մազը, դնում ծոցը, պինդ պահում:

Շատ է մտածում տղեն, գալիս է մոր մոտ:

- Ա՛յ մեր,- ասում է,- ես մի ձկան լողակի մազ եմ բերել, էս չի դառնա դրախտական ծառ: Թագավորը իմ գլուխը կկտրի:

Բայց մերը իմաստուն է, իմանում է, որ դա դրախտական ծառն է, ասում է.

- Որդի՛, կգնաս, թագավորին կասես. «Ո՞րտեղ պիտի տնկես, ինձ տեղն ասա՛, ես կտնկեմ»:

Տղեն գալիս է թագավորի մոտ, գլուխ տալիս, կանգնում: Թագավորն ասում է.

- Հը՛, ավչո՛ւ տղա, բերե՞լ ես դրախտական ծառը:

- Հրամանք ես, թագավո՛ր,- ասում է,- բերել եմ:

Թագավորը շատ է ուրախանում, ասում է.

- Բա ո՞ւր է:

Տղեն թագավորին ասում է.

- Ինձ տեղը ցո՛ւյց տուր, ես կտնկեմ:

Թագավորը տղին ցույց է տալիս տեղը՝ փղի սենյակի պատուհանի առջև: Տղեն թողնում է, գնում իրենց տուն: Իրիկունը որ մութը ընկնում է, տղեն թաքուն գալիս է, թագավորի ասած տեղը պուճուր փոս է անում, էդ մազը էդտեղ տնկում, թողնում գնում իրենց տուն:

Թագավորը քնում է, առավոտը վեր կենում, մտիկ տալիս, որ սենյակը մութ է: Պատուհանը բացում է, տեսնում, որ մի հսկա ծառ է իր պատուհանի դեմն առել: Մտիկ է տալիս, որ դրախտային հոտ է գալիս էդ ծառից. մի կողմը՝ ամառ, մի կողմը՝ ձմեռ, հավքերը վրան ծլվլում են, մրգի մի կողմը՝ հասած, մի կողմը՝ խակ: Թագավորը շատ է ուրախանում էդ բանի վրա: Փղի ոսկորից սենյակ, Շամ-չրաղը մեջը դրած, դրախտական ծառը աչքի առաջ՝ էնպես է ուրախանում թագավորը, էնպես է սիրում տղային, ոնց որ՝ իր որդուն:

Ասում է.

- Գնացեք, կանչեք՝ գա ավչու տղեն:

Գնում են, կանչում են, ավչու տղեն գալիս է: Թագավորը ուրախ-ուրախ տեղ է ցույց տալիս, կողքին նստեցնում, շատ կարգով տղին պատվում է:

- Հը՛,- ասում է,- նազի՛ր, ավչու տղին կտանես իմ գանձարան, ինչքան կկամենա, իր համար թող ոսկի վերցնի:

Նազիրի սրտին չի նստում, ավչու տղին տանում է գանձարան, վեց կոպեկ փող է տալիս, երկու հատ էլ ապտակ, ասում է.

- Դե՛, գնա՛, քո վարձը էդ է:

Տղեն տխուր հետ է գալիս մոր մոտ: Մերն ասում է.

- Որդի՛, ինչի՞ ես տխուր:

- Ի՞նչ անեմ, ա՛յ մեր, նազիրը վեց կոպեկ փող տվեց, երկու ապտակ:

Ասում է.

- Բա՛ն չկա, որդի՛:

Տղեն վերցնում է թվանքը, գնում է որսի:

Լուր առնենք նազիրից:

Նազիրն ասում է.

- Թագավո՛ր, դու դեռ դրա վրա ես ուրախանում, փղի ոսկորից սենյակ, Շամ-չրաղը մեջը, դրախտական ծառը դռանդ, դու ջահել թագավոր: Էսինչ երկրում մի թագավոր մի աղջիկ ունի՝ անունը Փերիզակ խանում. բա որ էն էլ քո կնիկը լինի, ինչքան կուրախանաս:

Թագավորը նազիրին ասում է.

- Ո՞վ կբերի էդ աղջկան:

Ասում է.

- Ավչու տղեն կբերի:

Մարդ է ուղարկում, թե՝ կանչեք գա ավչու տղեն: Ավչու տղեն գալիս է, գլուխ տալիս, կանգնում: Թագավորը կանչում է, նստեցնում կողքին:

- Հը՛,- ասում է,- ավչո՛ւ տղա, էսինչ երկրում կա մի թագավոր, նրան ունի մի շատ սիրուն աղջիկ՝ անունը Փերիզակ խանում, պիտի գնաս, բերես ինձ համար:

Տղեն շատ տխուր վեր է կենում, գնում մոր մոտ: Մերն ասում է.

- Որդի՛, ինչի՞ ես տխուր:

Ասում է.

- Ինչ անեմ, ա՛յ մեր, թագավորը էնպիսի բան է ուզել, որ գլուխ գալու բան չէ:

- Ինչ է ասել, ա՛յ որդի:

Տղեն մորը պատասխանում է.

- Ասում է՝ գնա, էսինչ երկրի թագավորի աղջկան բե՛ր ինձ համար: Ես ո՞նց բերեմ թագավորի աղջկան, իմ գլուխը կկտրեն:

Մերը մտածելով տղին սկսում է խրատել.

- Որդի՛, էդ էլ հեշտ է: Դե ակա՛նջ արա, քեզ խրատ տամ: Կգնաս, թագավորին կասես. «Ինձ համար կշինես մի նավ, էնքան մեծ լինի՝ քո քաղաքի չափ: Մի հատ սենյակ կշինես՝ քո ապարանքի պես: Էդ նավի մեջ պիտի լինի հարյուր սազ ածող, հարյուր զուռնաչի, հարյուր երիտասարդ տղա, հարյուր ջահել աղջիկ՝ պար եկող, հարյուր հատ մեծ կնիկ, հարյուր հատ մեծ մարդ՝ լավ ուտող-խմող, քեֆ անող, մի խոսքով՝ թիֆլիսեցի, էնքան,- ասում է,- որ քաղաքի չափ մարդիկ վերցնի: Կողքից եկողը չիմանա, թե նավ է, թող իմանան, որ քաղաք է: Էդ չափի ուտող-խմողին քառասուն տարվա ապրուստ կդնես մեջը՝ թե՛ ուտելիք, թե՛ խմելիք»:

Տղեն վեր է կենում, գնում թագավորի մոտ, գլուխ տալիս, կանգնում:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- պիտի ծովի վրա մի հատ նավ շինես՝ մեր քաղաքի չափ մեծ, մեջը դնես հարյուր հատ լավ սազ ածող, հարյուր զուռնաչի, հարյուր ջահել տղա, հարյուր ջահել աղջիկ՝ լավ պար եկող, հարյուր հատ միջակ կնիկ, հարյուր հատ միջակ տղամարդ՝ լավ ուտող-խմող: Դրանք բոլորը պիտի շինված լինեն նազիրի քսակից, թե չէ պայմանը կխախտվի:

Թագավորը կանչում է նազիրին.

- Նազի՛ր,- ասում է,- էս բանը դու ես գլխի գցել, պիտի քո փողով շինվի:

Նազիրը վեր է կենում, եղած-չեղածը ծախում, էդ բոլորը հազրում:

Տղեն գնում է, մտիկ տալիս, տեսնում որ՝ ոնց որ Թիֆլիս քաղաքը. մի կողմից զուռնա են ածում, մի կողմից սազ են ածում, մի կողմից ջահելները երգ են ասում, մի կողմից աղջկերքը պար են գալիս, մի կողմից մարդիկ ուտում են, խմում, քեֆ են անում:

Տղեն շատ է ուրախանում: Հետ է դառնում, գալիս մոր մոտ:

- Մե՛ր,- ասում է,- հիմի՞ ուր գնամ, էդ բաները լրիվ պատրաստվել են:

Ասում է.

- Որդի՛, տերը քեզ հետ, սրանից հետո էլ բան չգիտեմ: Գնա՛, նստի՛ մաքուր սենյակի մեջ, լավ կե՛ր, քե՛ֆ արա, մանավանդ քառասուն տարվա ապրուստ կա մեջը: Քշի՛ նավը, անց կաց, գնա՛ ցամաքին դեմ արա, դրանից հետո ոնց ապրում ես, ապրի:

Տղեն մորը շնորհակալություն է հայտնում, թուշը պաչում, էլ հույս չուներ հետ գալու, գնում է, մտնում նավը, սենյակում նստում: Նավի մեջ ման էր գալիս, սրա հետ խմում, նրա հետ խմում, օր էր անցկացնում: Նավը քշում, տանում է, դեմ անում ցամաքին, էնպես էր, որ միջի մարդիկ չէին իմանում, թե ծովի մեջ են:

Էս տղեն իր մեջ մտածում է. «Երկար մնամ էստեղ՝ ինձ օգուտ չի բերի: Վեր կենամ, գնամ, աշխարհ ման գամ»:

Էս տղեն գնում է, մտնում դուքանը, մի թաս գինի խմում, նավից դուրս գալիս, ճամփա ընկնում, գնում: Շատ ու քիչը աստված գիտի, գնում, դեմ է առնում մի անտառի: Մտիկ է տալիս, որ անտառում մի հատ մարդ կա: Վայրի անտառ է, էդ մարդը հաստ ծառերը քոքահան է անում, մի տեղից տանում է, մի ուրիշ տեղ տնկում:

Ավչու տղեն որ տեսնում է, զարմանում է:

- Ա՛յ մարդ,- ասում է,- մի մարդու է՞լ էդքան ուժ կլինի:

- Ախպե՛ր,- ասում է,- ինչի՞ ես զարմանում, ինձ համար խաղ եմ անում, զարմացքը ավչու տղինն է:

Ավչու տղեն ասում է.

- Զարմացքը ինչի՞ է ավչու տղինը:

Ասում է.

- Ավչու տղեն բերեց Շամ-չրաղը, բերեց փղի ոսկորը, բերեց դրախտական ծառը, զարմացքը դրանն է:

Ավչու տղեն ասում է.

- Ես եմ ավչու տղեն:

- Որ դու ես,- ասում է,- ես քո ախպերն եմ, ես քեզ հետ պիտի գամ, մեկ չլինենք՝ լինենք երկու:

Ընկնում են ճամփա, գնում:

Շատ ու քիչ են գնում, մի քաղաքի են դեմ առնում, մտիկ են տալիս՝ էդտեղ մի մարդ կա նստած, ինչքան հաց են բերում տալիս, ինչքան միս են բերում տալիս,

դա ուտում է, մի կողմից գոռում է՝ սոված մեռա՛:

Ավչու տղեն ասում է.

- Ա՛յ տղա, էդքան ուտելիքը քո փորը ո՞նց է տանում:

Էդ մարդն ասում է.

- Ինչի՞ համար ես զարմանում իմ ուտելու վրա, էս մի մեծ հունար չէ, հունարը ավչու տղինն է, որ գնաց Շամ-չրաղը բերեց, փղի ոսկորը բերեց, դրախտական ծառը բերեց:

Ավչու տղեն ասում է.

- Էդ ավչու տղեն ես եմ:

- Որ էդպես է,- ասում է,- ես քո ախպերն եմ, ես քեզ հետ պիտի գամ, երկու չլինենք, լինենք երեք:

Վեր են կենում գնում, շատն ու քիչը աստված գիտի, գնում են, պատահում մի գետի, որ մի մարդ կռացած՝ էդ ջուրը քաշում է փորը, մի կողմից գոռում՝ ծարավ մեռա՛:

Ավչու տղեն ասում է.

- Ա՛յ մարդ, քո փորը կպատռվի:

Ասում է.

- Ինչո՞ւ ես զարմանում, հունարը ավչու տղինն է:

- Ի՞նչ է արել,- ասում է,- ավչու տղեն:

Ասում է.

- Ավչու տղեն բերեց Շամ-չրաղը, բերեց փղի ոսկորը, բերեց դրախտական ծառը:

Ասում է.

- Ես եմ ավչու տղեն:

- Որ էդպես է,- ասում է,- ես քո ախպերն եմ, երեք չլինենք, չորս լինենք, ես պիտի գամ քեզ հետ:

Ընկնում են ճամփա, գնում: Երկար են գնում, մի սարի լանջի մտիկ են տալիս, որ մի չոբան սրինգ է ածում, էդ ոչխարը թև են բռնել, խաղում են, չեն արածում: Ավչու տղեն ասում է.

- Ա՛յ մարդ,- ասում է,- էդ էլ շատ հունար է:

Չոբանը պատասխանում է.

- Հունարը ավչու տղինն է, որ գնաց բերեց Շամ-չրաղը, բերեց փղի ոսկորը, բերեց դրախտական ծառը:

Ավչու տղեն ասում է՝ էդ ես եմ:

- Որ դու ես,- ասում է չոբանը,- ես էլ եմ քո ախպերը, չորս չլինենք, հինգ լինենք:

Դառնում են ախպեր, գնում: Շատ են գնում, քիչ են գնում, աստված գիտի, գնում են, տեսնում մի մարդ՝ գլխի վրա ցից եղած:

Ավչու տղեն ասում է.

- Ախպե՛ր, ինչի՞ ես գլխիդ վրա ցից եղել:

- Ես,- ասում է,- ականջ եմ դնում, որտեղ խոսեն՝ ես իմանամ: Ես ձեր ճամփեն էի պահել, որ ես էլ ձեզ հետ ախպերանամ: Հինգ չլինենք, վեց լինենք:

Վեց ախպերը ճամփա են ընկնում, գնում: Գնում են, չոբանը ասում է ավչու տղին.

- Ի՞նչ է քո մուրազը:

Ասում է.

- Իմ մուրազը՝ թագավորի աղջկան բերե՛ք ինձ համար:

- Լավ,- ասում են հինգ ախպերը, գնում:

Գնում են հասնում թագավորի քաղաքը, խնամաքարին նստում: Լուր են տանում թագավորին, որ քո աղջկան ուզող է եկել: Թագավորը ընդունում է դրանց, մաքուր սենյակ ցույց տալիս: Գնում են, նստում, սպասում, թե ինչ է լինելու:

Թագավորը ճաշ է պատրաստում դրանց համար: Որ հացը ուտում-պրծնում են, վեցով նստած զրույց են անում: Էդ գլխի տնկվողը գլխի վրա տնկվում է, ասում.

- Տեսնեմ՝ ինչ է խոսում թագավորը:

Թագավորը իր նազիր, վեզիրի հետ խոսում է, ասում.

- Ո՞նց անենք, որ մեր աղջիկը չտանք էդ տղին:

Նազիրներից մեկը վերցնում ասում է.

- Թագավորն ապրած կենա, բեր դրանց համար մի ճաշ պատրաստենք, ինչքան զորքիդ հաց է գնում, էդքան հաց պատրաստենք, ինչքան միս է գնում, ինչքան բրինձ է գնում, էդքան պատրաստենք, ասենք. «Թե կերաք, աղջիկը կտանք, թե չկերաք, աղջիկը չենք տա, ձեր գլուխը կկտրենք»:

Էս գլխի վրա ցից լինողը վեր է գալիս, ասում.

- Ախպերտի՛նք, շատ դժվար է ձեր բանը:

Ավչու տղեն ասում է.

- Ինչի՞ է դժվար:

Ասում է.

- Թագավորը խորհուրդ է արել, որ իր զորքին ինչքան հաց ու ուտելիք է գնում, էնքան ձեզ տա, թե ուտեք, աղջիկը կտա, թե չուտեք, գլխներս պիտի կտրի:

Էդ շատ հաց ուտողը ասում է.

- Թող էդ գա իմ ջանին, ես մենակ կուտեմ:

Թեք են ընկնում, քնում: Առավոտը վեր են կենում, թագավորը հրավիրում է: Գնում են, հեռու նստում, էդ շատ հաց ուտողը կանգնում է առաջ, հացը բերում են, խոթում է թուշը, կողովով միսը բերում են, խոթում է թուշը, սինիով փլավը բերում են, խոթում է թուշը, մի կողմից էլ ձեն է տալիս՝ սոված մեռա՛: Թագավորի պատրաստած կերակուրը լրիվ ուտում է:

Թագավորը էն մնացած հինգ ախպորը բերում է սենյակ, կանոնավոր ճաշ տալիս:

Գալիս է իրիկունը, մթնում, որ պիտի քնեն, էդ գլխի տնկվողը նորից տնկվում է: Թագավորի զրույցը էն էր, որ առավոտը փահլևան ուզեն, կոխ բռնի: Թագավորը մի հատ առյուծ ուներ՝ կապած, խամ, որի վրա բաց թողեն՝ կճղի: Էդ գլխի ցից լինողը վեր է գալիս, ասում.

- Ախպերտի՛նք, մեր գործը շատ դժվար է, ելեք փախչենք:

Ասում են.

- Ինչի՞ փախչենք:

- Մեզանից առավոտ փահլևան պիտի ուզի, մի հատ առյուծ ունեն, բաց կթողնեն, մեզ կճղի:

Էն ծառ քոքահան անողը ասում է.

- Էդ իմ աչքի վրա, հանգիստ քնեք:

Առավոտը լուսանում է, թագավորը կանչում է.

- Պիտի փահլևան բերեք, իմ փահլևանի հետ կոխ բռնի, թե չէ՝ գլուխներդ կկտրեմ:

Ծառ քոքահան անողը գնում է, մտնում մեյդան, կտրիճ տղեն ձեռքը գցում է առյուծին, քաշում, մեջտեղից ճղում, մի ոտը մի կողմ գցում, մի ոտը՝ մի կողմ:

Թագավորն ասում է.

- Հա՛յ, հա՛յ, տարան իմ աղջկան:

Թագավորը էդ մարդկանց տանում է իր սենյակը, ճաշ տալիս, ճաշ են ուտում: Գնում են նորից իրենց տեղը: Գլխի վրա տնկվողը նորից տնկվում է: Թագավորն ասում է.

- Իմ աղջկան կտանեն, ո՞նց անենք:

Նազիրներից մեկն ասում է.

- Բերեք դրանց տակը քանդենք, բարութ լցնենք, կրակ տանք, կոտորվեն:

Գլխի վրա տնկվողը վեր է գալիս, ասում.

- Ախպերտի՛նք, մեր տակը պիտի բարութ դնեն, պայթեցնեն, ելեք փախչենք:

Ջուր խմողն ասում է.

- Էդ էլ իմ աչքի վրա:

Վեր է կենում, գնում ծովի ափ, բերանը դեմ անում ծովին, ամբողջ ծովը քաշում փորը, գալիս տեսնում, որ դրանց տակը բարութ են լցրել: Բաց է թողնում իր փորի ջուրը, գետնի յոթ շերտն անց է կենում, ինչքան կպցնում են, էլ չի կպչում:

Լուրը հասնում է թագավորին, որ չոր բարութը լցնում ենք, թագավորն ապրած կենա, դառնում է ցեխ, չի կպչում:

Թագավորը մտածում է, ասում.

- Ա՛յ հա՛յ, տարան իմ աղջկան:

Նորից գլխի վրա տնկվողը տնկվում է: Թագավորը խորհուրդ է անում, ասում է.

- Ժամանակը լրացավ, ո՞նց անենք:

Մեկը վեր է կենում, ասում.

- Բերեք դրանց դեղենք:

Թագավորը խոհարարին հրամայում է.

- Երկու տեսակ կերակուր կեփես. մեկը՝ դեղած, մեկը՝ մաքուր:

Գլխի վրա կանգնողը նորից վեր է գալիս, ասում.

- Ախպերտի՛նք, ելեք փախչենք:

Ավչու տղեն ասում է.

- Ինչի՞ համար:

Ասում է.

- Մեզ պիտի դեղեն:

Չոբանն ասում է.

- Էդ էլ իմ աչքի վրա:

Առավոտը թագավորը դրանց կանչում է ճաշի, վեցը մի կողմ են նստում, թագավորի մարդկանցից վեցն էլ մի կողմ են նստում: Խոհարարը ամանները բերում է, դեղած ամանները դնում էդ մարդկանց առաջ, անդեղը դնում թագավորի մարդկանց առաջ: Չոբանն ասում է.

- Թագավորն ապրած կենա, էս ճանճերին հրամայի՝ մեզանից հեռանան, որ մենք ճաշ ուտենք:

Ասում է.

- Ես ո՞նց ճանճերին հրամայեմ, որ հեռանան, ձեռքով ըսենց արեք, կհեռանան:

Ասում է.

- Ինձ իրավունք տո՛ւր, ես հեռացնեմ:

Ասում է՝ իրավունք է:

Դա սրինգը դնում է բերանին, ածելու պես էդ ճանճերը բարձրանում են,

խաղում են: Դրանք բոլորը էսպես աչքերը գցում են ճանճերին, էդ ամաններն էլ տեղներից շարժվում են, դեղած ամանները գնում են թագավորի առաջ, անդեղ ամանները գալիս են դրանց առաջ: Հենց որ տեսնում է՝ ամանները փոխվեցին, սրինգը վայր է դնում:

- Դե,- ասում է,- կերեք հացներդ:

Սկսում են հաց ուտելը, թագավորի մարդիկ ձեռքները հացի չեն տալիս, իմանում են, որ դեղած ամանները եկել են իրենց առաջ:

- Դե ելՙ,- ասում է ավչու տղեն,- քո աղջկան տո՛ւր, տանենք:

- Ելՙ,- ասում է,- գնանք քո քաղաքը տեսնենք, նոր աղջկաս տամ:

Վեր են կենում, մի ձի թագավորն է նստում, մի ձի՝ ավչու տղեն, քշում են գնում ավչու տղի քաղաքը տեսնելու: Գալիս մտնում են ավչու տղի սենյակը: Թագավորը գնում, քաղաքը ման է գալիս, տեսնում է՝ կերուխումի քաղաք է, շատ է հավանում: Հետ է գալիս տեղը, ասում.

- Տվի, որ տվի:

Աղջիկն ասում է.

- Մինչև ես չգնամ, դրա քաղաքը չտեսնեմ, չեմ առնի:

Աղջիկը վեր է կենում, տղի հետ ձի նստում, որ գնան, քաղաքը տեսնեն: Ավչու տղեն ախպերներին ասում է.

- Վե՛ր ելեք, տարա աղջկան:

Գալիս հասնում են ավչու տղի սենյակը, տանում է իր քաղաքը ման տալիս: Ջահել աղջիկ, լավ քեֆը որ տեսնում է, մի ժամ մի տեղ կանգնում է, հինգ ժամ մի տեղ կանգնում, սրտից չէր տալիս, որ էդ քաղաքից դուրս գա: Իր հինգ ախպերներն էլ էին մտել քաղաք, հետը ման էին գալիս:

Ավչու տղեն հրամայում է, նավը տեղից շարժվում է: Նավը հասնում է մինչև ծովի մեջտեղը: Էս աղջկա սրտից չէր տալիս, որ քաղաքից դուրս գա, ասում է.

- Արի՛, տղա՛, գնանք, քեզ առնում եմ:

Մեկ էլ գալիս է տղի սենյակի մոտ, տեսնում, որ ծովի մեջտեղն է.

- Ա՛յ հա՛յ,- ասում է,- տղա, էս ի՞նչ օյին բերեցիր իմ գլուխը:

Ասում է.

- Քեզ տանում եմ:

Ասում է.

- Չես կարող տանել:

Աղջիկը գլխի լաչակը վերցնում է, գցում ծովը: Տղեն տեսնում է, որ նավը հետ դարձավ դեպի ցամաք: Տղեն ասում է.

- Ա՛յ հա՜յ, աղջիկը փախավ:

Ձուկը դուրս է գալիս.

- Հը՛,- ասում է,- ի՞նչ է, տղա՛:

Ասում է.

- Լաչակը գցեց ծովը:

Ձուկը հրամայում է, ձկներից մեկը լաչակը վերցնում բերում է, տալիս տղին: Տղեն դնում է գրպանը, նավը էլի հետ է դառնում: Աղջիկն ասում է.

- Չես կարող տանել, տղա՛:

Հանում է դանակը, գցում ծովը: Նավը էլի դառնում է մյուս կողմը: Ձուկը դուրս է գալիս:

- Հը՛,- ասում է,- ի՞նչ է, ավչո՛ւ տղա:

Ասում է.

- Դանակն է գցել ծովը:

Հրամայում է ձկներին, գնում է մեկը, դանակը վերցնում, բերում: Ավչու տղեն առնում, դնում է գրպանը: Նավը նորից դառնում է դեպի իրենց կողմը:

Աղջիկն ասում է.

- Չես կարող տանել, ա՛յ տղա:

Ասեղը վերցնում, գցում է ծովը: Նավը նորից հետ է դառնում մյուս կողմը: Ձուկը դուրս է գալիս, ասում.

- Ի՞նչ է, ավչո՛ւ տղա:

Ձուկը հրամայում է մանր ձկներին, մանր ձկները ասեղը վերցնում են, բերում տալիս ավչու տղին: Նավը էլի հետ է դառնում ավչու տղի կողմը:

Աղջկա կախարդանքը պրծնում է:

Ասում է.

- Սրանից հետո ես քեզ կառնեմ ու կառնեմ:

Գալիս նստում են հինգ ախպերը, մեկ էլ էդ աղջիկը, մեկ էլ ավչու տղեն, ուրախ-ուրախ մի լավ հաց են ուտում:

Աղջիկն ասում է.

- Դե՛, տղա՛, ասա՛, ինձ քեզ համա՞ր ես տանում:

Ասում է.

- Չէ՛, քեզ տանում եմ մեր թագավորի համար:

Ասում է.

- Ես կմեռնեմ, թագավորին չեմ առնի, ես պիտի քեզ առնեմ:

Ծառ քոքահան անող տղեն ասում է.

- Ես որ հասնեմ ձեր քաղաքը, բոլորին կսպանեմ, քեզ կդնեմ թագավոր:

Դուրս են գալիս ցամաք: Էդ տղերքը բոլորը միասին, մեկ էլ աղջիկը հեծնում են ձիերը, գալիս թագավորի պալատը: Հասնելուն պես էդ ծառ քոքահան անողը նախ տալիս նազիրին է սպանում, հետո տալիս թագավորին է սպանում, հետո տալիս դրա վեզիրին է սպանում:

Բերում են ավչու տղին դնում տեղը թագավոր, յոթ օր, յոթ գիշեր քաղաքին հաց են տալիս, ավչու տղին հարսանիք անում, ավչու տղեն տեղը նստում է թագավոր: Էդ տղերքից մեկին նազիր է դնում, մեկին վեզիր է դնում, մյուսներին էլ պաշտոնի է դնում:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Երկնքից ընկավ երեք խնձոր, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ականջ դնողին:

ՁԿՆՈՐՍԻ ՏՂԵՆ

Լինում են, չեն լինում մի մարդ ու մի կնիկ: Սրանք ունենում են մի մինուճար տղա: Էս մարդը ձկնորս է լինում:

Երբ որ էս մարդը մեռնելիս է լինում, կնոջն ասում է.

- Ա՛յ կնիկ, չլնեմ-չիմանամ, որ դու մեր տղին իմ արհեստին տաս: Ես հարյուր տարի չարչարվեցի, ի՞նչ շահեցի, որ նա ի՞նչ շահի: Թող գնա, մի ուրիշ արհեստ սովորի, իր համար ապրի: Ես ինչ եղա՝ եղա, երևի էս էր գրված ճակատիս:

Տղեն մեծանում է, դառնում տասը-տասնհինգ տարեկան: Մի օր մեր ու տղա քաղաք են գնում: Շուկայում ման գալիս էս տղի աչքով մի թոռ է ընկնում: Թոռը շատ է դուր գալիս տղին: Նա ընկնում է մոր ոտքերը, աղաչում, պաղատում, որ էս թոռն իր համար առնի:

- Չէ՛, չէ՛, որդի՛,- ասում է մերը,- չի լինի, քո հերը մեռնելիս պատվիրել է, երկաթե լուծը դրել շլնքիս, որ քեզ համար լուծ չառնեմ, որ քեզ ձկնորսության չտամ:

- Չէ՛, մերի՛կ, չէ՛, պետք է էդ թոռն առնես ինձ համար,- ասում է տղեն, ընկնում մոր ոտները:- Թե կառնես՝ էդ թոռն է, թե չես առնի՝ էդ թոռն է,- ասում է ու պինդ բռնում թոռից:

Մերը տեսնում է, որ տղի ձեռքից չի կարողանում պրծնել, փող է տալիս ու էն թոռն առնում: Տղեն թոռը շալակում է ու ուրախ-ուրախ տուն գալիս:

Հաջորդ օրը տղեն թոռը վերցնում է, գնում ջուրը՝ ձուկ բռնելու: Երեք անգամ երեսին խաչ է հանում ու աստված կանչում, թոռը ջուրը գցում: Հենց որ տեսնում է՝ թոռը բան է ընկել, արագ-արագ թոռը դուրս է հանում, տեսնում, որ մեջը մի գորտ է: Գորտը թոռից հանում է ու ջուրը գցում, խեղճացած նորից թոռը ջուրը գցում: Երկրորդ անգամ թոռը դուրս է քաշում, էլի էն գորտն է թոռի մեջ լինում: Տղեն էլի գորտը ջուրն է գցում ու խեղճացած նորից թոռը ջուրը գցում: Երրորդ անգամ է թոռը դուրս քաշում, երրորդ անգամ էլ գորտն է ընկնում թոռը: Տղեն էս անգամ գորտը ջուրը չի գցում, ասում է. «Ախպեր, ձուկ չի ընկնում, էլ ինչի՞ եմ ջուրը գցում գորտը, գուցե սա է իմ բախտը»:

Տղեն վերցնում է գորտն ու տուն բերում: Գորտը թողնում է դռան մոտ, ինքը գալիս է նստում կրակի մոտ: Իրիկունը մերը ժամից տուն է գալիս, տեսնում, որ տղեն, ունքերը կիտած, մռութը կախ արած, կրակի մոտ նստած է:

- Ի՞նչ ես ունքերդ կիտել, որդի՛, հո հիվանդ չե՞ս,- հարցնում է մերը, երբ տեսնում է, որ տղեն խեղճացած նստած է:

- Ո՞նց ունքերս չկիտեմ, ա՛յ մեր,- ասում է տղեն,- էսօր առավոտից թոռ եմ գցում, մի հատ գորտ է բռնածս:

- Բա՛ն չկա, որդի՛, ինչի՞ ես դարդ անում, աստված էդ է ուղարկել, էդ ես բռնել, դու ի՞նչ անես, երևի էդ է քո բախտը:

Առավոտը վեր են կենում, տղեն հանդ է գնում, մերը գնում է ժամ: Գալիս են տեսնում՝ ջուրը բերած, տունն ավլած, դուրս ու տուն հավաքած, ամանները լվացած, ճաշը եփած, շորերը դասավորած, ամեն բան՝ սարքին ու կարգին: Ոնց գցում-բռնում են, միտք անում, գլխի չեն ընկնում:

Էլի են դուրս գնում մեր ու տղա, հետ են գալիս, տեսնում՝ առաջվա նման ջուրը բերած, տունն ավլած, դուրս ու տուն հավաքած, ամանները լվացած, ճաշը եփած, շորերը դասավորած, ամեն բան՝ սարքին ու կարգին:

- Ա՛յ մեր,- ասում է տղեն մորը,- բեր ես դռան տակից հետևեմ, տեսնեմ՝ էս ո՞վ է գալիս մեր տուն, բոլոր գործերն անում:

Մերը գնում է ժամ, տղեն մտնում է դռան հետևն ու թաքնվում: Քիչ է կենում թե շատ, մեկ էլ էն է տեսնում, որ քնջից դուրս եկավ իր բռնած գորտն ու ցատկելով

մոտեցավ օջախին: Մի քիչ դեսուդեն մտիկ արեց, տեսավ, որ տանը ոչ ոք չկա, մեկ կոռաց՝ դարձավ մի հավի չափ, մեկ էլ կոռաց՝ դարձավ մի ոչխարի չափ, մեկ էլ որ կոռաց՝ տրաքվեց ու միջից մի աղջիկ դուրս եկավ էնպես սիրուն, որ ո՛չ լսված էր, ո՛չ էլ տեսնված: Որ տեսնեիր, կասեիր՝ ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, գիշեր-ցերեկ նրա շիմշատ հասակին մտիկ անեմ:

Էդ աղջիկը տեղը հավաքում է, ավելը վերցնում, տունն ու դուռը ավլում, ջուր բերում, ամանները լվանում, դարակները սրբոտում, օջախի չորս կողմը ջրջնքում, ճաշը եփում: Հենց ուզում է՝ ավելը տանի դնի դռան հետևը, տեսնում է՝ տղեն էնտեղ պպզած: Փախչում է, վերցնում իր մաշկը, որ հագնի: Տղեն վրա է հասնում ու բռնում: Գորտն աղաչում է, պաղատում, որ իրեն բաց թողնի, տղեն չի թողնում: Վերցնում է ու գորտի մաշկը կրակը գցում, որ նա էլ չհագնի:

Մերը ժամից գալիս է տուն, տեսնում, որ տղեն օջախի մոտ նստած է, նրա մոտ էլ մի աղջիկ՝ էնե՛նց սիրուն, որ ես աղջիկ ասեմ, դու հուրի-մալաք իմացիր: Նրա երեսի շողքը պատերին է ընկած լինում: Մերը երբ իմանում է, որ աղջիկը գորտի միջից է դուրս եկել, շատ է ուրախանում: Տղին պսակում է դրա հետ, ու թագավորի պես ապրում են:

Դրանք մի հարևան են ունենում, մի պառավ է լինում: Դա վեր է կենում, գնում թագավորի մոտ ու ասում.

- Թագավորն ապրած կենա, բա չե՞ս ասի, էսինչ տեղը մի մեր ու մի տղա են ապրում, նրանք թագավորին վայել մի հարս ունեն, ինձ զո՛րք տուր, գնամ քեզ համար բերեմ:

Էս պառավը հետը էնքան զորք է վերցնում, որ անտառ մտնեին, անտառը կչորանար, ծովը լցվեին՝ ծովը կցամաքեր: Աղջիկը թուրը վերցրած ընկնում է զորքի մեջն ու մի ժամում բոլորի գլուխն էլ թռցնում է: Մեկին է ողջ թողնում, որ լուրը տանի թագավորին: Թագավորը կանչում է էս պառավին իր մոտ, որ գլխատի, քանի որ զուր տեղը իր զորքը փչացրել էր:

Պառավն ասում է.

- Թագավո՛րն ապրած կենա, դու էն տղին կանչի քեզ մոտ ու նրան ասա, որ գնա, յոթ սարի հետևից հրեղեն ձին բերի: Թե չկարողանա բերել, գլուխը թռցնել տու ու կնկան քեզ վերցրու:

Թագավորը կանչում է էս ձկնորսի տղին, ասում, որ գնա յոթ սարի հետևից հրեղեն ձին բերի: Թե որ չկարողանա, գլուխը կտա: Ձկնորսի տղեն թագավորից երեք օր ժամանակ է ուզում, գլուխ տալիս թագավորին ու ուղիղ գալիս տուն:

Տղեն տուն է գալիս ունքերը կիտած, լացակումած նստում կրակի մոտ: Կինը հարցնում է.

- Ի՞նչ ասաց թագավորը, ինչի՞ ես ունքերդ կիտել:

- Ո՞նց ունքերս չկիտեմ: Էն որ թագավորն իր զորքով չի կարողանում բերել, ինձ ասել է, որ բերեմ իր համար: Պետք է գնամ, յոթ սարի հետևից հրեղեն ձին բերեմ, թե չէ թագավորը գլուխս կթռցնի:

- Էդ դատարկ բանի համար էլ ինչի՞ ես դարդ անում,- ասում է կինը:- Գնա՛ թագավորից յոթ բեռ բամբակ ուզի, յոթ բեռ քացախ ու արի:

Ձկնորսի տղեն արագ հասնում է թագավորի մոտ, վերցնում յոթ բեռ բամբակն ու յոթ բեռ քացախն ու գալիս տուն: Կինն ասում է.

- Յոթ օր ճամփա կգնաս, ամեն օր մի սար կանցնես: Յոթերորդ սարի լանջին կտեսնես մի աղբյուր: Աղբյուրի ակը յոթ բեռ բամբակով կկապես, աղբյուրի ջուրը դուրս կածես, յոթ բեռ քացախը կլցնես տեղը: Հրեղեն ձին կգա կխմի, կհարբի, վրեն կնստես, կքշես, կգնաս թագավորի տուն ու իրեն կտաս:

Ձկնորսի տղեն որ էս լսում է, ունքերը նոր բացվում են, շատ է ուրախանում, վերցնում է յոթ բեռ բամբակն ու յոթ բեռ քացախը, ճամփա ընկնում: Օրը մի սար անցնելով՝ գնում հասնում է յոթերորդ սարին: Գտնում է աղբյուրը, բայց որ հրեղեն ձիու ոտնատեղերը տեսնում է, վախից սիրտը փորն է ընկնում: Ոնց որ կինն ասել էր, յոթ բեռ բամբակով փակում է աղբյուրի ակը, ջուրը դուրս է ածում, քացախով աղբյուրը լցնում է, ինքը հեռու տեղ տապ անում: Շատ է կենում թե քիչ, մեկ էլ տեսնում է՝ հրեղեն ձիու գլուխը երևաց: Դեռ մի օրավար հեռու՝ ոտնաձայնը լսում է: Ձին որ խրխնջում է, սար ու ձոր որոտում են: Ձկնորսի տղեն վախվխելով ծառերի ճյուղերի արանքից մտիկ է անում: Որ ձիու պնչածակերից դուրս եկող կրակը աչքին է ընկնում, ուռի պես դողում է ու լեզուն փորը գցում:

Ձին գալիս է, վրա ընկնում աղբյուրին ու խմում: Քանի խմում է՝ ծարավում է, քանի խմում է՝ ծարավում է, էնքան է խմում, մինչև աղբյուրում էլ քացախի կաթիլ չի մնում: Ձին շշմում է ու մնում տեղնուտեղը կանգնած: Ձկնորսի տղեն դուրս է գալիս անտառից ու նստում հրեղեն ձիու վրա, ճամփա ընկնում դեպի թագավորի ապարանքը: Յոթ օրվա ճամփեն մի օրում է կտրում ու հրեղեն ձին տալիս է թագավորին:

Թագավորը տեսնում է, որ խաբելով բան դուրս չի գալիս, ձկնորսի տղին կանչում է ու ասում.

- Կա՛մ ինձ համար մի սիրուն աղջիկ պիտի ճարես, կա՛մ թե չէ քո կնիկը պիտի բերես: Թե չէ գլուխդ թռցնել կտամ:

Ձկնորսի տղեն իրիկունը տուն է գալիս ու ունքերը կիտած, սևսրտած նստում է կրակի մոտ:

Կինը հարցնում է.

- Թագավորն ի՞նչ ասաց, ինչի՞ ես ունքերդ կիտել:

- Ո՞նց ունքերս չկիտեմ,- ասում է ձկնորսի տղեն,- թագավորն ասում է, որ

կա՛մ իր համար իրեն վայել աղջիկ ճարեմ, կա՛մ իմ կնիկը իրեն տամ:

- Էդ դատարկ բանի համար էլ ինչի՞ ես դարդ անում,- ասում է կինը,- գնա թագավորից իր մատանին ուզի, մի լավ շուն, մի հատ փահլևան, յոթ հատ էլ իմ ասած մեծ խոյ ու արի, ես քեզ կասեմ, թե ոնց պիտի աղջիկ ճարես:

Ձկնորսի տղեն գնում է թագավորից նրա մատանին էլ է ուզում, մի շուն էլ, մի փահլևան էլ, յոթ մեծ խոյ էլ ու տուն է գալիս: Կինը նրան սովորեցնում է, թե ուր պիտի գնա, ինչ պիտի անի, որ աղջկան բերի, ու ճամփու է դնում:

Յոթ խոյերից մեկը մորթում է, ինքն ուտում, իսկ դմակը տալիս է շանը: Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, ճամփին տեսնում են՝ մի մարդ մի մեծ ջրի վրա ընկած խմում է ու կանչում. «Վա՛յ ջուր, վա՛յ ջուր, որ խմեմ, ծարավս հովանա»: Ձկնորսի տղեն ու փահլևանը գովում են նրա իգիթությունը, որ ամբողջ ջուրը ցամաքեցնում է ու դեռ «Վա՛յ ջուր» կանչում:

- Էս ի՞նչ իգիթություն է,- ասում է,- իգիթը ձկնորսի տղեն է, որ ասում են՝ յոթ սարի հետևից հրեղեն ձին բերել է: Էդ ո՞ւր եք գնում, ինձ հետներդ չե՞ք տանի:

- Երկու չլինենք, թող երեք լինենք, ինչի՞ չենք տանի:

Ձկնորսի տղեն մի խոյ էլ ջուր խմողի համար է մորթում: Սա միսն ուտում է, դմակը շանը տալիս: Ճամփա են ընկնում գնում:

Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, տեսնում են մի ջաղաց՝ յոթ-աչքանի: Տուն են մտնում, տեսնում, որ մի մարդ դուրս եկող ալյուրն ուտում է ու անընդհատ կանչում. «Վա՛յ հաց, վա՛յ հաց, ուտեմ՝ փորս հանգստանա»: Ձկնորսի տղեն գովում է նրա իգիթությունը:

- Էս ի՞նչ իգիթություն է,- ասում է ալյուր ուտողը,- իգիթությունն էն է, որ ասում են՝ ձկնորսի տղեն յոթ սարի հետևից հրեղեն ձին բերել է: Բա դուք էդ ո՞ւր եք գնում, ինձ հետներդ չե՞ք տանի:

- Ինչի՞ չենք տանի,- ասում է ձկնորսի տղեն,- երեք չլինենք, թող չորս լինենք:

Մի խոյ էլ նրա համար են մորթում: Միսն ուտում են, դմակը շանը տալիս ու ճամփա ընկնում:

Գնում են, գնում են, շատն ու քիչը աստված գիտի, տեսնում են երկու սար՝ երեք օրավար մեկը մյուսից հեռու: Սարերի գլխին կապած է մի ճոպան՝ մեջը մի մեծ ջաղացքար անցկացրած: Մի սարի գլխին մի մարդ է կանգնած, մյուսի գլխին՝ մի ուրիշ մարդ: Սա մի ճկույթով ջաղացքարին տալիս է, գնում է նրա մոտ, նա

ճկույթով ջաղացքարին տալիս է, գալիս է սրա մոտ:

Ձկնորսի տղեն գովում է սրանց իգիթությունը:

- Էս ինչ իգիթություն է,- ասում են նրանք,- իգիթությունն էն է, որ ասում են՝ ձկնորսի տղեն յոթ սարի հետևից հրեղեն ձին բերել է: Բա դուք էդ ո՞ւր եք գնում, մեզ հետներդ չե՞ք տանի:

- Ինչի՞ չենք տանի,- ասում է ձկնորսի տղեն,- չորս չենք լինի, թող վեց լինենք:

Նա երկու խոյ է մորթում, միսն ուտում են, դմակը տալիս շանն ու ճամփա ընկնում:

Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, տեսնում են՝ մի ճամփի մոտ մի մարդ գլխի վրա ցից եղած: Հարցնում են, թե նա ինչ փեշակ ունի: Ասում է, որ՝ ինչ որ մարդիկ աշխարհում խոսում են, նա գիտի, թե ի՞նչ են ասում, ո՞ւմ մասին են խոսում:

Ձկնորսի տղեն գովում է սրա իգիթությունը:

- Էս ինչ իգիթություն է,- ասում է իմաստունը,- իգիթությունն էն է, որ ասում են՝ ձկնորսի տղեն յոթ սարի հետևից հրեղեն ձին բերել է: Բա դուք ո՞ւր եք գնում, ինձ հետներդ չե՞ք տանի:

- Ինչի՞ չենք տանի,- ասում է ձկնորսի տղեն,- վեց չենք լինի, թող յոթ լինենք:

Մի խոյ էլ էստեղ է մորթում ձկնորսի տղեն: Միսն ուտում են, դմակը շանը տալիս ու ճամփա ընկնում:

Գնում են, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում են թագավորի ապարանքին: Գնում են նստում հարսնախոսի քարի վրեն: Նազիր-վեզիրները գալիս են հարցնում, թե ինչ մարդիկ են: Ձկնորսի տղեն ասում է, որ էսինչ թագավորի մարդիկ են, եկել են աղջիկ ուզելու: Թագավորը հարցնում է, թե ինչքան ոսկի են բերել հետները: Երբ իմանում է, որ մի հատ էլ ոսկի չունեն, ասում է.

- Հա՛ց տվեք ուտեն, գնան, դրանք ինձ վայել մարդիկ չեն, թե առանց ոսկի են եկել, դրանք չեն կարող իմ աղջկան պահել:

Նրանց համար մի մեծ ամանով ճաշ են եփում ու դնում առաջները: Ալյուր ուտողն ասում է.

- Մինչև ես համը չտեսնեմ, իմ աղեն չի կարող ուտել:

Էս ասում է ու ամանը առաջը քաշում, մի շնչով լավ լպստում, սրբում ու դնում մի կողմ:

- Դե գնացե՛ք, մյուս ամանները բերե՛ք, էս մի պատառով ես ո՞նց համը տեսնեմ:

Գնում են, ամեն մեկի համար յոթ մեծ աման ճաշ եփում ու բերում:

Հաջորդ օրը թագավորը, երբ էդ լսում է, շատ է վախենում: Էնպիսի դժվար բաներ է ուզում նրանց առաջ դնել, որ չկարողանան գլուխ բերել, ու նրանցից օձիքներն ազատեն: Ասում է, որ մի շուն բերեն իր շան հետ կռվելու:

Ձկնորսի տղեն դուրս է կանչում իր շանը: Որ թագավորի շան վրա է պրծնում, կոկորդից բռնելն ու խեղդելը մեկ է լինում: Թագավորը մի փահլևան է ուզում, որ իր փահլևանի հետ կռխ բռնի: Ձկնորսի տղի փահլևանը թագավորի փահլևանի ձեռքը բռնում է, որ հուպ է տալիս, ձեռքը ճռճռում, փշրվում է: Թագավորը երբ տեսնում է, որ զոռով չի կարողանում նրանց հախից գալ, ուզում է նրանց նենգությամբ ջնջել: Հրաման է տալիս, որ ջուրը կապեն նրանց սենյակի վրա, որ նրանք մեջը խեղդվեն: Ջուր խմողը դունչը դնում է դռանն ու միանգամից քաշում, կուլ տալիս, ամբողջ ջուրը ցամաքում է: Թագավորի ճարը որ կտրում է, նրանց ճաշը դեղում է: Ձկնորսի տղեն մատանին դնում է ճաշի մեջ, տեսնում է, որ դեղը ջոկվեց: Ճաշը դեն են հրում:

Թագավորն ասում է.

- Լա՛վ, դուք արժանի եք աղջկանս տանելու, պետք է իմ աղջկա ապարանքը վերցնեք, ուսներիդ դրած տանեք:

Էդ ժամանակ ձկնորսի տղեն հարցնում է իմաստունին, թե թագավորը էլ բան ունի՞ ասելու, թե՞ չէ: Իմաստունն ասում է, որ թագավորը հույսը կտրել է, էս գիշեր խոսում են, որ վաղը լույսը բացվի թե չէ, աղջկան մեզ կտան:

Հաջորդ օրը ջաղացքարեր շարժող իգիթները ուսները տակն են տալիս, որ աղջկա ապարանքը վերցնեն, տանեն, թագավորը չի թողնում: Ասում է.

- Ես համաձայն եմ, վերցրե՛ք, տարե՛ք աղջկաս, ոնց որ դուք ուզեք:

Սրանք վերցնում են թագավորի աղջկան ու ճամփա ընկնում:

Իմաստունն իր տեղն է մնում, ջուր խմողը՝ իր տեղը, ալյուր ուտողը՝ իր, ջաղացքար շարժողները՝ իրենց տեղը: Ձկնորսի տղեն թագավորի փահլևանի ու շան հետ առնում է թագավորի հարսնացուին ու գալիս թագավորի մոտ:

Թագավորը էնպես էր մտածում, թե ձկնորսի տղեն էլ հետ չի գա, զոռով նրա կնոջը տարել էր իր ապարանքը: Երբ լսում է, որ տղեն գալիս է, հրաման է տալիս, որ բաղնիքի ջուրը դեղեն ու նրան բաղնիք տանեն՝ ճամփի փոշին լվանալու:

Ձկնորսի տղեն բանը գլխի է ընկնում, ասում է, որ թագավորը իր հետ բաղնիք գա, մենակ վախենում է, ոչ մեկի էլ չի վստահում, որ հետը բաղնիք տանի:

Թագավորն ու ձկնորսի տղեն բաղնիք են մտնում թե չէ, ձկնորսի տղեն մատից հանում է թագավորական մատանին ու ջուրը գցում, էդ պահին դեղը ջրի երեսն է ելնում:

Ձկնորսի տղեն թագավորին հրում է, ջուրը գցում, տեսնում է, որ նա ուռավ, տրաքեց: Ինքը հագնում է թագավորի շորերն ու նստում նրա թախտին: Ինքը թագավոր է դառնում, իր կինը՝ թագավորակին: Հետի աղջկան տալիս է իր փահլևանին, մորն էլ կանչում է իր մոտ: Յոթ օր ու յոթ գիշեր հարսանիք են անում, ուրախանում…

Երկնքից երեք խնձոր է ընկնում, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ամբողջ աշխարհին:

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՏՂԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

Լինում է, չի լինում մի գյուղացի: Էդ գյուղացին ոչ մի բան չի ունենում, միայն մինուճար մի պուճուր երեխա է ունենում:

Օրերից մի օր էս գյուղացին բահը դնում է ուսին, գնում իրենց արտը ջրելու: Գնում հասնում է արտին, ինչ տեսնի՝ երկու օձ իրար հետ կռիվ են անում: Մի օձը էնքան սիրուն, նախշուն է լինում, որ մարդ ուզում է՝ կանգնի, թամաշ անի, կասես իսկի օձ չլիներ: Բայց մյուսը սև, մուռտառ օձ էր, մարդ զզվում էր թամաշ անի:

Էդ երկու օձը էնպես են իրար հետ կռվում, էնպես են կռվում, որ էլ չեղած: Քիչ էր մնում, որ սև մուռտառ օձը էն նախշուն սիրուն օձին քրքրի իր կատաղությունից: Էս որ գյուղացին չի տեսնում, վրա է պրծնում էն սև օձին, էնպես բահով տալիս գլխին, որ հենց տեղնուտեղը ջնջխում է թողնում:

Սիրուն օձը ուրախանում, աշխարհով մեկ է լինում, որ էս գյուղացին իրեն էն մուռտառ օձից ազատեց: Գալիս է մոտը, գյուղացուն ասում.

- Ես որ կամ՝ օձերի թագավորի աղջիկն եմ, արի գնանք հորս մոտ: Որ քեզ կհարցնի, թե՝ «Ինչ տամ, որ աղջկանս ազատել ես», դու կասես՝ «Բան չեմ ուզում,

ինձ տուր ֆասը, շվին ու քիսեն»:

Գյուղացին օձի հետևից գնում է, գնում է, գնում, տեսնում է հրես՝ մի մեծ օձի բույն: Օձը մտնում է իր բույնը, գյուղացուն ասում է.

- Դու էստեղ կա՛ց, ես հորս դուրս կուղարկեմ:

Գյուղացին մնում է մի ժամ, երկու ժամ, երեք ժամ, մեկ էլ ի՞նչ տեսնի՝ էս օձի բնից մի ահագին շահմար կարմիր օձ է դուրս գալիս:

Դուրս է գալիս, գյուղացուն բարև է տալիս, ասում.

- Շնորհակալ եմ, ա՛յ ախպեր, որ իմ աղջկան պրծացրել ես էն օձից: Ուզի՝ տամ, ինչ որ ուզում ես:

Գյուղացին ասում է.

- Բան չեմ ուզում քեզնից՝ մի ֆաս, մի շվի, մեկ էլ մի քիսա:

Էդ ժամանակ օձը գնում բերում է, տալիս է գյուղացու ուզածները ու էլի գնում մտնում իր բույնը:

Գյուղացին էլ թողնում է, գնում իր արտը ջրելու: Որ իրիկունը պրծնում է արտը ջրելուց, գնում է տուն: Էն քիսեն, ֆասն ու շվին վերցնում է, դնում, իրենց մի խախուտ սնդուկ ունեին, նրա մեջ, մտքում ասում է. «Թող մնան սրանք էստեղ, կարող է՝ մի օր պետք գան»:

Էսպես անց է կենում մի ժամանակ: Օրերից մի օր էս գյուղացին հիվանդանում է, վեր ընկնում տեղով-բարձով, ծանր հիվանդ է դառնում խեղճ կնկա գլխին:

Էսպես պառկում է երկար ժամանակ, մի օր էլ մեռնում է:

Խեղճ կնիկը սև օրով երեխին պահում է, մեծացնում:

Երբ երեխեն մի քիչ թափովանում է, խելքը գլուխն է գալիս, մորն ասում է.

- Ա՛յ նանի, մեղք ենք մենք՝ էսպես դառը օրով ապրենք: Վեր կենամ գնամ պանդխտության, փող աշխատեմ, բերեմ, գլուխներս պահենք:

Մերն ասում է.

- Դո՛ւ գիտես, ա՛յ որդի, որ ուզում ես՝ գնա՛:

Տղեն ուրախ-ուրախ պատրաստություն է տեսնում, որ ճամփա ընկնի: Հանկարծ միտն է ընկնում, մորն ասում է.

- Նանի՛ ջան, նանի՛, մի ֆասից, բանից տանը չկա՞, տաս, համ ճամփին կդնեմ գլուխս, համ էլ առու-մառու պատահելիս ջուր կխմեմ:

Մերն ասում է.

- Եսի՞մ, ա՛յ որդի, հերդ քո քորփա ժամանակ մի օր ֆաս բերեց, ո՞վ գիտի՝ ո՞ր պուճախն է ընկել, սպասի ման գամ, գտնեմ, տար:

Մերն էս կողմ, էն կողմ ման է գալիս, էն խախուտ սնդուկը բաց է անում, տեսնում է՝ էնտեղ է մարդու բերած ֆասը: Ուրախ-ուրախ տանում է, տալիս տղին:

Տղեն մորը մնաս բարով է անում, դուրս գալիս, ֆասը հագցնում է գլխին, ճամփա ընկնում:

Գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է մի պարզ զուլալ աղբյուրի, մտքում ասում է. «Էս լավ եղավ, հազիր նստեմ էստեղ, մի քիչ հաց-մաց ուտեմ, նոր ճամփա ընկնեմ»:

Նստում է էդ աղբյուրի մոտ, հացի սուփրեն բաց անում, որ ուտի, տեսնում է՝ էն կողմը մի քանի գող նստած հաց են ուտում: Մոտներն էլ մի ահագին ունեցվածք էր կիտած: Էդ գողերը որ տեսնում են, ձեն են տալիս.

- Ա՛յ տղա, ա՛յ տղա, արի մի քիչ ցախ-մախ կիտի, բեր կրակի վրեն ածա՛:

Տղեն էդ ժամանակ ֆասը դնում է գլխին, գնում մի ահագին չոր ճյուղ, փետ ու փտուռ է կիտում, բերում է ածում կրակի վրա, մնացածն էլ կիտում է կրակի կողքին:

Հանկարծ գլուխը քոր է գալիս, ֆասը վերցնում է, որ գլուխը քորի, էն կողմից գողերը ձեն են տալիս.

- Տղա՛, քեզ չասացի՞նք՝ մի քիչ կրակի համար չոր ճյուղեր կիտես:

Տղեն մատը կծում է, ասում է. «Երևի էս ֆասի մեջ մի հունար կա, որ սրանք ինձ չտեսան»: Հետո ասում է.

- Հրե՛ս, տե՛ս՝ ինչքան եմ կիտել:

- Էդ ե՞րբ բերեցիր, որ մենք քեզ չտեսանք: Լա՛վ, դե գնա քո բանին:

Տղեն գնում է մի կողմ, ֆասը դնում է գլխին, գալիս է, գողերի մոտ կանգնում:

Հենց գողերը մի քիչ հանգստանում են, բերում են իրենց գողացած ապրանքը, փողերը բաժանում են: Կամացուկ գնում է, նրանց կողքին կանգնում: Հենց որ փողերը բաժանում են իրար մեջ, որ տալիս են իրար, ձեռքը գցում, մի բուռ վերցնում է, ձեռքը գցում է, մի բուռ վերցնում, ձեռքը գցում է, մի բուռ վերցնում: Գողերը տեսնում են, չէ՞, ընկերները պակաս են տալիս, կռիվ-ղալմաղալը ընկնում է դրանց մեջ: Բոլորը տալիս են իրար, արնաշաղախ անում, սպանում, ունեցվածքը մնում է անտեր:

Գյուղացու տղեն արագ-արագ հավաքում է, լցնում խուրջինը, ճամփա ընկնում: Գնում է, գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է էն երկրին, որտեղ որ պիտի գնար աշխատանքի: Գնում է, մի կողմի վրա մի պուճուր դուքան է վարձում իր համար, առուտուր է անում, էժան-էժան ծախոտում է, ահագին մուշտարի է հավաքում: Բայց իրենից որևէ միջոց կամ փող չէր ծախսում, որ ապրանք-բան առնի դուքանի համար:

Հա միալար էն ֆասը հագցնում էր գլուխը, գնում լավ-լավ հարուստ դուքան-ներից ապրանք գողանում, բերում էժան-էժան ծախոտում:

Մեկ, երկու, հինգ, տասը՝ էդ երկրի վաճառականները բոլորը հավաքվում են, գնում թագավորի մոտ գանգատ, թե.

- Ախր էսպես բան չի լինի, մենք մեղք ենք, էլ չենք կարողանում ընտանիք պահել, պահպանել: Չքավոր ենք դարձել էն ղարիբ վաճառականի արարմունքից: Մեր ապրանքը օրը ցերեկով, կասես սատանա կա, սատանեքը քաշում են, տանում, էլ ո՛չ մուշտարի է մոտ գալիս, ո՛չ բան: Քանի որ էն տղեն էնպես էժան ապրանք է ծախում, որ մարդ մնում է զարմացած: Աստծու սիրուն, ճար ունես՝ տե՛ս, մեղք ենք: Քո երկրի բոլոր վաճառականներս աղքատությունից կթողնենք, կփախչենք:

Էն կողմից թագավորի աղջիկը հանդես է գալիս, ասում է.

- Դուք հանգի՞ստ կացեք, ես մի հնարքով կգնամ, դրա գաղտնիքը կիմանամ:

Բոլորն էլ շնորհակալ են լինում թագավորի աղջկանից, գնում են իրենց բանին:

Էդ թագավորի աղջիկը ահագին պատրաստություն է տեսնում, լավ-լավ գինիներ, լավ-լավ ուտելիքներ՝ էլ փուռը տված գառ, հնդկահավ, լավ-լավ կերակուրներ վերցնում է, գնում ուղիղ դեպի էն գյուղացու տղի դուքանը:

Գնում է, հասնում դուքանը, ուղիղ ներս մտնում:

- Բարո՛վ, բարո՛վ, ա՛յ ախպեր, էսպես բան կլինի՞: Դու մինչև հիմի էստեղ առուտուր ես անում, ինձ իսկի աչքիդ տակը չես առնում: Մեղք եմ, չէ՞, մեռա քո ճամփեն պահելով:

Գյուղացու տղեն որ չի տեսնում թագավորի աղջկան, ուրախանում, աշխարհքով մեկ է լինում. ում գիշերը ճրագով էր ման գալիս, ցերեկն է գտնում: Բերում է լավ հաց սարքում, թագավորի աղջիկն էլ իր բերած պաշարն է բաց անում, էդ տղի հետ լավ ուտում են, խմում:

Մի կուշտ գինի է խմեցնում, լավ հարբեցնում է, կախվում է օձիքից, թե.

- Տեսնո՞ւմ ես, ես քեզ էդպես սիրում եմ, իմ ոտքով եկա քեզ մոտ, բայց դու ինձնից պահում ես, չես ասում, թե դու ոնց ես էդպես էժան-էժան առուտուր անում, որ օգուտ էլ ես անում, էդպես հարստացել ես:

Տղեն էնպես հարբած էր, որ էլ իսկի հալ չկար վրեն: Նստում է, մեկ-մեկ պատմում, թե ամբողջ հունարը էս ֆասի մեջ է:

Էհ, որ լավ քեֆ են անում, հարբում, խմում է էդ տղեն, քնում: Քոռն էլ ի՞նչ կուզի՝ ջուխտ աչք: Թագավորի աղջիկը ֆասը վերցնում է ու ուղիղ դեպի իր հոր ապարանքը:

Վաճառականները բերում են, լավ-լավ նվերներ տալիս թագավորի աղջկան, որ իրենց ազատեց էն տղի ձեռքից:

Թող սրանք մնան էստեղ, գանք լուր առնենք գյուղացու տղից: Խեղճ տղեն որ չի զարթնում, տեսնում գլխին եկածը, ծուխը պնչներից դուրս է գալիս: Մտիկ է անում էս կողմ, էն կողմ, էս կողմը ֆաս, էն կողմը ֆաս, ֆասը չկա ու չկա: Նոր գլխին վայ տալով՝ ապրանք-մապրանքը հավաքում է, ընկնում ճամփա՝ դեպի իր երկիրը: Գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, մի օր, երկու օր, երեք օր, վերջապես՝ մի շաբաթ, հասնում է իրենց երկիրը: Ուրախ-ուրախ գնում է իրենց տուն: Իսկ մոր ուրախությունն էլ պատմելու չէ, էնքա՜ն է ուրախանում խեղճ անճար

մերը, որ իր տղին տեսնում է: Տղեն մի քանի օր մնում է մոր մոտ, մինչև ձեռքի փողը լրիվ ծախսում է, մնում է մի քանի մանեթ: Դրանից մի քանի մանեթը տալիս է մորը՝ ձեռքի ծախս, մի հինգմանեթանոց էլ դնում է էն հոր բերած քիսիկի մեջ, քիսիկը դնում գրպանը, ընկնում է ճամփա՝ դեպի էն թագավորի երկիրը, որ աղջիկը էնպես օյին դրեց խեղճի գլուխը:

Գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է մի գյուղ, ասում է. «Մտնեմ, ձեռքիս հնգանոցը մանրեմ, մի քիչ բան-ման առնեմ»: Գրպանից քիսեն հանում է, բաց անում, որ փողը հանի, ի՞նչ տեսնի՝ հինգ մանեթը դարձել է տասը մանեթ: Մատը կծում է. «Երևի կա, չկա՝ սրա մեջ էլ մի հունար կա»: Էլ ձեռք չի տալիս փողին, անխոս դնում է գրպանը, ճամփա ընկնում: Ուղիղ գնում հասնում է էն երկիրը, որտեղ առաջ դուքան էր դրել: Գնում է իր հին դուքանի տեղը էլի դուքան է վարձում, հնարքով ու խորամանկությամբ էլի առուտուր է անում:

Մի քանի ժամանակ անց է կենում, էդ երկրի վաճառականները գնում են, թագավորի աղջկա ոտքերն են ընկնում, ասում.

- Աստծու սիրուն, մեզ էն տղի ձեռքից ազատի, էլի եկել է, մեր տունը քանդում է:

Թագավորի աղջիկը էլի պատրաստություն է տեսնում, հետն էլ քնեցնելու դեղ է վերցնում, գնում է տղի մոտ: Գնում ներս է մտնում, առաջվա պես գլուխ է դնում, հնարքներ բանեցնում ու իմանում տղի գաղտնիքը:

Խեղճ տղեն միամիտ մեկ-մեկ պատմում է, թե.

- Էսպես, էսպես, էսպես բան. ամբողջ հունարը էս քիսի մեջ է:

Էդ ժամանակ աղջիկը մի հնարով դեղը խմեցնում է տղին: Խմելուն պես էնպես խորն է քնում, որ ոտքից վերցնեիր, գցեիր քուչեն, չէր իմանա:

Թագավորի աղջկան էլ հենց էդ էր պետք: Քիսեն անձեն վերցնում է ու ուղիղ դեպի իրենց ապարանքը: Էն վաճառականները էլի լավ-լավ նվերներ են բերում աղջկան, որ էս էլ երկու անգամ իրենց ազատեց էն տղի ձեռքից:

Խեղճ տղեն էսպես քնում է մի ժամ, երկու ժամ, մի օր, երկու օր, հանկարծ զարթնում է՝ ի՞նչ զարթնի. տեսնում է՝ լրիվ դափ-դատարկ, ո՛չ քիսա կա, ո՛չ փող, ո՛չ բան:

Դառը-տխուր միտք անելով՝ ճամփա է ընկնում դեպի իրենց երկիրը, մտքում ասում է. «Սպասի՛, թագավորի՛ աղջիկ, քո հախից տես ո՛նց եմ գալիս: Էնպես օյին դնեմ գլուխդ, որ մնաս շշմած»: Միտք է անում, թե գուցե շվին իրեն սրա ձեռքից

ազատի, իր երեսը պարզ անի:

Գնում է, գնում է, գնում, հասնում է իրենց երկիրը: Գնում է տուն, մորը տեսնում է, ասում.

- Նանի՛ջան, շատը գնաց, քիչը մնաց, մի որոշ ժամանակ հետո տուն կգամ, հա՛ միալար կմնամ քեզ մոտ, մեր տուն ու տեղը իրար հետ յոլա կտանենք: Էս անգամ բաշխի՝ շուտ պիտի գնամ:

Գնում է, շվին վերցնում, մոր թուշը պաչում, ճամփա ընկնում:

Գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է մի սարի, ասում է. «Սպասի հլա շվին փորձեմ, տեսնեմ՝ ինչ հունար ունի»: Դնում է բերնին ու փչում է: Փչելուն պես էնքան զորք է լցվում հանդը, որ ասեղ գցելու տեղ չկար: Ասում է. «Հլը նորից փչեմ, տեսնեմ՝ սրանք ի՞նչ են անում»: Նորից փչելուն պես ամբողջ զորքը աներևութանում է: Ասում է. «Էս լավ եղավ, էս շվին թագավորի աղջկա հախից կգա»: Նորից ճամփա է ընկնում էն թագավորի երկիրը:

Գնում է, գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է թագավորի երկիրը: Հանդում կանգնում է ու շվին բռնում ուղիղ դեպի թագավորի ապարանքն ու փչում:

Փչելուն պես թագավորի ամբողջ երկիրը էնքան զորքով է լցվում, որ ոչ թե մի թագավորի զորք, տասը թագավորի զորք էլ իրար գլխի հավաքեին, էնքան չէր լինի:

Թագավորը իր նազիր-վեզիրի հետ շշմած է մնում, թե էս որտեղից լցվեց էս զորքը իրենց երկիրը, կամ թե ինչ հնարք անեն, որ դրանք ցրվեն:

Նոր էն կողմից աղջիկը ասում է.

- Դուք իսկի դարդ մի՛ արեք, կա՝ չկա, էս լրիվ էն գյուղացու բաներն են: Ես գնամ, առաջը կառնեմ, էլի մի հնարքով գաղտնիքը կիմանամ:

Պատրաստություն է տեսնում, վեր է կենում, գնում տղի մոտ: Գնում է, գնում, հասնում է տղին: Էլի քեֆ-ուրախություն է սարքում, տղին համոզելով խաբում, կախարդանքի գաղտնիքը իմանում: Տղի տրամադրությունը որ լավ բարձրանում է, աղջկան ասում է իր հունարը: Նստում է, մեկ-մեկ պատմում: Թե՝ չես ասի, էսպես, էսպես, էսպես բան, իմ ամբողջ հունարը էս շվին է. էս կողմից փչում եմ, զորքը հավաքվում է, հակառակ կողմից փչում եմ, բոլորն էլի հետ են գնում:

Աղջիկը ուրախանում է, աշխարհքով մեկ է լինում: Էն ժամանակ մի հնարով

դեղը խմեցնում է, քնեցնում, շվին վերցնում է ու ուղիղ դեպի իրենց տուն: Գնում է, թարս է փչում, ամբողջ զորքն էլ աներևութանում է:

Նոր թագավորը էլ լավ-լավ նվերներ, էլ լավ-լավ շորեր է առնում աղջկա համար, էնպես է զարդարում աղջկան, ոնց որ մի ոսկու ծառ:

Սրանց թողնենք էստեղ, գանք, լուր առնենք գյուղացու տղից:

Էսպես քնում է մի երկու օր: Հանկարծ որ չի զարթնում, տեսնում՝ ո՛չ շվի կա, ո՛չ թագավորի աղջիկ, էդ ժամանակ մատը կծում է, թե. «Էս էլ երեք անգամ թագավորի աղջիկը իմ գլուխը օյին դրեց: Սպասի՛, տե՛ս, թե ես քո գլխին ի՛նչ օյին պիտի դնեմ: Բա ես մարդ չե՞մ, որ թագավորի աղջկան նեղություն չտամ»:

Խեղճ տղեն դառը-տխուր գլուխն առնում է, մի ուրիշ երկիր գնում, մտքում ասում. «Գնամ էս անգամ մի ուրիշ երկիր, տեսնեմ՝ գուցե մի քանի շահի աշխատեմ, գնամ մեր երկիրը, մեր տունը, իմ հոր օջախը շենացնեմ»:

Էսպես միտք անելով՝ գնում է, գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է մի ծովի եզր: Էդ ծովի ափը բռնում է, ուղիղ գնում: Շատ ծարաված է լինում, հենց էդ ժամանակ աչքը գցում է ծովի էն ափին, տեսնի՝ ի՛նչ. մի հրաշք այգի՝ մեջն էլ լիքը կարմիր ու սպիտակ խաղող: Ասում է. «Էս լավ եղավ, համ գնամ

խաղող ուտեմ՝ ծարավս կոտրի, համ էլ հրաշք այգում մի քիչ ման գամ»:

Գնում է մտնում այգին, վրա պրծնում, մի կուշտ էդ կարմիր խաղողից ուտում: Հենց ուտելուն պես դառնում է մի ահագին գոմեշ: Շատ է գլխին, ոտքին տալիս, համա էլ ի՞նչ. բանը բանից անցել էր: Միտք անելով գնում է սպիտակ խաղողի մոտ: Հենց մի քիչ սպիտակ խաղող ուտում է թե չէ, նորից մարդ է դառնում: Ասում է. «Էս լավ եղավ, հազիր ճարը գտա»:

Վերցնում է երկու քթոց, լիքը խաղող է քաղում. մեկը սպիտակ խաղող է լցնում, մեկը՝ կարմիր: Ճամփա է ընկնում դեպի թագավորի աղջիկը:

Գնում է, գնում է, գնում, շատն ու քիչը աստված գիտի, հասնում է թագավորի երկիրը: Մի տեղ թաքուն սպիտակ խաղողը պահում է, կարմիր խաղողի քթոցը դնում է ուսին, ուղիղ գնում է թագավորի ապարանքի պատուհանների առաջ ու կանչում է.

- Ա՛յ լավ խաղող, գնաց, չմնաց:

Էս որ թագավորի աղջիկը տեսնում է, ծառաներին ուղարկում է, թե. «Գնացե՛ք, ամբողջ խաղողը դո՛ւք առեք, բերե՛ք, լավ խաղող է, մի քանի ժամանակ կուտենք»: Ծառաները գնում են, խաղողը առնում, բերում: Աղջիկը մի երկու ողկույզ դնում է բերանը թե չէ, մի ահագին սև գոմեշ է դառնում, գոմեշի ձայն հանելով՝ գնում-գալիս է:

Թագավորը ամբողջ աշխարհքում էլ հեքիմ չի թողնում, կանչում է, բայց ոչ մեկը չի կարողանում ճար անել:

Մի օր էն գյուղացու տղեն գալիս է թագավորի մոտ, ասում.

- Թագավորն ապրած կենա, ես կարող եմ քո աղջկան լավացնեմ:

Թագավորն ասում է.

- Մեղք ես, ա՛յ որդի, ջահել-ջիվան ես, գնա՛, քո արևի ձենն ածա, իմ աղջկան էնքան հեքիմներն ի՞նչ արին, որ դո՛ւ ինչ անես:

- Չէ՛,- ասում է գյուղացու տղեն,- թե չլավացնեմ, արյունս քեզ հալալ է, ինչ կուզես՝ արա:

Էդ տղին տանում են թագավորի աղջկա սենյակը: Տղեն թաքուն պահած սպիտակ խաղողի հետ վերցնում է մի լավ կակուղ ճիպոտ, մտնում է աղջկա սենյակը: Ճիպոտը վերցնում է, ընկնում գոմեշի ջանին՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ սալջարդ է անում, թողնում: Ասում է.

- Իմ ֆասի, քիսի, շվիի տե՛ղն ասա, թե չէ էնքան կծեծեմ, որ կսատկես:

Գոմեշը ընկնում է տղի ոտները, ասում.

- Ամա՛ն, աստծու սիրուն, ինձ ազատի, գնամ բերեմ:

- Չէ՛,- ասում է տղեն,- իմ բաները բե՛ր, տո՛ւր ինձ, նոր քեզ էնպես լավացնեմ, շինեմ մորե մեկ:

Աղջիկը, գոմեշ դարձած, տղին տանում է, տեղը ցույց տալիս: Ֆասը, քիսեն, շվին տղեն ուրախ-ուրախ վերցնում է, դնում գրպանը, նոր քթոցով սպիտակ խաղողը դնում է գոմեշի առաջ: Գոմեշը վրա է պրծնում էդ սպիտակ խաղողին, ուտում, սրբում է ամբողջ քթոցը, դառնում է ոնց որ մորե մեկ: Էնպիսի մի սիրուն, հուրի-մալաք աղջիկ է դառնում, որ էլ չեմ կարող ասել:

Էդ ժամանակ լուրը տանում են թագավորին, որ աղջիկդ լավացավ: Թագավորը ուրախ-ուրախ գնում է, աղջկա ճակատը պաչում, տղին պաչում: Տղին ասում է.

- Ա՛յ որդի, ես տղա չունեմ, արի իմ աղջիկը տամ քեզ, դու էլ ինձանից հետո կդառնաս թագավոր, իմ երկիրը յոլա կտանես:

Տղեն ուրախանում է, աշխարհքով մեկ է լինում: Մարդ են ուղարկում, տղի մորը բերում: Թագավորի աղջկան ու գյուղացու տղին իրար հետ պսակում են:

Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում. ինչ քեֆ, ինչ ուրախություն, որ էլ թիվ ու հաշիվ չկար:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

ԵՐԱՋ ՏԵՍՆՈՂ ԱՇԿԵՐՏԸ

Առաջ ժամանակ լինում է, չի լինում մի վաճառական: Էս վաճառականը մի մինուճար տղա է ունենում: Ինքն էլ շատ ծերացած է լինում, էնպես որ հայ-հայը գնացել, վայ-վայն էր մնացել: Օրերից մի օր կանչում է իր բարեկամներին:

- Տեսնո՞ւմ եք,- ասում է,- ես ծերացել եմ, էլ բանի պետք չեմ, տղես էլ դեռ երեխա է, աշխարհի խերն ու շառը չի իմանում: Ձեզանից մի խնդիրք ունեմ. իմ մեռնելուց հետո ինչ ունեմ-չունեմ՝ տուն, տեղ, անասուն, ունեցվածք, ամբողջը ծախե՛ք, փո՛ղ սարքեք, մոտներդ պահե՛ք, թող շահ բերի, մինչև տղիս մեծանալը: Որ մեծացավ,- ասում է,- կտանեք, մի արհեստի կտաք, որ պարապ-սարապ ման չգա:

Անց է կենում մի քանի ժամանակ, էս վաճառականը հիվանդանում է, տեղով-բարձով թեք ընկնում, էլ վեր չի կենում, հոգին ավանդում է: Բարեկամները, ոնց որ կարգն էր, տանում են դրան, թաղում: Ոնց որ կտակ էր արել, դրա ունեցած-չունեցածը լրիվ ծախում են, կանխիկ փող սարքում, գործի մեջ դնում: Տղեն որ դառնում է տասը-տասներկու տարեկան, ասում են՝ տանենք, մի արհեստի տանք: Դրան առաջներն են գցում, տանում շուկա՝ էս արհեստավորի մոտ, էն արհեստավորի մոտ, դես են գնում, դեն են գնում, որ շատ են ման գալիս, ծանրու-

թեթև են անում, տալիս են թագավորի ոսկերչի մոտ աշկերտ:

Էս տղեն առավոտները գիշերով-գիշերհանա վեր է կենում, գնում ոսկերչի արհեստանոցը, իրիկունները՝ մութը գետնին, թողնում է, տուն գալիս:

Էսպես անց է կենում մի վախտ՝ մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, վերջապես՝ մի ամիս, օրերից մի օր թագավորը կանչում է էդ ոսկերչին իր մոտ: Ոսկերիչը գալիս է, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Ուստա՛,- ասում է թագավորը,- ա՛ռ էս տասը ոսկին ու էս երկու անգին քարը. կտանես, ինձ համար երկու լավ մատանի կշինես, կբերես. մի շաբաթ էլ քեզ ժամանակ եմ տալիս:

- Աչքիս վրա,- ասում է ոսկերիչը:

Թագավորին գլուխ է տալիս, ոսկիքն ու անգին քարերը վերցնում, դուրս գալիս:

Գնում է արհեստանոց, ոսկիքն ու անգին քարերը դնում դազգահի վրա, աշկերտին պատվիրում է, որ ուշադիր լինի, ու ինքը վեր է կենում, գնում տուն, ասում է՝ հաց ուտեմ պրծնեմ, հետո կգամ, կշինեմ:

Էս աշկերտը, ուստեն ոտքը շեմքից դուրս է դնում թե չէ, գլուխը դնում է դազգահին, անձեն քնում:

Սատանայական հենց էդ վախտը թագավորը իր նազիր-վեզիրի հետ, դերվիշի զգեստ հագած, գալիս է էդ տեղերում ման գալու՝ տեսնի՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա: Էդ ոսկերչի արհեստանոցի մոտով անցնելիս նայում է, տեսնում՝ աշկերտը քնել է, իր տված ոսկիքն ու անգին քարերն էլ հրեն դազգահի վրա են: Թագավորը էս որ տեսնում է, կամաց, ոտքի մատների վրա մտնում է ներս, ա՛ռ հա՝ դրան մի լա՛վ ապտակում: Տալիս է ու դուրս գալիս, արագ հեռանում:

Աշկերտը վախից վեր է թռչում, տեսնում՝ մարդ չկա:

- Ա՛յ անաստված,- ասում է,- ինչի՞ չէիր թողնում՝ իմ մուրազին հասնեի: Ի՞նչ ասեմ, ինձ ապտակ տվող, ոնց որ դու մուրազս փորիս մեջ թողիր, բարով դու էլ քո մուրազին չհասնես:

Էս խոսքը թագավորը լսում է, համա ձեն-ծպտուն չի հանում, թողնում է գալիս ամարաթը: Կանչում է իր նոքարներին:

- Էս սհաթին,- ասում է,- կգնաք, էսինչ ոսկերչի աշկերտին կկանչեք, կբերեք ինձ մոտ:

Նոքարները գլուխ են տալիս, գնում: Գնում են ոսկերչի արհեստանոցը:

- Ուստա՛,- ասում են,- թագավորը քո աշկերտին կանչում է:

Ոսկերիչը մնում է զարմացած:

- Ջա՛նըմ,- ասում է,- ախր թագավորը իմ աշկերտի հետ ի՞նչ բան ունի, շփոթած կլինեք, երևի ինձ է կանչել:

- Չէ՛, ուստա՛,- ասում են նոքարները,- հենց քո աշկերտին է կանչել:

- Դո՛ւք գիտեք,- ասում է ոսկերիչը,- էս աշկերտը, էս դուք. տանում եք՝ տարեք:

Նոքարները աշկերտին առաջներն են անում, բերում թագավորի մոտ: Խեղճ աշկերտը մնացել էր մոլորված, վախից չէր իմանում՝ ի՞նչ անի, ի՞նչ չանի: Թագավորի ամարաթը մտնում է թե չէ, ձեռքերը կրծքին դրած՝ յոթ անգամ թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Էսինչ ոսկերչի աշկերտը դո՞ւ ես,- հարցնում է թագավորը:

- Հա՛, թագավորն ապրած կենա, ես եմ,- ասում է աշկերտը:

- Ա՛յ տղա,- ասում է,- ասա տեսնեմ՝ ինչ էր քո մուրազը, որ փորդ թողի. ասա՝ ես կատարեմ:

- Չէ՛, թագավորն ապրած կենա,- ասում է աշկերտը,- իմ մուրազն էնպիսի բան է, որ չեմ կարող ասել:

- Չե՞ս ասի, տե՛ս, կփոշմանես:

- Թագավորն ապրած կենա, ի՞նչ ուզում ես՝ ա՛րա, արյունս քեզ հալալ է:

Թագավորը տեսնում է, որ, չէ՛, աշկերտը համառում է, չի ուզում ասի, հրամայում է իր նոքարներին՝ տանեն գցեն մի մութ հորի մեջ, հորի բերանն էլ պինդ փակեն, գուցե վախենա, ասի: Նոքարները խեղճ տղին ծեծելով, ջարդելով, բրթբրթելով, քաշքշելով տանում են, գցում մի մութ հորի մեջ:

Էդ գիշեր տղեն մնում է հորի մեջ: Հաջորդ օրը թագավորը հրամայում է նոքարներին, որ գնան, էն տղին հանեն, բերեն: Գնում են հանում, բերում թագավորի մոտ:

- Ա՛յ տղա,- ասում է թագավորը,- աստծուց վախեցի, արի ինձ երազդ ասա: Որ ասես, իմացի՛, ի՞նչ ուզես, կտամ:

- Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,- ասում է աշկերտը,- չե՛մ ասի, ի՞նչ ուզում ես՝ արա:

- Տարե՛ք, դրան էլի գցե՛ք հորը,- հրամայում է թագավորը,- գուցե էնտեղ խելքը գլուխը գա:

Նոքարները ծեծելով, քաշքշելով տանում են, գրմփալեն էլի գցում հորի մեջ:

Խեղճ տղեն սոված, ծարավ մնում է հորի մեջ մի օր, երկու օր, երեք օր, վերջապես՝ մի շաբաթ, տեսնում է՝ հորի բերանը բաց անող չկա: Վերջը միտք է անում՝ գետինը փորի, գուցե մի ծակ գտնի, էնտեղից դուրս գա, փախչի: Մի փետի կտոր է գտնում հորի մեջ, էդ փետի կտորը վերցնում է ու կամաց-կամաց հորի մի կողմից քանդում: Քանդում է, քանդում է, քանդում, մի ժամ, երկու ժամ, երեք ժամ, տեսնում է՝ եղեգներ երևացին: Մի երկու թիզ էլ քանդում է, տեսնում է, ը՞հը՞, մի ծակ բաց ելավ դեմը:

- Էս լավ եղավ,- ասում է,- հիմի էս ծակը լայնացնեմ, որ անց կենամ էն կողմը, տեսնեմ՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Քանդում է, քանդում է, էնքան է քանդում, որ տեսնում է՝ էդ ծակով կարող է

անց կենա, նոր գոտին մեջքից հանում է, դրա մի ծերը մի տեղից կապում է, մեկէլ ծերը բռնում է ու սլլալով իջնում ներքև: Իջնում է՝ ի՞նչ տեսնի՝ մի սենյակ՝ մաքուր ավլած, սարքած, մեջը մի թախտ դրած, թախտի վրեն մի ձեռք խաս տեղաշոր գցած, մի սիրո՞ւն, նախշո՞ւն, հուրի-մալաք աղջիկ էլ էդ տեղաշորի մեջ քնած է՝ էնքա՞ն սիրուն, էնքա՞ն նախշուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես՝ նրանով զմայլվես: Սրան որ չի տեսնում՝ խելքամաղ է լինում, մնում: Դե՛ս, դե՛ն է մտիկ տալիս, տեսնում է մի պուճախում էլ մի ոսկե սինի՝ մեջը լիքը փլավ, մի սագ էլ տապակած, փլավի գլխին դրած: Ինքն էլ հենց էսպիսի բանի էր ման գալիս: Վրա է պրծնում, կուշտ ու կուռ փլավն ուտում, բերանը սրբում, մի կողմի վրա կանգնում: Հետո գնում է աղջկա երկու թուշը պինդ պաչում, նոր գոտու ծերը բռնում, էլի բարձրանում իր տեղը: Դու մի ասի՝ էդ աղջիկը հենց թագավորի աղջիկն է լինում:

Էդ աղջիկը մի վախտ զարթնում է, վեր է կենում, տեսնում՝ իր բաժին փլավը կերել են: Հայելու մեջն է մտիկ տալիս, տեսնում է՝ երեսի վրա բիծ կա:

- Կա, չկա,- ասում է,- էստեղ մարդ է մտել, համ իմ բաժին փլավն է կերել, համ էլ ինձ պաչել, թողել, գնացել է:

Դե՛ս է ընկնում, դե՛ն է ընկնում, է՛ս պուճախը, է՛ն պուճախը, տեսնում է՝ մարդ-մադաթ չկա, դուռն էլ պինդ փակած է: Մնում է զարմացած, չի իմանում՝ էս ի՞նչ բան է:

Հաջորդ օրը աշկերտն էլի էդ ժամին հորի միջից էն ծակը բաց է անում, իջնում թագավորի աղջկա սենյակ, տեսնում է՝ էլի քնած է: Գնում է նստում, անձեն նրա բաժին փլավն ուտում, հետո մոտենում է, աղջկա զույգ թուշը պաչում, հենց ուզում է գնա՝ աղջիկը նրա փեշը պինդ բռնում է:

- Ա՛յ տղա,- ասում է աղջիկը,- օձն իր պորտով, հավքն իր թևով մինչև օրս սիրտ չի արել էստեղ ոտք դնի, դու ո՞նց սիրտ արիր՝ մտար իմ սենյակ: Ոնց ես՝ գնամ հորս ասեմ, էն սհաթին գլուխդ թռցնել տա:

- Թագավորի աղջիկը ողջ լինի,- ասում է տղեն,- քո սերն է բերել: Ինչ հորդ ես ասում,- ասում է,- էն է՝ դու քո ձեռքով գլուխս կտրի, պրծի, է՛լի:

Էս խոսքը աղջկան շատ է դուր գալիս:

- Դե որ էդպես է,- ասում է,- սրանից դենը ես քոնն եմ, դու՝ իմը: Համաձա՞յն ես:

- Համաձայն եմ,- ասում է տղեն:

Երկուսով նստում են հացի: Ուտում են, խմում, քեֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն

լսում, մինչև դառնում է կեսգիշեր: Հետո տղեն վեր է կենում, նորից գնում իր տեղը, ծակը պինդ փակում է, որ մարդ չիմանա:

Էսպես անց է կենում մի ամիս, երկու ամիս, երեք ամիս: Էս տղեն ամեն գիշեր էն ծակով իջնում էր թագավորի աղջկա սենյակ, նրա հետ ուտում, խմում, ասում, խոսում, զրույց անում, նոր լուսադեմին հետ գալիս իր տեղը:

Օրերից մի օր թագավորը հրամայում է իր նոքարներին՝ գնան տեսնեն՝ ոսկերչի աշկերտը մեռե՞լ է, թե՞ դեռ ողջ է, հանեն, բերեն իր մոտ: Նոքարները գնում են, հորի բերանը բաց անում, պարանը կախ տալիս, էն տղին հորից հանում են, բերում թագավորի մոտ: Թագավորը տղին որ տեսնում է, մնում է զարմացած: Գիրությունից տղի վիզը էնքան էր հաստացել, կասեիր գոմշի վիզ լիներ:

- Հը՛,- ասում է թագավորը,- երազդ ասո՞ւմ ես, թե՞ չէ:

- Չէ՛, թագավորն ապրած կենա,- ասում է տղեն,- երեք ամիս չէ, թեկուզ երեք տարի էլ պահես հորի մեջ, ես իմ երազն ասողը չեմ:

- Ա՛յ տղա,- ասում է թագավորը,- մեղք ես, ջահել-ջիվան ես. տե՛ս՝ վերջը չփոշմանես:

- Թագավորն ապրած կենա, չեմ փոշմանի, ի՞նչ ուզում ես՝ արա՛:

Թագավորը ջղայնանում է տղի վրա, նոքարներին հրամայում՝ տանեն նորից հորը գցեն, որ էնտեղ սովածությունից մեռնի: Նոքարները ծեծելով, ջարդելով, քաշքշելով տանում են նրան, նորից գցում հորի մեջ, թողնում գալիս:

Ոսկերչի աշկերտն էլ հենց էդ էր ուզում: Առաջվա պես աստծու ամեն օր գիշերը իջնում էր աղջկա սենյակ, մինչև լուսադեմ մոտը մնում, ուտում, խմում, կշտանում, նոր լուսադեմին բարձրանում էր իր տեղը:

Էսպես անց է կենում մի ժամանակ: Օրերից մի օր Ֆրանգստանի թագավորը էդ երկրի թագավորին երեք ձի է ուղարկում, հետն էլ պատվիրում, թե պիտի իմանաս սրանց ամեն մեկի տարիքը՝ ո՞ր ձին քա՞նի տարեկան է. թե չիմացար, քո ամբողջ թագավորությունը քարուքանդ կանեմ, դու գիտես:

Խեղճ թագավորը էս որ լսում է, թուքը չորանում է, վախից չի իմանում՝ ի՞նչ անի, ի՞նչ չանի, ի՞նչ պատասխան տա նրան:

Միտք է անում, միտք, վերջը ասում է.

- Թե իմանա, իմ աղջիկը կիմանա էս բանը, էլ մարդ չէ:

Անմիջապես ծառաների միջոցով լուր է ուղարկում աղջկան, թե էսպես, էսպես,

էսպես բան. Ֆրանգստանի թագավորը երեք ձի է ուղարկել, պիտի դրանց տարիքը իմանաս: Դե նրա աղջիկը իմաստուն էր, էլի, ամեն բան գիտեր, համա դիտավորյալ չի ասում: Հորը պատասխան է ուղարկում, թե իր իմաստնությունը գնացել է, թող ուրիշին հարցնի: Ծառաները լուրը բերում են թագավորին, թե աղջիկդ էսպես է ասում:

Էդ իրիկուն ոսկերչի աշկերտը, իր սովորույթի համաձայն, էլի հորի միջից իջնում է թագավորի աղջկա սենյակը:

- Տղա՛,- ասում է թագավորի աղջիկը,- բա չես ասի՝ էսպես, էսպես, էսպես բան: Ֆրանգստանի թագավորը հորս երեք ձի է ուղարկել, հետն էլ ապսպրել է, թե պիտի իմանաս՝ ո՛ր ձին քանի տարեկան է: Նա էլ ծառաների միջոցով իմաց էր տվել ինձ, որ գնամ, մի ճար անեմ իրեն: Ես էլ դիտավորյալ լուր ուղարկեցի, թե իմ իմաստնությունը գնացել է, թող ուրիշին հարցնի, որ ինչ է՝ քեզ սովորեցնեմ, գնաս գտնես, գուցե էդ հորից քեզ ազատի:

- Էդ լավ եղավ,- ասում է տղեն,- դե սովորեցրո՛ւ տեսնեմ:

- Կգնաս,- ասում է աղջիկը,- էդ ձիերին առաջդ կանես, կտանես աղբյուրը,

կջրես, հետ կբերես գոմը, կկապես, առաջները գարի կածես, որ ուտեն: Որը դունչը կոխեց մսուրքը, կերը կերավ, իմացի՛ր՝ էն երեք տարեկան է. որը կերը դնչով տվեց ու փնչացրեց՝ իմացի՛ր՝ էն էլ երկու տարեկան է. որն էլ տեսար դունչը կոխում ա մսուրքը ու իսկի գարի չի ուտում, հենց դե՛ս, դե՛ն ծուլ ա լինում, տռճիկ տալիս, իմացի՛ր, որ էն դեռ խամ է, կերին սովոր չէ, էն էլ մի տարեկան է:

- Լա՛վ,- ասում է տղեն,- ոնց որ ասիր, էնպես էլ կանեմ:

Սրանց թողնենք էստեղ, գանք, լուր առնենք թագավորից:

Էդ թագավորը ծառաներից որ իմանում է աղջկա պատասխանը, մնում է շվարած, մոլորված: Չի իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ լուր ուղարկի Ֆրանգստանի թագավորին: Կանչում է իր նազիր-վեզիրին, պալատի մարդկանց բոլորին էլ հավաքում է, գուցե մի ճար անեն: Սրանք դե՛ս են տալիս, դե՛ն են տալիս, ինչքան խելք խելքի են տալիս, միտք անում, բան դուրս չի գալիս, չեն կարողանում գտնել:

Հանկարծ թագավորի միտն ընկնում է ոսկերչի աշկերտը, ասում է՝ մարդ է, գուցե նա գտնում է:

Հրամայում է՝ գնան, հորից հանեն, բերեն իր մոտ: Արագ գնում են հանում, բերում: Տղեն գալիս է, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Տղա՛,- ասում է թագավորը,- քեզ մի բան եմ ուզում հարցնել. չգիտեմ՝ կգտնե՞ս, թե՞ չէ:

- Հարցրո՛ւ, թագավորն ապրած կենա,- ասում է տղեն,- գուցե գտնում եմ:

- Թե իմացար էս երեք ձիու տարիքը,- ասում է,- ինչ ուզես՝ կտամ:

- Թագավորն ապրած կենա,- ասում է տղեն,- դրա մեջ ի՛նչ կա, որ չիմանամ:

- Դե իմացի՝ տեսնե՛մ,- վրա է բերում թագավորը ուրախացած:

Տղեն երեկվա տված խրատը մտքից չէր հանում: Ձիերի սանձերն առնում է ձեռքը, քաշում, տանում է դեպի աղբյուրը, տեղը տեղին ջրում, լողացնում, հետ բերում, գոմում կապում: Հետո գնում է գարի բերում, լցնում առաջները, որ ուտեն: Ինքն էլ մի քիչ հեռու կանգնում է, որ ուշադիր նայի, տեսնի՝ ոնց են ուտում: Տեսնում է, որ ձիերից մեկը, աղջկա ասածի պես, գլուխը կոխեց մսուրքը ու հանգիստ իր կերն ուտում է: Տեսնում է՝ էն մեկն էլ մոտեցավ գարուն, բայց կամ ուտում է, կամ չէ, կամ էլ փնչացնում է: Իսկ երրորդ ձին ասես գարի չէր ուտում. կամ դե՛ս, դե՛ն էր ծուլ լինում, տռճիկ տալիս, կամ էլ քացի գցում, մարդկանց վախեցնում: Էս բաները որ լավ զննում է, մոտենում է թագավորին:

- Թագավորը ողջ լինի,- ասում է,- հրես էս ձին տեսնում ես՝ էս երեք տարեկան է. էս մեկը երկու տարեկան է, էն մեկէլն էլ մի տարեկան է:- Մեկ-մեկ մատով ցույց է տալիս:

Ֆրանգստանի թագավորի մարդիկ, թագավորի նազիր-վեզիրը բոլորը խիստ զարմանում են, բերանները բաց իրար երեսի էին մտիկ անում: Թագավորի ուրախությանը չափ չկար. չէր իմանում՝ ի՞նչ անի, ո՞նց աշկերտի լավության տակից դուրս գա, որ լավ լինի: Բայց հանկարծ նրա երազը միտքն է ընկնում: Թագավորը աղաչանք-պաղատանք է անում, որ ասի, նա էլի սատանի ձին է հեծնում, չի ասում: Թագավորը հրամայում է, որ հետ տանեն, գցեն հորը, էնտեղ կենա, մինչև խելքի գա: Նոքարները տանում են ոսկերչի աշկերտին էլի գցում հորը, թողնում գալիս:

Թագավորը Ֆրանգստանի թագավորի մարդկանց հետ լավ-լավ ընծաներ է դնում, ճամփու գցում:

Էսպես անց է կենում մի ժամանակ՝ մի ամիս, երկու ամիս, երեք ամիս... Օրերից մի օր Ֆրանգստանի թագավորը էս թագավորին երեք խնձոր է ուղարկում, երեքն էլ մի տեսակի, մի գույնի ու մի մեծության: Ապսպրում է, թե պիտի իմանաս էս երեք խնձորից ո՞րը քանի տարվա է. չիմացար՝ ամբողջ թագավորությունդ քարուքանդ կանեմ, քեզ էլ տնով-տեղով գերի կտանեմ:

Թագավորը էլի ծառաների միջոցով իմաց է տալիս իր աղջկան, թե էսպես, էսպես. կարող ես՝ մի ճար արա: Աղջիկը էս անգամ էլ է լուր ուղարկում հորը, թե իր իմաստնությունը գնացել է, թող ուրիշ մարդ գտնի:

Էդ իրիկունը ոսկերչի աշկերտը ամեն օրվա պես էլի իջնում է թագավորի աղջկա սենյակը: Աղջիկը սրան պատմում է:

- Բա չես ասի,- ասում է,- էսպես, էսպես, էսպես բան: Ֆրանգստանի թագավորը հիմի էլ երեք խնձոր է ուղարկել հորս, որ իմանա՝ նրանցից ամեն մեկը քանի տարվա խնձոր է: Չիմացար, ասել է, ամբողջ թագավորությունդ քարուքանդ կանեմ: Հերս էս անգամ էլ էր ինձ կանչել, որ գնամ, մի ճար անեմ, բայց ես դիտավորյալ չգնացի, որ էլի քեզ կանչի, գնաս գտնես:

- Բա ի՞դ ոնց պիտի գտնեմ,- հարցնում է տղեն:

- Խնձորները,- ասում է,- կվերցնես ձեռքդ, կգնաս, ավազանի մոտ կկանգնես, մեկ-մեկ կգցես ջուրը: Էն որ գնաց ջրի տակը ու հետո ելավ ջրի երեսը, իմացի՛, որ մի տարվա է: Էն որ գցելուց հետո մի քիչ տակը մնաց, էլի դուրս եկավ ջրի երես,

իմացի՛, որ երկու տարվա է, իսկ էն, որ իսկի ջրի տակը չի գնա, հենց կմնա երեսին, իմացի՛, որ էն էլ երեք տարվա է:

- Լա՛վ,- ասում է տղեն,- ոնց որ ասիր, էդպես էլ կանեմ:

Սրանց թողնենք էստեղ, գանք, լուր առնենք թագավորից:

Թագավորին որ լուր են բերում, թե աղջիկդ էսպես է ասում, անմիջապես հրամայում է նոքարներին՝ էլի գնան, ոսկերչի աշկերտին հորից հանեն, բերեն: Գնում են հանում, բերում թագավորի մոտ: Տղեն թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Տղա՛,- ասում է թագավորը,- քեզ մի բան էլ պիտի հարցնեմ, չգիտեմ՝ կգտնե՞ս, թե՞ չէ:

- Ասա՛, թագավորն ապրած կենա, կարող է՝ գտնում եմ:

Թագավորը երեք խնձորը բերում է, տալիս տղին:

- Կարո՞ղ ես իմանալ,- ասում է,- էս խնձորներից ո՞րը քանի տարվա է:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- դրանից էլ հեշտ բա՞ն:

Տղեն աղջկա խրատը միտքն էր պահել, է՛լի: Խնձորներն առնում է թագավորի ձեռքից, գնում է, ավազանի մոտ կանգնում, մեկ-մեկ գցում է ջուրը: Տեսնում է, ոնց որ աղջիկն ասել էր, էնպես էլ եղավ: Էսպես մեկ-մեկ որ գցում է, իմանում է՝ ո՛րը քանի տարվա է, ջոկում է, տալիս թագավորին:

- Թագա՛վորն ապրած կենա,- ասում է,- էս մի՛ տարվա խնձոր է, էս՝ երկո՛ւ տարվա, էս էլ՝ երե՛ք տարվա:

Ֆրանգստանի մարդիկ, թագավորի նազիր-վեզիրը մնում են զարմացած, թե էս տղեն ինչքա՞ն իմաստուն, ինչքա՞ն խելոք է, որ էս էլ երկու անգամ էսպիսի դժվար բանը գտնում է: Թագավորը հո չէր ուրախացել, աշխարհով մեկ էր եղել: Ուզում էր՝ դրան լավ-լավ ընծաներ տա, ազատ արձակի, հանկարծ էլի նրա երազը միտքն է ընկնում:

- Տղա՛,- ասում է թագավորը,- քեզ ուզում եմ բաց թողնեմ, գնաս, քո արևի ձենն ածես. արի՛ գոգիգ քարը վե՛ր ածա, ասա տեսնեմ՝ երազդ ի՞նչ է:

- Թագավո՛րն ապրած կենա,- ասում է տղեն,- բան գիտես՝ բա՛ն ասա. ես երազ ասողը չեմ:

Թագավորը տեսնում է, որ չէ՛, չի լինում, երազը չի ասում, էլի կոշտ ու կոպիտ պատասխան է տալիս, հրամայում է, որ տանեն, էլի գցեն հորը, գուցե էնտեղ

խրատվի, խելքի գա: Նոքարները տղին քաշքշելով տանում են, էլի գցում հորի մեջ, դառնում գալիս:

Թագավորը Ֆրանգստանից եկած հյուրերին լավ-լավ ընծաներ է տալիս, ճամփու դնում իրենց երկիրը:

Անց է կենում էսպես մի ամիս, երկու ամիս, երեք ամիս, վեց ամիս, վերջապես՝ մի տարի: Ֆրանգստանի թագավորը էլ մարդ չի ուղարկում էս մեր թագավորի մոտ: Սա էլ ուրախանում է, հենց իմանում է՝ պրծավ նրա ձեռքից: Բայց ո՞ւր էր թե... Օրերից մի օր մեկ էլ ի՞նչ է տեսնում. Ֆրանգստանի թագավորը հրես տասներկու երեխա է ուղարկել, տասներկուսն էլ մի բոյի, մի բուսաթի. էնքա՜ն իրար նման, էնքա՜ն իրար նման, կասես տասներկուսն էլ ախպերներ լինեին մի հորից, մի մորից. մի խոսքով՝ ոնց որ մի խնձորը տասներկու տապակ արած, էնտեղ դրած, էնքան իրար նման էին: Պատվիրում է, թե պիտի իմանաս՝ սրանցից ո՞րն է աղջիկ, ո՞րը տղա. չիմացար՝ զորք կվերցնեմ, կգամ, թախտդ գետնին կհավասարեցնեմ:

Խեղճ թագավորի թուքը չորանում է: Չէր իմանում՝ ի՞նչ անի, ի՞նչ վայ տա գլխին: Ճարը կտրած, էլի ծառաներին ուղարկում է իր աղջկա մոտ, որ գա տեսնի՝ ի՞նչ է անում, Ֆրանգստանի թագավորի պատասխանը ո՞նց է տալիս:

Բայց աղջիկը էլի գլուխը տակը չի տալիս, լուր է ուղարկում, թե էդ իմ բանը չէ, քեզ համար ուրիշ մարդ գտի:

Մթնում է թե չէ, ոսկերչի աշկերտը հորից իջնում է թագավորի աղջկա սենյակը, աղջիկը դրան ասում է.

- Բա չես ասի՝ էսպես, էսպես, էսպես բան, Ֆրանգստանի թագավորը տասներկու երեխա է ուղարկել հորս, որ իմանա՝ նրանցից ո՞րն է աղջիկ, ո՞րը՝ տղա: Հերս էլ ծառաներին ուղարկել էր ինձ կանչելու, որ գնամ, Ֆրանգստանի թագավորի պատասխանը տամ. ես էլի դիտավորյալ չգնացի, ասացի՝ իմ բանը չէ:

- Բա ի՞դ ոնց պիտի գտնեմ,- հարցնում է տղեն:

- Կգնաս,- ասում է աղջիկը,- ջրամանը տաք ջուր կլցնես, գիշերով-գիշերհանա հաշտում կկանգնես: Էն տասներկու երեխեն որ վեր կկենան՝ երեսները լվանան, կգնաս ձեռներին ջուր կաձես: Ջուր աձելու վախտը տեսար՝ ո՞վ տաքին չդիմացավ, ձեռքը քաշեց ու «օ՞ֆ, օ՞ֆ» արեց, իմացի՝ նա տղա է. ով ձեռքը չքաշեց, տաքին դիմացավ, իմացի՝ նա աղջիկ է: Էսպես,- ասում է,- մեկ-մեկ կջոկես, տղերքին ջոկ սենյակ կանես, աղջիկներին՝ ջոկ: Նոր Ֆրանգստանի թագավորի մարդկանց

կկանչես, կասես՝ էս վեցը տղա են, մեկէլ վեցը՝ աղջիկ:

- Լա՛վ,- ասում է տղեն,- ոնց որ ասացիր, էդպես էլ կանեմ:

Սրանց թողնենք էստեղ, գանք, լուր առնենք թագավորից:

Ծառաները թագավորին որ խաբար են բերում, թե աղջիկդ էսպես է ասում, խեղճը մնում է մոլորված: Ի՞նչ աներ, ի՞նչ չաներ. ո՛ւմ կանչեր, որ կարողանար իր դարդին դարման աներ: Միտք է անում, միտք անում, վերջը հրամայում է՝ գնան էլի ոսկերչի աշկերտին կանչեն: Գնում են հորից հանում, բերում թագավորի մոտ: Տղեն թագավորին գլուխ է տալիս, կանգնում:

- Տղա՛,- ասում է,- Ֆրանգստանի թագավորը հիմի էլ էսպիսի մի զուլում է ապսպրել. տե՛ս՝ կարո՞ղ ես գտնել:

- Ինչի՞ չեմ կարող, թագավորն ապրած կենա,- ասում է տղեն,- դրանից էլ հեշտ բա՞ն: Բայց, թագա՛վորն ապրած կենա, ես էլ քեզնից մի բան պիտի ուզեմ. չգիտեմ՝ կտա՞ս, թե՞ չէ:

- Ուզի՛,- ասում է թագավորը,- մի՛ վախի, ամբողջ թագավորությունս էլ ուզես, չեմ խնայի, կտամ:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- լսել եմ՝ մի սիրուն, մի նախշուն, մի հուրի-մալաք աղջիկ ունես: Որ Ֆրանգստանի թագավորի ուզածը գտնեմ, էդ աղջկան էլ ինձ տալի՞ս ես:

- Տալիս եմ,- ասում է թագավորը,- մորդ կաթի նման քեզ հալալ է:

- Տալի՞ս ես:

- Տալիս եմ,- ասում է թագավորը:

- Բա որ էդպես է,- ասում է տղեն,- Ֆրանգստանի թագավորի ուզածն էլ զույգ աչքիս վրա:

Հաջորդ օրը լուսանում է թե չէ, տղեն ջրամանը տաք ջուր է լցնում, մի ձեռքին բռնում, լագանն էլ մեկէլ ձեռքն է առնում, սրբիչն էլ ուսով է գցում, գալիս հաշտում կանգնում: Թագավորի հյուրերը վեր են կենում տեղներից, դուրս գալիս հաշտը, որ երեսները լվանան: Տղեն առաջ է գալիս, մեկ-մեկ ձեռներին ջուր ածում: Ով որ տաքին չի դիմանում, ձեռքը քաշում է ու «օ՛ֆ, օ՛ֆ» անում, նրան ջոկ սենյակ է անում. ով որ՝ չէ, տաքին դիմանում է, թողնում է էնտեղ: Էսպես բոլորի ձեռքին ջուր է ածում, իրարից ջոկում, հետո կանչում է Ֆրանգստանի թագավորի մարդկանց:

- Եկե՛ք,- ասում է,- տեսե՛ք՝ ճի՞շտ եմ ջոկել, թե՞ չէ:

Ֆրանգստանի թագավորի մարդիկ գալիս են տեսնում՝ ճիշտ է ջոկել, մնում են զարմացած էս տղի խելքի վրա:

- Ապրես,- ձեն են տալիս Ֆրանգստանի թագավորի մարդիկ,- դրուստ ես ջոկել:

Թագավորը բերում է, դրանց լավ-լավ ընծաներով ճամփու դնում դեպի Ֆրանգստան: Հետո պատրաստություն է տեսնում, բերում աղջկան ոսկերչի աշկերտի հետ նշան դնում, պսակում, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում:

Ինչ քեֆ, ինչ ուրախություն, ինչ դափ ու զուռնա…

Սրանց թողնենք էստեղ, գանք լուր առնենք Ֆրանգստանի թագավորի մարդկանցից:

Սրանք գնում են, գնում են, գնում, շատն ու քիչն աստված կիմանա, հասնում են իրենց երկիրը: Գնում են ուղիղ թագավորի պալատը, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Հը՛,- հարցնում է թագավորը,- ինչ պատասխան եք բերել էն երկրի թագավորից:

- Թագավորն ապրած կենա,- ասում են,- նրա երկրում մի ջահել-ջիվան տղա կա, էնքան խելոք, էնքան իմաստուն, որ էլ չենք կարող ասել. էս էլ երեք անգամ ինչ հարցնում ես՝ նա՛ է գտնում:

- Բա որ էդպես է,- ասում է թագավորը,- հե՛տ կգնաք էն երկիրը, իմ անունը կտաք, էն տղին կվերցնեք, կբերեք ինձ մոտ: Կասեք՝ մեր թագավորը քեզ կանչում է: Մի տեսնեմ՝ էդ ինչ տեսակ մարդ է, որ էս էլ երեք անգամ իմ ասածը գտնում է:

- Մեր աչքի վրա, թագավորն ապրած կենա,- ասում են նրա մարդիկ:

Թագավորին գլուխ են տալիս, դուրս գալիս, գնում ճամփի պատրաստություն տեսնում, հաջորդ օրը, դեռ լույսն ու մութը չբաժանված, ընկնում են ճամփա դեպի էն թագավորի երկիրը:

Գնում են, գնում են, գնում, շատն ու քիչն աստված կիմանա: Գիշեր-ցերեկ գնում են՝ մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ, վերջապես՝ մի ամիս, հասնում են էն թագավորի երկիրը: Գնում են թագավորին գլուխ տալիս, կանգնում:

Թագավորը սրանց որ չի տեսնում, թուքը չորանում է, ասում է՝ վայ թե Ֆրանգստանի թագավորը էլի նոր բան ա ապսպրել:

- Հը՛, խե՞ր լինի,- հարցնում է թագավորը նրանց:

- Թագա՛վորն ապրած կենա,- ասում են նրանք,- մեր թագավորը քո էն իմաստուն մարդուն կանչում է:

Թագավորը մարդ է ուղարկում ոսկերչի աշկերտի հետևից, կանչել տալիս: Ոսկերչի աշկերտը գալիս է, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Տղա՛,- ասում է թագավորը,- Ֆրանգստանի թագավորը քեզ կանչել է, կգնա՞ս:

Խեղճ տղի ջանը եռ ու քորն ընկնում է. գնա՝ վայ թե մի բան հարցնի,

չկարողանա պատասխան տա, գլուխը թռցնել տա, չգնա՝ վա՛յ թե ջղայնանա, զորք հավաքի, գա վրաները կռիվ: Էսպես մնացել էր երկու քարի արանքում, չէր իմանում՝ ի՞նչ անի, ի՞նչ չանի: Վերջը որ շատ միտք է անում, միտք է անում, տեսնում է՝ ճար չկա, պիտի գնա:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- որ հրամայում ես՝ կգնամ, ի՞նչ անեմ:

Էս տղեն մի քանի օր մնում է, ճամփի համար պաշար է վերցնում, վեր է կենում, նրանց հետ ճամփա ընկնում դեպի Ֆրանգստան:

Գալիս են, գալիս, շատն ու քիչն աստված գիտի, մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, վերջապես՝ մի ամիս, հասնում են Ֆրանգստան: Թագավորի մարդիկ տղին առաջներն են անում, տանում ուղիղ թագավորի պալատը, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Թագավորն ապրած կենա,- ասում են,- հրես էն իմաստուն տղին բերել ենք:

- Էսինչ տղեն դռ՞ու ես,- հարցնում է թագավորը:

- Հա՛, ես եմ, թագավորն ապրած կենա,- ասում է տղեն:

- Դե որ էդպես իմաստուն ես,- ասում է,- ա՛ռ էս պողպատի կտորը, ինձ համար սրանից մի լավ ձեռք թավշի պես կակուղ շոր կարի, որ հագնեմ: Երեք օր էլ քեզ ժամանակ եմ տալիս,- ասում է,- կարեցիր՝ աղջիկս քեզ կտամ, վրեն էլ ահագին ունեցվածք, չկարեցիր՝ իմացի՝ գլուխդ կթռչի:

Խեղճ տղեն էս որ լսում է, լեղին ջուր է կտրում: Ճա՛րն ինչ. մի անգամ ընկել էր, պիտի քաշեր: Պողպատի կտորը վերցնում է, դառը-տխուր դուրս գալիս, գնում: Էդ թագավորի աղջկա պատուհանի մոտով անց կենալիս թագավորի աղջիկը դրան տեսնում է. գլուխը պատուհանից հանում է, տղի հետ խոսում:

- Էսինչ իմաստուն տղեն դռ՞ու ես,- հարցնում է աղջիկը:

- Հա՛, ես եմ, թագավորի աղջիկը ողջ լինի,- ասում է տղեն:

Տղեն որ գլուխը չի բարձրացնում, մտիկ տալիս, տեսնում է՝ ի՞նչ, մի աղջի՞կ, մի աղջի՞կ, մի աղջի՞կ, էնքա՞ն սիրուն, էնքա՞ն նախշուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես, հենց նրան նայես, էնքա՞ն մի սիրուն էր: Դրան որ չի տեսնում, խելքամաղ է լինում, մնում:

- Բա ինչի՞ ես էդպես դառը-տխուր,- հարցնում է աղջիկը:

- Ի՞նչ անեմ, տխուր չլինեմ,- ասում է տղեն,- հերդ ինձ մի պողպատի կտոր ա տվել, որ իր համար մի ձեռք շոր կարեմ. չկարեցի՝ պիտի գլուխս կտրել տա: Հիմի

մնացել եմ մոլորված, չեմ իմանում՝ ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ:

- Տղա՛,- ասում է աղջիկը,- մի՛ վախի, ես էնպես կանեմ, որ քո մի մազն էլ չի թեքվի: Կգնաս,- ասում է,- թաշկինակդ լիքը ավազ կլցնես, կտանես հորս մոտ, կասես. «Թագավորն ապրած կենա, էս ավազից թել մանել տուր, որ քո ուզած մի ձեռք շորը կարեմ»: Որ կասի՝ «Ախր ավազից թել կմանվի՞», կասես՝ ավազից որ թել չի մանվի, բա պողպատից շոր կկարվի՞:

Տղեն էս որ լսում է, ուրախանում, աշխարհով մեկ է լինում, գնում է, թաշկինակը լիքը ավազ լցնում, գալիս թագավորի պալատը, թագավորին գլուխ տալիս, կանգնում:

- Հը՛, տղա՛,- հարցնում է թագավորը,- ինչի՞ հետ եկար:

- Թագավորն ապրած կենա,- ասում է,- էս ավազը բերել եմ՝ թել մանել տաս, որ քո ուզած շորը սրանով կարեմ:

Թագավորը մնում է սառած, տղի երեսին մտիկ անելով:

- Հը՛, թագավորն ապրած կենա,- վրա է բերում տղեն,- ինչի՞ ես էդպես երկարբարակ միտք անում:

- Ո՞նց միտք չանեմ,- ասում է թագավորը,- իսկի էդ լինելու բա՞ն է, որ ասում ես: Ավազից թել կմանվի՞:

- Ավազից որ թել չի մանվի,- ասում է տղեն,- բա պողպատից շոր կկարվի՞:

Թագավորը տղի խելոք պատասխանը որ լսում է, ասում է.

- Տղա՛, դու տարար. աղջիկս մորդ կաթի նման քեզ հալալ է, գնա՛, քո արևի ձե՛ն ածա:

Էդ ժամանակ բերում է, աղջկան տալիս տղին, աղջկա հետ լավ բաժինք է դնում, լավ ունեցվածքով, լավ-լավ ընծաներով ճամփու դնում իր երկիրը:

Տղա, աղջիկ ճամփի պատրաստություն են տեսնում, բեռները բարձում, գնում են թագավորի ձեռքը համբուրում, թագավորի կնկան պաչում, ճամփա ընկնում:

Էս տղեն գալիս է, գալիս է, գալիս, մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ, վերջապես՝ մի ամիս, հասնում իրենց երկիրը:

Լուրը տանում են թագավորին, թե.

- Հրեն փեսեդ ահագին քոչ ու կահ-կարասիով գալիս է, հետն էլ մի սիրուն, մի նախշուն, մի հուրի-մալաք աղջիկ, որ տեսնողի խելքն է գնում:

Թագավորը մեծ զորքով, իր նազիր-վեզիրի հետ դուրս է գալիս փեսի առաջ:

Թագավորն ու տղեն իրար որ տեսնում են, ուրախանում, աշխարհով մեկ են լինում, դառնում են, գալիս թագավորի պալատը: Նոր էստեղ ասում են, խոսում, զրույց անում, տղեն իր գլխով անցկացածն է պատմում, նրանք՝ իրենց: Էսպես ուրախանում են, խնդում, ծիծաղում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում:

- Թագավորն ապրած կենա,- ասում է տղեն,- մինչև օրս իմ երազը չէի ասում, բայց հիմի պիտի ասեմ:

- Ասա՛,- ասում է թագավորը,- ասա տեսնեմ՝ էդ ի՞նչ երազ էր, որ ի՞նչ արի, չարի, ի՞նչ չարչարանք տվի, չասացիր:

- Երազում,- ասում է,- տեսա՝ մի վարդաստանում նստած եմ: Տեսա՝ էդ այգու միջից երկու սիրուն, նախշուն, հուրի-մալաք աղջիկ դուրս եկան ու ուղիղ դեպի ինձ: Դրանցից մեկը քո աղջիկն էր, մեկէլը՝ Ֆրանգստանի թագավորի աղջիկը: Էդ երկու աղջիկը որ եկան ինձ մոտ, մեկը մի ծնկիս նստեց, մեկը՝ մեկէլ ծնկիս: Դե ջահել տղա, ջահել աղջկերք, սիրտս չհամբերեց, ձեռքս գցեցի Ֆրանգստանի թագավորի աղջկա վզով, զույգ թշերը պինդ պաչեցի, հետ դարձա, որ քո աղջկա թուշն էլ պաչեմ, մեկ էլ էն տեսա, շըրը՛փ՝ մի ապտակ երեսիս: Մուրազս փորումս՝ վեր թռա: Ես էլ, թագավորն ապրած կենա, դրա համար ասացի. «Ինձ ապտակ տվո՛ղ, ոնց որ իմ մուրազը փորս թողիր, բարով դու էլ քո մուրազին չհասնես»: Թագավորն ապրած կենա,- ասում է,- հրես էս էր իմ տեսած երազը, որ ի՞նչքան չարչարեցիր, ի՞նչ արիր, չարիր՝ չասացի: Համա հիմի ասում եմ, քանի որ ես իմ մուրազին հասել եմ:

Թագավորն էս որ լսում է, իր թախտից իջնում է, տղին նստեցնում է իր տեղը թագավոր:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

ՕՁՆ ՈՒ ՇԻՎԱՐԸ

Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը երազում տեսնում է, որ երկնքից աղվեսներ են թափվում: Հավաքում է աշխարհի բոլոր իմաստուններին ու գուշակներին, պատմում նրանց իր երազը ու հրամայում մեկնել այն՝ հակառակ դեպքում սպառնալով թռցնել բոլորի գլուխները:

Թագավորի քաղաքի մոտ կար մի գյուղ, էդ գյուղում ապրում էին մի մարդ ու կնիկ: Շատ աղքատ էին սրանք, ապրում էին ցամաք հաց ու ջրով: Կնիկը որ իմանում է թագավորի հրամանի մասին, մարդուն ստիպում է, որ գնա պալատ ու մեկնի թագավորի երազը: Համ էլ մտածում է, թե. «Որ թագավորի երազը չմեկնի, թագավորը կհրամայի կտրել սրա գլուխը, ու ես կազատվեմ մարդուցս»:

Մարդը տեսնում է, որ ուրիշ ճար չունի, վերցնում է ձեռքի փետն ու ճամփա ընկնում: Ճամփին հանդիպում է Մեծ օձին, որ դուրս է սողում մի քարի տակից:

- Ո՞ւր ես գնում, Շիվա՛ր,- հարցնում է Մեծ օձը:

- Չգիտեմ,- գլուխը կախ պատասխանում է մարդը:

- Մի՛ վախեցի, Շիվա՛ր,- ասում է օձը,- համարձակ գնա՛ թագավորի մոտ ու ասա՛. «Թագավո՛ր, դու երազումդ տեսել ես, որ երկնքից աղվեսներ են թափվում. էդ

նշանակում է, որ քո շրջապատի մարդիկ կեղծավոր են ու խաբեբա: Տե՛ր թագավոր, զգո՛ւյշ եղիր, որ նրանք քեզ վնաս չտան»: Բայց հիշի՛, Շիվա՛ր, թագավորը քեզ ինչ տա, կեսը իմն է:

Գնում է Շիվարը թագավորի մոտ ու Մեծ օձի ասածը նույնությամբ ասում: Թագավորն ուրախանում է, հրամայում է նազիր-վեզիրին թագավորական գանձարանից չորս ուղտաբեռ ոսկի տալ: Հետո հրամայում է վռնդել բոլոր իմաստուններին ու գուշակներին ու աղքատին նշանակել իր երազների մեկնիչ:

Շիվարը ոսկին վերցնում է ու տուն դառնում, բայց ուրիշ ճամփով, որ Մեծ օձը իր բաժին ոսկին չուզի:

Ոսկին տեսնելով՝ կնիկը շատ է ուրախանում, մարդու վրա սիրտը տաքանում է:

Անցնում է ժամանակ: Օրերից մի օր թագավորը նորից երազ է տեսնում՝ իբր երկնքից արյուն է թափվում: Նորից թագավորը կանչում է իմաստուններին, որ մեկնեն իր երազը, բայց հանկարծ հիշում է իր երազների մեկնիչին՝ գյուղացի Շիվարին, ու հրամայում է նազիր-վեզիրին՝ անմիջապես նրան պալատ բերել: Թագավորի մարդիկ գտնում են Շիվարին, հայտնում թագավորի հրամանը: Շիվարը մատը կծում է: «Հիմի ի՞նչ անեմ: Առաջին անգամ Մեծ օձն ինձ օգնեց մեկնել թագավորի երազը, բայց ես չտվի նրա հասանելիք բաժինը: Հիմի երես չունեմ, որ դիմեմ օձի օգնությանը: Բայց ի՞նչ անեմ, թագավորը կհրամայի գլուխս կտրել: Ճար չկա, ուզեմ-չուզեմ՝ պիտի գնամ Մեծ օձի մոտ, կարող է՝ էս անգամ էլ նա ինձ փրկի: Ինչ ուզում է՝ լինի»,- մտածում է Շիվարն ու գնում օձի մոտ:

Հենց գյուղացին հասնում է քարին, Մեծ օձը դուրս է սողում ու ասում.

- Բարով տեսանք, Շիվա՛ր ախպեր: Ո՞նց ես: Անցած անգամ դու ինձ խաբեցիր, չբերիր իմ հասանելիք բաժինը, բայց ոչինչ, աշխարհը շուռ չի գա: Կօգնեմ քեզ էս անգամ էլ: Էդ գիշեր թագավորը երազում տեսել է, որ երկնքից ալ կարմիր արյուն է թափվում, ու էդ նշանակում է, որ թշնամիները դավադրություն են պատրաստում. ուզում են հարձակվել թագավորի վրա: Ասա՛ նրան, թող իր զինվորներին պատրաստ պահի, որ թշնամիներից ապահով լինի: Տե՛ս, հա՛, Շիվա՛ր ախպեր, էս անգամ թագավորից ինչ առնես, կեսը կբերես ինձ:

- Հանգի՛ստ եղիր,- ուրախացած պատասխանում է գյուղացին ու օձին գլուխ տալով՝ ճամփա է ընկնում դեպի պալատ:

Շուտով հասնում է քաղաքի դարպասներին, նազիր-վեզիրը նրան տանում

են պալատ: Կանգնում է թագավորի առաջ ու ասում.

- Թագավորն ապրած կենա, դու շատ վատ երազ ես տեսել՝ իբր երկնքից թափվում է ալ կարմիր արյուն: Էդ նշանակում է, որ թշնամիներդ դավադրություն են պատրաստում: Զորքդ պատրաստ պահի, ու թշնամիներդ սիրտ չեն անի քեզ վրա հարձակվել:

Թագավորը լսում է Շիվարին, շնորհակալություն հայտնում, առաջին անգամից երկու անգամ ավելի պարգևներ տալիս ու ճամփու դնում տուն:

Թագավորական ընծաները վերցնելով՝ Շիվարը գլուխը լրիվ կորցնում է, չի հիշում անգամ Մեծ օձի բարի խրատը ու նրա հետ կապած պայմանը: Մտածում, մտածում է ու որոշում է օձին սպանել: «Էդ դեպքում էս ոսկին կիերիքի ոչ միայն ինձ, այլ նաև իմ թոռներին ու ծոռներին: Օձը էլ ինձ ոչ մի բանով օգնել չի կարող: Թագավորն էլ հո ամեն օր երազ չի՛ տեսնում»,- էսպես է դատում գյուղացին:

Թագավորի տված ոսկիները բեռնում է ուղտերին ու ճամփա ընկնում տուն: Երբ քարավանը հասնում է քարին, Մեծ օձը դուրս է սողում, իսկ Շիվարը, առանց երկար-բարակ մտածելու, գետնից մի քար է վերցնում ու շպրտում նրա վրա: Օձը հասցնում է մի կողմ քաշվել, քարը պոչն է միայն վնասում, ու նա արագ թաքնվում է քարի տակ:

Էլի անցնում է ժամանակ, ու թագավորը նորից երազ է տեսնում՝ իբր երկնքից ցորեն է թափվում: Թագավորը գյուղացի Շիվարի հետևից մարդ է ուղարկում: Դրանց տեսնելով՝ Շիվարի թուքը չորանում է:

- Լսի՛, կնի՛կ, հիմի հաստատ ես կմեռնեմ, գլուխս ուսերիս չի մնա:

Կնիկը լուռ լսում է նրան, բան չի ասում, բայց հոգու խորքում ուրախանում է: Մարդը մտածում, մտածում է ու որոշում. «Թե պիտի մեռնեմ, թող օձն ինձ սպանի. ես նրա բարությանը չարով պատասխանեցի»: Շիվարը գլուխը կախ գնում է Մեծ օձի մոտ:

- Բարով եկար, իմ անխելք ախպե՛ր Շիվար: Դու չէ՞ի մտածում, որ թագավորը քեզ մի անգամ էլ կարող է կանչել: Ախր դու չես կարող առանց ինձ գործը գլուխ բերել,- ժպտալով ասում է քարի տակից դուրս եկած Մեծ օձը:

- Է՞հ, քույրի՛կ,- պատասխանում է գյուղացին,- մեղավոր եմ, անարդար եղա ես քո հանդեպ: Ահա եկել եմ քեզ մոտ. ի՞նչ ուզում ես՝ արա՛:

Օձը պատասխանում է.

- Չէ, ախպեր, ես չարին բարությամբ եմ պատասխանում: Լսիր ինձ, գնա թագավորի մոտ ու ասա. «Տեր թագավոր, դու երազում տեսել ես, որ երկնքից ցորեն է թափվում: Էդ նշանակում է, որ քո տերության մեջ առատություն կլինի, ու դու մինչև կյանքիդ վերջը տխուր օր չես ունենա»: Թագավորը քեզ շատ ոսկի կտա: Հիշիր, կեսը կբերես ինձ:

- Հանգիստ եղիր,- պատասխանում է մարդը,- էս անգամ ես քեզ մոտ կգամ մաքուր սրտով:

Շիվարը ներկայանում է թագավորին, մեկնում նրա երազը: Թագավորը նրան օշարակ է հյուրասիրում ու նազիր-վեզիրին կարգադրում է թագավորական գանձարանից նախորդ անգամից երկու անգամ ավելի շատ ոսկի տալ: Գյուղացին էդ ամենը բեռնում է ուղտերին ու ճամփա ընկնում: Ճամփին մտածում է. «Ինչքան լավություն ինձ արեց Մեծ օձը, բայց ես մի անգամ նրան խաբեցի, իսկ մյուս անգամ քիչ մնաց սպանեի. հիմի ուրիշ ձևով կանեմ: Ես շատ ունեցվածք ունեմ, էն ամենը,

ինչ էս անգամ տվեց թագավորը, պիտի տանեմ Մեծ օձին»:

Շիվարը հասնում է մեծ քարին, ձեն է տալիս օձին.

- Վերցրո՛ւ քո բաժինը, ա՛յ քույր:

- Ախպե՛ր ջան, ինձ ոչ մի ոսկի էլ պետք չէ,- պատասխանում է Շիվարին Մեծ օձը,- ես քեզ փորձում էի: Առաջին անգամ, երբ դու դառնում էիր թագավորի մոտից ու ճամփեդ թեքեցիր, աղվեսի տարի էր՝ խաբեբայության տարի. էդ պատճառով դու ինձ խաբեցիր: Մյուս անգամ, երբ դու ինձ վրա քար շպրտեցիր ու իմ արյունը թափեցիր, արյան տարի էր. էդ պատճառով էր թագավորի երազը էդքան վատը: Հիմի առատության տարի է. էդ պատճառով մարդիկ ագահություն չեն անում: Վերցրո՛ւ քո բարիքն ու գնա տուն:

Էս խոսքն ասում ու անհետանում է Մեծ օձը: Շիվարը տուն է դառնում ու մինչև իր կյանքի վերջը քեֆ-ուրախություն անում:

ՍՏԱԽՈՍ ՀՈՎԻՎԸ

Մի թագավոր ունենում է մի աղջիկ, հայտարարում է իր երկրում, թե. «Իմ աղջիկը մարդու եմ տալիս, ո՛վ կարողանա էնպիսի սուտ ասել, որ մեջը ոչ մի ճիշտ բան չլինի, աղջիկս կտամ նրան»:

Ամենքը սուտ ասացին, ոչ մեկը չկարողացավ էնպիսի սուտ ասի, որ մեջը ճիշտ բան չլինի: Ամեն անգամ էնտեղի նստող մարդիկ մի ճիշտ բան գտնում էին:

Էդ քաղաքի մեջ մնացել էր մի հովվի տղա: Էդ տղեն մտածեց. «Սպասի՛, ես գնամ, մի սուտ ասեմ, գուցե էդ աղջիկն առնեմ»: Ելավ ու գնաց, ուղիղ թագավորի դարպասների առաջ կանգնեց, դարպասը ծեծեց: Դռնապանը դուրս եկավ, ասաց.

- Ինչ մարդ ես:

- Սուտասան եմ, եկել եմ՝ սուտ ասեմ:

- Արի գնանք:

Տղեն գնաց, կանգնեց թագավորի առաջ: Թագավորը հարցրեց.

- Ինչ տղա ես:

- Թագավորն ապրած կենա, եկել եմ՝ սուտ ասեմ:

Թագավորն ասաց՝ ասա՛: Ասաց.

- Թագավո՛ր, ես շատ հարստի տղա եմ, քո հերն առաջ աղքատ էր, եկել էր,

իմ հորից պարտքով փող էր վերցրել՝ մի կողով զուտ ոսկի: Հերդ գռփող մարդ էր, ումից փող էր առնում, հետ չէր տալիս: Էդպես էլ իմ հոր փողը չէր տվել: Դրանով էլ քո հերը հարստացել էր, դարձել էր թագավոր: Հիմա էլ դու ես թագավոր: Հերս աղքատացավ, դարձավ հովիվ, ես էլ եմ հովիվ:

Նազիր-վեզիրն ասացին.

- Էդ ճիշտ է, մարդ կա, կհարստանա, մարդ էլ կա, կաղքատանա:

- Դե գնա՛, առավոտը արի՛,- ասաց թագավորը:

Տղեն գնաց, էն մեկէլ օրը նորից եկավ, ասաց.

- Թագավո՛ր, որ իմ հերը աղքատացավ, ելավ, որ գնա օտար երկիր, աշխատանք անի: Մորս ասաց. «Կնի՛կ, թոնիրը վառի, որ ես գամ, հաց ուտեմ ու գնամ»: Հերս գնաց գյուղամեջ, շատ ուշացավ: Մերս վառեց, խավիծ եփեց: Տեսանք, որ հերս շատ ուշացավ, հորս բաժինը մերս վերցրեց, լցրեց մի ամանի մեջ, դրեց մեր թախտի տակ: Մնացածը մենք կերանք: Հետո հերս եկավ, մերս ասաց. «Դե նստի՛, հաց բերեմ կեր»: Հերս ասաց. «Ընկերներիս տանը կերել եմ, չեմ ուտի»: Հերս գնաց: Հերս գնալուց հետո յոթ տարի չեկավ: Ես մեծացել էի, դարձել տասներկու տարեկան տղա: Մի օր լուր եկավ, ասին՝ հերդ գալիս է: Ես վազեվազ

գնացի հորս դեմ: Հորս հետ եկանք տուն: Հերս ասաց. «Կնի՛կ, ես սոված եմ, մի քիչ հաց բե՛ր, ուտեմ»: Մերս ասաց. «Սպասի ելնեմ, թոնիրը վառեմ, կերակուր եփեմ»: Ես ասի. «Մայրի՛կ, բա էն տարին որ գնում էր, խավիծ արեցիր, բա հայրիկի բաժինը ո՞ւր է, բեր, թող ուտի»: Մերս ասաց. «Վա՜յ, հազիվ միտս ընկավ, էն է, թախտի տակն է»: Ու գնաց բերեց, դրեց հորս դեմը: Վրեն չորս մատ փոշի էր դրել, էդ փոշին վրայից քերեց ու վերցրեց, մի կտոր դրեց բերանը: Էնպես տաք էր մնացել խավիծը, որ բերանը դաղեց, բերնից գցեց գետնին, գետինը ծակվեց, գնաց գետնի տակ, ընկավ ծովի մեջ, էնպես խշշաց, որ խշշոցը դեռ ականջումս է:

Նստող մարդիկ ասին.

- Դրա կեսը ճիշտ է:

Էդ օրն էլ խեղճ տղին ճամփու դրեցին:

Տղեն գնաց, ընկավ դեսուդեն, բավականաչափ ուռ քաղեց, բերեց, մի մեծ կողով գործեց, դրեց մի հատ սայլի վրա, եզները լծեց ու ուղիղ քշեց թագավորի դուռը: Դուռը ծեծեց, դռնապանն ասաց՝ ո՞վ ես:

- Ես եմ,- ասաց,- բա՛ց դուռը, մի սուտ եմ բերել, դուռը չի մտնի:

Դուռը բացեց: Սայլը զոռով քաշեցին բակ, կանգնեցրին:

Տղեն ելավ ուղիղ թագավորի մոտ: Ասաց.

- Թագավո՛ր, էն կողովով, որ իմ հորը փող ես պարտք, տո՛ւր, ես գնամ:

Ներկա բոլոր նազիր-վեզիրները դուրս թափվեցին: Ասացին.

- Ա՛յ մարդ, էդպիսի սո՞ւտ կլինի, էդ կողովով ոսկին ձեզ ո՞րտեղից էր:

Ասաց.

- Դե որ սուտ է, աղջկան տվե՛ք:

Թագավորն ասաց.

- Թե ասենք ճիշտ է, ոսկին պիտի տանք, թե որ ասենք սուտ է, աղջկան պիտի տանք:

Ու որոշեցին աղջկան տալ: Հովիվը աղջկան առավ ու գնաց:

ԲԱՌԱՑԱՆԿ

Աբա - մազե կարճաթև արտահագուստ
Ադաթ - ավանդական սովորույթ
Ազիզ - սիրելի
Ազնավուր - 1. հսկա, քաջ, 2. երևակայական էակ, ոգի, քաջք
Ազրայիլ - մարդկանց հոգիները տանող էակ
Աղա - տեր, հովանավոր
Աղոթրան - 1. արևելք, 2. արևածագ
Ամանաթ - պահ տված բան
Անա - մայրիկ (դիմելաբառ)
Անոթի - սոված
Աշկարա - ակնհայտ, բացահայտ
Ապո - հորեղբայր
Ասլան - 1. առյուծ, 2. քաջ
Ավչի - որսորդ
Արևի ձենն ածել - ապրել, ազատ կյանք վարել
Ափալ - թափալ - արագ - արագ
Ափի // ափու - հայր, հայրիկ
Բալքի - գուցե, թերևս
Բաշարել - գլուխ հանել, կարողանալ անել
Բարութ - վառոդ
Բղուղ - սափորաձև կավե փոքր ման
Բոյ - հասակ
Բրթել - հրել
Գիշերհանա - գիշերով, դեռ լույսը չբացված
Գրվանքա - ծանրության չափ, 409 գրամի
Դադրել - հոգնել
Դարդ - վիշտ, ցավ, հոգս
Դեղել - թունավորել
Դերվիշ - թափառական, գուշակ, կախարդ
Դըրբ - զարկ, հարված
Դիք - ուղիղ, ցցված դիրքով

Դրուստ - ճիշտ
Դուզ - ուղիղ, ճիշտ
Դուքան - խանութ
Երկեն - երկար
Զահլա - տրամադրություն, տրամադրվածություն
Զուլալ - վճիտ, ջինջ
Էսինչ - գործածվում է որևէ բնորոշման փոխարեն, երբ այդ բնորոշումը կոնկրետ չէ կամ պատումի համար կարևոր չէ
Ըտեղ - այդտեղ
Թաթման - ձեռնոց
Թամաշա - տեսարան, տոնախմբություն
Թամաշա անել - նայել, դիտել
Թավուր - տեսակ, նման
Թարեք - պատին ամրացված հորիզոնական տախտակ՝ ամաններ դնելու համար
Թեք ընկնել - պառկել
Թիքա - պատառ
Թոզ ու դուման - փոշու ամպ
Թոռ - ձկնորսական ցանց
Թոփալ - կաղ
Թոփ ու թվանք - կրակող զենքեր
Թվանք - հրացան
Թութուն - ծխախոտ
Թուշ - այտ
Ժաժ գալ - շարժվել
Ինս ու ջինս - շունչ, կենդանի, մարդ
Լագան - տաշտ
Լաչակ - գլխաշոր
Լիդր - ծանրության չափի միավոր է, Հայաստանում լիդրը 12 ֆունտ է:
Լուսուն - առավոտյան, մյուս օրը
Խազեին - գործատեր
Խալվար - հացահատիկ, ընդեղեն կշռելու չափ
Խամ - չվարժեցված
Խար - որդ, միջատ, որ մեծ մասամբ լինում է վարդի վրա
Ծուլ լինել - վեր ցատկել, վեր թռչել
Ծուռ - խենթ, հիմար

Կալմեջ անել - շրջապատել
Կակուղ - փափուկ
Հազիր - 1. պատրաստ, 2. ավելի հարմար է
Հազրել - պատրաստել
Հալ - վիճակ
Հալալ - արդար, արժանի
Հախից գալ - վրեժ լուծել
Համա - բայց
Հաշտ - նախասենյակ
Հարամ - պիղծ, անմաքուր, ապօրինի
Հարամի - ավազակ, գող
Հերս - բարկություն
Հերսոտել - բարկանալ
Հլա - դեռ
Հրես - ահա
Հունար - ճարտարություն, հնարք, միջոց
Հուրի-մալաք - աննման գեղեցկուհի
Ղալմաղալ - աղմուկ, վեճ
Ղարիբ - օտարական, պանդուխտ
Ղոնախ - հյուր
Ղոչաղ - քաջ, ճարպիկ
Ճվտել - կտրտել, մասերի բաժանել
Մարդ- մադաթ - մարդ- մուրդ
Մեյդան - հրապարակ
Միամտել - համոզվել, ապահովվել
Մտիկ անել - նայել
Մուշտարի - գնորդ, հաճախորդ
Մուռտառ - պիղծ, անմաքուր, կեղտոտ
Մուրազ - իղձ, փափագ
Յափնջի - այծենակաճ
Նախրչի - նախրապան
Նանի - մայրիկ
Նոքար - ծառա
Շահի - հինգ կոպեկ
Շահմար - օձի տեսակ

Շամ-չրաղ - լույս արձակող
Շառ - կեղծ ամբաստանություն, փորձանք
Շիմշատ - 1. ծառատեսակ, 2. բարեկազմ
Շլինք - վիզ, պարանոց
Չամ - սոճի
Չոբան - հովիվ
Չոլ - անմշակ տարածություն, հանդ
Չոքել - ծնկել
Պագել // պաչել - համբուրել
Ջադու պառավ - կախարդ պառավ
Ջահել - երիտասարդ
Ջահնամ - դժոխք
Ջան - մարմին
Ջանավար - գազան
Ջանդակ - մարմին
Ջեբ - գրպան
Ջիգյար - լյարդ, սիրտ
Ջիրիդ խաղալ - իրար վրա մական, տեգ, գավազան նետելու խաղ
Ջհուդ - հրեա
Ջնազ - հավի կրծքի երկճղի եղանաձև ոսկորը, որով գրազ են գալիս
Ջոկ - առանձին
Ջվալ - մեծ պարկ
Ջրջնքել - ջրցանել
Ջուխտ - զույգ
Ռաստ գալ - հանդիպել, պատահել
Ռաֆադա - ճյուղերով հյուսած, վրան շոր քաշած երկարավուն բարձիկ, որով լավաշի բացված խմորը խփում են թոնրի բարկ պատին
Սազ ածել - սազ նվագել
Սաղ ու կենդանի - ողջ-առողջ
Սինի - սկուտեղ
Սհաթ - ժամ
Սուփրա - սփռոց
Վախտ - ժամանակ
Վեր գալ - իջնել
Ուշունց - հայհոյանք

Ուստա - վարպետ
Փահլևան - ըմբիշ
Փայ - բաժին
Փարա - փող
Փեշակ - արհեստ, զբաղմունք
Փեշքեշ - նվեր
Փոշման - զղջացող
Փոշմանություն - զղջում
Փտուռ -
Քափկիր - ծակոտկեն մետաղյա աման, որով կերակրի քափը քաշում են կամ քամում, պարզուտ
Քեչա - թաղիք
Քթիվ անել - քրքրել, գլխի մազերը զատզատել
Քթոց - զամբյուղ
Քիսա - քսակ
Քոլ - վայրի թուփ, մացառ
Քոչ - տեղափոխվել
Քոռ - կույր
Քորփա - երեխա, մանկահասակ
Քունջ - անկյուն
Օյին դնել գլուխը - խորամանկ խաղ խաղալ մեկի գլխին
Ֆաս - մի տեսակ գլխարկ՝ հոլի ձևի
Ֆրանգստան - ֆրանկների երկիր

Գունավոր պատկերների ցանկ

Կազմի վրա «Армянские сказки» ժողովածուի կազմի էսքիզ, 1933 թ. («ACADEMIA», Москва-Ленинград, 1933): Սարյան ընտանիքի հավաքածու, Երևան

Ֆորզաց «Армянские сказки» ժողովածուի ֆորզացի էսքիզ, 1933 թ. («ACADEMIA», Москва-Ленинград, 1930): Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 1. Ճակատազարդ «Армянские сказки» ժողովածուի ճակատազարդի էսքիզ, 1929 թ. («ACADEMIA», Москва-Ленинград, 1930): Գտնվելու վայրն անհայտ է

Էջ 4. «Армянские сказки» ժողովածուի կազմաշապկի էսքիզ, 1930 թ. («ACADEMIA», Москва-Ленинград, 1930): Գտնվելու վայրն անհայտ է

Էջ 7. «Армянские сказки» ժողովածուի կազմի էսքիզ, 1929 թ. («ACADEMIA», Москва-Ленинград, 1930): Սարյան ընտանիքի հավաքածու

Էջ 8. «Армянские сказки» ժողովածուի ֆրոնտիսպիսի էսքիզ, 1939 թ. («ДЕТИЗДАТ», Москва, 1939): Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 26. Գարնանային օր, 1929: Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 31. «Երեք անմորուսները և ավերիչ Յարոն» հեքիաթի նկարազարդում, 1936: Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 42. Թագավորը դստեր հետ, 1904: Հեքիաթ: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 44. «Մատանու ակը» հեքիաթի նկարազարդում, 1936, Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 52. Պալատական պարտեզ, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան

Էջ 73. «Բադիկանը և Բողու Խանը» հեքիաթի նկարազարդում, 1933: Գտնվելու վայրն անհայտ է

Էջ 78. Աղբյուրի մոտ: Արագածի լանջին, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 91. «Անահիտ» հեքիաթի նկարազարդում, 1937: Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 107. «Հուրի փերի» հեքիաթի նկարազարդում, 1933: Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 127. «Արևելյան հեքիաթ», 1903: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 137. «Ծաղկող լեռներ.Ախուրյանի կիրճում», 1905: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 155. Դրվագ Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմանկարի էսքիզից, 1938: Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

Էջ 158. Փերիների լիճը, 1905: Տրետյակովյան պետական պատկերասրահ, Մոսկվա

Էջ 166. «Տափաստանային Աստարտա», Վ. Էլսների բանաստեղծությունների ժողովածուի նկարազարդում, 1913: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 205. «Քաջ Նազար» հեքիաթի նկարազարդում, 1933: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 207. Հ. Ստեփանյանի «Քաջ Նազար» օպերայի բեմանկար, 1935: Բախրուշինի անվ. թատերական պետական կենտրոնական թանգարան, Մոսկվա

Էջ 209. Քաջ Նազարի զգեստի էսքիզը Հ. Ստեփանյանի համանուն օպերայի համար, 1935: Բախրուշինի անվ. թատերական պետական կենտրոնական թանգարան, Մոսկվա

Էջ 218. «Տերն ու ծառան» հեքիաթի նկարազարդում, 1941: Սարյան ընտանիքի հավաքածու

Էջ 224. Մայիսյան վարդեր, 1939: Մասնավոր հավաքածու

Էջ 226. Հարեմի այգում, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 238. Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմանկարի էսքիզ, 1938: Տրետյակովյան պետական թանգարան, Մոսկվա

Էջ 256. Արարատի ստորոտում: Հեքիաթ, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 281. Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի հայ կանանց զգեստների էսքիզներ, 1938: ՀԱՊ

Էջ 285. Արևի թովչանքը, 1905: Ստավրոպոլի կերպարվեստի մարզային թանգարան

Էջ 311. Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի նկարազարդում, 1936: Մասնավոր հավաքածու, Մոսկվա

Էջ 324. Աշնանային մառախլապատ օր, 1928: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 329. Նռնենու մոտ, 1907: Տրետյակովյան պետական պատկերասրահ, Մոսկվա

Էջ 337. Արքայադուստր, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 345. Գունագեղ բնանկար, 1924: Ռուսական պետական թանգարան, Սանկտ Պետերբուրգ

Էջ 358. Գոմեշ, 1922: Սարյան ընտանիքի հավաքածու, Երևան

Էջ 360. Դրվագ «Խաղողներ» նատյուրմորտից, 1943: Տրետյակովյան պետական պատկերասրահ, Մոսկվա

Էջ 369. Ջրելատեղ, 1903: Մ. Սարյանի տուն-թանգարան, Մոսկվա

Էջ 376. Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի հայ կանանց զգեստների էսքիզներ, 1938: ՀԱՊ

Էջ 384. Օձերով բնանկար, 1904: Մ. Սարյանի տուն-թանգարան, Երևան

Էջ 386. Արարատով բնանկար, 1937: Մասնավոր հավաքածու, Մոսկվա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիկտոր Կատվալյան. Հեքիաթն ու նրա հեքիաթային պատկերազարդումը 3

Ռուզան Սարյան. Սարյանական նկարազարդումներով «Հայկական ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի հայերեն առաջին հրատարակության առիթով 5

Օխայը 9
Խոսող ձուկը 19
Երեք անմորուսն ու տուն ավիրող Հարոն 24
Անմորուսի, կաղի ու կույրի հեքիաթը 33
Մատանու ակը 40
Կարմիր կովի հեքիաթը 46
Բժիշկ Լոխմանը 55
Բադիկան և Խան Բողուն 67
Անահիտ 75
Հուրի - փերի հավքը 97
Հազարան բլբուլ 113
Արեգնազան 143
Սուտլիկ որսկանը 190
Պոչատ աղվեսը 193
Քաջ Նազարը 197
Կիկոսի մահը 211
Տերն ու ծառան 216
Անմահական վարդը 222
Անմորուսն ու թագավորի տղեն 228

Օձամանուկ և Արևահատ 244
Հաբրմանի հեքիաթը..... 250
Մոզին 263
Արջի տղեն..... 269
Աղբյուրի հարսը 278
Ոսկե ձուկը..... 283
Ռանչպար Օհանի տղի հեքիաթը 294
Ռանչպարի տղեն 308
Որսորդի տղի հեքիաթը.....322
Ձկնորսի տղեն 341
Գյուղացու տղեն ու թագավորի աղջիկը 351
Երազ տեսնող աշկերտը..... 362
Օձն ու Շիվարը.....380
Ստախոս հովիվը.....386

Բառացանկ.....389

Գունավոր պատկերների ցանկ 394

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ

Խմբագիրներ՝ Ավիկ Իսահակյան, Վիկտոր Կատվալյան

Նկարացանկը պատրաստեց Ռուզան Սարյանը

Լուսանկարիչ՝ Զավեն Խաչիկյան

Սրբագրող՝ Ազատուհի Սահակյան

Համակարգչային ձևավորումը՝ Հեղինե Փիլոյանի

Տպաքանակը՝ 400 օրինակ

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am